

ՆՈՐ ԵՐԱՎԱՆ

VI ՏԸՆԹ

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա Գ Ի Ր

№ 4-5

ԱՊՐԻԼ—ՄԱՅԻՍ

1906



Թ Բ Ֆ Լ Ի Ռ Ա

Տպարան „ՀԵՐՄԱՆ“ Մաղաք. փող. № 15.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### № 4—5

Եղիսաբետ

1. Ուժիք ի ՍԿԱԿԱՆ ՄԵՂԱԼՈՐԸ, (Ուրուազիծ) Սամաս-ի 9
2. ՎերԱ, «ՄԵԿԸ ՇՈՏԵՐԻ ՀԱՄԱՐ» թարգմ. լո. Հրանոյշի 14
3. ԹՈՒՐՅՈՒՐԴՈՎԿԱՆ ԱՐԺԱԼԱՆՔԻ ՔՍԱՆԵՀԻՆ ԳՈՄԵՑԿԱՆ  
Ականատեսի . . . . . 24
4. ՀԱԶԱՐ ԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԳԻՇԵՐԸ, ԲԷՐՆԱՐԴ Կանթերի  
թարգմ. ԱռոմՇահին-ի . . . . . 31
5. ՍԻՄՎՈԼԻՉՄԱՆ ԴՐԱՄԱՅԻ ՄԵԶ, Ս. Յակովեանի . . . . . 37
6. ՀԵՄԱՐԱՆՑՈՒ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԵՐԻՑ, Արզու-ի . . . . . 50
7. ԿԵԱՆՔԻ ԴԻԺՈՂՈՒԹԻՒՆԵՐԻՑ 1. սարգը 2. ժիգու. Ալլենի 75
8. ԱՐԵՇԻ ԳԱԼԱՓ, . . . . . 79
9. ՄՈՏԻԿ ԱՆՑԵԱԼԻՑ, Խնկախի-ի . . . . . 86
10. ԿԱՐԼ ՄԱՐՔՍԱՆ ԵՒ ՄԱՐՔՍԻՉՄԱՆ, Բ. Իշխանեանի . . . . . 91
11. ԱԳՐԱՐ. ՀԱՐՑԼ ԵՒ ՆՐԱ ԼՈՒԾՈՒՄԸ Ո-ՈՒՍԱՍԱՆՈՒՄ  
Երուանդ Սարգսեանի-ի, . . . . . 110
12. ՆՈՐ ՄԱՍՑՈՒԱԾ ԴՐՅԵԲ . . . . .
13. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՈԾՈՒԹԻՒՆ. — 117  
ԲԺ. Ա. Յուլուդեան, «Յուլէր հայ լամբապատին».  
2) Գեռահանհրն ինչ կարգան Յով. Տէր.-Միրա-  
քեանի-ի . . . . .
14. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — «Կապատակը արդարացնում է  
միջոցները» . . . . . I. U.
15. ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Յարանսիական սինդիկալիստնե-  
րի action directe-ը: — Յոր. բէտկիցիօներների սրովովա-  
ցիան: — Բայէլի պրաֆեսիօնալ կազմակ. համագումա-  
րի որոշումը: — + Պ. Կիւրէ: Անզիական Ազգայու-  
նում: — Հայերը Թիւրքիայում . . . . . I. U. 145
16. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐՄԱԿՈՒԹԻՒՆԵՐ «ՈՈ ՅՅ.» —  
«Կիւանը» . . . . .

Նոր շրջան VI տարի

Հրատ. XVIII տարի

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԳՅՈՒՋԵԿԱՆ

Ա. Մ Ա Ա. Գ Ի Ր

№ 4—5

ԱՊՐԻԼ—ՄԱՅԻՍ

1906



ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀՐԱՄԻՍ“ Ընկ. Մադար. փող., 15.

1905

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Չնայելով մեր գործ դրած քոլոր ջանքերին անկարող եղանք, անցած խառնակ օրերի շնորհիւ, ամսագիւ հրատարակութեան խանգարուած կանոնատրութիւնը վերականգնել ա'յնպէս որ իւրաքանչիւր ամսուայ համարը լոյս տեսնի նոյն ամսում։ Պէտք է ի նկատի ունենալ որ պոստը չի ընդունում մամուլի համար որոշուած նպաստառը սկայմաննը թով №.Ն.-ի առաջումը, եթե համարը նոյն ամսում չի յանձնում իրան\*). պէտք է անհամեստ ամելի մեծ ճանապարհածախք վճարել այդ դէպքում։ Եւ այդպիսով ամսագրիս վրայ առանց այն էլ ծանրացած մօս 8 հազ. թ. դեֆեցիտը նորանոր անակնկալներով աւելացնել... Միանգամից վերջ դնելու համար այդ անկանոնութեան՝ մենք որոշեցինք միացնել №№ 5 4 եւ եւ փոխարէնը մեր բաժանորդելին տալ ԵՐԿՐՈՐԴ յաւելուած։ — մեր աշխատակից ՀՀՕՒ «ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ» աշխատութիւնը, որի մաս-մաս ապագրութիւնը կը սկսուի յաջորդ համարից։

\*) Ուշ սկսուած և դամդաղ ընթացող բաժանորդագրութեան պատճառով այս տարի աւելի յարմար գատեցինք պոստին վճարը ամսէ-ամիս ասալու։ Առհասարակ այս փոթորկուարուայ հանգամանքները բաւական աննպաստ էին ամսագրիս հրատարակութեան համար։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Nº 4-5

Ubuntu

- |     |  |
|-----|--|
| 1.  | Ո՞Վ էՐ ԻՍԿԱԿԱՆ ՄԵՂԱԽՈՐԾ, (Ուրուսագիծ) Սամաս-ի 9  |
| 2.  | ՎԵՐԱ, «ՄԵԿԸ ՇԱՏԵՐԻ ՀԱՄԱՐ» թարգմ. տ. Հրանոյշի 14  |
| 3.  | ԹՈՒՐՔՕ-ԲՐԴԴԱԿԱՆ ԱՐՇԱԿԱՆՔԻ ՔԱՍՆԵԿԱՐԱԿԱՐԱԿԱՆ Ականատեսիք . . . . . 24   |
| 4.  | ՀԱԶԱՐ ԵՐԿՈՒԵՐՈՐԴԻ ԳԻՇԵՐԸ, ԲԵՐՆԱՐԴ ԿԱՆԹԵՐԻ թարգմ. Առոմ Շահէն-ի . . . . . 31   |
| 5.  | ՍԻՄՎՈԼԻՉԱԾԸ ԴՐԱՄԱՅԻ ՄԵջ, Ս. Յակոբեանի . . . . . 37   |
| 6.  | ՃԵՄԱՐԱՆՑՈՒ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ, Արզու-ի . . . . . 50  |
| 7.  | ԿԵԱՆՔԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ 1. սարդը 2. ծիծեռ. ՍՀՀԵՆի 75   |
| 8.  | ԱՐԵԾԻ ԳԱԼԱՐ, . . . . . 79  |
| 9.  | ՄՈՏԻԿ ԱՆՑԵԱԼԻՑ, Անկախ-ի . . . . . 86   |
| 10. | ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՍԻՉԱԾԸ, Բ. Իշխաննեանի . . . 91  |
| 11. | ԱԳՐԱՐ. ՀԱՐՑԸ ԵՒ ՆՐԱ ԼՈՒՇՈՒՄԸ ՈՌԻՍԱՍՏԱՆՈՒՄ<br>Երտանդ Սարգսեանի, . . . . . 110   |
| 12. | ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ . . . . .   |
| 13. | ՔՆՆԱԴԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ. — 117<br>ԲԺ. Ա. Բուղուղան, «Ըուլէր հայ վաժրապետին».<br>2) Գեւահաններն ինչ կարդան Յով. Տէր.-Միքա-<br>րեանի . . . . .  |
| 14. | ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—«Նպատակը արդարացնում է<br>միջոցները» . . . . . Լ. Ս.   |
| 15. | ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ֆրանսիական սինդիկալիստնե-<br>րի action directe-լը—Ֆր. բէալցիօներների պրովկա-<br>ցիան:—Բագէլի պրոֆեսիօնալ կազմակ. համագումա-<br>րի որոշումը:—Պ. Կիւրէ: Անգլիական Եղիսպո-<br>տում:—Հայերը Թիկրդիայում . . . . . Լ. Ս. 145 |
| 16. | ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ «Պօլ ՅՅ.»—<br>«Կիեանը» . . . . .  |

Երես

17. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ . . . . .	2
18. ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ ԵՒ ՎՐԻՊԱԿՆԵՐ . . . . .	5
19. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .	5
20. ՅԱԼԵԼՈՒԱԾ. ԶԷՅՄԱ Մ'ՈՐԻՒՔՐ՝ «ՀԱԶԻ ԲԱԲԱՆ ԱՆԳ- ԼԻԱՅՅՈՒՄ», վեպ պարսկ. կեանքից, թարգմ. անգլ. Մ. Կարապետեան . . . . .	223—238

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատում է յօդուածագրերից՝ գրել պարզ մանաւանդ բուեր, յատուկ անուններն ու օսար բառերը, եւ թերթի միայն մի երեսի վայ. առանձնապես ուս դարձնել կէտաղբութեան, ուղղագրութեան եւ նոր պարբեութիւնները ոռուսկի լինելու վրայ. Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաև բնագիրը:

2. Զընդունուած միծ յօդուածները պահուում են խմբագրատանը՝ 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնուում են: Զետագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն վերադարձնուում:

3. Գրուածքների գարձատութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութիւն առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարում են անվճարելի:

4. Խմբագրութիւնն իրան է վերապահուում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ քճատելու իրաւունքը:

5. «Մուրնի» համարը՝ չստացուելու դէպքում պէտք է խմբագրութիւնը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութիւնն զանազան հարցումներով զիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրում կամ պոստային ըլանկ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կուպէկ: Հասցէր փոփոխումը պէտք է ստացուի իրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է այսոնել նաև նին հասցէն:

## Վ Բ Ի Պ Ա Կ Ն Ե Բ

«Մուրճ»-ի № 2-ում, «Կարլ Մաքքս և Մաքքսիզմը» յօ-  
դուածի մէջ ներս են սպրդուել հետևեալ սխալները.

62-րդ երեսում, 10-րդ տողի մէջ, ներքեցից հաշուած,  
«սրովետարիատի դէմ կռուելու համար» նախադասութեան  
փոխարէն պէտք է լինի՝ «բիւրօկրատիայի դէմ կռուելու հա-  
մար»:

80-րդ երեսում, 10-րդ տողի մէջ, ներքեցից հաշուած, փա-  
կադծի մէջ գրուած է՝ «18 տարի անմասնգիստ մնալուց յետոյ»:  
պէտք է լինի «18 տարի հանգիստ մնալուց յետոյ»:

Ներքին տես. երես 116, 2 տող ներք. «Բադիշնել» պէտք  
է լինի Ռողիչել:

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Մեր աշխատակից Լէօի «Սատունից այսօր» ու-  
սումնասիրութիւնը՝ անկալարող եղանք զետեղել այս հա-  
մարում, որովհետև հեղինակը անսպասելի կերպով ու-  
շացաւ եջմիածնում, ուր գնացել էր մի քանի լրացու-  
ցիչ տեղեկութիւններ քաղելու:

Յիշեցնում ենք մաս-մաս վճարող մեր բաժանորդ-  
ներին, որ մայիսի 1-ին երկրորդ վճարի ժամանակն է:

Մորիէրի Հաջի Բարա վէպի առաջին հատորը մեր  
բաժանորդների համար արժէ 1 ր. (2 ըուբլու փոխա-  
րէն), ճանապարածախիզով 1 ր. 50 կոպ.

Առանձարի «Վշտի Ծիծաղը» մեր բաժանորդների  
համար 70 կոպ. (1 ր. փախարէն):

1905 թուականի «Մուրճ» սպառուած №№ 1, 2-  
3, 4 և 5 ցանկանում են գնել. դիմել առաջարկութեամբ  
«Մուրճ» խմբագրութեան:

Բանուորները կարող են գրուել «Մուրճին» ԲԱ-  
ԳՈՒ և ԲԻԲԻ-ՀՅԲԱԹՈՒՄ պ. Դաւիթ Տէր-Դանիէլեանի  
մօտ («Մանթաշեան և ընկ» գթաս.), ԲԱՂԱԽԱՆՈՒՄ պ.  
Արշակ Գևանչեցեանի մօտ (մէք. մաստերսկայ Կա-  
ռիյսկ. տ-վա.)

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ

ԲԱՑՈՒԽԸ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## “ԿԵՐՆԻՔ”

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՏԵՏԵՍԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ,  
ՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՒ ԱՌԱՅԺՄ ԿԸ ՀՐԱ-  
ՍԱՐԱԿԻՒ ԻՐԵՒ

ՏԱՐԱԾԱՑԵՐ

Բաժանորդակինն է՝ Թիֆլիսում տարեկան 2 ր. 50 կ., գուրսը տարեկան 3 ր., արտասահման տարեկան 4 ր.: Ամսական Թիֆլիսում 20 կրպ., գուրսը 30 կ., արտասահման 40 կ.: Հատով Թիֆլիսում 5 կ., գուրսը 7 կ.:

Հայէն՝ Տիֆլիս Պեդակցիա «Կյանք», Չավչավածևսկայա № 4-  
արտասահմանից՝ Tiflis, Rédition «Kiank». Tschawtschawadzew-  
skaja № 4.

### Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Իշխանեան

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

“ԿԱՅԾԵՐ”

ՔԱՂԱՔԻԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ

*O P U S C O L A*

Առ այժմ լոյս կը տեսնի շաբաթական առնուազն երկու անգամ՝  
Բաժանորդագինը Թիֆլիսում՝ ապրիլի 1-ից մինչ տա-  
րուայ վերջը 3 ր. 50 կ., 3 ամս.—1 ր. 20 կ. ամիսը—40 կ.  
Թիֆլիսից դուրս՝ մինչև աարուայ վերջը 4 ր. 3 ամս. 1 ր. 40  
կոպ., ամիսը—50 կոպ.։ Առանձին ՀՀ Թիֆլիսում 3 կոպէկ։  
Թիֆլիսից դուռս 4 կ.։

*Խմբագրութեան հասցէն*—Тифлисъ, Редакція «Кайцъ», Со-  
лолакская № 3.

Խմբագիր հրատարակիչ՝ Ա. ԵՐԶՆԿԵԱՆ

1887

Ի ՏԵՐԻ.

1906

# „ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ“ ՈՒՍՈՒՄՆԱՐԵՐԹԸ

Կը մտնէ իւր զոյութեան քառերրոր տարեշրջանը, եւ կը շարունակի իւր ծանօթ ողդութեամբն եւ ծրագրով: — «Հանդէս Ամսօրեայ» իբրև Հապալութեան հոնդէս՝ պիտի բռվանդակէ հոյ կրտսեալ թեան, մատենադրութեան, բանափրութեան, եղուաբանութեան, հնախօսութեան, աշխարհագրութեան, պատմութեան վերաբերեալ ըննադասական ուսումնասիրութիւններ—ինքնազիր եւ թարգմանածոյ: Զանց չը պիտի առնուին հայ աշխատաւոր ու գրագէտ ահօնադրութեանց կենսագրութիւնները: Մոյնազէս ըննադասական տեղեկութիւններ պիտի տրին ազգային կարենոր լրերի, նոր հրատարակութեանց են: — Տարեհան բաժնեգինն է 10 ֆր.—4 ըբլ.—Կանխիր:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԵՆ

A la Rédaction de la Revue „Handess“, Vienne  
(Autriche) VII/2 Mechitharistengasse 4.

# „ԲԱՋՄԱՎԵՊ“

ԱՄՍԱԳԻՐ

Կանխիկ բաժանորդագինն է ֆր. 10:

Դիմել հետեւալ հասցէին.

Rédaction de la Revue «Bazmavep» Venise (Italie), St. Lazare

# “ԳԵՂՈՒՆԻ,”

1901—1905 տարիներու ամբողջական հաւաքածոյն գեղջեալ գնոլ 12 բուբլի: Imprimerie Arménienne, Lazare Venice (Italie)

ԼԵԽՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Մ Ի Ք Ա Ն Ի Օ Ր

# ԱՐՑԱԽՈՒՄ ԵՒ ՍԻՒՆԻՔՈՒՄ

Գինն է 20 կոպէկ:

Դիմել գրավաճառներին:

Կովկասի Ռւսումնական Երջանի հոգաբարձական Խոր-  
իրդի որումամբ

Համարուած է պիտանի սկզբնական դպրոցների համար:  
Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ և Լ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

## ՄԱՅՐԵՆԻ ԽՈՍՔ

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՌՆԱՐԿԸ

(Երրորդ և չորրորդ տարիների համար)  
Համառոտ հայերէն-ռուսերէն բառզրով  
Գիւն է 70 Կ.

(246 երես)

Դիմել Թիֆլիս՝ «Գուտտենբերգ» և «Կենտրոնական», իսկ Բա-  
ղու՝ «Сотрудникъ» գրավաճառանոցներին:

**Продолжается подписка**  
на большую политическую и литератур-  
ную газету

## „СОВРЕМЕННИКЪ“

Условия подписки:

Съ 1-го апрѣля по 1 мая 80 коп., по 1 іюня 1 руб. 55  
к. по 1 юля 2 р; 30 к., по августа 3 руб.; по 1 сентября 3  
р. 70 к. по 1 октября 4 р. 50 к. по 1 ноября 5 р. 20 к.,  
по 1 декабря 5 р. 90 к. по 1 января 6 р. 50 к.

РЕДАКЦІЯ и КОНТОРА: Москва, Столешниковъ пер., домъ Об-  
щества «Якорь». Телефонъ № 122-70

## LA REVUE

(Ancienne «Revue des Revues»)

A B O N N E M E N T

Etranger (Union postale) par an: 28 fr.

» » » par semestre 16 fr.

Directeur-Rédacteur en chef

JEAN FINOT

Administration et Rédaction:

12 Avenue de l'Opéra

Paris

## ՈՎ ԵՐ ԻՍԿԱԿԱՆ ՄԵՂԱԻՈՐԸ

(Ուրուազիծ)

Բ. զիւղը բռնուել էր մօտալուա վտանգի տագնաւազով։ Շատ վատ ժամանակներ էին հասել. չար մարդիկ սոված զայլերի նման խումբ-խումբ պտտում էին խաղաղ և շէն զիւղի շուրջը։

Աշնան վերջն էր։ Դաշտային աշխատանքներն համարեա վերջացել էին։ Զմեռը պէտք է՝ իրանց հալալ քրաինքով աշխատած պաշարով թէ մարդիկ և թէ նըրանց բախտակից լծկանները հանդստանային։ Բայց հանգստութիւն չէր լինելու. վատ լուրեր էին հասնում հեռուից, Քուոփ աջ կողմից։ Այնտեղ, ասում էին, հայերի և թուրքերի մէջ արիւնահեղ կոիւները շատ թունդ կերպարանք ճն առել։ «Դալում», ասում էին, հայերը սպանել են տեղիու պրիստաւ-բէզի նղրօն...

Շըջակայ զիւղերի թուրքերը օրէցօր տւելի սպառնալի զիրք էին բռնում հայ մենաւոր զիւղի բնակիչների վերաբերմամբ։ Արեւան հոտ էր փչում շուրջը...

Թէ հայ «ազգասէրները», թէ հոգեսոր «հովիւնները» մօռացել էլ էին այդ զիւղի գոյութեան մասին։ Եւ աշխարհից կտրուած ապրում էր նա իր նահապետական խուարին և նախապաշարմունքներին մատնուած։

Զարագուշակ լուրերը վերջապէս սախպեցին խեղճ զիւղացիներին մարդիկ ուղարկելու իրանց հողատէր թուրք աղայի մօտ էլ, մերձակայ քաղաքում նիստ ունեցող հայ անդորրասէր վեղարաւորի մօտ էլ, նրանք իրանց վախերը պատմեցին գաւաառպետ-բէզին էլ, նոյն իսկ համարձակութիւն ունեցան անհանգստացնելու նորին գերազանցութեան՝ նահանգապետին էլ՝ իրանց աղաչանք պաղատանքներով։ Սակայն՝

«մի ճար, մեզ պաշտպանեցէք, ի սէր Աստծոյ» խօսքերի գիմաց նրանք ամեն տեղ լսում էին սառը, սնամէջ խոստումներ, հանգստացուցիչ, զլիսից ուադ անելու համար արտասանուող խրատներ միայն...

\*

Այժմ օգնութեան հայցողները վերադարձել էին և գիւղամիջում պատմում էին իրանց տեսածն ու լսածը: Եւ խելք-խելքի տուած մտածում էին թէ ինչպէս պաշտպանն իրանց. կարծես ոչ մի մեծ քաղաքակիրթ պետութեան մէջ ապրելիս լինէին այդ խաղաղաւէր մարդիկ, այլ «իշխանութիւն» ու «օրէնք» չիմացող վայրենիների երկրում:

Շրջակայ խրճիթների կտուրների վրայ կուչ էին եկել կանայք և երեխաններ, և օրհասական հետաքրքըր բութեամբ հետեւում էին խօսող տղամարդկանց:

— Տղերք, այդ մեծամեծների բոլոր տսածներից ես միայն մի բան եմ տեսնում, — նկատեց Բագուի ջարդերից ազատուած մի բանուոր, — ես տեսնում եմ որ մեր վերջին օրը եկել է, և ազատում ու պըծում չկայ վայրենի թուրքերի ձեռքից: Մեր մասին մտածող չկայ. մեր ճարը պէտք է ինքներս տեսնենք: Մեռնելու է մեռնենք մարդու նման և ոչ մորթոտուենք անասունների պէս...

— Է՞ն, ի՞նչ կարող ենք անել այդքան թուրքերի դիմաց. լաւ է ունեցած չունեցածներս տանք, աղաշենք, խնդրուենք. գուցէ ազատենք այս անօրինների ձեռքից մեզ էլ, մեր ընաանիքն էլ, — ասաց գիւղի խանութպանը:

— Ա՛խը մենք ի՞նչ վնաս ենք տուել մեր հարևան թուրքերին, նրանք ի՞նչ վատ բան են տեսել մեզնից, հալալ հարևանութիւնից բացի: Ի՞նչ վատ բան է տեսել մեզնից մեր հողատէր աղան, որին միշտ տուել ենք մեզ վրայ սահմանած տուրքն էլ, աթադան-բարադան սովորութեան դառած փէշքէշներն էլ... Մենք մեղր ու մոմ տուող այնպիսի մեղրաճանճեր ենք, որոնք սկի կծել

Էլ չգիտեն, —ասաց գիւղի տիրացուն, մի ալեզարդ ծերունի, որ յայտնի էր գիւղում իբրև լաւ մեղուապահ։

—Մենք կծել չգիտենք, տիրացու ամի, ամա մեզնից պրիստաւ-բէգը ուզում է արեան վրէժ հանել՝ դաղուած մեր այն եղայըներից, որոնք իրանց պաշտապանելիս խայթել էլ գիտեն... Ասում են Ղալում սպանուել է մեր ոչուփուչ պրիստաւի աղբէրը։ Եւ փոխարէնը պէտք է պատժուենք մենք։ Էդ չմոռանաս, տիրացու ամի. Էհ, փառք կը տայիր Աստծուն որ միայն փեթակներդ տանէին և հարս ու աղջիկներդ գերի չդարձնուէին, տղերդ ու թոռնիկներդ սաղ սալամաթ պըրծնէին նրա շների ձեռներից, —նկատեց դառնացած բանուորը։

—Էհ, Աստուած ողորմած է. Բագուի և Նախճաւանի սկ օրերից յետոյ նամէստնիկը հալբաթ հասկացել է թէ բանը ինչումն է. նա հրամայած կը լինի նաշալնիկն որ թոյլ չտայ էդպիսի բաներ։ Զէ որ տէրութիւն կայ, օրէնք կայ, դատաստան կայ. բաս ո՞նց կը լինի որ պրիստաւ-բէգը համորձակուի անմեղ մարդկանց արիւնը թափել...

—Էդպիսի խօսքեր շատ ենք ասել. ամա բան չի դուրս եկել, լսուեց մէկի ձայնը։

—Գերի ընկնենք... երեսանց մահմեղականութիւնընգունենք... Գղիրի այդ խօսքը կտրուեց, որովհետեւ բոլորի ուշադրութիւնը գրաւեց մի լեղապատառ աղաղակ։

—Այ հարայ, գալիս են. էլ թիւ ու համար չկայ... Բղաւում էր մէկը վազելով դէպի գիւղացիների խումբը։ Դա հանդերից փախած մի հօտաղ էր։

Մի ըոպէում հրապարակը դատարկուեց և աննկարագրելի լաց ու շիւան տիրեց գիւղին... Մի քանի հազար ձիւաւոր և հետեւակ, սպառազինուած և բոլորովին անգէն, բայց տոպլակներով, գրաստներով ու սայլերով թալանի համար նախապատրաստուած թուրքեր, պրիստաւ-բէգի և նրա ստրաժնիկների առաջնորդութեամբ։

սպառնական հարայիրոցներով և հրացաններ արձակելով  
դիւղի վրայ էին արշաւում...

\*

Մարդասպանների և թալանչինների այդ ստուար  
խուժանը համարեա ընդդիմադրութիւն չգտաւ հայերի  
կողմից: Աւերեցին գիւղը, պղծեցին ժամը, թալանեցին  
խանութներն ու տները, քշեցին տարան բոլոր տաւարն  
ու հօտը: Գազանաբար մորթոտեցին տղամարդկանց,  
գերի տաշան կանանց, աղջիկներին և երեխաներին:

Մի խումբ մարդիկ միայն կարողացան գուրս  
պրծնել գիւղից խառնաշփոթութեան ժամանակ և փախ-  
չել, պատապարուել մերձակայ անտառի թաւուտում:  
Այդ թագլաստի մէջ երկիւղից կուչ եկած թշուառները  
հեռուից գեռ լսում էին հրացանների ձայններ և «յաղ-  
թութիւնից» մոլեգնած թաթար ամբոխի ոռնոցը:

Փախստականների երեսներին մեռելային դըժ-  
գունութիւն էր տիրել: Ահից գողդողացող այդ կանանց  
և տղամարդկանց գանգի մէջ այդ վայրկեանում միայն  
մի տիրական միտք էր մնացել. փրկել սեփական կետն-  
քը: Բոլորն էլ աշխատում էին խեղտել լացի, ջղային  
հեծկլտանքի ձայնները, աղմուկ չհանել, որպէսզի չմատ-  
նուին հալածող վոհմակների ձեռքը:

Սակայն այն ինչ հասկանալի էր մեծերին՝ կարող  
չէր համոզեցուցիչ լինել հինգամեայ Արթինի համար:  
Նա սաստիկ վախեցել էր մարդկանց այդ արտակարդ  
իրարանցումից, զոռում-զոչումից, լաց ու կոծից, հրա-  
ցանների պայթոցներից, լիլուող կանանց վայնասու-  
նից: Նրան վախցրել էր մայրը, որ լեղապատառ  
վագքի ժամանակ մի տեղ սայթաքուել էր, վայր  
գցել մանուկին և սաստիկ ցաւացրել նրան: Ար-  
թինը չէր կարողանում հանգստանալ, ճչում էր ցա-  
ւից, թէն նրա թշուառ մայրը, միւս բախտակից-  
ների սպառնական հայեացքներից և նշաններից ստի-  
պուած, սեղմում էր երեխայի բերանը, որ նրա ձայնը  
չլսուի: Արթինի համար այդ անսովոր բռնութիւնը աւե-

լի ևս անհասկանալի էր և նա թլպլտում էր մօր գըրկում որ չխեղգուի:

—Սսացրու անզգամին, շշնջաց օձի պէս դալլաք Մինասը. հրէ՞ն գիւղից դէպի մեզ են զալիս թուրքերը: Լակոտիդ ձայնը կտրցրու, թէ ոչ»... Սակայն ի՞նչ կարող էր անել թշուառ մայրը: Երեխան չէր հանգստանում: Եւ այդ փախստականների մէջ կեանքը փրկելու բնազդը հասաւ այն աստիճանին, որ համարեա բոլորի մտքով անցաւ մի եսամոլ միտք. ի՞նչու զոհուենք այդ Արթինի պատճառով... Այդ ընդհանուր տրամադրութեան կարծես արտայայտիչ լինէր դալլաք Մինասը, որի գազանացած սրտում յղացտ մի հրէշաւոր որոշում. —իւլել մօր դրկից Արթինին և... մորթել նրան ածելիով... Եւ նա իրագործեց իր որոշումը՝ ահից սարսափահար հանդիսականների աչքերի առջեւ... Զարհուրելի, ահռելի, քստմիելի սպանութիւն...

Արդ, հարցնում եմ ձեզ, ընթերցող, ով էր այդ բարբարոսութեան մէջ իսկական մեղապարար:

Սամաս

## ՎԵՐԱ

### „ՄԵԿԸ ՇԱՏԵՐԻ ՀԱՄԱՐ“

Մի աղջկայ օրատետը հց 1)

Նոյեմբերի 25-ին:

Այսօր ես փորձում էի իմ պստկադրութեան զգեստը։ Դա իրականութեան մի մասն էր, որ ներս խուժեց իմ ցնորքանը՝ մասն կեանքի մէջ։

Երեք շաբաթից յետոյ իմ հարսանիքն է։

Իմ մտքերը յամառութեամբ սահում են այդ երեակայութեան մօտով, նա յանկարծակի անհետացաւ իմ զիտակցութեան մէջ։

Իսկ առաջ նա իմ միայնակ ժամերի ամենաքաղցր երազըն էր։

Այժմ ես փախչում եմ այդ երազից։ Այն ամենը, որ առաջ ինձ ամենավսեմ երջանկութիւն էր թւում, հետզհետէ չորանում է իմ վշտի ազգեցութեան տակ։

Իմ հոգու սպասած հրաշագեղ երջանկութիւնն այժմ մեռնում է տանջող ցնցումների մէջ։

Այժմ կեանքի ամեն մի շարժման մէջ ես զգուանք ու գատարկութիւն եմ տեսնում։

Ինձ շատ անգամ թւում է, որ ես էլ եմ ցեխոտուած... այս կեղծիքների հեղեղի մէջ...

Թէորզը զգում է, որ ես դուրս եմ պրծնում նրա ձեռքից։ Նա աշխատում է ինձ մեխել իրան։ Նա վշտալից կարօտով որսում է իմ ամեն մի հայեացքը, որտիս ջերմութեան ամեն մի սօսափիւը։

Նա փափագում է իմ նախկին փաղաքշանքներին։ բայց

Հի համարձակում ինձ մօտենալ: Նա միայն աչքերով է ինձ գրկում... աչքերով և խօսքերով...

Ես յուսահատութեամբ փորձեր եմ անում բանականութեան ապացոյցներով խեղդերու իմ դզուանքս... և ինքս ինձ մեղադրում եմ:

Ես անգամ ինձ յաջողւում է մեղմ և զիջող լինել. և ես կամենում եմ անպայման և յաւիտեան հաւատալ...

Եւ յաճախ զարթնում է իմ քնած սիրոյ զգացմունքը և ես կաթողին տարածում եմ բազուկներս...

Բայց իմ սիրոյ հանից չար աչքերով հետեւում է իմ այն սոսկալի յիշողութիւնը... և նորից ինձ գարձնում է անգութուստուն:

Եւ այդ ժամանակ ինձ թւում է, թէ ես Գէորգի կինը չեմ կարող լինել...

Այսպէս պատառոտուած է իմ հոգին: Ահա այսպէս անօգնական և դժբախտ եմ ես...

Իմ խեղճ ծնողները ոչ մի բան չեն կասկածում: Նրանց ներկայութեամբ ես դիմակաւորւում եմ:

Նոյեմբերի 29-ին:

Այսօր արուարձանում անսիտ կերպով թափառելիս, պատահեցի մի աղքատ և սապատաւոր աղջկայ: Նա ողորմութիւն չխնդրեց, բայց այնպիսի անյոյս աղերսանքով և վատով բարձրացրեց իր հայեացքն գէպի ինձ, որ ինձ թուաշ, թէ նա օդնութիւն է կանչում... օդնութիւն իր տառապանքին...

Ես նրան տուի մօտիս եղած բոլոր փողերը:

—Աստուած ձեզ վարձատրէ.—ասաց նա իր մեղմ և տըխուր մանկան ձայնով...

Եւ այդ ժամանակ իմ մէջ զարթնեց խորը և մաքուր կարեկցութիւն և քնքշութեան նման մի բան դէպի այդ թշուառ և հաշմանդամ էակը:

Ես կուացայ դէպի նա և փաղաքշանքով սկսեցի շոյել նըրա մաղերը:

Սապատաւոր աղջիկը սկսեց դառնագին լաց լինել և համբուրել իմ ձեռքերը այնպէս կաթողին, այնպիսի ջերմ գոռհունակութեամբ...

Դա նրա թշուառ կեանքի մէջ երջանկութեան մի ճառագայթ էր. այն կեանքի, որին անծանօթ էր կարեկցութիւնը...

Ես էլ կը կամենայի կանգնել փողոցի անկիւնում և ողորմութիւն ինսդրել... աղերսալից հայեացքով և տարածած բազուկներով... Ես կը ինդրէի մաքրութիւն, ողջախոնութիւն և

ոյժ... Ես անխօս կը խնդրէի, սապատաւոր աղջկայ սման... իմ հաշմանդամ կեանքի համար...

Բայց այդ ողորմելի և թերակազմ մարդիկ անցնում են իմ մօտից ժպտող աչքերով և անգութ որտով:

Եւ ոչ ոք ինձ ողորմութիւն չի տալիս... Ոչ ոք...

Դեկտեմբերի 1-ին.

Այսօր ես հրաժեշտի նամակ էի գրում Գէորգին: Մի այնպիսի նամակ, որի գրելու ժամանակ դառնապին լաց են լինում և արբենում սեփական վշտով, առանց համելու նրա իսկական լրջութեանը: Այնտեղ կային շատ գեղեցիկ և հաջիւն խօսքեր անտեղի տանջանքների, կորսարեր մոլորութիւնների և խորտակուած երջանկութեան մասին: Դա մի սովորական նամակ էր սրտաշարժ հրաժեշտով և կեղծ ինքնամեղադրանքով... Ես ամաչեցի ինքս ինձանից, երբ կարգացի գրածս... Ես պատռեցի այդ նամակը:

Յետոյ իմ զգացմունքները օրհասական ոյժով ուրիշ ուղղ դութիւն ստացան: Ես կամենում իմ սթափուել իմ կամքի ուժապառ արբենալուց: Ես կամենում եմ ամրանալ և յաղթել... Ես կամենում եմ ինձ վատնել սիրոյ մէջ և փոխարէնը ոչինչ չստանալ. ինչպէս որ արել վատնում է իր լոյսն ու ջերմութիւնը անձնազո՞ն առատութեամբ... Ես կամենում եմ անսահման պարգևել... Ո՞հ, որքան չնշին, թոյլ ու խղճալի է եղել իմ սէրը մինչև այժմ: Շատ կարելի է, որ իսկական քաջութիւնն այն է, որ քայլում է դիակների վրայով:

Դեկտեմբերի 2-ին:

Ես ուրախ եմ իմ որոշումից: Նա իմ սիրոյ փորձաքարն է կազմում: Մանը և ստոր զգացմունքներս անհետանում են իմ միջից: Կինը իր գիտակցութեան մէջ միայն այն ժամանակ է բարձրանում, երբ տանջում է: Դրա համար էլ նրան այնքան ստիպում են տանջուել:

Դեկտեմբերի 5-ին:

Տղամարդիկ զուրկ են համբերութիւնից, ինչպէս և զուրկ են նաև պասսիւ դիմագրութիւնից:

Մի յիմար և դատարկագլուխ երիտասարդ—այլանդակ կեանքի մի իսկական տիպար—ասաց ինձ մի անգամ.

—Մենք, տղամարդիկս, չենք կարող հաւատարիմ լինել, որովհետեւ հաւատարմութիւնն իր մէջ չունի գործունեայ ոյժեր: Տղամարդիկ պէտք է ձգտեն, յաղթեն և հրաապուրեն... Հէնց դրա մէջ է ոյժը:

Այսպիսի հայեացքները շատ յարմար քող են անառակութեան համար: Նրանք մի տեսակ անցաթուղթ են զանազան մոլութիւնների համար, անցաթուղթ՝ ժամանակակից պատանիների ձեռքում, որոնք առում են, «հարկաւոր է կեանքից օդուել»:

Եւ որտեղ կառավարութիւնն իր «փրկարար» հիմնարկութիւններով չի հարթում ճանապարհը, այստեղ կըսկսեն այն ցածրիկ ցանկապատների վրայից թոշել որ կոչւում է ամուսնութիւն, ոչ... հաւատարմութիւն...

Ենուական անառակութեան սոսկալի չարիքը հետեանք է մեր այլանդակ դաստիարակութեան: Անարդար, երկակի բարոյագիտութիւնը հետեանք է՝ սխալ, ի չարը զործ դրուող ոյժերի:

Պատանիներն, իրանց ծնողների, դաստիարակների, հասարակութեան բարոյագիտական հայեացքներից քաջալերուած, իրաւունք ունեն խրուել առենակեղաստ վայելքների մէջ, և նրանք չեն կորցնում իրանց յարգը ուրիշների աչքում: Կարծես, նրանք ոչընչով չեն խախտում բարոյագիտութեան պահնջը, այս բոլոր ցոփութիւններից յետոյ նրանք ամուսնանում են և գերախտացնում անմեղ ու ջահէլ էակներին—օրիորդներին և կամ, որ հազարապատիկ վասթար է, նրանց մղում են գէպի գաւաճանութիւն և զարշանք:

Մեր ունեոր դասակարգի օրիորդները դաստիարակուում են տաք մթնոլորում, հոգատարութեամբ պահպանուած ու պատըսպարուած: Նրանք կոյր և անուս են ստնում կեանքի առարկութելը:

Մինչև հիմա էլ հասարակութեան լայն շրջաններում այն սխալ կարծիքն է տիրում, թէ կեանքի բնական երևոյթները չհասկանալին ու մարմնական կուսութիւնը իրար հետ ձեռք ձեռքի տուած պէտք է ընթանան: Սրա վերաբերեալ ամեն մի անփութութիւն յանցանք է համարւում: Եւ ահա կեանքի համար բոլորովին անպատճաստ օրիորդները յանկարծ ընկնում են պարտականութիւնների և պատասխանատութիւնների շըրջանը... և նրանցից շատ-շատերը մի գեղեցիկ օր իրանց խարուած են տեսնում...

Եւ այսպիսի ճանապարհներով սպանում են կնոջ ամենագեղեցիկ, ամենամաքուր և ամենավսեմ զզացմունքները:

Տղամարդիկ զրկել են կանանց այն անկախութիւնից, որ առատօրէն վայելում են իրանք: Եթէ կինը աղնիւ է, բարի է: Նա իր ամբողջ կեանքում պէտք է տանջուի իր առաջին հիա-

սթափութիւնից: Իսկ եթէ Դա իր մէջ չարութեան սերմեր է կրում, շուտով կընկնի դատարկութեան անդունդը:

Եւ ահա այսպիսով կինը իր որդիներին դաստիարակում է ճանիճի համար, իսկ իր աղջիկներին պահում է անմեղութեան նեղ պատերի մէջ—ոչ թէ բարոյականութեան դրդմամբ—օ՛, ոչ, այլ այն պատճարով, որ այդ ողջախոհութիւնը շատ դնողներ կը գրաւէ և ապրանքի արժէքը կը բարձրացնէ...

Սա մի ճանապարհ է, որ թէն դանդաղ, բայց հաստատում կերպով տանում է դէպի սոսկալի անկում:

Սա չափազանցութիւն չէ, իբականութիւնն ինքը ցոյց է տալիս այս տմբն օր և ամեն ժամ:

Ամենալաւ պատկերները միշտ ծաղրսնկարներ են թւում մեզ:

Դեկտեմբերի 4-ին:

Երբ այսօր մթնշողին Գէորգը մտաւ իմ սենեակը, ևս նստած էի լուսամուտի մօտ և լաց էի լինում:

Մի ինչ որ ուրախալի և սփոփիչ բան կար արտասունքներիս մէջ: Նրանք տանջող ոչինչ չունէին իրանց մէջ: Գէորգը երեկի բնազդմամբ զգաց այդ, որովհետև առանց մի խօսք ասելու քաշեց ինձ իր մօտ և համբուրեց: Նրա համբոյրներն այրեցին երեսու:

Իմ ուժասպառ զգացմունքները համբ մնացին նրա անսպասելի բռնկումին, բայց ևս չէի ընդգիւմանում նրան: Նա քննչութեան անմիտ խօսքեր էր մրմնջում: Իսկ յետոյ ընկածնկաչոր իմ առաջ և աղերսում էր՝ սէր և լիովին ու կատարեալ ներումն:

—Վերա, հառաջում էր նա.—մի ստիպիր ինձ քաւել ընդհանուրի մեծ մեղքը: Մի թողնիր ինձ կորչելու: Խլիք քոյիշողութիւնից այդ անշեալը... ևս սլանում եմ դէպի քեզ, վերա... լսում ես զու...

Նա գրկել էր իմ ծնկները: Նրա ամբողջ մարմինը դողում էր: Նրա մէջ ամեն բան տհնդային լարուած գրութեան մէջ էր...

Ես զգում էի, թէ ինչու իմ մտքերը ցրւում էին զանազան ուղղութեամբ և զանազան կողմեր: Մնացել էր միայն զգացմունքների մի քառա: Ամենակարող կամքը կը կարողանար նրանից մի աշխարհ ստեղծել:

Բայց ես թոյլ էի...

Կամաց, շատ կամաց տարայ ձեռքս Գէորգի ճակատի վրայով... և շոյեցի նրա մաղերը...

—Ես կ'աշխատիմ.—Հըշնջացի ես:  
Գէորգը պահեց իր գլուխը ծնկներիս մէջ և արտասուեց...

Դեկտեմբերի 5-ին:

Մենք մի չքնաղ, փոքրիկ բնակարան վարձեցինք խաղաղ փողոցի վրայ, չորրորդ յարկում:

Մեր բնակարանի արդ ու զարդի մէջ Գէորգը մտցրեց իր գեղարուեստական ճաշակի ամբողջ նրբութիւնը: Ամեն բան փայլում է պարզութեամբ: Քնքոյց զոյներ, հանդարտ, որոշ գժեր: Այդտեղ չկան ոչ աչք ծակող Բարօք կամ Rokoko... բոլորը հասարակ անգլիական ճեներ են: Պատերի վրայ կախուած են շատ գեղեցիկ պատկերներ, նշանաւոր հին Գէորգի սիրած արուեստագէտների՝ Լէօնարդօֆի, Բելլինիի, Բոտիչելիի... նկարների ընդօրինակութիւնները... Նոյնպէս Բեոլլինի «Մեռեալների կղզու» ընդօրինակութիւնը:

Շատ անգամ բոլորովին անտարբեր եմ դառնում դէալի գեղարուեստը, որ այնքան սիրում եմ... Նա մի համեղ պատու է նրաբաճաշակ մարդկանց համար: Եւ դրանք այն մարդիկն են, որոնք իրանց երջանիկ են զգում...

Դեռ ևս մեր բնակարանի վրայով սաւանում է հին, նեխուած և մեսած օդի շունչը: Այդ շունչը վհատեցնում է մարդկային հոգին: Նրա մէջ մի սոսկալի և անսովոր բան կայ. բայց դրա հետ միասին կայ նաև մի ինչ որ գեղեցկութիւն:

Շատ անգամ ես աննկատելի կերպով բարձրանում եմ գերեւ. բոլորովին մենակ... և լարուած զգացմոնքներով աշխատում եմ քողի յետնեց տեսնել իմ ապագայ օրերը:

Ես չեմ համարձակում մտածել, որ տաման օր էլ... տաման օր էլ... և այն ժամանակ...

Մի սենեակը դեռ բոլորովին դատարկ է...

Դեկտեմբերի 7-ին:

Օրերն անցնում են իմ մօտով, որպէս վիթխարի հարցական նշաններ: Ամեն մի օրը սպասում է մի բանի—մի որևէ անակնակալ, աղղոտ... անսահծ... բանի... մեքենայաբար կատարում եմ ես իմ տմինօրեայ գործը: Մեքենայաբար մտածում եմ իմ սովորական մտածմունքները:

Շատ անգամ ինձ թւում է, թէ իմ գիտակցութիւնը երկու մասի է բաժանուել՝ դիտող և ապրող մասերի: Առաջինը քննադատում է երկրորդին անաշառ հանգստութեամբ... իսկ միւսը հասաչում է յուսահատութեամբ լցուած:

Առաջինը իսկական է և կեղծ՝ իր միջնորդութեան մէջ... միւսը ճշմարիտ է և բարի:

Եւ գիտակցութեան այդ երկու մասերը վիճում են և կուռում իրար գէմ:

Դիմող մասը ասում է ինձ, «յազմիր քեզ, որովհետև գու սիրում ես» Եւ ապրող մասն ասում է, «հրաժարուիր, որովհետև դու սիրում ես»:

Սա իմ զգացմունքնիրի հոսանքն է, որ մերթ բարձրաւ նում է, մերթ ցածրանում է...

Իսկ Գէորգը ման է գալիս երանելի անուշջնիրի յուզմունքներով բռնուած և երազում է մանկական ցնորքնիրով երջաւ նկութեան ու սիրոյ մասին...

Այս զարմանալի հաւատը — մարդկային կեանքի հիմքն է կազմում...

Դեկտեմբերի 10-ին:

Ես հանգստութիւն չեմ գտնում: Ես մէկ գործից գէպի միւսն եմ անցնում: Ոչ մի բան ինձ չի գրաւում: Ոչ մի բան ինձ ուրախութիւն չի պատճառում: Ես կորցրել եմ կեանքիս նպատակը:

Իմ հոգու մէջ, կարծես, օտար, կոշտ, ցաւ պատճառող մի մարմին կայ:

Ես չեմ կարողանում տանը նստել, թափառում եմ փողոցներով:

Անպատակ անցնում եմ ամրոխի միջով: Մեքենայաբար կանգնում եմ խանութնիրի առաջ: Մեքենայաբար հայեացքու ընկում է շատապող մարդկանց դէմքերին...

\*Երբեմն իմ հոգու մէջ սոլում է մի անհանգիստ միտք, որ աւելի գրգռում է նրա խոր ու ցնցող վէրքը:

Իմ շուրջը կուռում է կեանքը: Կառքերը որոտում են: Բարձրածայն կանչում են վաճառանոցի կանայք: Մարդիկ խորասուզուած են իրանց մտքերի մէջ:

Կանայք անցնում են իմ մօտով ահազին գլխարկներով և գրգոիչ ժպիտներով:

Եւ ատելութեան զգացմունքը բարձրանում է իմ հոգու խորքից:

Նրանք էլ երեխ սրանց նման են եղել... սրանց նման...

Տղամարդիկ նայում են ինձ անպատկառ և լիրք հայեացքով:

Ես այդ զգում եմ, որպէս Փիզիկական մի ցաւ:

Առաջ ես ման էի գալիս, կարծես, ամպով պատճած և կոյլ էի դէպի ամենօրեայ գարշանքները... իսկ այժմ...

Ամեն բան ինձ համար անհատական նշանակութիւն է

ատանում, ամեն բան ինձ համար խիստ է երևում: Եւ ես մենակ եմ... բոլորովին մենակ...

## Դեկտեմբերի 11-ին

Այսօր ես յետ հրեցի Գէորգին, երբ նա ուզում էր ինձ պդուել:

Ինձ թուաց, թէ ես յանկարծ տեսայ նրա հոգու ջրանցքը, որտեղ հաւաքուած է նրա անցեալ տարիների ամբողջ կեղտը:

Ապշեցուցիչ պարզութեամբ ես երեակայեցի այն գըտուանքները, որ նա գնում էր փողով:

Համարեա շօշափելի ձեռվ ներկայացաւ նա իմ առաջ... միենոյն կրակոտ հայեացով... միենոյն զգայուն շրթունքներով... միենոյն ցանկութիւններով... ուրիշի գրկում:

Այդ երեակայութիւնն այլում էր իմ ուզեղը:

Ինձ բաւականութիւն էր պատճառում նրան կեղտոտել դրանով, սաղրացնել... իս սեփական զգացմունքի առաջ... վայր գցել նրան այն պատուանդանից, որ կառուցել էր իմ սէրը նրա համար:

Ինձ թւում էր, թէ նա պղծեց ինձ այն միենոյն անսարուր համրոյրով, որի հետ միասին նա վատնել է իր երիտասարդութիւնը:

Ես ինձ արատաւորուած էի համարում նրա մտքերից... այդ շատ անգամ կրկնուած սիրոյ խոստովանութիւնից, որ նա շնչում էր... և լաւ ուսումնասիրած գրկախառնութիւններից:

Նրա զգայնութիւնը զգուելի էր ինձ համար: Նա ինձ թւում էր կոպիտ, անասնական և դատարկ:

Նա հեռացաւ ինձանից վիրաւորուած մինչև հոգու խորշը: Ես զգում էի, որ կտրուած էին մեր կեանքերը կապող բուրք թելերը... որ անհետացած է մեր ընդհանուր ապագայի հնարաւորութիւնը... որ իս հաւատը մեռած է:

Ե՞ս այլևս չեմ կարող հաւատալ նրա սիրուն, նրա հաստատմութեանը:

Ամուսնութեամբ մաքրուել, նորոգուել՝ ցոփ երիտասարդութիւնից յետոյ... զրանք միայն խօսքեր են, որոնցով տղամարդիկ խարում են իրանց... դատարկ, կեղծ խօսքեր...

Սովորութիւնները, որ արմատանում են ձեր էութեան մէջ, պատանեկութեան զօրեղ տպաւորութիւնները, չի կարելի ձեռքի մի հարուածով հեռացնել ձեր կիանքի հորիզոնից:

Կարելի է, զուցէ, մաքրել արտաքինը, բայց այն, ինչոր թափանցել է ծակոտիների մէջ, հոսում է երակներում և հա-

դորդում է հոգեսոր ամբողջ կազմուածքին. նա դարձեալ տռաչ՝ կը գնայ, գտնելով ազատ հող...

Եւ կեսնքի ըռպէներին նա նորից կը զարթնի, նորից կը կենդանանայ, գուրս կը գայ գերեզմանից, կը տարածէ դէպի ձեզ իր մագիլները, կը կպչի ձեզ, թունաւորելով թունալից շնչով նոր փթթող ծաղկիները...

Այսօր առաջին անգամ, որպէս փոթորկալից ամպ, մի միտք ծագեց իմ մէջ... սոսկալի մի միտք...

Դեկտեմբերի 12-ին:

Կան մրգեր, որոնք գործ են ածում միայն նեխուած դրութեան մէջ: Ես միշտ անյաղթելի զղուանք էի զղում դէպի այդ մրգերը և չէի փորձում:

Միայն մի անգամ զօրով դրի բերանս փորձելու համար... իայց իսկոյն զէն շպրտեցի...

Դեկտեմբերի 13-ին:

Ինձ տանջում է մի սոսկալի կասկած: Արգեօք, ես իմ ծնողների առաջ պարտական չեմ՝ համբերել... սպասել... տանել կեանքը, եթէ նոյն խոկ նա գուրկ է ամենալաւ ցնորդից... Արգեօք, պարտական չեմ՝ սիրով և երախտիքով նրանց նուիրել կեանքը: Միթէ սա իմ սուրբ պարտականութիւնը չէ: Արգեօք, ոճրագործութիւն չի լինի, եթէ ինձ խեմ նրանցից: Արգեօք, զա չի նշանակում ի չարը գործ դնել այն բարիքը, որ նրանք ինձ տուել են: Ընդհանրապէս, կայ, արդեօք, սեփական ճակատագիրը կարգադրելու իրաւունք: Սա մի դատարկ խօսք է... նման միւս հաղարաւոր ծանրակշիռ խօսքերին: Դատարկ խօսք, որ պատկերամարտները—ամեն տեսակ պատճառաբանութիւնների հակառակորդները—կոյր հաւատով գցել են աշխարհի մէջ:

Մենք ծանրաբենուած ենք շլթաներով: Ամենաչնչին արտայայտութիւնն անգամ գերում է մեզ, նա կոխում է մեր գործողութիւնները նախասահմանած ձեռքի մէջ, տիրապետում է մեր կամքին և նրա արտայայտութիւններին: Մենք ինքնագործ մեքենաներ չենք, այլ կեանքի գործիքներ... տիեզերական մեքենայի անիւները... Կպչում ենք իրար, ոչնչանում ենք, երբ անպէտք ենք դառնում: Եւ այդպէս տարածում է տանջանքը... միշտ հեռու... միշտ հեռու...

Ես հալ ու մաշ եմ լինում այդ անտանելի մտատանջութիւնից, որ միակ սփոփանքն է ինձ համար:

Բայց այժմ ես ոյժ չունիմ: Ես այլիս չեմ կարող տանել այդ մշտական մտրակումը...

Շատ կարելի է, ևս աւելի խնր վէրք հասցնէի իմ ծնողների սրտին, եթէ քաշ գայի Թէորդի հետ, որպէս կենդանի դիակ... Կամաց-կամաց տարրալուծուելով և նեխուելով... և այդ իմ ծաղիկ երիտասարդութեան տարիներում...

Միթէ ծնողներն իրանց զաւակի կեանքի վրայ իրաւունքը ունին և այն գէսլքում, երբ այդ կեանքը ներկայացնում է անբուժելի և անհուղղելի չարիք...

Միթէ մեզը կը լինի, եթէ ևս... բայց ևս այլիս ոյժ չունիմ բարի լինելու:

Դա սոսկալի է...

Գևիտեմբերի 14-ին:

Ես ամեն բանի հետ հաշիւս վերջացրել եմ—իմ ցանկութիւնների, իմ յօյսերի, եմ հպարտութեան... Ամեն բանի հետ...

Իմ մէջ չկայ ոչինչ, բացի անսահման, մհուկացին գատարկութիւնից...

Խենթութիւն կը լինէր հաւատալ երազած երջանկութեանը... ճահիճի վրայ հիմնել կեանքի շէնքը...

Ես քաջարի և անտարբեր կերպով իմ զիմաւորում մահուան: Ոչ մի բան ինձ չի վախեցնում: Ես այրիցի իմ յետնից բոլոր կամուրջները: Այլևս վերազանալ անկարող եմ:

Ես զէն շվրտեցի խղճնել և վախկոս անվճռականութիւնը, որ իմ շրջանի օրիորդների մթնոլորտն է կազմում: Ես չեմ կարող իմ անհատականութիւնը կամաց-կամաց ոչնչացնել:

Ես հետեւում եմ այն ոյժին, որ ամենալաւ համոզմունքներից էլածուը է:

Ես նման եմ մի քարի, որ նետուած է ներքեւ: Յոյսերից ու ցնորբներից զուրկ կեանքի ծանրաւթիւնն ինձ քաշում է:

Ես չեմ կարող խարել այն մարդուն, որին այս աշխարհում ես ամենից շատ եմ սիրում:

Ես չեմ կարող նրա գիրկն ընկնել, առանց ֆիզիկական զգուանքի: Չեմ կարող նրա կողքին ապրել... առանց յիշելու նրա անջնջելի ու ստոր անցեալը...

Բայց ես նրան առաջուանից պակաս չեմ սիրում...

Եւ որովհետեւ ես չեմ կարող նրա հետ ապրել... և չեմ կարող առանց նրան ապրել... որա համար... ես ընտրում եմ միակ ճանապարհը...

Մի մեծ և սփոփիչ հանգստութիւն է տիրում իմ հողուն այն ժամանակուանից, երբ ես զգացի այդ: Նոյն իսկ իմ սեփական մեղքի զգացմունքը անհետացել է վերջին օրերի մաքառում-ների մէջ:

Այն մարդիկ, որոնք կոպիտ միօրինակութեամբ ծիծաղում էին իմ գաղափարների վրայ, որպէս անիրազործելի չսփազանցութիւնների վրայ, այն տղամարդիկ, որոնք ծաղրում էին ինձ (սրտի խորթում զգալով իրանց մեղքը) ... կը դադարեն մի բռպէ ծիծաղելուց, երբ կ'իմանան այս...

Եւ գուցէ մաքուր և նուրբ զզացմունքով կանայք, կարգալով իմ ճակատագրի մասին... կը սկսեն ինձ նման մտածել... գուցէ կ'ապրեն իմ կեանքով և կը տանջուեն իմ տանջանքով...

Եւ իթէ ինձ յաջողուի գէթ մի փոքրիկ քար դնել մաքուր, ողջախոհ ապագայի հրաշալի շէնքի համար... այդ գէպը արժէ իմ կեանքը զոհել:

**ԳԵՐԺԱՆԻ. ԹԱՐԻԴ. ՄԻԼԻՇՆ ՀՐԱՄԱՅ.՝**

**ԹՈՒՐՔՈ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐՇԱԿԱՆՔԻ ՔՍՆԵԽՀԻՆԳԱ-  
ՄԵԱԿԸ**

1880—1905

V

Միւս առաւօտ մեր քարավանը արդէն կազմու պատրաստ ճանապարհ ընկաւ դէպի Վան, Մեր քուրդ մահմանդարը ջուկատ մի ձիաւորներավ մեզ ուզեկից եղաւ մինչեւ Մարտօնի հինաւուրց վանքը՝ Շամդղինանից 7—8 ժամ հեռաւորութեամբ, ուր իր աթուն ունի Ասորոց Մաթրոնը, Մարշիմոնի փոխանորդը, որ թէկ աստիճանով կաթուզիկոսից վար է, բայց եկեղեցական պաշտօնով նրանից բարձր է իր նշանակութիւնը, բանզի նա է օծում կաթուզիկոսին հանդիսաւոր ծիսակատարութեամբ և ասորոց թէ քրդաց մօտ մհծ հեղինակութիւն է վայ-իլում:

Հոն համելով մահմանդարը և իր հետևորդները առատօքէն պարզեատրուելով մեկնեցան, իսկ մենք գիշերեցինք վաճառքում: Նահապետական պարզութեան մէջ ապրող, աշխարհից անջատուած 80 ամեայ, առոյգ և քաջառոյջ ծերունափայլ կրօնաւորը մեծ ուրախութեամբ և սիրալիր մեզ ընդունեց: Նա արտասուելու չափ յուղուեց երր տեղեկացաւ որ ինկիլիչի կոնսուլն էր իր գլխաւոր հիւրը: Որչափ մեծ պատիւ զառամեալ ծերունուն համար, որի աչքերը հոգնել, մթնել էին սպասելով երկար, աղէաալի տարիների շարքում և ընթացքում մի այսպիսի բարձրաստիճան հիւրի այցելութեանը: Սա էլ թուրքերէն բոլորովին չէր իմանում, և մենք պիտի չկարողանայինք նրա հետ տեսակցիլ և խօսակցիլ ևթէ բարեբախտաբար Մար-Շիմոնի մարդիկներից մինը զործով այնտեղ գանուելով թարգմանի պաշտօն չկատարէր: Խօսակցութիւնը օրուայ վառ հարցի մասին էր—բրդական խլբումները և շարժումները բարի ծերունու էլ լուրջ ուշագրութիւնը գրաւել էին և նա որ ականատես էր եղել Պետրիսան բէզի արիւնահեղ արշաւանքներին, սոսկալի կոտորածներին և վանդալական թալանին, իբր 40 տարիներ առաջ, սրտատրոփ նայում էր օրուայ մեծ հարցին վրայ:

Հիւպատոսը հարցրեց նրա կարծիքը ի մասին շէյխի նպատակին ու ծրագրին. Մաթրոնը նախ հաստատեց որ մի ինչ որ արտասովոր շարժումներ կան քրդաց միջե, թէ Շէյխը իր մօտ է հրաւիրել բոլոր քուրդ աշխաթների Էլաղասիւներին—ցեղապետներին խորհրդակցելու, ի մօտոյ կատարուելիք մի արշաւանքի մասին, բայց թէ այդ խորհրդակցութիւնները խիստ գաղտնի են պահուում: Գալով այն կէտին թէ որտեղ և ուժ վրայ են յարձակուելու նրանք, Մաթրոնը ասեց որ ինքը ամենայն վստահութեամբ կարող է եղրակացնել թէ քրդերը կը յարձակուեն նախ հայերի վրայ Վահում և շրջակայներում և նրանց հետ իրանց հաշիւը վերջացնելուց յետոյ նրանք կ'արշաւեն Ասորոց, վրայ որոնք ցանուցը բնակուած են Տիորի, Դիսումա, Բաղ, Ծէղ, Ծէլօ, Լեին և Զուլամէրիլ գաւառներում, և թէ արշաւանքից յետոյ կը հաստատուի քրդական իշխանութիւն ընդ հովանեաւ և գերիշխանութեամբ սուլթանին, որին շատ ցանկալի էր այդպիսի մի բան եւրոպական միջամտութեանց և ոտնձգութեանց Թիւրքիայում դրանով վերջ ու վախճանն տալու, որպէս այդ տեսակ մի բան արդէն կատարուած է եղել Եղիպատուում: Պատկառելի ծերունին խօսում էր փորձասութեամբ ու մեծ հմտութեամբ և նրա խօսքերը մեծ տպաւորութիւն թողեցին թագուհու ներկայացուցչի մաքին վրայ: Նա

համոզուեց որ Շէյխը խարել էր նրան պարզապէս, իր պերճախօս ճառերովը թագցնելով ամենայն ճարպիկութեամբ նրանից իր գաղտնի մաքերն ու նպատակները և արգելով նրան թափանցել իր գիտաւորութիւնների խորը: Դրութիւնը լուրջ էր և հարկ անհրաժեշտ էր մի կերպով լուր հասցնել Պոլիս գետանին, բայց դա բոլորովին անհնար էր այս ամայի լերանց գլխներում, ուր նա թափառում էր: Աւստի և նա որոշեց կարելի եղածին արագօրէն վերադառնալ Վան: Գիշերը շատ երկար հստեցինք և խօսակցութիւնը շարունակուեց գրեթէ մինչև հաւախօսին: Մաթրոնը պատմում էր սոսկալի մանրամանութիւններ 1842 թ. մեծ կոտորածից, որից ինքը մազապատուրծ յաջողել էր լինել մի կերպով: Քրդերի անխղճութիւնը նա մարմացած անզթութիւն էր անուանում: Ազատ լեռնական ծերուկը առանց կեղծ փողիթիկայի անվախ և համարձակ կերպով Անգլիացոց երեսին շպրտեց նրանց գործած մի մեծ, աններելի սխալը զոր նա «անքաւելի ոճիր» անուանեց, այսինքն այն մեծ սխալը, զոր նրանք գործեցին Լորդ Պալմոտրոնի օրով, յորժամ պատահել էր ասորոց մեծ ջարդը, թոյլ տալով սուլթանին մարսել այդ թափուած գետերով արիւն արցունը մի հինաւուրց անպաշտպան քրիստոնեայ ժողովրդեան, որ իր յոյսը գրած էր միայն Մեծ Բրիտանիոյ վրայ, և չնչին բաներով գոհացում ստացած համարեցին ինքինքնին, առանց մի որևէ հիմնական բարեփոխում առաջ բերելու խեղճ, թշուառ, նահատակուած, արիւնաքամ և քարուքանդ եղած ասորի ժողովուրդի անտանելի վիճակին մէջ, որը յետոյ հղաւ յշտին քառաջինը չար»: Նա խօսում էր մեծ յուզմամբ, կարելի է ասել մինչև իսկ արդար զայրոյթով, նա յիշեց 1862 Լիբանանի մեծ ջարդերը և բազգատութեան գրեց Ֆրանսան Մեծին Բրիտանիոյ հետ, պատմելով թէ ինչպէս Նապոլէօն III կայսրը մի սոսուար բանակ և նաւատորմիլ ուղարկելով Լիբանան, զրաւել տուեց Բերութ ծովային քաղաքը, ստիպելով սուլթանին, որ ահարեկուած էր այդ հզօր սիրիական ցոյցից, արդարութիւն ընել թերես իր կեանքում առաջին ու վերջին անգամն լինելով (ինչպէս նաև օսմանեան տարեգորութեանց ու պատմութեան մէջ) բարի բռն և լիակատար նշանակութեամբը. այն է որ ջարդի զլխաւոր հեղինակները ու թալանի պարագաւուիմները մի առ մի բնուելով կախաղանի վրայ հանուեցին ի խրատ այլոց. իսկ Լիբանանում հաստատուեց նոր, ինքնօրէն կառավարութիւն ընդ հովանեաւ զլխաւորապէս Ֆրանսայի և ապա նաև միւս պետութեանց: «Գոնէ, յարեց բարի ծերունին հառաջելով, թափուած անմեղ արեան փոխարէն և շնորհիւ Նապոլէօնի Լիբանանի մնացած

ընակիչները մի անգամ ընդմիշտ ազատուեցին անիրաւ, անսիրտ և անխիղճ սուլթանների անողոք ճիրաններից. իսկ Մեծըն Բրիտանիան մեզ, խղճալի ասորիներիս, թողեց միևնոյն վայրենի, ծանր լուծին տակին և աւելի մի սոսկալի վիճակի մէջ թաղեց զմեզ մոռացութեան տալով յաւիտեան. վայ կիդի զիւնիա, վայ! (այսպէս թարգմանեց երիտասարդ ասորին ծերունու ցաւագին բացականչութիւնը, որի համանիշը կը լինէր Ցիցէռոնի Օ tempora! Օ mores!-ը--Ո՞վ ժամանակներ և ո՞վ բարքեր):

Հիւպատոսը լուռ ու մունջ մտիկ էր տալիս բարի ծերունու այս հետաքրքիր ճառին: Նա զգացուած էր ակներև, զի նրա սիրտը վկայում էր անխօս կերպով արտասանուած ճառի կատարելապէս և մի սոսկալի ճշմարտութիւն լինելուն: Բայց էլի նա ցանկացաւ միխթարել և յուսագրել ծերունազարդ և հայրենասէր կրօնաւորին, ուստի նրան էլ յայտնեց կ. Պոլիս քաղաքում համախմբուած դեսպանաժողովի մասին և թէ ինչ յոյսեր կային թուրքիայում քրիստոնեայ ազգերի վիճակը բարելաւելու մասին: Սակայն փորձառու Մաթրոնը համարեա թէ ոչ մի կարևորութիւն տալ չթուեց մեր կոնսուլի այդ յայտարարութեան, այլ մօրուքը շոյելով մտախոն կերպով պատասխանեց:

— Այգախի դեսպանաժողովներ և կօնքրեսներ մենք շատ ենք տեսել մեր թշուռաս կեանքում, բայց ոչ մի էական փոփոխութիւն, այլ ինչպէս թուրքերէն միասուած տառւմ է «կինէ էսկի համամ» էսկի թաս»—դարձեալ միշտ միևնոյն բաղնիքը և միևնոյն ջրի թասը: Այս ալ կայ որ ընդհանրապէս շատ խօսուողները շատ թիչ կը գործեն. ապա տեսէք Նապոլէօնը, նա որչանփ քիչ խօսեց, սակայն ինչ միծ գործ տեսաւ, որով զարուցի գուրս իր անունը անմահացած է այնպէս որ մինչև իսկ այս լեռների խորքերու մ ալ այսօր մենք նրան յիշում ենք:

Այլևս խօսք չկար ասելու ուստի և մենք սկսանք յօրանչել քնատութիւնից. ծերունին վեր կացաւ. ասելով մեզ.

— Դուք հոգնած էք և կօս գեշերն էլ անց է կացել, պէտք է որ հանգստանաք ու մի քիչ էլ քնէք, որպէսզի կարողանար շարունակիլ ձեր ճամբան. ու իր սենեակը մեր տրամադրութեան տակ թողնելով ու մեզ բարի դիշեր մաղթելով հեռացաւ ձէթի ճրագը ձեռքին:

Մտախոն էր կօնսուլը և տիսուր, ուստի առանց մի խօսք ասելու անկողին մտաւ: Բիչ յետոյ ամենքս ալ Մորփէսոի գըր կումն էինք:

## VI

Արեգակի սուր ճառագոյթները մեր խուցի նեղլիկ լուսամուտներից ներո թափանցելով փայլուն սիւներ էին կաղմել, երբ մենք արթնացանք և խոկոյն ճանապարհ ընկանք: Ծերունի Մաթրոնը մինչի վանքի դրսի զուր մեզ ուղեկցեց և ասորերէն լեզուով «Տէր ուղղեա» մրմնջեց: Մենք ձիերներս հեծնելով հեռացանք: Ճանապարհին մենք յաճախ պատահում էինք հետեակ և ձիաւոր և սոտից զլուխ զինուած քրգերի, որոնք խեթիւ մեղ նկատում էին և անպատճառ կը կողոպտէին զմեղ, եթէ կառավարութիւնը մեղ մի քանի կորիծ հեծելազօրք տուած չըլինէր, որոնք լիքը հրացանները ի ձեռին տուածուց և յետեից մեզ ուղեկցում էին: Երեկոյեան մենք հասանք սուրբ Բարթողուղիմոսի հինաւուց վանքը, որ հեռուից ամրոցի նմանում էր իր հաստ պարիսպներով ու աշտարակներով. միայն սիրուն գմբեթից և բարձր զանգակատնից յայտնուում էր որ դա մի վանք էր բլուրի մի զլիխն կառուցուած: Այնտեղ էր Կայծակը (Յովհ. վրա. Բարզունի) որ սիրալիր ընդունեց և հիւրընկալից մեղ:

Մեծ սովի տարին լինելով կ. Պոլոյ Սովելոց Յանձնաժողովի կողմանէ Սբ. Յարդուղիմոսի վանքում Աղբակի որբ և անտէրունչ երեխայից համար մի պատսպարան կառուցուած էր վանքի բակի մի անկիւնում, ուզ 15-20 մանչերի հետ պարապում էր Կովկասից եկած մի երիտասարդ ուսուցիչ, պ. Զաքէ, որ յիտոյ դարձաւ Բագրատ վարդապետ Թէլէքելեան: Նա մի ժամանակ Սալմասի Դէրըգ վանքի վանահայր հղաւ և Կովկասում մեր հոգևորականների ամենաշնորհնալիներից, և իրենց բարձր կոչումն ու կարեսը պաշտօնը ըմբանողներից ու ըստ այնըմ վարուողներից մինը հանդիսացաւ իր նուանդուն և ազգօգուտ դնահատելի գործունէութեամբ: Այն ժամանակից Հայոց Հայերիկը շատ էր սիրում այդ համեստ անձնանուէր գործիչն, այդ մի տիպար էր աշխատասիրութեան և անձնազոհ պարագանաշութեան: Նա վասպուրականում, կարմրաշապիկ վարժապետ անունով, ամառ ձմեռ, տանը թէ փողոցում, ամեն տեղ և ամեն ժամանակ իր հագին ունեցած կարմիր շիլայ բլուղին պատճառով: Կարծես մի գարիբալդեան լինէր նա: Այնտեղ էր նաև Սյավաղեան Սահակ վարդապետը իրը փոխանորդ վանահօր, որ իր պաշտօնական հանգամանքին պատճառով միշտ Բաշկալայում պէտք էր բնակուի:

Հինաւուց այս հոյակապ վանքի մենք ամեն կողմը ման հեկանք, բայց խիստ աղքատիկ և անշուք գրութեան մէջ գտանք

ամեն բան, վասն զի անցեալ աղէտալի մեծ պատերազմի միջոցին Համիդի քուրդ բաշիբողուկները ամբողջովին կողոպտելու թալանել էին նրան։ Կայծակը պատմեց մեզ ահուոր պատմութիւնը։ Եղիազար վարդակիտի վանահայրութեան օրով էր, երբ մի օր յանկարծ 12 թօռուններ (քրդաց աղնուտկան դասակարգը այդպէս է կոչւում) վանազան ցեղերից հետևակ ու ձիւոր զօրքով պաշարում են վանքը, աղատութեան ոչ մի յոյս չինելուն վարդապէտը անձնատուր է լինում պայմանաւ որ նըրանք խնայէին այնտեղ հաւաքուած հայ ժողովրդին որ վանքի անմիջապէս կից եղող համանուն զիւղից այնտեղ ապաստանել էր։ Մեծ ցեղապետ և արշաւանքի հրամանատար Օմէր Աղան համաձայնուեց, և վանքի խոշոր դմները կրնակի վրայ բացուեցին նրանց առաջ։ Քրդերը սովալլուկ գալլերի նման վրայ ներս խուժեցին և սկսեց անգութ թալանը։ Նրանք կատարելապէս սրբեցին կողոպտեցին այդ ճոխ և հարուստ հնօրեայ հաստատութիւնը որ միշտ խնայուած էր անցեալ բոլոր թալան-թուլանի միջոցներին, քանզի իրը մի սուրբ, առաքելահաստատա օջաղ, վանքը մեծ համրաւ էր վայելում քրդերի մօտ՝ պատկառանք և երկիւլ աղղերով նրանց։ Բայց այն երանելի ժամանակներից ի վեր ամեն բան փոփոխուել էր, և էվոլյուցիայի օրէնքի հիման վրայ այդ լեռնաբնակ քրդերն ալ լուսաւորուել և աղատուել էին իրանց հինաւուրց նախապաշարունքներից, որով նըրանք հայոց սրբութեանցը ձեռք չէին տալիս։ Աննկարազրելի էր հայոց ան ու սարսափը, բայց բարեբախտաբար կոտորած չեղաւ այն ատեն, անշուշտ... Սուլթան Համիդի հրամանով, որպէս նոյն տարին օսմանեան կանոնաւոր զօրքը, երբ գիշերով հրդենեց ու լիովին թալանեց Վանի մեծ շուկան իր 1500 ապրանքով լիքը խանութներով, մինչդեռ նրանց տէրերը քաղազաքից կէս ժամ հեռու Այգեստանի թաղերում անգորը ու խաղաղ ընում էին... շնորհիւ վեհ։ Սուլթանին և ոչ մի ջարդ ապատահց... ըստ սուլթանի խիստ հրամաններին...»

Երբ ամեն բան, մինչև վանքի վերջին աւելին ու ասեղն մաքրազարդուած էր Օմէր Աղան փող է հարկանել տալիս՝ հաւաքուելու և մեկնելու։ Երբ քրդական ժխորը վանքից դարդակումէ, երկոտասոան թօռունները ներսը մնում են և կանչելով զողովուն վանահայրին պահանջում են վանքի գանձը, որ թագցրած է եղել. վարդապետը աղաչում, պաղատում է որ խնային իրեն ծերունի, ալեոր հասակին և հեռանան վանքից, քանի որ արդէն ամեն բան տարած են և ոչ մի բան էլ չէ մնացած սաղ վանքում։ Ի՞մչ պիտի լինէր վանքի գանձը, բայց եթէ՝ իր ամբողջ կահ-կարասին. որ թալանուել էր ամ-

բողջովին։ Քրդերը անողոքելի են մնում, փակում են վաճրի գոները և սկսում են խուղարկել քունջ ու բուջաղ զանձը որոնելու։ Շատ և ճրկար փնդութուց յետոյ վերջապէս նրանց աջողվում է գտնել մի գաղտնի՝ դէպի զանգակատան աշտարակը տանող անցք, և ոլորապտոյտ մի սանդուխից բարձրանալով ներքին պահարաններում պահուած վանքի ամրող հարստութիւնը՝ մեծագումար ոսկի և արծաթ փող, թանկաղին գոհարեղին, ոսկեղին և արծաթեղին ասմեներ, սաղաւարտներ, եկեղեցական զարդեր, խաչեր ու մասունքներ, որոնք հինաւուրց ժամանակից այնտեղ համրաբած էին, ամբողջովին գրաւում, վարեն բերում։ Վարդապետը երկիւզ անելուց որ նրան այժմ անպատճառ նրանք կըսպանէին, փաղչում թափնուում է։ Վանքի մեծ բակում թօռուները նստում են միասին այդ մեծ կողոպուտը մէջերին հաւասարապէս կիսել բաժնելու։ Սակայն այդ բանում նրանց մէջ անհամաձայնութիւն է տուած գալիս, ամեն մարդ ցանկանալով առիւծի բաժինը ինքը կորդել։ Գնալով վէճը լուրջ կերպարանք է ստանում և փոխուում է թշնամութեան, սկսում է սոսկալի ընդհարումը ընկեր-ընկերի հետ, փայլում են շոշողուն կեռ սուրերը և խանչանելու, որոտում են հրացաններն ու ատրճանակները և ապա տիրում է խորը, մահուան լուրջուն։ Դուրսը եղած բրդերը կասկածելով դաւաճանութեան մասին խակոյն խորտակում են դոները և կրկին ներս խուժում, ուր նրանց աչքին առաջ բացւում է սարսափելի, արիւնահեղ տեսարան։ ըոլոր 12 թօռուների անշունչ դիակները ցիր ու ցան ընկած էին գետնի վրայ սփոռուած ահաղին զանձի շուրջը։ Կարծես կատարուած էր չլուսած-չտեսնուած մի սասուածային արդարութիւն և առնուած էր սրբազնութեան ահոելի վրէժը… Քրդերը սկսում են ցաւագին ոսնալ և իրենց «վայ լէ մէն» արտասուող ողբերովը օդը թնդացնել։ Յետոյ նրանք հաշտուելով կատարուած իրողութեան հետ հաւաքում են զանձը և 12 դիակները և հեռանում։ են յուղարկաւորութեան թափոր կազմուած։

Այստեղ անցողակի կերպով հարց է ծագում թէ ինչի են ծառայում միը վանքերում այսպէս կուտակուած հինաւուրց զանձերը, ինչի, բայց եթէ մի օր յայտնի կամ թագուն աւազակների աւարը լինելու…

«Կայծակը» մեզ առաջնորդեց վանքի ախոռը և ցոյց տուեց իր 8-ամեայ, բուն արարական ձիւնի պէս ստիտակ հրաշալի նժոյգը, որի արժէքն էր այն ատեն 300 օսմաննեան ոսկի։ Արարական ձիերը նշանաւոր և յարգի են այն պատճառով որ իւրենց ազնիւ ցեղի պատկանիլը դարուց ի դարս դոկումենտե-

լուկ վաւերացրած է, և հայր Բազումին մեղ ցոյց տուեց մի կտոր սագաղաթի վրայ գրուած այդ հիանալի նժոյզի ազնուականութեան վաւերականութիւնը կնքուած և ստորագրուած բազում արաբ շէյխերից և բէգերից: Երեկոյեան նա մի ձիարշաւ կատարեց սոլո հիւպատոսին ցոյց տալու թէ իր անդուդական ձիու ոյժն ու հունարը և թէ իր ձիավարութեան հմտութիւնը: Շատախցի բաջ վանականը մօտենալով ազնիւ կենդանուն քնքուշութեամբ շոյեց նրա սիրուն, երկայն բաշը և վիզը, հարուեց լայն ճակատից գորովազին և հեծնել, արշաւելն ու մեր աչքերից անհետանալը մի ակնթարթում կատարուեց: «Կայծակ»-ը իր կայծականման նժոյզին վը-րայ կայծակի ոլէս ոլացեր էր ու չկար! Մենք զարժացած, հիացած ափիրերան մնացել էինք: Ես յիշեցի մեր Ազա Սուրբ Սարգսի լեռենդան և սկսեցի պատմել կոնսուլին: Թիշ յետոյ հեռաւոր մի բլուրի գաղաթին վրայ երևեց մեր քաջարի ձիաւորը, ուր հետևակ մը հազիւ մի ժամուց հասնել կարողանար: Ազնիւ կենդանին 8—10 ըոպէի մէջ կտրել էր այդ հեռաւորութիւնը!

### Ականատես

(Կը շարունակուի)

### ՀԱԶԱՐ ԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԳԻՃԵՐԸ

—Շէհերազդէ:

—Հայրիկ:

—Մեր մհծազօր Խնքնակալը լաւ տրամադրութեան մէջ է. այս հազար ու մէկ գիշերներէն ետքը բարեհաճեցաւ բաշ-խել քեզ կեանք: Ահա նորէն իրիկուն եղաւ, աղջիկու: Իր վեհափառութիւնը դրկեց զիս քեզ մօտ, այս իրիկուն ալ ան քեզ կը սպասէ: Բայց ոչ թէ մահը, այլ սէրը պիտի ըլլայ վարձատրութիւնդ:

Մեծ եպարբուը կապոյտ մետաքսէ հանդերձանքին մէջ կանգնած էր դուան մօտ այն փոքր ապարանքին, ուր իր աղ-

ջիկը հազար ու մէկ օր ապրեցաւ: Ի՞նքն էր որ ամեն իրիկուն սրտադողով թագաւորին կ'առաջնորդէր Շէհերազադէն, ու ամեն առաւօտ, երբ աղջիկը իր հէքիաթները պատմած էր և թագաւորը՝ զոհ կը մրափէր, նորէն ապարանք կը բերէր: Եւ ամեն առաւօտ կարծիս աղջիկը կրկին անդամ կը ծնէր: Զէ որ օրին մէկը թագաւորը իր կնոջմէն խարուած ըլլալուն՝ Շէհերազադէն առաջ բոլոր կոյսիրը զիխատել տուած էր: Մ'իայն իր աղջիկը ողջ մնաց, որովհետեւ թագաւորը անոր հէքիաթներէն գիւթուած էր և միշտ ուրիշներ կ'ուզէր լսել: Հիմա վերշապէս թագաւորը կակղած էր և լաւ տրամադրուած: Ոչ մէկ կոյս չպիտի զոհուէր այլես, ու իր աղջիկը, Շէհերազադէն, թագուհի պիտի գաւնար:

Մեծ եպարքուր իր աղջիկը կը դիտէր: Անոր զէմքը գունատ էր այնչափ անքուն զիշերներէն, մութ աչքերը կը փայլվիէն, ինչպէս աւազան մը, որու մէջ զիշեր ատեն լոյս մը կը ցոլցլայ: Ծաղիկ մըն էր անլոյս ջերմոցի մէջ փթթած: Թէնմարմինը դարգացած էր, բայց զոյնն է որ կը պակսէր զէմքին վրայ: Իրեն կը թուէր որ Շէհերազադէն աղջիկն էր այն ոգիսներէն մէկուն, որոնց մասին այնքան յաճախ կը խօսէր ան իր հէքիաթներուն մէջ: Հիմա սակայն խազազութեան, բախտաւորութեան և բարգաւաճման ժամանակն է որ կը սկսի: Թագուհի պիտի գառնայ արիասիրտ Շէհերազադէն, որ ինքինքը զոհից երկրի կոյսերուն համար՝ թագաւորը սիրաշահելու նպատակով: Ու ամեն օրուան պէս, իր հօրը բազուկին կրթնելով կը քալէր նըրամասակ աղջիկը Մեծ եպարքոսին քովէն և, պահապահներու շարքերուն մէջէն անցնելով, մհծ որահը առաջնորդուեցաւ, ուր թագաւորը մետաքսէ բազմոցի մը վրայ ծալլապատիկ նստած իրան կը սպասէր:

Երբ Շէհերազադէ սրահը մտաւ և թագաւորին հետ մենակ մնաց. թագաւորը ուրիշ ատենուան պէս ցոյց չտուաւ իր ոտքերուն առջև ձգուած մետաքսէ բարձը, որու վրայ նստած, լուս գիշերուան մէջ, իր հէքիաթները կը պատմէր ան, այլ քաղցրութեամբ և սիրալիորէն հրաւիրեց այս անդամ իր մօտը գալնստել:

Դժգոյն Շէհերազադէն նայեցաւ անոր աչքերուն մէջ. ու սա մտածումը անցաւ մաքէն. «Այս մարդը այլես միշտ իմ իշխանութեանս տակն է»: Դիշերէ զիշեր համբերութեամբ հիւսից ան իր հէքիաթները, ինչպէս ցաւի սպիտակ թելեր: Ամեն զիշեր թագաւորը քիչ մը աւելի կը մեղմանար և քիչ մը աւելի բարեհամբոյը կը գառնար, ու Շէհերազադէն զարհուրելի մահէն քիչ մը աւելի ինքզինքը հեռացած կը զգար: Եւ այսօր, երբ իր հայրը ուրախ լուրը բերաւ իրեն, հանդարտ ու անշարժ:

մնաց: Իր ջանքն է եղած բանամահն ազատել երկրին կոյսերը  
և ոչ թէ արիւնածարաւ թագաւորին կինը կոչուիլ:

—Ոչ թէ ձեր քովը, այլ ձեր գէմն է իմ տեղս, բարձր  
արքայ, բաւ ու նստաւ վարը բարձին վրայ:

—Այդպէս էր առաջ, բայց այդպէս չպիտի ըլլայ այլիս,  
Շէներազագէ, կը սիրեմ քեզ:

Յոզնաբեկ աղջկան սպիտակ մարմնով սարսուռ մը ան-  
ցաւ... Աւելի նախընտրելի էր մահը քան այդ անգութ խոշ-  
տանգիչն ձեռքի ամենաթեթև մէկ հաղումը: Զինքը կը սի-  
րէ... Իսկ ինքը, զգայուն բանաստեղծունու բոլոր դարշանքով  
կ'ատէ անիկա, այդ կիներու դահիճը:

—Կը սիրեմ քեզ, Շէներազագէ, կրկնեց թագաւորը, իր  
նստած տեղէն անուշ նայուածքներ ձգելով աղջկան վրայ, ինչ-  
պէս ուրիշ գիշերներ, երբ Շէներազագէի ձայնին երաժշտու-  
թիւնը իրեն կը բարձրանար, ու ինք կ'աղըքէր անոր ստեղ-  
ծած երազներու աշխարհին մէջ:

Բայց աղջիկը թագաւորին վրայ ուրիշ ատենուան պէս  
չուզզեց իր նուազուն ու մութ աչքերը, այն աչքերը, որոնց  
մէկ նայուածքը զինքը ուրիշ աշխարհներ կը փոխազրէր: Շէ-  
ներազագէ զլուխը կախած էր, և թագաւորը կը տեսնէր մի-  
այն անոր առատ ու մազերուն ծանր հանգոյցը և նեղ շերտ մը  
անոր փափուկ ու սպիտակ վիզէն, որը մետաքսէ օձիք մը կը  
ըջապատէր:

—Կը սիրեմ քեզ, Շէներազագէ... չե՞ս լսեր:

Գլուխը բարձրացնելով՝

—Վեհափառ, պատասխաննեց, կեանքս բաշխեցիք ինձ.  
բաւական է այդքանը:

—Բայց ես կ'ուզեմ աւելին տալ, ամեն ինչ որ ունիմ,  
գանձերս, երկիրներս, տիտղոսս, համբաւս, իշխանութիւնս ու  
սիրտս: Այս բոլորը կ'ուզեմ բաժնել քեզ հետ:

—Տէր, կեանքս ինձ բաւական է:

—Ուրեմն գուն չե՞ս սիրեր զիս:

—Տէր, կեանքս աւելին կարող չէք ինձ տալ, որովհետեւ  
իմ կեանքս՝ կեանք մըն է հազարապատկուած... Իսկ զուք ինձ  
միայն մէկ կեանք մը կը նուիրէր, ձերինը, որը պէտք է ձեզ  
հետ բաժնեմ...

Թագաւորը ապշած մնաց: Ի՞նչ այդ փոքր, այդ տկար աղ-  
ջիկը, որ հազար ու մէկ գիշեր իր գերուհին էր եղած, որ իր  
հաճութեամբը ժամերով պարտաւոր էր խօսիլ, և որուն սպառ-  
նացող տանջալից մահը ամեն առաւտ յետաձգելու շնորհը կը-  
նէր, հիմա, այդ աղջիկը երախտագիտօրէն չէր իյնար իր ու-  
նութիւն, 1906.

քերը, երբ զինքը թագուհիութեան կը բարձրացնէր: Ու  
բարկութեամբ լեցուած՝

—Գիտե՞ս, ապերախտ, ըստ, որ կարող նմ մէկ բառովս  
քեզ ամենադժողակ մահուան դատապարտել:

Շէհերազադէ անոր նայեցաւ աւելի շեշտակի ու աներ-  
կիւդ:

—Գիտեմ որ թագաւոր մը, պատասխանեց, մէկ բա-  
ռով կարող է արքայական խոստում մը դրժել:

Թագաւորը սարսափեցաւ: Անգամ մը զրուած խոստումը չէր  
կարելի ետ առնել:

—Բայց ինչո՞ւ կը մերժես սէրս, հարցուց, գեռևս սպառ-  
նալից ձայնով մը:

—Տէր, ազատ կամքովս եկայ ձեզ մօտ՝ մէկ գիշեր մը ձեր  
հէքեաթ պատմողը ըլլալու, երբ մեր երկրի ամեն կողմը, այն-  
քան շատ տուներու մէջ, սուզը կը տիրէր. որովհետեւ սիրա-  
սուն աղջիկը, սիրելի քոյրը, գեղանի հարսը ձեզ մօտ կան-  
չուած էին, ո՞հ, այլևս բնաւ տուն չկերադառնալու համար:  
Այն առաջին գիշերը, երբ ձեզ մօտ եկայ և երբ ամբողջ եր-  
կիրը ուրախ և երախտագէտ էր, յուսալով որ ես պիտի գըտ-  
նեմ այն հէքեաթը, որ հայրերուն, մայրերուն, եղբայրներուն,  
քոյրերուն և սիրողներուն համար անուշ ստուգութիւն մը պի-  
տի ըլլար, բայց միենոյն տտեն դեռ վախնալով որ առաւօ-  
տուն կրնայի ես ալ, այնքան շատերուն նման, տանջամահի  
ենթարկուիլ, այդ գիշերը իմ անձնազո՞ւթիւնս երեցածէն  
շատ աւելի չնչին էր: Որովհետեւ շատ տիսուր և չափազանց  
դժբախտ էի, ու մահը փրկութիւն մը պիտի ըլլար ինձ համար:

Տիրօրէն աչքերը վեր յաւեց և կուշտ մը ծծելով նարկի-  
լէի սաթէ ծիսափողէն՝ դուրս փչեց ծուխը: Թագաւորը շնչեց  
այդ ծուխը և իրեն թուեցաւ որ այն փոքր կապոյտ ամպը  
Շէհերազադէի գգուանքն է, որ կ'անցնի իր դէմքին վրայով:

—Եւ ինչո՞ւ այդպէս տխուր էիր, դուն երեկոյեան եր-  
կընքի արևակն, գետնադամբարանի սուտակս:

—Տէր, իմ կեանքս չի նմանիր ուրիշ մարդոց կեանքին:  
Այս երկրային կեանքը ինձ համար այն չէ, ինչ որ իրապէս է,  
այլ այնպէս ինչպէս կը տեսնեմ՝ երազի, իդէալի, յոյսի, սպառ-  
ման, յիշատակի, ցնորդի, ապագայի բաղմերանգ պրիզմային  
մէջէն: Կարող եմ վերապրիլ անցեալ բոլոր ժամանակները և  
երեակայել ինքինքս ապագայ բոլոր ժամանակներուն մէջ:  
Բայց վայ ինձ, երբէք ես չապրեցայ Այսօրը: Երբ մայրս զիս  
կը գգուէր, կը կարծէի որ Հարուն էլ Ռաշիդի հին տունէն իշ-  
խանուհի մըն եմ, ու մայրս անոր ընտրեալը: Երբ հայրս կը

համբուրէր զիս, ինձ կը թուէր՝ թէ ես սև հարան եմ, որը մեծ գորավարը կը համբուրէ՝ խաչապաշտ օտար գունդերու վրայ պատերազմի երթալէ առաջ... Բոլոր քոյրերս բարեկամուհիներս իրենց սիրահարներն ունեցան և փոխադարձարար ու սիրազեղօրէն սիրեցին. իսկ ես... Թէն ես ալ ունեցայ շատ մը պաշտողներ, թէն ամեն իրիկուն ականջիս տակ կը հնչէր ուրիշ մէկ սիրահարի մը անուշ երգը, երբ ես ապարանքիս վանդակապատին ետև, բազմոցի մը վրայ ինկած, կ'երաղէի, բայց այդ երգերը ոչ թէ գէպի երգողը կը յանկուցանէր սիրտս, այլ գէպի ձեզ: Ձեր մասին է որ կ'երաղէի:

—Ուրեմն զուն զիս կը սիրէիր, ցայտուն աղբիւրին շողնւն մարգարիտը:

—Այդպէս կը կարծէի, մեծ արքայ, մինչև այն վայրկեանը երբ ձեր գերուհին ձեր հաճութեամբը եկաւ ձեղ հէքեաթ պատմելու: Իմ սէրս այն ատեն սաւառնեցաւ սպիտակ կողերուն վրայ այն անգութ թոշունին որ ցնորքն է: Կ'ուզէի թըսչունը պահել, և տմեն գիշեր երբ ձեր առջև նստած էի, կը զգայի թէ ինչպէս հէքեաթներուս ամեն մէկ բառը մեզ իրարու կը կապէ... բայց վեր կենալուս պէս, թոշունը կը թուէր հեռուները, միշտ աւելի հեռուները, այն անմերձանալի երկիրները, ուր ոչ մէկ մարմին կայ, ուր միայն հոգիներ կը յածին: Եւ հիմա, երբ հասաւ վերջին օրը, ու իմ յարգելի հայրս ինձ իմացուց ձեր շնորհը, անհետացաւ թոշունը հեռուն, անորոշ հորիզոնին վրայ, և ձեզ ալ նոյնքան հեռացած զգացի ինձմէ...: Ոչ թէ ձեզ, Տէր, այլ իմ երևակայած թագաւորն է որ կը սիրեմ:

—Եւ ինչպէս է այդ երևակայածդ, զուն մոլորուած կարաւանի առաջնորդ աստղ:

—Ո՞հ, բոլորովին տարբեր իրականէն... Ատենով Հնուկաստան մեծ թագաւոր մը կար, սկսաւ պատմել իր անուշ ձայնովը որ իր բառերը կը կրէր այնպէս, ինչպէս գարնան հովէն շարժուող ճիւղը՝ իր ծաղիկները, այդ թագաւորը հօր էր քան ամենքը և աւելի գեղեցիկ քան շատերը: Օրին մէկը հաւատարիմ ներքինին իմացուց իրեն թէ իր ազնուաղարմ կինը բողը բացած է հազարապետին տենչալից նայուածքներուն գէմ:

—Երևակայութիւն չէ այդ պատմածդ, այլ իրականութիւն: Թագաւորը ես ինքս եմ:

—Դուք էիք մինչև այսուհեղ պատասխանեց աղջիկը, բայց ահա եկաւ անգութ սպիտակ թոշունը՝ ցնորքը...: Մեծ թագաւորը հրամայեց որ անհաւատարիմ թագուհին և հազարապետը իր մօտ գան: Երկուքն ալ ծանր շղթաներով կապուած էին և

սարսափահար կը գողային։ Ստոյգ մահ մը կը սպասէր իրենցւ Սակայն թագաւորը ուրիշ կերպ տնօրինեց. «Զեզ, յանցաւորներ, ըսաւ, մինչև այսօր սիրած ու յարգած էի։ Միթէ պէտք է ձեր անհաւատարմութիւնը անհաւատարիմ ընէ զիս իմ սիրոյս և պատուիս մէջ, որոնք փոփոխական չեն, քանի որ ես թագաւոր մըն եմ։ Ուրեմն ազատ մեկնեցէք այստեղէն և ապրեցէք միասին ու յայտաբարեցէք այս գատաստունո ժողովը՝ դիմումներիս, որ գիտնայ թէ աշխարհիս վրայ ոչինչ կարող է վնասել թագաւորի մը պատուին։ Գնացէ՞ք...»

Շէհերազադէ ելաւ կանգնեցաւ և հրամայաբար գուռը ցուցուց թագաւորին, որ իր պատիւին վրէժ սոու եղած էր՝ սպաննալով իր կինն ու հարիւրապետը և փայտակոյտին վրայ մահուան գատապարտելով երկրին կոյսերը...։ Թագաւորը գեղեաց և դողդոցուն քայլերով գէպի վարագոյրին կողմը դիմեց. լալով կեցաւ հոն, քաշեց սուրը և խրեց մարմնին մէջ։

Շէհերազադէ չլսեց անոր մահուան աղաղակը. իր յոգնած աչքերը փակուած էին։ Նոր ցնորքի մը մէջ կ'ապրէր ու կը ժպտէր։ Գլուխը ետ ծոեց և ներկայացուց իր կարմիր փոքր բերանը, — նման մրգի մը որ պէտք է քաղել—։ Շէհերազադէ կ'երազէր որ Հնդկաստանի թագաւորը իրեն հարսանեկան համրոյրը կուտայ։

Բէլնարդ Կանթենը

Բնագիրը հոլանդերէն է, գերմ.-ից թարգմ. Ատոմ Շահէն։

## ՍԻՄՎՈԼԻԶՄԸ ԴՐԱՄԱՅԻ ՄԷԶ \*)

Մինչև հիմա մենք ընդհանուր գծերով աշխատեցինք ուրուառքերի այն գրողների կարծիքները, որոնք չեն պատկանում սիմվոլիստական դպրոցին։ Այժմ կը կամենայինք թոռցիկ կերպով ցուցադրել գրական այն ըմբռնութեան ու դաւանանքները, ուրոնք գոյութիւն ունին սիմվոլիստ քննադատների ու ստեղծագործողների երկերում։ Երիտասարդ քննադատների մէջ բաւական աչքի ընկնող տեղ է գրաւում Անդրէ Բոնիէ (Ondré Beaumier), որ աւելի յայտնի գարձաւ իր մի ընդարձակ քննական ուսումնասիրութեամբ «La poésie nouvelle» («Նորագոյն բանաստեղծութիւնը») վերնագրով։ Այդ աշխատութեան ներածութեան մէջ նա բաւական բարեխիզճ կերպով ընսութեան է ենթարկում սիմվոլիզմի ծագումն ու զարգացումը։ — Գրական այս կամ այն դպրոցները զանազան ժամանակաշրջաններում՝ եղել են փիլիսոփայական տիրապետող մտքի, գարի ընդհանուր աշխարհայինացքի գեղարուեստական արտայայտութիւնը։ Միշտ միենոյն ոյժն է, որ կերպարանքը փոխած՝ երևում է մարդկային հանճարի ու ստեղծագործութեան այս կամ այն միջավայրում։

Տասներեսրորդ դարի առաջի կիսի փիլիսոփայական աշխարհայեացքն ու ըմբռնութեան միենոյն ընդհանուր ծագումն ունին, ինչ որ գրական ոսմանտիկ դպրոցը... Նոյն դարի յիսնական թուականներն ծաղկած Օգիւտ Կոնտի գրական փիլիսոփայութեան հիմունքները իրենց հեռաւոր կէտում նոյնանում են նատուրալիստ դպրոցի ու փաստերի ճիշտ գիտութեան հետ։ Սակայն պոզիտիվիզմը երկար ժամանակ չկարողացաւ տիրապետել եւրոպական մտածումին։ Առաջացան այնպիսի իմաստաւէրներ, որոնք ճգնեցին փաստերի և իրողութիւնների երականութիւնից գուրս ուրիշ աշխարհներ ընդուշմարել։ Մարդկային զգացողութիւնների քանակը այնքան քիչ է և մեր զգայարանները այնքան անկատար, որպէսզի հնարաւոր լինէր գիտա-

\*) Տես «Մուրճ» № 3.

կան մի ամուր ու ընդարձակ շէնք կառուցանել միտիայն զրանց վրայ: «Պողիտիվիզմի գերագոյն իշխանութիւնը—զրում է Ա. Բոնիե—կամաց-կամաց դիմում էր իր վախճանին. Կրա հետ միասին աստիճանաբար թուլանում էր նաև նատուրալիզմը... Ու երբ պողիտիվիզմը մնանկ յայտարարուեց՝ նատուրալիզմը այլևս զրկուեց իր գոյութեան միակ իրաւական հողից: Իր էական կէտերի մէջ՝ պողիտիվիզմը գիտութիւնների զարգացման և բոլոր ճշգրիտ ծանօթութիւնների պայմանն է: Ու եթէ նա հրաշալի է իր հաստատած իրողութիւններով, իր կիրառած մեթոդով և իր հանած հետևանքներով, ապա նոյնքան աւելի դատապարտելի է իր բացասութիւնների մէջ: Պողիտիվիզմը երկու կողմ ունի. ճանաչելի և անճանաչելի: Մի քանի նուազ լուսամիտ գիտնականներ արհամարհեցին երկրորդ մասը. զանրանց իրաւունքն էր. սակայն նրանք շատ հեռու գնացին և սկսեցին նոյն իսկ հերքել նրա՝ այսինքն անձանաչելիի գոյութիւնը: մի բան, որ ամենակին օրինական չէր:» Իրականի ամբողջական բացատրութիւնը, ճանաչելիի ծաւալումը գոյութեան հեռաւոր սահմաններում—ահատասրկ ինչը պիտի իրականացնէր պողիտիվիզմը՝ անձանաչելիի մերժումից առաջ:

Ճանաչելիի կղզին—Լիտրէի ասածի համաձայն—շրջապատուած է միստէրի ովկիանոսով: Առագաստի ու նաւակների բացակայութիւնից չպիտի եզրակացնենք՝ թէ նա գոյութիւն չունի ամենակին: Պողիտիվիստները սխալում են կարծելով թէ նրանք կարող են ճանաչելին ամբողջովին բացատրել անձանաչելիի մերժումով: Նրանք սխալում են նաև այն ժամանակ, երբ կամենում են այդ երկու իշխանութիւնների միջև պատճեց գնել: Ճանաչելիի և անձանաչելիի բաժանումից չէ կախուած ինդրի ճշգրիտ լուծումը, որովհետև միստէրը իրականից գուրս չէ, այլ հէնց իրականի մէջ: Անձանաչելին չէ շրջապատում ճանաչելին. նա թափանցում է հէնց նրա մէջ... Խորհրդաւորը հաստատուած իրողութիւնների մէջն է նստած ու այնտեղ է ապրում յաւիտեան: Այս խորհրդածութիւնները նպատակ ունէին բնազանցութեան (métaphysique) իրաւունքները պաշտպանել և նրա տեղը ապահովել նաև բնական գիտութիւնների ծաղկման ամենավառ վայրկենին: Այդտեղից են սկիզբն առնում բնականի և գերբնականի մշտական կապը բացադրող նորագոյն տեսութիւնները: Այդտեղ է գտնուում այն մեծ արժէքը, որ արդիւնաւորել են վերջին տամնենինդամեակի ընթացքում ֆրանսիայում յօգուտ բնազանցութեան տեղի ունեցած հականարուածները: Փիլիսոփայութեան մէջ այդ-

պիսի մի զօրեղ հականարուածի հիմնունքները մշակեց ժամանակակից փիլիսոփայ Ալֆրէդ Ֆույէ (A. Fouillée) իր մի կարևոր ու լուրջ ուսումնասիրութեամբ, որի վերսագիրն է «Իդէալիստական շարժումը և գրական գիտութիւնների դէմ տեղի ունեցած հականարուածը». (Le mouvement idéaliste et la réaction contre les sciences positives): Ու գրամայի հասկացողութիւնները կերպարանափոխում են արմատականապէս հէնց այն ժամանակուանից, երբ փիլիսոփայական իդէալիզմը սկզբում է վերականգնել: Ահա թէ ինչու համար հրապարակ իշխան սիմվոլիստ ստեղծագործողները... Սիմվոլիզմի ներմուծութիւնը գրականութեան ու մասնաւորապէս գրամայի մէջ պիտի նկատել, ուրեմն, մի անխուսափելի ու տրամարանական հետևանք այն յաղթանակին, որ ունեցաւ վերածնուող իդէալիզմը անհաշտ ու կենսունակութիւնից զրկուած պօզիտիվիզմի վրայ: Այսպիսով գրամատիքական ստեղծագործութիւնների հիմունքը կամաց-կամաց փոխոխութեան է ենթարկւում. շարժում է հինաւուրց բեմը. հեռանում են այն անձնաւորութիւններն ու գործողութիւնները, որոնք մինչեւ այդ ժամանակ գերազիր նշանակութիւն ունեին ըոլոր գրամաներում: Ծնուռ է նորագոյն թատրոնը ու կամենում իր ըմբռնած գեղարուեստական աշխարհահայեացքով եղական տեղ գրաւել տիեզերական թատրոնի պատմութեան մէջ:

Գրամատիքական այդ վերանորոգութեան խնդրում ամենից կարեոր մասնակցութիւն է յանձն առնում Մետերլինկ, որ նորագոյն միստիցիզմի ամենանշանաւոր ներկայացուցիչն է համարում և որ ձգտում է հիմքից փոխել հինաւուրց դրաման: Նրա գեղարուեստական դաւանանքի խորհրդանշան կարող են համարուել «Le tragique quotidien» ու «Le drame moderne» («Ամենօրեայ ողբերգութիւն» և «Նորագոյն դրաման») վերնագիրը կրող փիլիսոփայական-ըննական յօդուածները, որոնք գրուած են սովորական միստիքական ոգով, մթին լեզուով . և որոնք յիշեցնում են աւելի ընարական պօչմ, քան ըննական ուսումնասիրութիւն: Մետերլինկ կամենում է վերստեղծել հին հեթանոսական ուսմունքը անյազմելի ճակատագրական ոյժերի մասին, որոնք տնօրինում են մարդկային բախտը. ուսմունք, որ հին ողբերգութեան ամբողջ հմայքն էր կազմում: Մետերլինկի կարծիքով գրամայի էութիւնը ներոսի կամքը չէ, այլ ճակատագրի կամքը: Սակայն ժամանակակից միստիքը հին հեթանոսական ճակատագրականութեան մէջ մտցնում է մի կարեոր սրբագրութիւն և գրանով հաղորդում նրան աւելի մուայլ և աւելի անյուսալի ուսուեր: Ճակատագրա-

կան ոյժերը չեն գտնուում մարդուց դուրս, շրջապատող տիեզերքի մէջ, ինչպէս կարծում էին Սոփոլէս և Էսքիլէս, այլ հէնց մարդու մէջ, նրա սրտի գաղանի վայրերում։ Նորագոյն դրամայի հիմունքը կայանում է այդ ներքին ճակատագրի սարսավն ու մեծութիւնը արտայայտեյու մէջ։ ճակատագիրը, որ ամեն մարդ ծննդից ի վեր կրում է իր գոյութեան ներսը։ Շեքսպիր և Ռասին մարդկային տանջանքների դլխաւոր պատճառը գտնում էին կրքերի մէջ։ Էսքիլէսն ու Սոփոլէսը՝ բախտի մէջ։ Սակայն յոյները բախտին նայում էին իրք արտաքին անյաղթելի ոյժ։ Նրանք չէին խորասուզւում նրա էութեան մէջ։ Ապագայի դրաման պէտք է մի բոլորովին նոր բան մացնէ, պէտք է քննութեան առնէ ճակատագրային ոյժերը։ Այսպէս ուրեմն նոր թատրոնի առանձնութիւնը չէ կայանում մարդկային դժբախտութիւնների արտայայտութեան մէջ։ Նորագոյն դրաման պիտի ձգտի թափանցել ամեն տանջանքի խոկական հիմունքները՝ եթէ մինչև իսկ նրանք նստած լինին երկրային իրականութեան սահմաններից այն կողմ... «Սա մի նոր լմբոնում է,—ասում է Մետերլինկ—սա մի այնպիսի անհրաժեշտութիւն է, որի վրայ մենք չենք նայում այլքս դրսից, այլ ներսից։ Փոյութիւն ունին գաղտնի ոյժեր, որոնք թագաւորում են մեզանում և ըստ երեսոյթին հաղորդակցութեան մէջ են գտնում արտաքին իրողութիւնների հետ։ Մենք ամենքս մեր հոգիներում թշնամիներ ունինք։ Նոքա գիտեն՝ ինչ են ուղում, ուր են տանում մեզ... Դժբախտութիւն, փորձանք է պատահում—և մենք մի փոքր յետոյ թեթևութեան զգացմունք ենք ունենում—ասես—ի վարձատրութիւն այն բանի, որ հնապանդուեցինք յաւիտենական օրէնքին։ Մեծագոյն սուզի մէջ անգամ մի միտթարական խորհրդաւոր ձայն գովում է մեր հնապանդութիւնն... Վերնական ոյժերը—շարունակում է Մետերլինկ—յարատե կուում են մեր հոգու մէջ և մենք երբեմն տեսնում ենք այդ ճակատագրական կոփիւների սառերը, որոնց մէջ սակայն մեր կամքը երբէք չէ յանդղում միջամտել... Ի՞նչ օգուտ մտածել սեփական եսի մասին, որի վրայ մենք զրեթէ չենք կարող հչ մի աղղեցութիւն ունենալ... ինքնուրոյնութիւնը, կամքը, անկախութիւնը աղմուկով ցայտում են մեր կիտակցութեան մէջ—սակայն հրամայում, տնօրինում է միայն ճակատագրական ոյժը»։

Այս լոլորը իհարկէ շատ անորոշ են, բայց հետաքրքրական են նրանով, որ նրանց մէջ արտայայտուած են աւելի զիտակալան փիլիսոփայական ձևով այն մթին, բանաստեղծա-

կան տրամադրութիւնները, որոնք Մետերլինկի գրամաների հիմունքն են կազմում: Դա նրա խորհրդանշանների բանալին է: Հաւատք գէպի աստիղի գոյութիւնը, ոչ թէ արտաքին, այլ ներքին ճակատագրի զգացողութիւնը, անյայտ ոյժերի տիրապետութիւնը—սրանք բեկիցի միատիքի բանաստեղծական ինքնատիպ ու հմայիչ յայտնագործութիւններն են: Մետերլինկ առաջին անգամ փորձեց վերստեղծել ժամանակակից թատրոնի մէջ ահեղ ճակատագրային ոյժերի ողբերգական հետեանքները, որոնցից գիտէին օգտուել այնքան գեղարուեսաօրէն հին յունական բանաստեղծները:

Իր գրական գործունէութեան ամբողջ ընթացքում Մետերլինկ մաքառել է այնպիսի թատրոնի դէմ, ուր ազմուկներ միան գոյութիւն ունին և ուր հոգեբանական նուրբ գործողութեան վոլուստէն՝ նիւթական, տեսանելի գործողութիւնն է տիրապետում միայն: Արցունքը այլևս արտաքին չպիտի լինի, այլ պիտի թափուի հոգու խորքերում. արինը այլևս բեմը չպէտք է ներկէ, այլ պիտի կաթէ սրտերի մէջ:

Նա մեզ առաջարկում է այնպիսի թատրոն, ուր բռնի արկածներ չլինին բնաւ, որտեղից բացակային յախուռն կը ըքերը, դժուգակ հերոսութիւնը սոսկալի ու նիւթական քաջութիւնը: Կակները պիտի կտրուին աշխարհային ձայներից և պիտի ապրին հոգու խորքերում:

«Իմ գոյութիւնը զրում է Մետերլինկ—իր ամենահետաքրքրական կէտին միթէ այն ժամանակն է հասնում, երբ ես փախչում եմ մերկ սրի առաջից և միթէ համրոյրի մէջն է միւայն նա զերազանց: Զկան արդեօք ուրիշ վայրկեաններ, երբ կարելի լինի աւելի հաստատուն և աւելի մաքուր ձայներ լսել: Զեր հոգին միթէ փոթորկալից գիշերուայ մէջն է ծաղկում..» Թրանսիսական բոլոր գրամատիքական հեղինակները Մետերլինկի կարծիքով ուժգին ու բռնաւոր կեանքն են տեսնում միայն. Կարելի է ասել, որ Փրանսիսական թատրոնը ժամանակագրական հակասութեան մէջ է և գրամատիքական գեղարուեսուր բաւական ուշացած: Նախկին կեանքը մակերեսոյթից կորցրել է շատ բան, որպէսզի շահէ խորութեան, ներքին նշանակութեան և հոգեոր (spirituel) ծանրութեան մէջ: Նկարիչներն ու երաժիշտները հառկացան այդ: Լաւագոյն նկարիչը այլես ուշագրութիւն չէ դարձնում ոչ պատերազմական յաղթանակողի և ոչ էլ մարդասպանի վրայ, որովհետեւ յաղթութեան և սպանութեան հոգեբանութիւնը աւելի տարրական է և աւելի մակերեսոյթական:

Ուժգին զրութեան թափը խեղդում է գոյութիւնների և իրերի աւելի խորունկ և աւելի հուրը ձայնը:

«Երբ ևս թատրոն եմ գնում—գրում է Մետերլինկ—ինձ թւում է թէ մի քանի ժամ շարունակ ապրում եմ իմ նախնիքների հետ. նախնիքներ, որոնք կեանքի մասին աւելի չոր, աւելի պարզ և աւելի անասնական հասկացողութիւն ունին և որոնց ես օտար իմ ըմբռնումներով ու ճաշակով... Կանանց սպանող խաբուած ամուսիններ, սիրահարներին սպանող կիններ, խեղուած թագաւորներ, բռնաբարուած կոյսներ, թունաւորուած քաղաքացիններ, արիւններ, արտաքին արցունքներ և այդ բոլորը այնքան մակերեսոյթական և այնքան նիւթական...»

Հինաւուրց մոլորութիւն է կարծել՝ թէ միայն ուժգին կրքերի վայրկեաններին է ապրում անհատը: Բազկաթուի մէջ նստած մի ծերունի, որ պարզապէս սպասում է լամպի առաջ, լսում անդիտակցաբարը իր տան շուրջը թագաւորող յաւիտենական բոլոր օրէնքները, որ կամացուկ ունինքրում է պատուհանների և գոնիների լուսութիւնը, որ հետեւում է իր հոգու և իր ճակատագրի ներկայութեան՝ այդ հանգիստ, երազկոտ ու անշարժ ծերունին աւելի մարդկային, աւելի ընդհանուր ու աւելի խորունկ կեանք է ապրում, քան տարբածուին սպանող սիրահարը, քան ընտանեկան սպատուին վրէժմնզիր ամուսինը...»

Այս ընդհանուր փիլիսոփայական—գեղարուեստական աշխարհայեացքը իրը հիմք ընդունելով՝ Մետերլինկ աշխատեց փոփոխութեան ենթարկել եւրոպական թատրոնը: Նրա բոլոր գրամաներում առաւել կամ նուազ չափով անդրագանում են բոլոր այն խաղաղ գեղեցկութիւնները, անսարցունք հրապոյըները, անշարժ ու անազուկ գոյութիւնները, որոնք աստուածացումի առարկայ դարձան նրա քննական ուսումնասիրութիւնների մէջ:

«Այլևս արիւններ, տեսանելի արցունքներ ու աղաղակներ չկան ըսմի վրայ: Գոյութիւնների երջականութիւնն ու դժբախտութիւնը որոշւում է մի նեղ սենեակի մէջ, փոքրիկ սեղանի շուրջը, մթին անկիւնում. սիրումեն ու տանջլում, տանջլում են ու մեռնում իրենց անյայտ յարկի տակ ու պատահականութիւնն է միայն գուռը կամ պատուհանը բաց անում՝ նրանց տանջանքը ցուցադրելու համար:»

Ժամանակակից դրաման չկարողանալով այլևս գործել զրսում, չունենալով արտաքին զարդեր, չհամարձակուելով կոչ անել մի որեէ աստուածութեան կամ մի որեէ ճակատագրականութեան՝ զանում իր շուրջը, տարածւում իր վրայ և ապրում ինքն իրանով: Նորագոյն դրաման ձգտում է հոգերանութեան և բարոյական աշխարհի շրջաններում այնպիսի ան-

կիւններ բաց անել, որոնք համարժէք ու հաւասարազօր լինէին արտաքին աշխարհի մէջ գտնուող իրերին... Մետերլինկի կարծիքով քանի շատ ենք իշխում մարդկային խղճմտանքի խորքերը՝ այնքան աւելի նուազում է ընդհարումը, կռիւը:

Պայծառ խղճմտանքը նուազ պահանջկոտ կրքեր ու ցանկութիւններ ունի, անհունապէս աւելի խաղաղ, աւելի համբերող, աւելի միայնակ, աւելի վերացական և աւելի վեհանձն քան սովորական խղճմտանքը: Այստեղից է առաջանում կորիւների նուազութիւնը, յասենայն դէպս կը-ուիւների նուազ դաժանութիւնն ու կրքերի նուազ ուժ-գնութիւնը, որովհետեւ ոչինչ այնքան ազմկայոյզ չէ, որքան լեռնային փոքրիկ վտակը և ոչինչ այնքան հանգիստ, լոին, բարերար չէ, որքան ծաւալուող ու տարածուող գետը: Մարդկային լուսաւորուած խղճմտանքը անհունապէս քիչ օրէնք-ներ ունի, անհունապէս քիչ կասուակար ու կասկածելի պար-տականութիւններ... Նրբացած ու աղնուացած խղճմտանքի մէջ չկան այլևս պատուի և վրէժինդրութեան զգացմունքներ... Այդտեղ այլևս արցունքներ պատճառող նախապաշարմունքներ չկան և ոչ էլ դժբախտութիւններ ծնող անարդարութիւն:

Եւ երբ արեք մտնում է իմաստունի խղճմտանքի մէջ՝ այնտեղ մի հատիկ պարտականութիւն է միայն որոշուում՝ հսա-րաւոր եղածին չափ քիչ չարիք դործել և սիրել ուրիշներին: Սակայն սա մի պարտականութիւն է, որից դրամա չէ ծնուռմ: Գուցէ այս պարտականութեան ու մեր անգիտութեան միջն եղած կռուիցն է ծագելու դարիս իսկական դրաման:

Մետերլինկի կարծիքով դրամայի էութիւնը կամաց-կա-սաց գոխուում է միշտ զուգընթացարար այն բարեշրջումին, որ տեղի է ունենում անհատի մէջ: Ապագայի մարդկութեան զգա-ցմունքների, ցանկութիւնների, տրամադրութիւնների համա-գումարը չպիտի կարողանայ այսօրուան ըմբռնումով դրամա ստեղծել: Քանի անհատը զարգանում է ներքինապէս, քանի նրա հոգին լայնանում ու զգացմունքները մեղմանում են՝ այն-քան աւելի նուազում են նրա մէջ ռազմային հակումերը, այն-քան աւելի չզգըանում է կամքի այս կամ այն նիւթական ու սուր արտայայտութիւնը: Վաղուան մարդը իր հոգեկան, մտա-ւոր և բարոյական հանդարտ կազմով չպիտի կարողանայ այսօրուան դրամատուրգին ստեղծագործութեան ներշնչումներ հա-զորգել: Ապագայի դրաման չպիտի ծագէ հակազիր ու տար-բեր կրքերի ընդհարումից, այլ պիտի ծնուի այն հանգիստ կըռ-ուից, որ գոյութիւն ունի բարոյական օրէնքի և կրքի միջն... երբ որ այս բոլորը կատարուի, երբ որ ուժեղ կրքերի ընդ-

հարումները վերանան թէ կեանքից և թէ ըեմի վրայից՝ այն ժամանակ կը թոյլատրուի գուցէ նոր թատրոնի մասին խօսել, այն ժամանակ կը ծնուի խաղաղ ու անարցունք գեղեցկութեան թատրոնը:

Մետեղինկի բոլոր ստեղծագործութիւնները ձգտում են այդպիսի մի գրականութեան հիմունքները մշակել ու թէ և նրա դրամաները բեմի վրայ այնքան էլ յաջողութիւն չունեցան— զանազան պատճառներով—այնուամենայնիւ բեմական վերանորոգութեան այդ փորձերը կազմում են ժամանակակից հասարակութեան և ժամանակակից դրամատուրգների խակական պահանջը:

Ոչ միայն ֆրանսիայում, այլ և Գերմանիայում—միանգամայն ինքնուրոյն կերպով և միանգամայն ուրիշ աղքերից— ծագումն առաւ գրական այն նոր շարժումը, որ նպատակ ունէր բեմը իդէալիստական և սիմվոլիստական հիմքերի վրայ կառուցանել: Ի նկատի ունենալով, որ այնտեղ սիմվոլիզմի ներկայացուցիչը Գերմարտ Հառլապտմանի պէս մի այնքան տաղանդաւոր և այնքան ինքնատիպ գրող է՝ կարելի է յոյս ունենալ շարժման յարատեռութեան վրայ:

Հետաքրքրական է, սակայն, հետեւ ընդհանուր գծերով քննադատական այն գրականութեան, որ գոյութիւն ունի Գերմանիայում ֆրանսիական սիմվոլիզմի նկատմամբ: 1894 թուականին Վիէննայի Neuе «Revue ամսագրի էջերում կոնցրադ Ալ'բերտի մի քննական ուսումնասիրութիւն զետեղեց «Զգտումն դէպի հէքեաթային» վերնագրով: Դա մի վերին աստիճանի անարդար ու անհամբերողամիտ ողով գրուած տեսութիւն է՝ վարակուած Գերմանիային այնքան յատուկ շովինիստական անմիտ որամադրութիւններով:

Քննադատի կարծիքով՝ ֆրանսիայում սկիզբն առած դրական նոր շարժումը աւելի նեարդային վրդովմունքի պտուղ է, քան հոգեկան վերանորոգութեան պահանջի հետեւնը: «Նոր զգայնութիւններ, նկարչային յուղումներ հնարաւոր եղածին չափ անակնկալ տպաւորութիւններով—ահաւասիկ բնչ բանի և նոր ձգտում ֆրանսիայում: Գիտութիւն և աշխատանք—այս երկու բասերը մեր դարի նշանաբանը գարնան: Գիտութիւնը պիտի զանուար ամենակարող և հասարակականութեան (socialisme) միջոցով պիտի համանէր նոր համաշխարհային երջանկութեան, նատուրալիզմի միջոցով՝ նոր համաշխարհային պօէզայիին: Մոռացան այն հանգամանքը, որ Զոլան կամեցաւ տան հիմքերը միայն կառուցանել՝ տանիքը թողնելով ապագայ սերնդին: Մոռացան, որ

ոչ գեղարուեստը, ոչ հասարակութիւնը չեն կարող ակնթարթաւ-  
յին ստեղծագործութիւններ լինել. մոռացան, որ նրանք նման  
են քարանձաների առաստաղի շերտերին, շերտեր, որոնք կադ-  
մում են դարերի ընթացքում...

Ֆրանսիացիների համար—շաբունակում է Ալ'քերտի—գե-  
ղարուեստն ու քաղաքականութիւնը միայն գրաւիչ խաղեր են,  
միայն միջոցներ՝ խառնուածքը արտայայտելու համար: Ֆրան-  
սիացիները չեն ուզում հասկանալ, որ ամբողջ մարդկայինը  
միշտ մնում է անկատար, բայց և միշտ ու յաւերժօրէն զարգա-  
նում է: Չենց որ նոքա տեսան, որ գիտութիւնը 25 տարուայ  
ընթացքում չկարողացաւ լուծել սոցիալական ինդիբը, որ նա-  
տուրալիզմը չկարողացաւ բաց անել մեր սրտի խորունկ գաղտ-  
նիքները՝ իսկոյն յետ կանգնեցին արհամարհանքով և՛ բնա-  
կան գիտութիւններից և՛ նատուրալիզմից: Գործողութիւն-  
ները փոխարինուեցին դպացմունքներով. քաղաքականութեան  
մէջ՝ անիշխանութիւն, գեղարուեստի մէջ՝ միւստիցիզմ...»: Այս-  
պէս ուրեմն Ալ'քերտիի կարծիքով գրական նոր շարժման պատ-  
ճառը Ֆրանսիայում՝ ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ ֆրանսիացուն  
յատուկ թեթևամտութիւնը. այն երերուն սովորութիւնը, որով  
նա մի աշխարհայեցքից շարունակ մի ուրիշն է անցնում:

«Բոլոր քաղաքակիրթ ազգութիւններից բանաստեղծական  
տեսակէտով այդ ամենաաղքատ ազգութիւնը—այսինքն ֆրան-  
սիացին—ոչ մի հասկացողութիւն չունի համաշխարհային պօէ-  
զիայի աննման գանձերի մասին. ոչ մի գաղափար չունի Շէքս-  
պիրի, Գէօթէի մասին».... «Այսպէս ուրեմն—շարունակում է  
նա—հասկանալի է ու ներելի, որ մի այնքան մակերեսոյթային,  
զրականորէն անկիրթ ժողովուրդ, ինչպիսին ֆրանսիացին է՝  
կարողանում է զրաւել սիմվոլիզմով: Բայց թ' նչպէս մենք, մենք  
անհունապէս քաղաքակիրթուած գերմանացիներս կարողացանք  
զրաւել այդ պարիզեան նորածեութեամբ: Ահա ինչ բան չի  
կարելի ոչ հասկանալ, ոչ ներել...»

Նուազ խոտութեամբ է վերաբերում ֆրանսիական սիմ-  
վոլիզմին և նրա ականաւոր ներկայացուցիչ Մետերլինկին գեր-  
մանացի մի ուրիշ քննադատ՝ Ղարլ Կրաուս:

Յայտնի է, որ ֆրանսիացի տաղանդաւոր վիպասան Օկ-  
տոս Միլըօ վերին աստիճանի հիացմունքով է խօսեցել Մե-  
տերլինկի մասին «Figaro»-ի էջերում: Իր մի քննադատականի  
մէջ Միլըօ ի միջի այլոց ասել է հետևեալը.—«Մետերլինկի  
զրամաներում գոյութիւն ունի գեղարուեստի մի ծայրայեղ  
հարստութիւն... Անկարելի է պատմել նրա դրամաների բովան-  
դակութիւնը. դա կը նշանակէր փոքրացնել այն անհուն հրա-

պոյըը, ստուերել ու մթնացնել այն խոշոր սարսափը, որոնք գեղեցկօրէն ծաւալւում են այնտեղ... Գործող անձինք բարդուած չեն ոչ ոճրի, ոչ սիրոյ և ոչ անառակութեան մէջ։ Նրանք փոքրիկ սաղմնային հոգիներ են, որոնք փոքրիկ գանգատներ են արձակում և դուրս թողնում փոքրիկ ճիշեր։ Այս փոքրիկ գանգատներն ու փոքրիկ ճիշերը այն են, սակայն, ինչ ես ճանաչում եմ ունենից սարսափելին, ամենից խորունկ և ամենից հրաշալին կեանքի և երազի այն կողմում։ Այստեղ է, որ ես «իշխանուհի Մալէնը» բարձր եմ գտնում, քան Շեքսպիրի բոլոր անմահ գործերը. աւելի ողբերգական, քան Մակբէթ, աւելի տարօրէն՝ քան Համլէտ...»

Նրա գրամաները կանգնած են հաւասար մակերեսոյթի վըրայ, եթէ նոյնիսկ չեն գերազանցում այն ամենագեղեցիկը, ինչ որ Շեքսպիր ունի...»

Անկարող լինելով հանդուրժել Միքրօի այս կարծիքը՝ Կրառւս գրում է. — «Առհասարակ բոլոր ֆրանսիացիները, նըրանց թւում և Միքրօ, այնքան են հասկանում Շեքսպիրին, որքան Մետերլինսկ՝ գրամատիքական արուեստը... Խսկական գեղարուեստական հանճարի բացառիկ յատկութիւնը կայանում է նրա մէջ, որ նա կարողանում է մարդիկ ստեղծել։ Շեքսպիր — դա մարդկային հոգիների մեծագոյն ստեղծագործողն է։»

Մետերլինկ բաւականանում է փոքրիկ գծերով և չէ կամենում բնաւորութիւններ ստեղծել, որովհետև չէ կարողանում։ Փոխանակ բարդ հոգերանական գործողութեան՝ նա մեզ ներկայացնում է վերին աստիճանի պարզ տպաւորութիւններ։ Դրանից է առաջանում խօսակցութիւնների անվերջ միօրինակութիւնը, միևնոյն բառերի յոգնեցուցիչ կրկնութիւնները...»

«Ո՛չ, մենք կատարելապէս համոզուած ենք այն բանի մէջ, — եղբակացնում է Կրառւս — որ նման սիմվոլիստական ֆարսերը կարող են. ներկայացնել միայն զուարծախաղեր... զբանք զուրկ են գրական որև է նշանակութիւնից ու արժեքից...»

Աւելի լուրջ, խելացի ու արգար վերաբերմունք ունի դէպի միստիցիզմ և դէպի Մետերլինկ գերմանացի մի ուրիշ քըննագատ՝ Թէոդոր Վոլֆ։ «Խորապէս սխալւում են այն քննագատները, — գրում է նա — որոնք արտաքինից խաբուած՝ Մետերլինկին համարում են նախվ ու պարզ գրող։ Յամեն քան նրա մէջ թւում է թէ պարզ է, սակայն իրօք նրա ստեղծագործութիւնների մէջ կան անհունապէս զարդ աշխատանքի անհունապէս բարդ պտուղներ։ Նրա միստիցիզմը շատ աւելի խորն է ու շատ աւելի հետաքրքրական։ Սարսափի ու զարմանքի հեքեաթային թրթիուը նրա համար հասարակ խաղ չէ, այլ խառնուած-

քի ներքին պահանջի յագեցում։ Անհաւանականի ծարաւը, միստիցիզմը, ձգութիւն դէպի պարզ, նախվ, համարենա մանկական տրամադրութիւնները—ահաւասիկ այն աղբիւրները, որոնցից ծագութիւն են առել նրա բոլոր դրամաները։ Մի աշխարհ է զա, որի մէջ միայն մանուկներ են բնակւում։ Մետերլինկի բոլոր անձեռը—ճերմակահներ ծերունիները թէ չափահանները—գործում են, սիրում, ծիծաղում և լալիս, ինչպէս մանուկներ։ Նոյն իսկ նըրանց արատների մէջ մի ինչ-որ մանկական բան կայ. նրանց կրքերի և ցանկութիւնների մէջ՝ մի ինչ-որ մանկականօրէն մաքուր տարր։ Նոքա ապրում են հինաւուրց, մռայլ ամրոցներում. ամեն ինչ այստեղ ծերացած, մաշուած, ուժասպառուած է։ Բոլոր դրամաների մէջ միշտ միենոյն աշխարհը, օրուայ միենոյն ժամը—գիշերսւայ և աղջամուզնի ժամանակամիջոցը—և մօտաւորապէս նոյն անձնաւորութիւնները՝ ծեր թագաւորներ, գունատ, հիւանդու իշխանուհներ, մելամաղձիկ ու հաւատարիմ իշխաններ, փառասէր թագուհիներ։ Ու ամենքը—մանուկներ... Մետերլինկեան դրամաների ընդհանուր գոյնը աղօտ է ու քնքոյշ. նրա յատկութիւններն են անսովոր նրբութիւն, անուրջոտ ու բանաստեղծական տրամադրութիւն։»

Ահա թէ ինչպիսի լարուած ուշադրութեամբ են հետեւում գերմանացի քննադատները Պարիզում ծագած գրական նոր շարժման։ Ցայտնի վիպասան Փրիդրիխ Շպիլ'հազէն ժամանակակից գերմանական դրամայի մասին խօսելով՝ մեղադրում է հեղինակներին այն բանի մէջ, որ նրանք չափազանց ստըրկորէն են վերաբերում օտար երկրներում ծագութիւն առած գրական նոր հոսանքներին, որ նրանք նատուրալիզմի թէ սիմվոլիզմի յետևից ընկած՝ մոռանում են Գէօթէի և Շիլերի դասական մեծ զարեշրջանի ազգային սրբազան աւանդութիւնները։

Ինչով բացատրել այդ երևոյթը։ Զէ ո՞ր գերմանական կուլտուրան տակաւին թարմ է ու չէ հասել հիւանդու նրբութեան այն ծայրայեղ սահմաններին, որին հասել է ֆրանսիականը. չէ ո՞ր գերմանական կուլտուրան աւելի աչքի է զարնութիւր կոպտութեամբ, ազգային անձնավստահութեամբ ու մեծամութեամբ, ֆիզիկական ոժիի երկրագութեամբ և զինուրական ոգով։ Ինչո՞ւ ուրեմն այդ «հիւանդու» տրամադրութիւնը դրամատիքական ստեղծագործութիւնների մէջ... Շպիլ'հազէն բոլոր այդ գրական անհանգիստ թափառականութիւնը, մթին ուղղութիւնը բացատրում է օտար ազգեցութիւններով, «մողեռնիզմի» խաղով ու այն երիտասարդ գրողների փառասիրութեամբ, որոնք կամենում են հասարակութեան առաջ փայլել պարիզեան նորութիւններով...»

Սակայն, եթէ մօտիկից նայելու լինենք նորագոյն գերմանական դրամային՝ կը տեսնենք, որ ծնուռող սիմվոլիստական շարժման արմատները նոյնքան խոր են, առողջ ու ամուր ֆերմանիայում, որքան և Ֆրանսիայում։ «Խորասուզուած Զանգ»-ի տաղանդաւոր ստեղծագործող ֆերհարտ Հառապտման՝ ժառանգական ամուր կաղմուածքով, առողջ, ուժեղ և վերին աստիճանի թարմ խառնուածքով հաղիւ թէ ենթարկուի ակնարկուած Շնիւանդոտ ու ուժասպառ» կուլտուրայի ազգեցութիւններին։ Եւ սակայն Հառապտման իր «Խորասուզութիւն» տարուած է նորագոյն սիմվոլիստական շարժումով՝ ուսանց սակայն որևէ կապ ունենալու օտար ազգեցութիւնների, մեծ քաղաքի շրեղ, հեշտանքաբեր հմայքի և ուշացած կուլտուրայի հիւանդոտ արևի հետ...

Հառապտմանին նուիրած իր մանրամասն ուսումնասիրութեան մէջ՝ գերմանացի տաղանդաւոր քննադատ Գրանիլիշտուէնց ցոյց է տալիս իրը նրա սկզբնական աղբիւրներ Զուլայի վէպերը, մատերիալիստական ուսումնքը և սոցիալական հրատապ կոուի գոյութիւնը։ Այսպէս ուրեմն, Հառապտման անցաւ միստիքական աշխարհաճացքին այնպէս, ինչպէս ճակատագրական ճանապարհով անցնում են բոլոր իսկական ժամանակակից գրողները։ Գրանիլիշտոէն արդարացի կերպով նկատում է, որ հին աղմուկները՝ նատուրալիզմ ու ոչալիզմ միանգամայն անհամապատասխան են այնպիսի ինքնօրինակ, նոր մարդկանց համար, ինչպիսին Հիւսիսի ծերունի Իրունն ու երիտասարդ Հառապտմանն են։ Սրանց ուղղութիւնը՝ նոյնիսկ ամենածարայեղ ոչալիստական փորձերի մէջ՝ ոչինչ ընդհանուր բան չունի Զոլայի նատուրալիզմի հետ։

Գերմանացի քննադադը ենթադրում է, որ նորագոյն գրական շարժումը երկու աղբիւր ունի. երկուսն էլ բացասական։ Առաջինը գտնուում է հէնց գրականութեան մէջ. գա պատմական-հասարակական վէպի ու բուրժուական գրամայի ծերութիւնը, չափազանց միջակութիւնը ու թոփչների բացակայութիւնն է։ Երկրորդը գտնուում է կեանքի մէջ. սակայն սա էլ բացասական կերպարանք ունի։ Դա ֆրանսիական մեծ յեղափոխութեան կտակած սկզբունքների ու գաղափարների անժամանակակցութիւնն է, որոնք գիտական պոպիտիվիզմի ձևի տակ մինչեւ հիմա քաղաքակիրթ մարդկութեան միակ հաւատքն էին կազմում։ Նոր իդէալիստական ստեղծագործութեան համար մարդիկ տակաւին չեն կարողացել դրական հիմունքներ գտնել։ «Մենք անխոնչ հետաքրքրականութեամբ—շարունակում

Է քննագատը—բաղխում ենք ապագայի փակուած դուռը, մենք կորչում ենք որոնումների մէջ այն առաջնորդող իդէալների համար, որոնք գուցէ նոր գարեզրջանի ահեղ յայտնագործութիւնները պիտի պատմեն մեզ Մենք պահանջում ենք նոր աշխարհահայիացքի սահմանումը, որ դուցէ կարողանար վոխարինել հնացած աղատամտութիւնն ու ուժասպառուած պողիտիզմը։ Մենք ամենքս անյայտ օրուայ ժամանումից առաջ տեղի ունեցող մոայլի զգացողութիւնն ունինք... եւ այդ մըսոայլի մեջ մենք թափառում ենք, որոնում, շօշափում՝ չունենալով տակաւին որոշ գրական նպատակներ։ Այդ թափառումները, որոնումները, շօշափումները, այդ յաւերժօրէն ստուերաւորուած միտքը բնորոշ նշանն է ժամանակակից պօէզիայի, որին վիճակուած է օր աւուր աւելի լուրջ նշանակութիւն ձեռք բերել։ Ու հէսց այդպիսի տրամադրութիւններով, ապագայի այդպիսի բանկումներով, նորի անցած ու անհամբեր պահնջներով առաջնորդուեց Հառուպտման իր ամենանշանաւոր ստեղծագործութեան մէջ...»

Այս ժութ, հէքեաթային, «հիւանդաս» ու «յօգնած», սակայն անկասկածելիօրէն ուժեղ շարժումից է կախուած եւրոպական գեղարուեստի գուցէ և ամբողջ քաղաքակրթութեան ապագան։ Մի քանի քննագատներ տեսնելով այդ շարժման ակնյայտնի զարգացումը՝ կամեցան նրա պատճառները ուսումնասիրել և փոխանակ անարգական անմիտ խօսքերի՝ գիտական ճանապարհով ուզեցին գրականութիւնը ապատել այդ հիւանդութիւնից։ Այսպէս՝ Գերմանիայում Ֆրիդրիխ Շպիլ՛հագէն խորապէս համոզուած էր, որ այդ շարժումը նատուրալիզմի հետևանք էր...»

Կեանքի մակերեռոյթի վրայ սողացողքսրտի ազնիւ թոփչըներին ու սաջի վերնական խոյանքներին միանգամայն օտար Զոլայի տաղտուկ նատուրալիզմից խորապէս դժգո՞ն՝ նոր գրողները անգիտակցաբար սխալ ճանապարհ ընտրեցին... Երիգասարդ ուժգին թափառականութիւնը կանգ կ'առնի՝ հէսց որ վերադառնայ հանգստացնող հնութեան, Շիլէրի և Գէօթէի մաքուր ու ազնուացնող դասական ազգային աւանդութիւններին... Այս վերադարձը բաւական է—մտածում էր Շպիլ՛հագէն—որպէսզի Ֆրանսիայից մտած սիմվոլիզմի հիւանդուստեղբը մեռնեն ու գրականութիւնը բժշկուի...»

Սակայն հիւանդութիւնը աւելի խորն է. կեանքը չի կամենում կրկնուել ու ծերունի վիպասանը մոռանում է, որ այդպիսի մի վերադարձ և անհարին է և աննպատակայարմար...»

Սիմէռն Յանոբեան

## ՃԵՄԱՐԱՆՑՈՒ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

(1896—1902թ.)

Աշակերտական կեանքը էջմիածնի Գէորգեան ձեմարանում բոլորովին այլ կերպ է ընթանում, քան միւս աշակերտներինը:

Ճեմարանն է հայերիս համար այն միակ ուսումնական հաստատութիւնը, որ հայաբնակ ամեն տեղերից ևս աշակերտներ ունի: Սկսած Տաճկաստանի ամենահեռաւոր անկիւններից, եզիպտոսից և այլ գաղութներից աշակերտներ կան: Ամառուայ երեք ամիսներին կովկասարնակ աշակերտները մեծ մասամբ տուն են գնում, իսկ տաճկահայաստանցիներից, պարսկահայաստանցիներից և Ռուսաստանի հեռաւոր տեղերից եկած աշակերտներից շատերը չեն կարողանում ճեմարանից դուրս գալ այլ ստիլուած են լինում ամառուայ տաք ամիսներին ևս էջմիածնի տանջող շոգում տապակուելու:

Սկսենք մեր ծանօթացումը ուսումնական տարրուայ սկզբից:

Աշակերտները ճեմարան են դառնում օգոստոսի վերջերին, իսկ սեպտեմբերէ 1-ին արդէն բոլորը պէտք է հաւաքուած լինեն: Ահա այդ պատճառով ճեմարանում եղողները այդ օրին սպասողական դրութեան մէջ են լինում, բաւական է մի կառքի դղրդիւն, որ ճեմարանի փոքր աշակերտները վաղեն դէպի հիւսիսային դուռը: Հեշտ ըան չէ ասել, ամառուայ երեք շոգ ամիսներ ճպնաւորական կեանք են անցկացրել ճեմարանի պարիսպների մէջ: Ճպնաւորական ենք ասում որովհետև, ըացի այն որ մի քանի տասնեակ տղաներ ստիլուած են միայնակեցական կեանք վարել, նրանք այդ միջոցում ստիլուած են եղել ճամարեա ամեն օր եկեղեցի գնալու: Խեղճերը կարօտցել են իրանց ընկերներին, նրանք ուզում են տեսնել նրանց, խօսել նրանց հետ, որպէսզի գէթ դրանով կարողանան մոռանալ այն վեշտը, որը պատճառում է նրանց իրանց սիրելիներից և հայրենիքից հետու լինելը: Այդ թշուառների դրութիւնը հասկանալու համար պէտք է առնուազն մի շաբաթ նրանց կեանքով ապրել:

Պատահում են դէպքեր, երբ կառքի ձայնից զարթած և հուանդով դէպի հիւսիսային դուռ վազողները յուսախար են լինում, բայց շատ անգամ, յիշաւի, մօտեցող կառքը նրանց ընկերներին է բերում: Այդ ժամանակ պէտք է տեսնել, թէ ինչպէս ուրախ միմեանց դիմաւորում են, համբուրուում են իրար աւելի մօտ ընկերները: Նրանք այնուհետև միմեանցից ժամերով չեն հեռանում:

Վերջին տարիներս (1902-ից) երբ արդէն երկաթուղին պատրաստ էր, աշակերտները այլ ևս անժամանակ ճեմարանի հիւսիսային դուռը վազելու կարիք չունին, որորհետև երկաթուղու գալու ժամերը յայտնի են:

Սեպտեմբերի 1-ին բոլոր աշակերտները, բացառութեամբ ի հարկէ մի քանիսների, արդէն հաւաքուած են լինում: Ճեմարանի ամենաուրախ, անենաեռանգուն ժամանակներից է: Հայրենիքից նոր եկածները պատմում են թէ ինչպէս են անցկացրել ամառը, որտեղ են ճանապարհորդել, ինչ են արել և այլն: Սեղանատանը կամ թէյատանը խօսակցութեան վերջ չկայ: Սեղանատանից գուրս տեսնում էր, սերտալրանում, դասարանում, լսարաններում կամ գուրսը՝ պարտիզում կամ պատերի տակ՝ տպաները խմբերով տաք-տաք խօսում են, վիճաքանում են: Մի խօսքով այդ օրերում քիչ աշակերտներ կը պատահեն, որ առանձին լինեն: Երեկոները, մասաւանդ թէյից յետոյ, հաւաքուած են լսարանցիները և զասարանցիները և խօսակցում են: Խօսում են ամեն բանի մասին, խօսում են ուսուցիչներից, առարկաներից, հետաքրքրուում են նոր եկած ուսուցիչներով. խօսում լրագրութեան մասին, խակ բարձր գասարանցիները կամ լսարանցիները քաղաքական կնճռուա հարցերի առաջ ևս չեն վարանում... Նրանցից շատերը տալիս են իրանց որոշումը: Առասպարակ պէտք է նկատել, որ խօսելու կողմից ճեմարանցիները նկատելի կերպով գերազանցում են ուրիշ աշակերտներից: Եւ դա շատ հասկանալի պէտք է լինի. Նրանք իրանց աղատ ժամանակը միայն խօսելով կարող են անցկացնել:

Ինչպէս ասացի, սեպտեմբերի առաջին օրերը, ինչպէս և ամբողջ այդ ամիսը, ճեմարանի ամենաուրախ ժամանակներից մէկն է. բայց և այնպէս այդ առաջին օրերը, կամ նոյն խակ այդ ամիսը շատ շատերի համար անտանելի է դառնում: Ճիշտ է. ամեն մէկը ուրախ է, որ տեսաւ իր սիրելի ընկերներին, ասեցին, խօսեցին, բայց այդ ուրախութիւնը յարատե չէ լիւ-

նում. ուրախութեանը իսկոյն յաջորդում է տիրութիւնը, երբ նա մենակ է մնում: Այդ ժամանակ նրա միտոն է գալիս հայրենիքը իր թարս յիշողութիւններով, իր հրապուրիչ զուարձալիքներով. նա կարծես կը կին իր բարեկամների հետ է իր հայրենիքում, իր սիրելիների, իր ազգականների մօտ, և միայն պաշտօնական զանգն է, որ սթափեցնում է նրան այդ անուրջներից և նա տեսնում է, որ ինքը ճեմարանի մէջ է, և գեռերկար ժամանակ պէտք է մնայ այդ նոյն պատերի մէջ: Այս ինչպէս նրանք կը ցանկանային թեր ունենալ, դէպի հայրենիքը թռչելու...

Սյսպէս է անա կեանքը ճեմարանում սեպտ.-ի առաջին օրերում. երկու ծայրայեղութիւնների մէջ է լինում, երբեմն շատ տիրուր, երբեմն շատ ուրախ:

Ճեմարանում դասերը սկսում են սեպտ.-ի 4—10-ին: Մինչ այդ քննում են նորեկներին կամ վերաքննութիւն ունեցողներին: Աշակերտներից կամ ուսանողներից շատերը օրուայ մի մասն էլ նորեկների հետ են զբաղւում: Կան աշակերտներ, որոնք ամառը մնում են յատկապէս աշակերտ պատրաստելու համար: Շատերն էլ կան, որ ամառը իրանք հայրենիքումն են աշակերտ պատրաստում և ապա ըերում ընդունել տալու:

Երբ նորեկների ընդունելութիւնը և տղաների վերաբըն-նութիւնները վերջացած են լինում, սկսում են դասերը: Դասի առաջին օրը, մօտաւորապէս ժամի 10-ին, տղաները հաւաքւում են հանդիսարան: Գալիս է տեսուչը մի քանի ուսուցիչներով ճեմարանը օրհնելու և յայտարարելու, որ ուսումնական տարին սկսուած է: Այդ ժամանակ վարդապետ ուսուցիչներից մէկը կարդում է աւետարանից մի կտոր (առհասարակ Սերմնացանի առակը), բացադրում է կարգացածը և, ի վերջոյ, յաջողութիւն և եռանդ է ցանկանում թէ ուսուցիչներին, թէ աշակերտներն տարին յաջողութեամբ և առանց պատահարների հանգիստ ու խաղաղ վերջացնելու: Հանդիսարանից տղաները դուրս են կալիս և գնում են դասարանները, որ արգէն որոշ է լինում:

Առաջին օրը մի կամ երկու դաս է լինում, և այն էլ առունն է միայն դաս: Գալիս է ուսուցիչը. նա զրուցատրութեամբ է անցկացնում դասը և կամ իր անցնելիք առարկայի մասին է խօսում. յայտնելով անցնելիք առարկայի մօտաւոր չափը. ցոյց է տալիս իր առարկայի վերաբերեալ կողմանակի աղբիւրներ և այլն:

Առաջին օրերը, նոյն իսկ առաջին սեպտեմբեր ամիսը,

կանոնաւոր պարապմուք չի լինում: Առաջին օրերը աւելի հետաքրքիր են յատկապէս այն առարկաները, որոնք այդ տարին նոր են սկսում: Այսպէս ֆ. դասարանում նոր առարկաներ աւելանում են. հայոց պատմութիւն, ընդհ. աշխարհագրութեան քաղաքական ժամանակը, Դ.-ում գերմաներէն, երկրաչափութիւն, ոռուաց աշխարհագր. Ե.-ում յունաբէն, Փիզիկա, քրիստոնէական վարդապետութիւն. Զ.-ում տիեզերագրութիւն, եկեղեցական պատմութիւն, մատենագրութիւն և այլն:

Պէտք է նկատել, որ Ֆ. դասարանցիք եռանդով սկսում են գերմաներէնը. նոր լեզու է, գեռ դասերը չսկսած շատերը արդէն դասագրքի առաջին յօդուածը իմանում են: «Դեր վօլֆ ունդ դաս լամմ» լուսում է ամեն մի Դ.-ըդ դասարանցու բերանից, դասագրքի ասածին յօդուածի վերնագիրը: Ուսուցիչը առանձին նեղութիւն չի քաշում տառերը սովորեցնելու, առաջին դասերից նրանք սկսում են կարդալ: Առաջին օրերը խօսակցութեան զլիաւոր նիւթը կազմում են, ուրեմն, զլիաւորապէս նոր առարկաները և նոր ուսուցիչները:

Սեպտեմբեր ամիսը պէտք է ասել, որ ճեմարանական կեանքի մէջ ամենաուրախ ժամանակն է. դասերը քիչ, եղանակը շատ լաւ. դուրսը կարելի է պարապել: Ճեմարանի հարաւային պարտէզը և հիւսիսային ծաղկանոցը զարդարուած են հազար ու մի ծտղիկներով, որոնք իրանց ճեմարանցոց ցանածըն ու խնամածն է: Այդ մարգերը, գեղեցիկ եղանակի հետ միասին, առանձին գեղեցկութիւն են տալիս ճեմարանի շրջապատին: Բացի դրանից ճեմարանցիները սեպտեմբերի մէջ շարունակ այգիներ են գնում՝ խաղող ուտելու: Եւ այսպէս ճաշերից յետոյ տասնեակ խմբեր լսարանցոց կամ վերակացուների հետ գնում են այգիները խաղող ուտելու: Փառք Աստուծոյ Վաղարշապատում խաղողն այնքան էժան է, որ ամեն օր տղաները կարողանում են խաղող վայելել իրանց հաշուով:

Խաչի երկուշաբթի օրը՝ մեռելոցին, ճեմարանում, իհարկէ, դաս չի լինում: Այդ օրը ճեմարանցիք էլ գնում են գերեզմաններ օրհնելու: Առաւօտեան ժամը 9-ին աշակերտները բոլորը հաւաքւում են, առաջ գնում են վանքի բակը նախ օրհնում են հանգուցեալ հայրապետների շիրիմները (Վանքի արևմտեան աւագ գւան մօտ գտնում են Ներսէս Վ-ը, Գէորգ Խ-ը, Մակարի և Յովհաննէս Կարբեցու շիրիմները): Այդտեղից գնում են վանքի միարանութեան զերեզմանատունը, որտեղ թաղուած կան և ճեմարանի սաներ, և ապա Գայանէի վանքը, որտեղ

օրհնել են տալիս Ս. Պալասանեանի, Վ., Աբովիանի և այլոց գերեզմանները: Պատարագից յետոյ, որ լինում է այդ օրը ս. Գայանէի վանքում, տղաները յոկնած, վաստակած ճեմարան են դառնում:

Վերջապէս գալիս է և ս. Գէորգայ պասը, որին այնքան անձկութեամբ սպասում են ճեմարանցիները: Թէս օրը պաս է (ճեմարանում բոլոր պասերը պահում են) բայց էլի օրերը աննկատելի են անցնում, որովհետև կ'անցնի մը երկու օր և կը դայ ճեմարանի ամենամեծ տօնը. ճեմարանի բացման տարեգարձը, որը մեծ շքեղութեամբ կատարւում է ամենայն տարի ս. Գէորգայ շաբաթ օրը:

Պատ շաբթու չորեքշաբթի օրը դասերը վերջանում են, որպէսզի ճեմարանի տօնի պատրաստութիւնները տեսնեն, և աշխատեն, որ որքան կարելի է շքով անցնի այդ միծ տօնը: Այսուհետև սկսում են լավտերների թղթեր բաժանել: Աշխատողները հաւաքւում են նախկին թէյատունը և սկսում են աշխատել մեծերի ղեկավարութեամբ: Ոմանք թուղթ են ծալում, ոմանք կարում են, մի քանիները ստուարաթուղթ (կարդն) են կտրում, միւսները կպցնում և այլն:

Թէս գասեր չկան, այդիներ էլ գնալու իրաւունք չկաց այդ մի քանի օրը, բայց էլի աշխատողներ շատ քչերն են լինում. համարեա, ամեն տարի մեծ մասամբ նոյն աշխատողները:

Այսպէս թէ այնպէս լավտերներն մի կերպ մինչև շաբաթ երեկոյ պատրաստ են լինում: Ուրբաթ օրը ճաշից յետոյ մի խումբ տղաներ գնում են մօտակայ Ներսէսեան անտառը ընկոյզի ծառի տերեններից շղթաներ հիւսելու: Նոյն երեկոյեան զարդարում են ճեմարանի հիւսիսային դռան ճակատը: Միջի կամարում գնում են իւղաներկ Գէորգ Դ.-ի պատկերը, իսկ միւս աջ և ձախ կամարներում Մ. և Գ. գլխատառերը, զարդարուած ծաղկեպսակներով: Ճեմարանի հիւսիսային դռուը զարդարում են դրօշակներով, այնպէս որ ամեն բան շուրջդ ասում է որ ճեմարանում մի մեծ տօն է կատարուելու:

Շաբաթ առաւտեան աշակերտները շատ կանուխ արգէն ոտի վրայ են, շատերը նորից սկսում են աշխատել, պակասը լրացնել ջանալով, իսկ միւսները նոր մահուղէ շորերը այդ օրուայ համար հագած, սպասում են, որ պատարագի զանգերը տան: Այդ օրը պատարագիչը սովորապէս ճեմարանական վարդապետներից է լինում: Պատարագից յետոյ հոգեհամսկիստ է կատարւում Գէորգ կաթուղիկոսի ղերեզմանի վրայ: Վերջին տարիներս (1898-ից) սովորութիւն է եղել, որ ով որ ուզում է ուրար ստանալ և Ալ լսարանցիներից, կարող են այդ օրը

ստանալ: Հոգեհանգստից յետոյ ճեմարանի աշակերտները վանքի միաբանութեան հետ միասին դալիս են ճեմարան, որտեղ այդ օրը ճեմարանի տարեկան ակտն է կատարւում: Այդ հանդէսը սովորաբար կատարւում է ճեմարանի հիւսիսային դռան առաջ, բացողեայ: Սովորական աղօթքից յետոյ ամբիօն է բարձրանում ճեմարանի տեսուչը և մանրաժամն հանջիւ է տալիս թէ ինչ յառաջազիմութիւն է ցոյց տուել ճեմարանը անցեալ տարին, որքան աշակերտներ և ուսոցիչներ է ունեցել և այլն: Այդ նոյն հաջուեատութիւնը յետոյ ապագրւում է «Արարատ»-ի էջերում: Դրանից յետոյ խումբը բառաձայն երգում է «Տէր կեցո» ազգային օրհներգութիւնը, ապա կարգացւում է մի որևէ ուսումնասիրութիւն կամ մի երկու ոտանաւոր և դրանով էլ հանդէսը վերջանում է:

Ճաշին վաճառքի սեղանատանն էլ այդ օրուայ տօնի առթիւ ճառախօսութիւններ և երգեր են առւում:

Երեկոյեան ճեմարանում հրավառութիւն է կատարւում: Ճեմարանի բակն են հաւաքւում Աղեքանդրոպօլի, Կարսի և Ախալքալաքի կողմից եկած ուխտաւորները, որոնք հանդիսին մի առանձին շըեղութիւն են տալիս: Ճեմարանի հիւսիսային դրանը երգում է ճեմարանի երգեցիկ խումբը, զիսաւորապէս ժողովրդական քառաձայն երգեր: Կոմիտասի գալուց յետոյ (1899 թ.) ճեմարանը կարող է պարծենալ իր երգչական խըմբով և նման զէպքերում կարող է բաւականութիւն տալ լսող հիւրերին: Ժողովուրդը հիացմունքով լսում է քառաձայն ժողովրդական երգերը, և շատ շատերը զարմանում են լսելով ճեմարանի յարկի տակ սիրային երգեր, որոնք հէնց իրանք ճեմարանն ցիները մի երկու տարի առաջ ամօթ են համարել երգել ճեմարանի պէս մի հաստատութեան մէջ: Պատահում են տարիներ, երբ այդ երեկոյեան զանազան հրախաղութիւններ են անում և աշխատում են ամեն կերպով, որ այդ երեկոն վառաւոր անցնի:

Բաւական ժամանակ անցնելուց յետոյ, ճեմարանի աշակերտները գնում են հանդիսարան, ուր ընդունւում են պատուաւոր հիւրեր: Այսաեւ նորից երգում են քառաձայն երգեր, ատենախօսութիւններ են լինում, ասում են ոտանաւորներ: Այս վերջին հանդէսը ոչ ցանկալի նորմուծութիւն է (1899-ից) և աւելի լաւ կը լինէր որ չը մտցնուէր այդ կարգը: Ճեմարանի հանդիսարանը այնքան փոքր է, որ բացի արտօնեալ հիւրերից, չի կարող իր մէջ տեղաւորել և հասարակ հիւրերին: Ժողովուրդը դուրս սպասում է, նա կարծում է որ շարունակուելու է երգեցողութիւնը. բայց նա յուսահատ միայն

լապտերների լոյսից ուրիշ բան չի տեսնում: Իսկ ովքեր են հաւաքում ներաը. ճեմարանի ուսուցիչները իրանց ընտանիքներով, վանքի միաբանութիւնը. իսկ նոր մարդիկ լինում են ուսուցիչների շետապաւոր բարեկամներից... իսկ ժողովուրդը ստիպուած է երկար սպասելուց յետոյ զլխիկոր տուն վերադառնալ... Այսպէս ամեն տեղ, ժողովրդի աղքատ դասակարգը զուրկ է մնում ամեն մի բաւականութիւնից: Բայց մի՛թէ հեռաւոր կողմերից եկած հայ ուխտաւորները այդ յուսով են եկած: Շատերը նրանցից ոտով են ճանապարհ եկել միայն նրա համար, որ կարողանան Ս. Էջմիածնի ճեմարանը տեսնել, ուրախակից լինել տեսնելով այդ հանդէմները: Զ՞ որ ճեմարանը այդ ժողովրդի քրտանց արդինքով է պահում, ուրեմն և ճեմարանի վարչութիւնը իր պարտաւորութիւնը պէտք է կատարի աշխատելով բաւականութիւն տալ այդ ժողովրդին: Բայց մեր վարդապետները, երկի իրանց մի քանի բարեկամներին աւելի գիւր գալու համար, ահա վերջին տարիներու այդ տեսակ նոր կարգ են սահմանել:

Հանդիսարանից զուրս գալուց յետոյ սկսւում է ճեմարանի բուն տօնախմբութիւնը: Այստեղ տօնախմբութեանը, կամ ընթրիքն ներկայ են միայն ճեմարանի ուսուցիչները և աշակերանները. կողմանակի մարդիկ համարեա չեն պատահում, եթէ պատահում են էլ, դրանք էլ ճեմարանի նախկին սաներից են լինում: Այս խնջոյքը կամ ընտանեկան երեկոյթը լինում էր մի ժամանակ վերին սերտարանում: Պէտք է ասել, որ ճեմարանական կեանքում, այդ երեկոյթն է, որ ճեմարանցոց վրայ շատ լաւ ազդեցութիւն է թողնում. Կարծէք այդ երեկոյթը մի սուրբ բան է, և ամեն մի ճեմարանցի զգացուած նստում է այդ երեկոյթին:

Երեկոյթին ասւում են ճառեր, արտասանուում են ոտանաւորներ, խմելում են կենացներ: Առաջին կենացը սովորաբար առաջարկում է տեսուչը ճեմարանի հաստատութեան և յարատեութեան կենացը: Բոլորեքեան խմում են այդ կենացը յուարնկայս (խօսքս ուսուցիչների մասին է. աշակերտները չեն խմում) աշակերտները ի պատասխան երգում են «Ով զի չընալ» երգը: Ապա խմելում է Ամենայն Հայոց Կաթուղիկոսի, տեսչի, ուսուցիչների, աշակերտների կենացը: Բոլոր կենացները ընդունում են բուռն ծափահարութիւններով, իսկ փոքրերը խոմբան ու գործ չունեն. Նրանք սպասում են թէ երբ պէտք է ճառախօսը վերջացնէ իր խօսքը, որ իրանք սկսեն ծափահարել: Ամենից վերջը կարդացում են հեռագիրները, պէտք է ասել որ այս մասը ամենից հետաքրքիրն է: Ամեն մի ճեռա-

զրի ընթերցումից յետոյ լինում են բուռն ծափահարութիւններ, մանաւանդ երբ հեռագրովը իրանց բարեկամներից կամ ընկերներից է: Հեռագիրների ընթերցումից յետոյ վերջանում է ընթրիքը և տպայք դնում են քննելու:

Ճեմարանի տօնի միւս օրը՝ կիւրակի վարագայ խաչի տօնին՝ կատարում է վեհափառ Կաթողիկոսի օծման դարեգարձը: Ճաշին հանդիսաւոր պատարագ է լինում, որին ներկայ են լինում հազարաւոր ուխտաւորներ: Այդ օրը վանքի միաբանութեան սեղանատանը հանդիսաւոր ճաշկերոյթ է լինում, ներկայութեամբ շատ անգամ վեհափառ Կաթողիկոսի: Ճառեր են առում, երգեր երգւում: Խսկ երեկոյեան վանքի գաւթում հրավառութիւն է լինում: Ճեմարանի երգեցիկ խումբը այգտեղ վեհարանի առաջ կանգնած զանազան ազգային երգեր է երգում: Այսպէս այդ հանդէսը տեսում է մինչև ժամի 10—11-ը: Ճեմարանցիները եջմիածնի տաճարի առաջ բազմութեան ներկայութեամբ երեկոյեան քննելու աղօթք են առում և դնում են ճեմարան հանգստանալու:

Ճեմարանի տօնից յետոյ սկսւում են արգէն լուրջ պարագմունքները: Մինչև այժմ եղած գանգերը անուանով էին դասեր: Դասերը բիշ շատ անգամ մի որևէ առարկայի նոր ուսուցիչը զեռ եկած չի լինում: Բայց հոկտեմբերի 1-ից արգէն ամեն բան բոլորովին փոխւում է: Այսուհետեւ սկսւում է լուրջ աշխատութեան ժամանակը, և իսկապէս, կարելի է ասել, որ ճեմարանում ուսումնական տարին սկսւում է հոկտեմբերի 1-ից:

Յարմար է այստեղ մի երկու խօսք ասել ճեմարանցոց նիստ ու կացի մասին:

Ճեմարանի աշակերտները առաւտուեան մօտաւորապէս վեր են կենում վեցից քառորդ կամ կէս պակաս: Ազօթքի կանգնում են 6-ից քառորդ անց: Առաւտուեան լինում է մի սերտողութիւն, որ մի ժամ է տեսում: Սերտողութիւնից յետոյ աղայքը գնում են թէյ խմելու, որը մօտ 20 րոպէ է տեսում: 8-ին կամ ութից 10 ր. պակաս սկսում է առաջին դասը: Դասերը տեսում են 50 րոպէ, դասամիջոցները 10 րոպէ: Ժամի 11-ին, այսինքն երրորդ դասից յետոյ լինում է մեծ դասամիջոց  $\frac{1}{2}$  ժամով, որի միջոցին աղաները նախուճաշում են 11  $\frac{1}{2}$ -ին սկսում է 4-րդ դաս: Օրական լինում է 5 դաս: 6-րդ դաս լինում է խմբական երգեցողութիւն շաբաթական երեք անգամ: տաճկահայերը տաճկերէնի դասեր երբեմն երբեմն

նոյնպէս 6-րդ դասերին են սովորել: Ճաշում են մօտաւորապէս ժամը 2-ին: Ճաշը տևում է 50 րոպէ, երբեմն աւել, երբեմն պակաս: Երեկոյեան լինում է երկու սերտողութիւն: Ա. սերտողութիւնը սկսում է երեկոյեան 5-ից քառորդ պակաս: Վերջին սերտողութիւնից յետոյ գնում են թէյ խմելու: Թէյից յետոյ ազատ ժամանակ ունին տղաները մինչև ժամի 9-ը: 9-ին բոլորեքեան վերին կորիդորում կանգնում են աղօթքի, որից յետոյ աշակերտները գնում են ընելու, իսկ ուսանողները—լսարանցիք գնում են իրանց լսարանները. ուսանողները մինչև ժամի 11-ը կարող են նստել:

Ճեմարանցիները պարտաւոր են բոլորեքեան միասին եկեղեցի գնալ շաբաթ երեկոյեան, կիրակի առաւտօնան և կիրակի ճաշուայ պատարագին: Բացի գրանից բոլոր աշակերտները բաժանում են 7 կարգերի. ամեն մի կարգ, բացի կիրակէ և տօն օրերից, հերթով եկեղեցի են գնում: Տօներին և կիրակի օրերին ինչպէս և շաբաթ երեկոյեան երգում է երգչական խումբը, որ «մեծ երգիչների» խումբ անունն է կրում: Իսկ պատարագին երգում է հ. Կոմիտասի կազմած քառաձայն խումբը, իրա վարդապետի կազմած քառաձայն պատարագը:

Ճեմարանում տղայոց թէյ տրւում է թէյատանը, որը 1899-ից ի վեր գտնուում է առանձին շինութիւն մէջ: Թէյ բաժանում են ճեմարանի տղաները Զ. և Ե. դասարաններից: Թէյ բաժանողների ցուցակ կազմելու մենաշնորհը գտնուում է Զ. դասարանցոց ձ' որը: Նրանք ցուցակագրում են նախ իրանց դասարանցոց անունը (մատակարար ամենքը սիրով ին լինում, համարեա, առանց բացառութեան) պակասը լրացնում են Ե. դասարանցիներից: Մատակարարները հինգ խումբ են, ամեն մի խումբը կազմուած 6 (վեց) հոգուց: Ճաշում են վանքի սեղանատանը: Ճաշելու գնալիս, հագնում են վերարկուներ, որ ճեմարանցոց մունդիրն համարւում: Զմրանը վերարկուները պալտօյի տեղ են ծառայում: Վերարկու հագնում են նաև եկեղեցի գնալիս:

Այսպէս ահա հոկտեմբերի 1-ից ճեմարանում սկսում է սովորական կեանքը: Համարեա ամբողջ տարին այս ընթացքով անցնում է ճեմարանցու կեանքը, և այսպէս ոչ թէ մի տարի, այլ տարիներ շարունակ: Այնուհետև ճեմարանական կեանքում սկսում է անդուլ աշխատանքի ժամանակը: Սովորել ու սովորել, գրքեր կարդալ, ճառեր անդիր անել, եկեղեցի գնալ. այս է ահա ճեմարանցու գործը:

Հոկտեմբեր ամիսը տարուայ չոր ամիսներից է:: Մի կայ-  
աերական և մի եկեղեցական տօն կայ: Իսկ մեր աշակերտնե-  
րը, կտմ առասարակ «աշակերտ» կոչուող մարդիկ, ուսումնա-  
կան տարուայ տօները, զիտէք որ առաջուց անգիր զիտեն:  
Պէտք է նկատել, որ կայսերական տօները ճեմարանում աւելի  
մեծ ուրախութիւն են պատճառում, քան եկեղեցական տօները:  
Կայսերական տօներին ոչ նախատօնակ կայ և ոչ էլ առաւո-  
տեան հանդիսաւոր ժամերգութիւն, այլ միայն մի պատա-  
րագ: Իսկ եկեղեցական տօներին հանդիսաւոր նախատօնակ,  
առաւոտեան հանդիսաւոր ժամերգութիւն, ճաշին էլ պատա-  
րագ: Իսկ այդ բոլոր ժամանակ ճեմարանցին պարտաւոր է  
ներկայ գտնուել այդ ժամերգութիւններին, միևնոյն է ուղե-  
նայ թէ չուզենայ այդ:

Ճեմարանցին մի երկու տարի ապրելով այնքան եկեղե-  
ցի է գնում, որ կշտանում է եկեղեցուց: Նա տմեն ժամա-  
նակ, երբ պաշտօնական զանգը հրամայում է, պարտաւոր է  
պատրաստ լինել եկեղեցի գնալու: Կիւրակի ցուրտ առաւոտ-  
ներին, երբ նա զաներից աղատ լինելով կարծում է թէ  
կարողանայ առաւոտեան մի քիչ աւելի քնել, հանգս-  
տանալ,—յանկարծ զանգի ձայնը նրա սովորական ժա-  
մանակին վեր է կացնում եկեղեցի գնալու համար: Տղան դըժ-  
գոհութեամբ վեր է կենում, դժգոհութեամբ հազնում է շորերը,  
դժգոհութեամբ շարք է մտնում եկեղեցի գնալու համար: Եւ  
այս դժգոհութիւնը շարունակում է այնքան տարիներ, որքան  
որ նա ճեմարանումն է մնալու: Զմոռանանք ասելու, որ այն-  
տեղ վերջին տարիներս կան 11 տարեկան տղաներ ևս, բայց  
ճեմարանի անողոք վարչութիւնը չի ուզում այդ փոքրիկներին  
գոնէ աղատել առաւոտները եկեղեցի գնալու պարտաւորութիւ-  
նից: Այստեղից ուրեմն հասկանալի պէտք է լինի, թէ որքան  
մեծ ուրախութիւն է պատճառում ճեմարանցոց կայսերական  
տօնը: Նրանք այդ օրը աղատ իրաւունք ունին այնքան քնելու  
որբան կ'ուզենան: Գլխաւորապէս այդ է պատճառը, որ երբ  
ճեմարանցին հայրենիք է գնում՝ նախ փախչում է եկեղեցուց և  
երկրորդ՝ առաւոտները ուշ է վեր կենում:

Թէ որքան ճեմարանցիները փախչում են եկեղեցուց եր-  
առում է հետեւալ փաստից: Մի աշակերտ Երևանից գալիս կառ-  
քի տակ է ընկնում, ոտքը վասաւում է, ճեմարան համելուց  
յետոյ տեղաւորւում է հիւանդանոցում: Ընկերները գալիս են  
տեսութեան և սկսում են խօսակցել. երբ նա ընկերներից ի-  
մանում է թէ վաղը իր հերթն է եղել եկեղեցի գնալու, ուրախ

բացականչել է. «Էս լաւ եղաւ, ուրեմն եկեղեցի գնալուց ազատուեցայ»: Պէտք է նկատել, որ այդպէս խօսող աշակերտը ճեմարանի «ամենակարգին» աշակերտներից մէկն է եղել...

Մի ուրիշ փաստ ևս: Այս տարի (1902) Վեհափառ Կաթողիկոսի անուանակոչութեան տօնին եկեղեցի չեին եկել ուղղաների համարեա մեծ մասը. նրանք, որոնք կաջողացել էին եկեղեցուց խոյս տալ, գիտէին որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուանակոչութեան տօնն է կատարուում և ծերունի Հայրապետը ինքը եկեղեցի է գալիս, ժամերգութիւնից յետոյ ամենքը արժանանալու են նրա ս. աջը համբուրելու (այս բաները լաւ գիտեն ճեմարանցիները), բայց էլի մի քանի քայլ հեռաւորութեան վրայ, անտարբերութեամբ նստած իրանց թագստատեղերում գիրք են կարդում... Այս բոլորը պարզ ցոյց է տալիս որ ճեմարանցին ամենսկին ախորժակ չունի եկեղեցի գնալու, նա ոչ մի առիթ բաց չի թողնում եկեղեցուց խոյս տալու համար, նրա համար ինչպէս տեսանք, կաթողիկոսի տօնն էլ շատ քիչ նշանակութիւն ունի:

Չմոռանամ սակայն ասել, որ այժմ, երբ պատարագին հ. Կոմիտասի քառաձայն խումբն է երգում, շատերը արդէն աւելի մեծ սիրով են եկեղեցի յաճախում: Պարզ է որ ոչ «կրօնական ջերմեռանգութիւնից» ստիպուած, այլ գեղարուեստական սովորանջից...

Ճեմարանում ծանր անցնուու են և պաս օրերը: Միայն վերջին տարիները կարելի է ասել որ մեծ պասը ամբողջովին չպահեցին: Ճեմարանում պասերը ամուր պահում են, և ով գիտէ, քանի տարիներ գեռ ևս պասը պէտք է իշխէ ճեմարանում. և գեռ քանի՞ քանի՞ հարիւրաւոր տղամեր պէտք է տանջուեն այդ հրէշ նախապաշարմունքի ձեռքում, մինչև որ վերջապէս գայ ճեմարանցոց մեսիան ազատելու նրանց այդ բնաւակալի ձեռքից: Պասը տղամերը պահում են ամենայն դժուարութեամբ: Այս բանը շատ լաւ գիտէ և ճեմարանի վարչութիւնը: Բայց զժարախտարար ճեմարանի վարչութիւնը գտնում է այն տեսակ անհատների ձեռքում, որոնց հետ չի կարելի պասը վերացնելու մասին մի խօսք անգամ ասել... Գոյէ նրանք ևս գատողութեամբ դէմ են պասին, «բայց սկզբունքը», չէ՞ որ նրանցից շատերը կղերականներ են, որոնց կարծիքով չպէտք է ոչ մի ժամանակ մոռանալ, որ ճեմարանը հոգնելոր հաստատութիւն է: Եթէ ճեմարանի աշակերտները ուսաս ուտեն, այն ժամանակ ամբողջ հայ ազգի համար նրանք գայթակղութեան քար կը լինեն,

իսկ թէ ինչու մեր միաբան վարդապետները, մի քանիսի բացառութեամբ, և եպիսկոպոսներից մի քանիսը պասերը ուսուռմ են, միթէ նրանք ժողովրդի համար դայթակղութեան քար չեն... ձեզ այդ դէպքում կը պատասխանեն. «Ճիշտ է նրանք պասերը ուսուռմ են, բայց ծածուկ են ուսուռմ...» Փարիսեցութիւն, կեղծիք...

Վաղարշապատում փոշտը շաբաթը (մինչև 1902-ը) հրեք անգամ է ստացւում: Տղաները նամակ ստանալ կարող են շաբաթուայ մէջ երեք անգամ:

Նամակ ստանալը ճեմարանցու համար մի մեծ բախտաւորութիւն է: Ումանք ամիսներ, միւսները նոյնիսկ տարիներ շաբունակ ճեմարանի չորս պատերի մէջ փակուած, միւսոյն ընկերներին, միւսոյն մարդկանց երեսներն են տեսնում: Ճեմարանում մի բան կայ միայն փոփոխական՝ այդ գասերն են, որ ճեմարանցու կեանքը տանելի են գտրձնում: Միաօրինակ անցնում է ճեմարանցու կեանքը, իսկ միաօրինակութիւնը ձանձրալի է գառնում, մանաւանդ ճեմարանի չոր պատերի և չոր սեղանների մէջ: Ճեմարանցին կարօտ է նորութեան: Ահա նամակները որոշ չափով բաւարարութիւն են տալիս այդ պահանջին: Նամակը մի բոպէ մոռացնել է տալիս ճեմարանցուն իր շրջապատը. նա մի առ ժամանակ իրան այնտեղ է զգում, որտեղից եկած է նամակը. իր սիրելիների, ընկերների շրջանում: Նա կարծէք դէմառդէմ կանգնած խօսում է այդ թանկագին էակների հետ և զրանով նա հոգեկան բաւականութիւն է ստանում: Ահա ինչ մեծ նշանակութիւն ունի նամակը ճեմարանցու համար: Պէտք է տեսնել, թէ ինչպէս տղաները շրջապատում են վերակացուին նամակները բաժանելիս: Ո՞րքան ուրախանում, հրճուում են նամակ ստացողները, և ընդ հակառակը, ո՞րքան տիրուում են նրանք, որոնք այդ օրը նամակի էին սպասում և չեն ստանում: Նախանձի առարկայ են դառնում այն աշակերտները, որոնք շուտ շուտ նամակներ են ստանում:

Ճեմարանում ընթերցանութիւնը շատ տարածուած է: Դըժուար թէ գտնուի մի ուրիշ ուսումնական հաստատութիւն, որի աշակերտները այնքան կարդային, ինչքան ճեմարանցիք են կարդում: Եւ շատ հասկանալի է: Ճեմարանցին ամբողջ օրը ճեմարանում է անցկացնում: Նա զրսեցի աշակերտների նման այցելելութիւններ չունի, թատրոններ, համերգներ չի կարող

գնալ, և վերջապէս, երբ երեկոյեան սերտողութեան զանգը տուած է, նա այլևս իրաւունք չունի դուրսը զրօննելու: Իսկ դրսեցիները այդ բաներից ազատ են. նրանք կարող են թատրոն էլ, ուրիշ տեղեր էլ յաճախել, վերջապէս նրանք կարող են զլիսաւոր փողոցներում մինչև ուշ ժամանակ զբոնել: Այդպէս չեն ճեմարանցին: Նա բոլորովին կեանքից կըտրուած ապրում է դասերի և գրքերի աշխարում:

Եւ այսպէս ճեմարանցին սկսում է կարդալ ու կարդալ Դ. դասարանից սկսած նրանք սկսում են ոռւսերէն ևս կարդալ բառարանի օգնութեամբ: Զ. դասարանում և լսարաններում շատերը այնքան դասերին չեն հետևում, որքան աշխատում են գրքեր կարդալ: Կարդում են ամեն տեսակ գրքեր. վէպեր, պատմուածքներ, ուսումնասիրութիւններ: Լսարանցիք իրաւունք ունեն նաև օրաթերթեր և ամսագիրներ կարդալու: Ամսաթերթեր կարդալ կարող են բոլորեքեան: Մի ընորոշ մանրամասնութիւն. 1902-ին 50-ից աւել աշակերտաներ «ԺԿՈՊԱԿՆՈՅ» ՕՅՈՅՑՔԻԵ» -ին բաժանորդ են գրուել, պատճառ. որովհետև այդ թերթը բացի Սենկիմիչի զրուածներից խոստացել էր նաև «զեղեցկուհինների ալլում» տալ. ահա այդ վերջինն էր, որ ճեմարանցիններից շատերին գրաւիչ էր հանդիսացել և բաժանորդներ որսացել... Ճեմարանցին զուրկ է կեանքի վայելքներից. ընթերցանութեան միջոցով նա կարողանում է հաղորդ լիներ գրսի մարդկանց հետ. նա ընթերցանութեան միջոցով տեսականապէս ծանօթանում է կեանքի չարն ու բարիի հետ: Կան աշակերէներ լսարաններում, որոնք բացի ոռուսերէնից և հայերէնից կարդում են և գերմաններէն: Բայց գերմաններէն կարդացողներ շատ քչերն են լինում. ամեն մի դասարանում մի կամ մի բանի հոգիններ:

Գրքեր ստանում են ճեմարանի գրադարանից ամեն մի դասարան շաբաթը երկու անգամ: Գիրք ստանալու նախընթաց երեկոյեաս առանձին արկղում տոմսակ են ձգում. գրադարանապետը առաջնուց գրքերը պատրաստում է, ճաշից յետոյ տղայք գնում և ստանում են:

Ճեմարանը յատկապէս իր անունով, կարծեօք, ոչ մի թերթ չի ստանում: Ճեմարանը չի ձեռք բերում և նոր գրքեր, եթէ նույն չեն ուղարկում: Սա շատ տիսուր երեոյթ է ճեմարանական կեանքում: Ճեմարանի վարչութիւնը սպասում է, որ մէկը մեռնի ու իր գրքերը ճեմարանին կտակէ, կամ հեղինակները, այնքան բարի պէտք է լինեն, որ իրանց հեղինակութիւններից բաժիննպէտք է հանեն և ճեմարանին, այլապէս ճեմարանը զուրկ կը լինի այդ հրատարակութիւններից: Ամօթ է ասել, որ ճեմարանի

բիւջէի մէջ և ոչ մի կոպէկ չի յատկացրուած նոր գրքեր գնելու կամ թերթեր ստանալու։ Որ վարչութիւնը չի հոգում գրադարանի վրայ՝ այդ երկում է և այն հանգամանքից, որ ամեն մի պատահական անձն կարող է գրադարանապետ լինել։ Բաւական է որ որ նա ճեմարանը տւարտած լինի և կամ պարապ մի անձ լինի, և ճեմարանի գրադարանապետութիւնը պատրաստ է։ Եղել է գրադարանապետ, որ լեզուագէտ լինելով հանդերձ, ոռւսերէն չէ իմացել։ Պարզ է որ երբ հայերէն գրքերը սպասում են որ նուիրեն, նոյնը չեն կարող աննել և ոռւսերէն գրքերի վերաբերմամբ։ Ուրիշն, ճեմարանը տարինելի շարունակ (եթէ գիրք կաակողնել չկան) ոռւսերէն նոր գրքերի երեսը չպիտի տեսնի։ Բայց չէ որ ճեմարանը «բարձրագոյն» ուսումնական հաստատութիւն է։ Ճեմարանի վարչութեան անհոգութիւնը գրադարանի վերաբերմամբ և «նուէրների» ու «կտակների» սպասելը, աւելի քան դատապարտելի է։ դա յանցանք է։

Ճեմարանում ժամանակ առ ժամանակ հրատարակուել են նաև աշակերտական թերթեր, նզել են «երանելի» ժամանակներ, երբ ճեմարանի վարչութիւնը ոչ թէ արդելել, այլ ընդհակառակը խրախուսել է նման ճեռնարկութիւնները։ Բայց այսօր վարչութիւնը թոյլ չի տալիս, որ ճեմարանում, թէկուզ բարձր գասարանցոց կամ լսարանցոց համար, պարբերական թերթեր գոյութիւն ունենան։

1899-ին գոյութիւն ունէր «Ընձիւղ» անունով մի թերթ Բ. Ի. Խմբագրութեամբ։ Այդ թերթը, որ վարչութիւնից ծածուկ էր հրատարակում, կազմում և հրատարակում էին այն ժամանակուայ Զ.-րդ գասարանցիք և Բ. լսարանցիք։ Թէ ինչ բովանդակութիւն, ինչ ուղղութիւն ունէր «Ընձիւղը»—այդ մասին ոչինչ չենք կարող ասել, քանի որ այդ թերթի միայն անունն ենք լսել։ Այսուհետեւ թերթ է հրատարակուել նոյն ժամանակներում և Դ. դասարանում, որը ասում են աւելի երեխայական է եղել և այդ պատճառով էլ երկար կեանք չի ունեցել։

1900-ին Զ. դասարանում սկսեց լոյս տեսել «Նաւակ» շաբաթաթերթը Ա. Խու.ի խմբագրութեամբ և վեց հոգու մասնակցութեամբ։ «Նաւակին» մասնակցում էին միայն Զ. դասարանցիք, այն էլ ոչ ամենը։ Թերթի մէջ երևան եկան բաւականին լուրջ յօդուածներ։ Պէտք է յիշել Ա. Խու.ի կրակոտ առաջնորդողները, որով դատապարտում էր նա ճեմարանցիներին իրանց անշարժութեան մէջ։ Այդ «ըմբռոստ հոգին էր», որ կեանք էր տալիս «Նաւակին», որի ջանքերով և ծնունդ առաւ

«Նաւակը»: Բայց «Նաւակը» չկարողացաւ երկար ժամանակ գոյութիւն ունենալ: «Նաւակը» իր աղդու առաջնորդողներով չկարողացաւ չէզօք ընկերների «գարեւոր նիրհը» խանգարել. ընդհակառակը, գանուեցան հակասակ ոյժեր, և «Նաւակը» ստիպուած էր առ ժամանակ կանգնած մնալու: Սակայն, «Նաւակը» ապառուայ վերջերին նորից սկսեց շարունակել իր ուղին:

Միւս տարին, երբ Զ. դասարանցիք արդէն Ա. լսարանում էին, սկսեցին նորից շարունակել «Նաւակը»: Այդ տարին «Նաւակը» ունեցաւ մի կարեւոր ոյժ, որ գրախ էր եկած և Ա. լսարանում ազատ ունկնդիր էր: Բայց «Նաւակը» նոյեմբերին նորից գալարեց, նորից սկսեց լոյս տեսնել այս անգամ արդէն 3 հոգու մասնակցութեամբ, որոնք հազիւ երկու համար կարողացան լոյս ընծայել:

Տարուայ վերջերին Ա. լսարանցիք նորից հաւաքուեցին, խորհուրդ արին շարունակել շաբաթաթերթի հրատարակութիւնը. բայց այս անգամ որոշեցին աւելի լուրջ վերաբերուել զործին: «Նաւակը» այս անգամ դարձաւ երկշաբաթաթերթ, մասնակցութեամբ այժմ բոլոր լսարանների: Ըստրուեցաւ երեք հոգուց առանձին խմբագրական մարմին, որ պէտք է ընդունէր «Նաւակի» յօդուածները: «Նաւակի» ծաւալը եռապատկուեց: Թուղթը տողած էր գծիկներով Մայր Աթոռի տպարանում: «Նաւակի» առաջին երեսի վրայ էլնկարուած էր նաւակը, որ կտրում է ծովի ալիքները: «Նաւակ» կիսամսեայ թերթի առաջին համարը լոյս տեսաւ ապրիլի ոկտոբրին: Նրա մէջ կային պատկերներ, նկարագրութիւններ, բանաստեղծութիւններ, բայց ամենից աւելի աչքի էին ընկնում և արժէք ունէին Ա. Ի.-ի՝ «Մեր հասարակական գործունէութիւնը» և Մ. Տ.-ի «Ինչ պէտք է անել ամառը» յօդուածները: Երկուան էլ «շարունակելի» էին, բայց գժբախտաբար նրանք այդ բախտին չարժանացան: «Նաւակ» կիսամսեայ թերթը ընկաւ վարչութեան ձեռքը և 2-րդ և-ը թէկ պատրաստ, բայց չկարողացաւ լոյս տեսնել:

«Նաւակի» հրատարակութիւնը առիթ տուեց Ե. դասարանում մի ուրիշ թերթի հրատարակման: Լոյս տեսաւ «Արուսեակ» տնունով մի թերթ, որին մասնակցում էին, բացի Ե. դասարանցիներից և Դ. դասարանցիք:

Այս բոլոր թերթերը, ինչպէս ասացինք, ծածուկ էին հրատարակում վարչութիւնից: Ճեմարանի վարչութիւնը «թերթ» անունը չէր ուզում լսել: Վերջապէս մի վարչութիւն, որ հազիւ էր իրաւունք տալիս այն էլ միայն լսարանցիներին օրաթերթ կարդալու, իհարկէ պէտք է վախենար «թերթ» անունից: Տեսչին շատ անգամներ են դիմումներ եղած, որ թոյլ տրուի

թերթեր հրատարակելու, բայց բոլոր զիմումները անհետեանք են մնացել: Բայց կարծիք կար, որ ճեմարանի վարչութիւնը ցանկալի չէր համարում թերթերը դիսցիպլինի անկման երկիրից, ուստի թերթ հրատարակող «ըմբոստ» աշակեանների առաջին պայմանն է եղել «հակավարչական ոչինչ բան չգրել»: Ճեմարանցիք թերթ հրատարակելով գլխաւոր նպատակն են ունեցել. կարողանալ արարայտուել իրանց մտքերը մաքուր աշխարհաբառով և բիշ թէ շատ շրջանայեաց լինել, տեսնել թէ ինչ պայմանների մէջ են ապրում: Թէ որբան կարեորութիւն կայ առաջին պահանջը լրացնելու՝ մենք առայժմ այնքան կտսենք, որ ճեմարանցին Դ. գասարանից սկսած աշխարհաբառի երես չի տեսնում: Նա ամենացած դասարանից սկսած միայն զրաբառ ոտանաւորներ է անզիր անում, գրական հատուածներ կարդում, գրաբառ զրում: Զկարողանուով տիրապետել զրաբառ լեզուին, նրանք կաշկանդում են իրանց լեզուն, սանձում իրանց երեակայութիւնը: Ահա ճեմարանցին մի այլ միջոցով ուզգում է բաւարարութիւն տալ այդ բնական և կարեոր պահանջին: Բայց նա իրաւունք չունի «ազատ» մտածելու, «ազար» երեակայելու և «ազատ» զրելու:

Ճեմարանում հրատարակուած թերթերի մասին առել՝ թէ ինչ ուզգութեան էին պատկանում չի կարելի: Ճեմարանցիք կեանքի հետ անմիջական շփումն չունենալով, չէին կարող գրսի այս կամ այն կուսակցութեան պատկանել: «Նաւակը» տուեց մի քանի հրապարակախօսական յօդուածներ՝ որոնցից մեծ մասը կոչ էին՝ ուղղուած չէղօք անհատներին թերթին աշխատակցելու համար: Թերթի մէջ անխնայ մտրակում էին իրանք ճեմարանցիք: Ճեմարանի կեանքը այդ թերթերի մէջ ստացել է «նեխուած մինուրուդ», «մեռած կեանք», «թմրած» և այլն... ածականները: Թերթի մէջ մեծ տեղ են բռնել նաև բանաստեղծութիւններն ու թարգմանութիւնները:

Ճեմարանում հրատարակուող թերթերին մասնակցել են ոչ բոլոր դասարանցիք: Ընդհակառակը միշտ գտնուել են հակառակ ոյժեր, որոնք պատճառ են եղել թերթերի կործանման: «Նաւակը» իր գոյութեան ընթացքում մի բան միայն կատարեց. նա ճեմարանցոց շատերի համար թերթի գոյութիւնը պահանջ գարձրեց: «Նաւակի» վերջին հրատարակութեան մասին գիտէր արգէն ամբողջ ճեմարանը: Աշակերտութիւնը հետաքրքրուում էր «Նաւակով», նրա արծարծած մտրելու խօսակցութեան առարկայ էին դառնում: Եւ... գարչութիւնը

արգելեց «Նաւակը», իսկ նրա զլիսաւոր վարիչները թողին այդ տարին ճեմարանը:

Բացի թերթերի հրատարակութիւնից ճեմարանում եղել են ուսանողների համար և լսարանական ժողովներ 1901-ին վարչութեան թոյլտութեամբ: Ժողովները լինում էին շարաթ երեկոները և կիրակի պատարագից յետոյ, եթէ կարիք էր զգացւում: Ժողովը նպատակ ունէր հասարակական զանազան հարցեր շօշափել: Ժողովները ոկրներում բազմամարդ էին լինում: Գ. լսարանցիներից մէկը կարդաց իր «Հոգեռականութեան նշանակութիւնը և նրա կատարելիք դերը ներկայ կեանքում» շարադրութիւնը: Այդ յօդուածի ընթերցումից յետոյ, մի քանի ժողովները շարունակ, զանազան հականառութիւններ եղան այդ խնդրի նկատմամբ, բայց վերջ իվերջոյ մի որոշ եղրակացութեան չեկան: Ժողովներին սկզբներում մասնակցում էին համարեա բոլոր լսարանցիք. վերջ իվերջոյ ժողով յաճախողների թիւը պակասեց: Մարտ ամսի մէջ արդէն կէսից աւելին դադարել էին ժողովներին յաճախելուց: Վերջապէս մարտի 23-ին այդ ժողովները վարչութեան կողմից արգելուեցան:

Հոկտեմբեր ամսում մի կայսերական տօն կայ (21) և մի եկեղեցական: Եկեղեցական տօնը մեր ս. Թարգմանչաց տօնն է:

Եղել են տարիներ, երբ թարգմանչաց տօնին ճեմարանի աշակերտները Օշական են գնացել: Օշական գիւղը գտնուում է Ս. Էջմիածնից դէպի հիւսիս 12 վերս հեռաւորութեան վրայ:

Ճեմարանցու համար մի մեծ զուարձութիւն է Օշական գնալը, որտեղ մեր մեծ վարդապետ Մեսրովի նշխարներն են հանգչում: Երեկոյեան արդէն ամեն բան պատրաստում են, որ առաւօտեան կանուխ ճանապարհ ընկնեն: Առաւօտեան ժամի 4 ին առանց զանգի, առանց ձայն տալու, արդէն ամենքը ոտի վրայ են: Երբ բոլորեքեան պատրաստ են, հաւաքւում են ճեմարանի հիւսիսային կողմը և դասարան-դասարան, առանձին լսարանցի խմբապետներով, երգելով դուրս են գալիս ճեմարանից: Այդպէս ամբողջ ճանապարհը երգելով, տեղ տեղ վագելով, ուրախ ուրախ հանացներ անելով, մօտ երեք ժամում Օշական են հասնում:

Օշականը և նրա հարևան «գեղեցկանիստ» Աշտարակը երկու գոհարներ են ներկայացնում հիւսիսային Այրարատում: Մարդ չի կարողանում առանց զմայլելու նայել Օշականի ձորի վրայ, առանց բնութեան գեղեցկութիւնը զգալու անցնել այդ

գեղաշուք վայրելով անկարելի է: Օշական հասնելուց յետոյ, տղաները հաւաքւում են վանքի բակը, այդտեղ քիչ հանգստանալուց յետոյ, գնում են ման զալու: Բարձրանում են Օշականի բլուբը, որտեղ մի փոքրիկ մասունքի մեծութեամբ զիտանոց կայ: Այդտեղից, ինչպէս պատմութիւնն ասում է, զիտել է թշնամու զօրքերի զիրը Օշականի տէր՝ Վահան Ամատունի իշխանը: Այդ փոքրիկ մասունքի պատերը ամրողջովին ծածկուած են զանազան «հայրենասէրների» գրութիւններով:

Օշականի բլուբի գագաթից մի հիանալի տեսարան է բացւում: Հարաւային կողմը ամպերի մէջ իր գագաթն է ծրաբել սարերի հսկայ Աւագ Մասիք: Մարդ չի կշտանում այդ վեհափառ սարերին նայելուց: Իզուր չեն պատմում որ երբ Աշոտ Երկաթ վերադառնում էր Յունաստանից, նա տիսուր ու տրտում, լուրջ մտքերի ծովումն ընկած առաջ էր ընթանում իր զինուորների հետ, բայց հէնց որ մտնում է Այրարատ, հէնց որ գիմաց փայլում է Մասսի վեհ ճակատը, երկաթէ արքան նոր ոյժ, նոր եռանդ է ստանում, նա թողնում է, մոռացութեան է տալիս իշրան պաշարող մտքերը և դառնալով զօրքին, ոգեորում է նըրանց հայրենասիրական խօսքերով.... Երեսում է նոյնպէս Արաքսը, այդ սրբազնն գետը, որ հազիւ նշմարելի, առաւօտեան մշուշի մէջ կտրում, անցնում է արծաթէ շերտով Արարատեան դաշտի հարաւային մասով: Այս կողմ, դէպի հիւսիս երեսում է աւելի մօտիկից քառագագաթ, տարածուած ջրերով և բուսականութեամբ հարուստ Արագածը, որի փեշերի տակ երեսում են Բիւրականը, մեր հայրապետների ամառանոցը, Փարքին, Ամքերդա ձորը, որոնք իրանց ծառերով հետուից հիանալի տպաւորութիւն են թողնուած: Աւելի մօտիկ Աշտարակ գիւղն է, որի այգիների մի ծայրը արտէն Օշականին է հասնում, իսկ մեր առաջը Օշական գիւղն է իր հրաշալի ձորով: Եւ երբ մարդ մի ընդհանուր հայացք է ձգում այս ամբողջին, մի անսանելի վիշտ կրծում է հոգին. որքա՞ն գեղեցիկ է հայի բնակարանը, որքան առոտորէն բնութիւնը զարդարել է այդ երկիրը թէ գեղաշուք լեռներով և թէ պտղաբեր այցիներով, լիառատ դաշտերով: Երջանիկ գրախտի որդիներ պէտք է համարուէին սըրանց բնակիչները: Բայց ինչ է ասում զառն իրականութիւնը...

Բլուրից ցած գալով մտնում են նորից եկեղեցու գաւիթը: Եկեղեցին վերանորոգուած է Գէորգ կաթողիկոսի հրամանով: Նրա մէջ թաղուած է ազգի մեծ բարերար Մեսրոք Մաշտոցը:

Այն խորանը, որտեղ թաղուած է Մեսրոքը, զանւում է եկեղեցու հարաւային կողմում: Մի մի մոռ առնելով ձեռնե-

րին աշակերտները խումբ-խումբ գնում են գերեզմանը համբուրելու:

Ի՞նչ հոգեկան դրութեան մէջ կարող է լինել մի աշակերտ, որ առաջին անգամ մօտենում է այդ սուրբ շիրիմին: Կանգնած այդ մեծ մարդու գերեզմանի առաջ, ինչեւ առեք չեն գալիս անցնում նրա մտքով: Նրա ծնկները խոնարհում են յակամոցից այդ սուրբ գերեզմանի առաջ և նա համբուրում է մեծ մարդու շիրիմը... Զարմանալի է որ մեր հասարակ ժողովուրդը կրօնական մոլեսանդութեամբ լցուած զանազան նոր նոր սրբերի է երկրպագութիւն անում, իսկ Ս. Մեսրոպը մոռացուած է: Հաղարաւոր ու խոտորներ Մողնի Ս. Գէորգին ուխտի են գնում, շատերը դրանով էլ չեն բաւականանում, և զանազան նեղութիւններ յանձն առնելով կօշ են գնում. Կօշայ Ս. Գէորգին աւելի զօրաւոր համարելով. իսկ ընդհակառակը, ուխտուորների լազմութիւնը Օշականի միջով ուղիղ անցնում է և էջմիածին գնում. քանիմն են նրանցից, որ նեղութիւն են քաշում Ս. Մեսրոպի այցելութեան գնալու: Բայց մթիւ իրանք մեղաւոր են, եթե նրանցից շատ-շատերը չը գիտեն թէ ո՞վ է թաղուած Օշականում...

Ժամի 10-ին սկսում է պատարագը: Պատարագիչը լինում է ճեմարանի վարդապետներից մէկը: Պատարագի վերջում հոգեհանգիստ է կատարւում Ս. Թարգմանչաց յիշատակին, որի ժամանակ խօսուում է կամ ճառ է կարգուցում աշակերտների կողմից:

Ճաշը լինում է վանքապատկան այգիներից մէկում: Ճաշ շի ժամանակ խօսուում են ճառեր, որոնք զլիաւորապէս դրուատելով թարգմանիչների գործը, յորդորում են աշակերտներին հետևող լինել նրանց օրինակին, նրանց պէս անձնուրաց լինել և այնի...

Ճաշից յետոյ պատրաստում են արդէն ճեմարան գնալու: Հաւաքւում են կրկին զասարանդ-աստրան. նոյնպիսի կարգով որ եկած էին գնում են ճեմարան լաւ լաւ յիշողութիւններով: Առհասարակ պէտք է նկատել, որ Օշական գնալ գալը մեծ բաւականութիւն է պատճառում ճեմարանցուն, թարգմանում է նրան, սակայն ամեն տարի չի պատահում նոյն իսկ այդ միակ տշակերտական խմբովին ճանապարհորդութիւնը: Ի՞նչ է մտածում այդ մասին վարչութիւնը:

Այն տարի որ Օշական չեն գնում ճեմարանցիները, թարգմանչանց տօնի օրը երեկոյեան ճեմարանում հանդէս է լինում:

հանդիսաբանում: Ուսումնական տարուայ ընթացքում բացի թարգմանչաց տօնից տօնում են հանդէսով թագէոս և Բարդուղիմէոս առաքեալների, Վեհափառի անուանակոչութեան, Վարդանանց և Գրիգոր Լուսաւորչի տօները:

Հանդէսները սովորաբար սկսում են երեկոյեան ժամը 6<sup>½</sup>-ին: Երբ աշակերտները արդէն հաւաքուած են հանդիսաբանում, գալիս է ճեմաբանի տեսուչը ուսուցիչների և հիւրերի հետ միասին: Հիւրերը լինում են վանքի միաբանութիւնից և ուսուցիչների ընտանիքներից: Պատահում են հանդէսներ, որ ներկայ է գտնւում նաև Վեհափառ Կաթուղիկոսը: Հանդէսներից ամենափառաւորը կատարում է Վեհափառի անուանակոչութեան տօնին:

Հանդէսը սկսում է «տւուր պատշաճի շարականով», որ Կոմիտաս վարդապետի զալուց յետոյ, շատ անգամ քառաձայն է երգւում: Ցետոյ հերթով ամբիօն են բարձրանում ոտանաւոր կամ ուրիշ բան ասողներ ու կարդացողները և ասում կամ կաբոգում են իրանց պատրաստածները: Առաջին ամբիօն բարձրացողը առհասարակ բաւականին երկար է կարդում կամ խօսում (շատոսակաւ). Նիւթը անպատճառ օրուայ տօնին յարմար տիտք է լինի և անպատճառ այս կողմից այն կողմից քաղած կտորներ են, որ տղան ի մի հաւաքելով մի ամբողջութիւն է կազմում և հանդիսականների առաջ պատմում: Նրանից յետոյ ասում են ոտանաւորներ: Մէջ ըստ մէջ երգւում են երգեր:

Առհասարակ պէտք է առել, որ հանդէսները ճեմաբանում շատ անհետաքրքիր են անցնում: Հանդէսը տանելի դարձնողը քառաձայն երգեր են, որ 1898-ից իվեր է ճեմաբանի միակ միխթարութիւնն են կազմում:

Հանդէսում կարդացածները միծ մասամբ տևելի չոր ուսումնասիրութիւններ են, որիշ ոչինչ: Նրանք ուղեղի համար են գրուած, որ աւելի շուտ քնացնում են աշակերտներին, իսկ զգացմունքի համար՝ համարեա ոչինչ: Նոյն իսկ ոտանաւորները, որ կարող են աւելի լաւ ասուել, կարգին չեն պատրաստում: Գալիս է աշակերտը, ամբիօն է բարձրանում, առանց կարգին առողմանութեան, պարզ արտասանութեան ասում են ու ցած իջնում: Ո՞վ է մեղաւորը: — Նրանք, որոնց պարտականութիւնն է հետեւել և չեն հետեւում: Գալիս են տղայքը ժամկերով նստում են, ինչ են տանում այդ հանդէսներից: — Համարեա ոչինչ: Եթէ չը լինէին այն մի բանի քառաձայն երգերը, շատերը սիրով կը հրաժարուեին հանդէս գալուց: Ցիշում եմ, հանդէսներից մէկին ներկայ էր և Վեհափառ Հայրիկը. նա համա-

բեա ոչ ոքի չը թողեց բան կարգալու, այլ ամբողջ ժամանակը երգում էին:

Բայցի հանդէսներից ձեմարանում լինում են նաև գրական երեկոյթներ, շտրաթ երեկոները: Վերջին տարիներս աւելի յաճախ եին լինում այս երեկոյթները, բայց այդ գրական երեկոյթները աւելի չոր ու ցամաք եին լինում, աւելի շուտ գասեր էին, սիայն թէ՝ հանդիսարանում, և ուրիշ ոչինչ նթէ ի նկատի ունենանք, որ ամբիօն բարձրացողներից շատերը այնքան ցած են ասում կամ կարգում, որ սիայն իրանք կամ ամենամօտ կազնողները կամ նստղները կարող են լսել այն ժամանակ հասկանալի կը լինի ունկնդիրների գրութիւնը: Աւելի հետաքրքիր երաժշտական երեկոյթն է, որ կատարւում է սովորապէս Գ. Հուսաւորչի տօնին, միծ պասի մէջ: Բայց այդ մասին յետոյ:

Հոկտեմբերի ամսի վերջանալով, վերջանանում է և տուաջին երկամսեակը (Ս. և Հ.): Երկամսեակի վերջին օրերին դասերը աւելի զժուարանում են: Շատանում են գրաւորնեուը: Աշակերտները ստիպուած են աւելի եռանդով սշլսատելու, որ թոյլ թուանշան չունենան: Աւելի պարտաւոր են և ստիպուած են աշխատել այն աշակերտները, որոնք դեռ այդ երկամսեակում դաս չեն պատասխանել: Ճեմարանում ևս թագաւորում է թուանշանային սիստեմը, այնպէս որ աշակերտներն էլ այդ սիստեմով են առաջ գնում: այսինքն այն աշակերտները, որոնք պատասխանել են դասերը և թուանշան ստացել, նրանք այնուհետև «արխէին» են: Նրանք կարող են դաս չպարաստել: չը որ նրանք ազատ են, թուանշանն արդէն ստացել են: Զարմանալին այն է, որ լսարաններում ևս ուսանողները բոլորովին չեն ազատուած այդ թուանշաններից:

Նոյեմբեր ամսում ցըտերը կամաց-կամաց սկսւում են, այնպէս որ այլևս գուրսը շատ մնալ չի կարելի: Նոյեմբեր ամսով սկսւում է մի նոր երկամսեակ: Թէև առաջին երկամսեակը վերջացել է, բայց դեռ թուանշանները չեն յայտնել ուստի և տղաները սպասողական գրութեան մէջ են լինում: այդ պատճառով և օրերը աւելի երկար են թւում: Նոյեմբերի մէջ էլ տղաները գնուած են անտառ, բլուրները կամ ո. Հոփիսիմէ վանքի կողմերը: Բայց պէտք է նկատել, որ վերջին տարիները տղաներին աւելի ուշ-ուշ են տանում ման գալու: Սա

էլ, իհարկե, վերակացուների եռանդիցն է: Ծաբաթուայ մէջ մի անգամ գուրս գնալ մանգալն էլ շատ են տեսնում ճեմարանի տղաների համար...

Նոյեմբերին բոլորովին փոխւում է: Ծառերը բոլորովին աերևագուրկ ողբում են խրանց մերկութիւնը: Ծաղիկները ծածկուած են խոտերում և անուշ նիրհում են: Թըռչուններ չեն երևում այլևս: Միայն երբեմն սկ ագռաւները իրանց անախորժ կոկոսցով ձմռան գալուստն են գուժում: Այժմ աւելի յաճախ սաստիկ քամիներ են բարձրանում, որոնք տւելում, տանում են ծառուղիներում և ճանապարհներին թափուած չոր տերեները: Եւ այս բոլորը ազդում է փակուած ճեմարանցու վրայ, և նրանց մուայլ հոգին տւելի մուայլայնում է:

Թէկ օրերը ցուբոտ, բայց դեռ տղաները կարողանում են դուրսը խաղալ: Ճաշերից յեսոյ ամեն դասարան առանձին առանձին «ըերդ» են խաղում: Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և ճեմարանում ամեն խաղ իր որոշ ժամանակն ունի: Այսպէս, սեպտեմբերի մէջ տղաները վէկ և զնդակ են խաղում: Հոկտեմբերին սկսում են «ըերդ» խաղ: Այս խաղը յատուկ ճեմարանցոց խաղ է և աւելի երկար է տեսում: Նոյեմբերին և գարնան սկզբին հոլ են խաղում: Մարտին, ապրիլին, մայիսին նորից սկսում են վէգը, զնդակը և աւելանում է «դասատուն» և «դազախ-թոփի» խաղը: Յատուկ փոքրերի սեփականութիւն է «գերի», «շրջան» և «թագաւոր» խաղերը, որ խաղում են երեկոյեան:

Խաղերը ճեմարանում այնքան էլ շատ չեն: Մի գիշերօթիկ ուսումնարան ուր 200-ից աւելի աշակերտներ կան շատ յարմարութիւններ ունի ամեն տեսակ խաղեր կազմակերպելու: Բայց ճեմարանի վարչութիւնը ժամանակ չունի այդ տեսակ «չնչին» բաների մասին մտածելու... Նո աւելի «խոշոր գործերի» է, այնպէս որ տղաների խաղերի մասին մտածելու ժամանակ վատնել անկարող է: Ճեմարանում մի ժամանակ խաղափայտեր կային: Վերջերս փթած լինելու պատճառով վեցցուեցին, և նրանց տեղերը նորելը չշինուեցան: Այժմ միայն երկու զուգափայտեր կան, որոնց վրայ շատ քչերն են խաղում:

Ուրիշ ուսումնաններում «մարմնամարզութիւնը» (ՐԱՄՆԱՏԻԿԱ) առարկաների շարքումն է: Մարմնամարզութեան առանձին որոշուած ժամեր կան: Իսկ ճեմարանում դրա հուն էլ չկայ: Ճեմարանում աւելի քան մի ուրիշ գպրոցում կարիք կայ մարմնամարզութեան դասերի: Ճեմարանի աշակերտները առանց այն էլ մատնուած են անշարժ կեանքի: Ամենաաշխոյժ աշա-

կերտներն անգամ, ապրելով մի քանի տարի ճեմարանում, լըր-ջանում, մոայլանում և «գաճ» են դանում:

Ճեմարանցին անշարժ մնալով մնասում է, ի հարկէ, ի-  
րան, նա թէ հոգեպէս և թէ մարմնապէս հիւանդանում է:  
Բայց վարչութիւնը թէ խաղերին և թէ մարմնամարզական  
վարժութիւններին երկրորդական, երրորդական նշանակու-  
թիւն է տալիս: «Լինի էլ կը լինի, չլինի էր:

Այդ բանի դէմ բողոքում է բանականութիւնը: Հարկաւոր  
են ճեմարանի համար մարմնամարզական դասեր: Հարկաւոր է  
զրա համար մասնաւոր ուսուցիչ, եթէ ձեզ համար թանգ է  
ճեմարանցու առողջութիւնը: Թող լաւ իմանայ ճեմարանի վար-  
չութիւնը, որ ապագայում նա շատ անէծքների կ'արժանանայ  
իր սաների կողմից:

Եթէ մէկը ճեմարանում առաջարկի մտցնել և պարեր՝ նա,  
անշուշտ, միջնադարեան հերիտիկոսների պէս խարոյկի կ'ար-  
ժանանայ: Ճեմարան և հերոպական պարեր, զբանք իրարից  
այսրան հեռու են, որքան արևելքը՝ արևմուտքից... Ի՞շպէս  
կարելի է հոգիոր ճեմարանում արոպական պարեր սովորեց-  
նել. դա կատարեալ հերետիկոսութիւն կը լինի. իսկ այդ տե-  
սակ առաջարկութիւն անողը առաջն հերետիկոսը:

Ամենից առաջ պարը (իհարկէ ոչ չափից աւելին) անհրա-  
ժեշտ է առողջապահական տեսակէտից: Պարը ոչ այլ ինչ է,  
եթէ ոչ որոշ տեսակի մարմնամարզութիւն: Իսկ թէ իւրաքան-  
չիւր զպրոցում պէտք է պարտազիր լինեն մարմնամարզական  
դասեր, դա արդէն յայտնի պարզ ճշմարտութիւն է: Պարերը  
մարդուս թարմացնում, առոյգացնում են. իսկ ճեմարանում  
տիրում է ընդհանուր անշարժութիւն, թմրածութիւն, նրանց  
պէտք է սթափեցնել: Ահա պարերը որոշ չափով կարող են այդ  
նպատակին ծառայել: Պարը սովորեցնում է մարդկանց արագ  
և չնորհալի շարժումներ ունենալ: Լաւ ձեւը, լաւ շար-  
ժումներ ունենալ հարկաւոր է ամեն մի մարդու, նա մանա-  
ւանդ կրթուած, զարգացած մարդու համար. ուսմինարիստական  
անտաշութիւնը մի առաքելութիւն չէ, որ սրբագործենք:

Ճեմարանցին հայրենիքում եղած ժամանակ փախչում է  
առհասարակ ընկերութիւններից, թատրոններից, պարահան-  
դէմներից, պատճառը շատ հասկանալի է, առաջին նա անտարըն  
է գառել առհասարակ գէպի ամեն մի բան, երկրորդ՝ որ նա ամ-  
աշում է, քաշում է. չը զիտէ իրան հասարակութեան մէջ բռնել,  
այդ պատճառով էլ չի վատահանում այդ տեսակ շրջանների  
մէջ մտնել: Կայ և մի երրորդ պատճառ. այդ այն է, որ վար-  
չութեան և տղաների միջանամութեան կարծիքով աւելորդ է

և նոյն իսկ ժեղքը է գնալ այդպիսի տեղեր, իսկ պարելու մասին էլ ամեննեին չը պէտք է մտածել. ճեմարանականը անհամեմատ բարձր կանգնած պէտք է լիւի: Նա իրան հեռու պէտք է պահէ «աշխարահային» վայելքներից: Դրանք անցողական բաներ են: Դրանք նպատակ չեն կարող լինել, ուրեմն և չարժէ ժամանակ կորցնել այդպիսի բաների մասին նոյն իսկ մտածելու...

Բայց ճեմարանի վարչութիւնը կամ ճեմարանցին չի հասկանում, այն ամենահասարակ ճշմարտութիւնը, թէ «առողջ հոգին՝ առողջ մարմնի մէջ է»: Անցել են այն ողորմելի ժամանակները, երբ հոգին փրկելու, հոգին ազնուացնելու համար մարմինն էին տանջում: Այժմ մարդիկ այդ մասին ըոլորովին հակառակ հասկացողութիւն ունեն: Բայց ինչով են տարրերում թէ այդ վարչութիւնը և թէ աշակերտները իրանց «լուսամիտ գողափարներով» միջնադարեան կղերականներից:

Պարերը, ինչպէս ասացինք, սովորեցնում են ինքնալսուահ լաւ շարժուածքներ ունենալ: Թէ որբան անհրաժեշտ է այդ բանը ճեմարանցու համար՝ այդ կ'երեի հետեալից:

Ճեմարանի տղաները հազորդուելուց յետոյ զոյգ-զոյգ գնում են աշակողմեան գասի եպիսկոպոսին կամ վարդապետին գլուխ են տալիս, ապա անցնում: Մարդ չի կարողանում տառանց ցտելու նայել, թէ ինչ ծաղրանկար է (կարիկատուրա) բացւում նայողի առաջ: Տառնեակ զոյգերից մէկը չի կարողանում կարգին միասին գնալ, միասին գլուխ տալ, միասին հեռանալ: Մէկը առաջ է ընկնում, միւսը յետ է մնում, մէկը հարաւ է նայում, միւսը հիւսիս, իրար են ընդհարւում... վերջապէս մարդ աչքով պէտք է տեսնի, որ իմանայ թէ ինչ է կատարւում այնտեղ: Մարդ չի իմանում՝ ծիծաղի թէ վշտանայ...

Եւ այս բոլորը գիտէ ճեմարանի վարչութիւնը:

Իսկ եթէ կանոնաւոր պարի և մարմնամարդութեան դասեր լինէին, տղաները կարգին քայլել իմանային, վատահ, կանոնաւոր շարժումների վարժուէին, կարծում եմ, որ այդ տեսակ «սեմինարիստական անտաշութիւնը» կը վերանար, սակայն Ճեմարանի վարչութիւնը, աւելի սիրով կը համաձայնուէր, որ շարաթ երեկոները ճեմարանի աշակերտները հաւաքուէին միասին և սաղմոս քաղէին, փոխ ասէին... ձաշակի և աշխարհայեցողութեան բանէ:

Գալիս է գեկտեմբեր ամիսը: Յրտերը աւելի սաստկանում են, տղաները օրուայ մեծ մասը սերտարանում կամ դասարաններում են փակուած: Օրերը մեծ մասամբ ամպամած:

Սկսում է արդէն ձիւն գալ: Եջմիածնում ձիւնը վերջին տառը ինսերը շատ քիչ էր գալիս և շատ էլ չէր նստում: Դեկտեմբերի 6-Ն է: Այդ օրը կայսերական տօնի պատճառով դաս չելինում: Բայց այդ օրը ուրիշ նշանակութիւն ունի ճեմարանցոց համար: Այդ օրը ճեմարանի հիմնադրի՝ Գէորգ կաթողիկոսի մահուան տարեղարձն է:

Այդ օրը երեկոյեան աղօթքից յետոյ հոգեհանգիստ է կատարում Գէորգ կաթողիկոսի համար: Հոգեհանգստից յնտոյ տեսուչը կամ օգնականը, յիշելով օրուայ յիշատակելի հիմնադրին, յիշեցնում է տղաներին հիմնադրի յայսերն ու տեսչանքները ճեմարանի նկատմամբ և յորպորում է, որ նրանք սրբութեամբ պահեն և փայփայեն հիմնադրի տեսչերը: Տղաները գընում են ննջալան այդ խոհելով բռնուած:

Դեկտեմբերի վերջերն է: Աշակերտների գէմքին ուրախութեան նշաններ են երեսմ: Մօտեցել են արձակուրդի օրերը: Դասերը որքան կ'ուզէք դժուար են, գրաւոր գրաւորների յետելց: Այն հանգամանքը միայն՝ որ մի քանի օր է մնացել, մոռացնել է տալիս ամեն նեղութիւն: Տղայքը, այդ մօտալուտ աղատութիւնից ողենորուած, աւելի եռանդով են աշխատում: Կատարեալ «ապաշխարանքի շարաթ», ինչպէս իրաւացի կերպով անուանել է ճեմարանի ուսուցիչներից մէկը: Աւելի ուրախ են նրանք, որոնք հնարաւորութիւն ունեն տօներին տուն գնալու:

Վերջապէս անցնում է և «ապաշխարանքի շարաթը» և գալիս է նոր աարուայ արձակուրդը: Արձակուրդի ազդարաման նշաններն են այն միահամուռ ծափահարութիւնները և ուրախական ձայները, որոնք լսելի են լինում ամեն մի դասարանում, վերջին դասից յետոյ: Ուրախ են ամենքը, որ անցկացրին այն երկար երեք ամիսները, որոնք ճեմարանական կեանքում ամենաերկար ժամանակամիջոցն է: Ճեմարանցին, երբ առաջին կիսամեակը անցէ կացնում, կարծում է թէ արդէն տարուայ գժուար ժամն է անցած:

Արգոս

(Վերջը յաջորդ համարում)

## ԿԵԸՆՔԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

1. ԱՐ Բ Դ Յ

Երբ ես ման եմ գալիս փողոցներում, մանում եմ պալատ-ները, հասարակական հիմնարկութիւնները, թատրոն և այլն, չգիտեմ ինչու մարդիկ ինձ երեւում են զանազան գաղանների, կենդանիների կերպարանքով. ինձ միշտ թուում է թէ ներկայ հասարակական կազմի մէջ մարդիկ իրար մէջ բաժանել են լուռ համաձայնութեամբ զանազան կենդանիների դերեր և մեր կեանքը իսկապէս մի զաղանանոց է դառնել: Երեխ ես հիւանդ եմ, որ չեմ կարող ազատ շունչքաշել մեր այս հասարակական միջնորդառում:

Մհա քաղաքի ամենագեղեցիկ մասում եմ ես. իմ առջե խրոխտ երկինքն է բարձրանում մի պալատ, որի ճակարին գրած է՝ այս ինչ պարոնի «բանկ»: Մտնում եմ և վեր բարձրա-նում մարմարէ աստիճաններով: Բարձր և ընդարձակ զահլիճ-ներում, պատերին կից՝ մի շարք գեղեցիկ վանդակներ, որոնց ետևում նստուած են մաքուր հագնուած մարդուիներ և գրում են անվիրջ և համրիչներ չխչխկացնում: Ահազին թուով մարդիկ ել ու մուտք ունեն այդ պալատը, մէկը փող է բերում, միւսը փող է վերցնում: Թղթադրամի, արժեքաւոր թղթերի, ոսկու և արծաթի մի հորձանքի կենարոն է այդ:

Ահազին դահլիճներին կից շքեղ պահուած մի առանձնա-սենեկում, փափուկ բաղկաթոոի մէջ, ոոկոկ գրասեղանի առ-ջև բաղմած է ինքը «դործի» տէրը:

—Պարագիտ, սարդ, —դուքս պլիծաւ իմ բերանից, շեմքի մօտ:

—Ի՞նչ էք ասում, —նկատեց ինձ առանձնասենեակից գուրս եկող մի պարոն, որ շատ ու շատ գոհ էր իր տնով, իր ճաշով, իր ընտանիքով, իր գործերով: —Նա մի ջէնտըլէն է, աւելացրեց պարոնը, նա ազգասէր է, բարեգործէ:

Եւ իսկապէս չափազանց գոհնիկ էր և անքաղաքավարի իմ բացականչութիւնը: Միթէ պարոն բանկիրը նման էր զղուելի

ողարտավիտի: Ոչ, նա շատ հաճելի արտաքին ունէր. զեր, լաւ ածիւած գեղեցիկ երես, խնմաքով սամրած մազեր կիսաճաղատ փայլուն գլխի վրայ, սրած բեխեր, սրածայր կարած միրուբ: Տեսէք որքան անոյշ և մեզէ է նրա ժամկաը. որքան մաքուր են նրա շորերը, որոնցից լուրում է անուաշահոտութիւն:

—Բոլորից յարդուած է նա, աւելացրեց խօսակիցս. մեր հասարակութեան մէջ էլ, մեր քահանաներն էլ, մեր բարեզործական տիկիններն էլ, մեր աղգայինն գործիչներն էլ գլուխն թէ ինչպիսի բարերաջ և աղգասէր մարդ է նա: Ազգայինները պարծենում են օտարների առջե որ այդպիսի երեխի ֆինանսիստ ունեն, իսկ գուք պարագիտ էր անուանում նրան: Մարդը աղբում է ազնիւ, օրինաւոր մի աշխատանքով, իսկ գուք նրան պարագիտ էք անուանում: Այ էպիկս էք անում որ մեր տունը քանդում էք է, ասաց նա դժգոհութեամբ և առանց ձեռք մեկնելու ինձ, հեռացաւ ինձանից թթուած...

Յարդանք և պատիւ մարդ-սարդի ճարպիկ գործունէութեան, որ կարողացել է այնքան բարակ և նուրբ գործել իր ոստայնի թելերը: Իսկական սարդը, կամ գաւառական և գիւղական «վաշխառուն», որքան միամիտ են և յինար սրա համեմատութեամբ: Մի քիչ զգուշութիւն է հարլաւոր ճանձերի կողմից որ թակարդ չընկնեն. իսկ ուր է տեսնուում մարդ-սարդի նուրբ թելերը. ոչ է կարող աղատուել այդ անտեսանելի թակարդից: Մաքուր բոկօկո ասանձնասենեալում դուք կը տեսնէք փայլուն մաքուրթիւն, քաղցր ժամկաներ, իսկ թէլեր... հետքն անգամ չէք գտնի: Այդ նուրբ կատարելազործութեան է հասցըել քաղաքալըթութիւնը մարդ սարդին:

## 2. Ծ ի ծ ե ռ ն ա լ լ ը

Մի խեղճ և որը աղջիկ էր Մարին: Նրա միակ աղգականունին մօրաքոյըն էր, որ կարողացաւ իր քրոջ աղջկան կարուծե սովորցնել: Երբ մեռաւ իր միակ աղգականունին, Մարին մնաց արհեստանոցում և մի քանի ժամանակից յետոյ զառաւ այնտեղ վարպետուհի: Քաքաքի ամենահարուստ տիկինների սիրած գերձակունին էր նրա տիրունին, որ ինչպէս և նրա փառահեղ սալոնը յաճախող նորասէր հարուստ պճառունիները՝ գնահատում էր Մարիի նուրբ ճաշակը:

Չանձրացաւ Մարին այդ տաղտկալի և միաօրինակ կեանքից. միշտ աշխատել ուրիշի համար: Որքան աւելի բախտաւոր

էր այն ծիծեռնակը, որ դիմացի տաճիքի տակ իր բունս էր շինել և ամրող օրը ուրախ-ուրախ ճախրում էր, թըռչում, մժգուկներ որսում իր ձագուկների համար: Իսկ զիշերը հանգստանում իր բունի մէջ իր ձագուկների և ընկերի հետ միասին: Քաղցր-քաղցր ճմլում էր Մարիի սիրտը ամեն անզամ, երբ անուրջների մէջ նա տեսնում էր իրան իր սեփական բունի մէջ, իր ընկերի և ձագուկների հետ միասին:

«Չէ, պէտք է անպատճառ ընդունել գործակատար Գէորգի առաջարկը», մտաքիծ նա և, վերջապէս, իրադործեց այդ ուղղումը:

\*

Մարին արդէն սեփական բուն ունի: Եւ ինչո՞ւ չունենայ, ինչո՞ւ նա էլ չվայելի կեանքի երջանկութիւնը: Բոլորս մի անզամ հնք ծնուռմ. ինչո՞ւ վայել են կեանքի քաղցրութիւնը միայն բախտաւոր շապկի մէջ ծնուածները... Այդ է վաղուայ մարդու միամիտ տրամաբանութիւնը, բայց այլ է այսօրուայ մարդու ստեղծած իրականութիւնը...

Ուրեմն, Մարին սեփական բուն ունի. ունի ընկեր էլ, մի սիրուն ձագուկ էլ: Ճիշտ է, նրա բունը բաւական խղճուկ է և քաղաքի յիտ ընկած մի փողոցում, բայց այնուամենայնիւ Մարին սեփական տուն ունի: Նա և իր ընկերը օրն ի բուն աշխատում են և իրանց ձագուկին մեծացնում: Դժուար է, շատ գժուար այդ աշխատանքը: Ազատ ժամանակ չի մնում՝ վայելելու սեփական բնի քաղցրութիւնը: Ծիծեռնակը արել մայր մանելուն պէս հանգիստ բնած է իր բունի մէջ, ձագուկների կողքին, իսկ Մարին պէտք է կարի քունը, որովհետև պատռէրներ տուողները քաղաքի հարուստ պճառնիները չեն: Միթէ նրանը կը զան այդպիսի մի խղճուկ բնակարան: Այդպիսի մեծ ու գուռը տիկիններին գրաւելու համար պէտք է փարթամ կարգ ու սարք, գեղեցիկ սալոն, իսկ այդ բոլորը զբաժապլուխի բան է. մինչդեռ Մարին և իր ընկեր Գէորգը միայն աշխատելու ընդունակութիւն ունին, ովք է նրանց կապիտալ տուել:

Նրանց ճտիկը միծանում է: Ծնողները ժամանակ չունին առանձին հոգի տանկելու նրա մասին: Եւ ինելօք ճտիկը հասկանում է այդ, ինքն իրան զբաղւում է, խաղում: Նա զիտէ որ մայրիկը չի կարող ժամանակ կորցնել. պէտք է աշխատի, աշխատի, և անվերջ աշխատի:

Մի օր էլ ճտիկը խաղում էր պատշպամքում հարեան եւ բեխայի հետ: Այս վերջինը խաղալիս հրեց ճտիկին, որ վայր-

գլորուեց սանդուխներից և կոտրեց ոտը: Ճտիկի ճչի վրայ հասսաւ մայրը, կանչեցին բժիշկ, սակայն, ինչպէս շքեղ շորերը, այնպէս էլ լաւ բժշկութիւնը միայն հարուսաների համար է...: Վերջը, խեղճ Մարին ամեն օր իր կողքին ստիպուած էր տեսնելու իր ցաւադար մանուկի գունատ ու վշտու դէմքը, լսէլ նրա սիրու կտրատող տնքոցը, ոտի կատարեալ բժշկութեան համար պէտք էր «Ձրերը գնալ, արտասահման տանել»: Մի բան որ դարձեալ հարուսաների վայել տենչանք էր:

\*

Օրերն անցնում էին օրերի ետևից: Մարիի բունի մէջ շուտով պէտք է մի նոր անդամ էլ աւելանար: Յաւագար ճշտիկը արդէն եօթը տարեկան էր, և նա ամեն բան արդէն լաւ հասկանում էր, և կեանքի գառնութիւնների ու զրկանքների մասին ոչ իր հասակին համեմատ լուրջ հասկացողութիւն ունէր: Գիշերը մայրը գնաց հիւանդանոց:

Առաւոտեան հայրը ինքը թէյ պատրաստեց, մի բաժակ ածեց դրաւ ճտիկի առջև, շտապ-շտապ ինքը խմեց և գնաց բանին:

—Գնա, հայրիկ, ոչինչ. ես մենակ կը մնամ մինչեղու տուն գաս. միայն գնալիս գուռը չփակես յետևիցդ. պատուէր տուողները կը գան, կը զանգահարեն և չեմ կարող վեր կենալ տեղիցս և բանալ:

Հայրը համբուրեց ուշիմ և դժբախտ ձագուկին և գնաց խանութ:

Մենակ է, մենակ ցաւագար ճտիկը:

Ահա տուին զանգը:

—Մտէք, դուռը բաց է, ասաց վոքրիկը:

—Մայրիկդ տանը չէ, հոգիս, ասաց ներս մտնող տիկինը:

—Ոչ, տիկին, նա գնացել է հիւանդանոց՝ աղատուելու:

—Իսկ դու, վոքրիկս, մենակ ես բոլորովին:

—Այո, տիկին:

—Իսկ հայրիկդ, միթէ նա էլ է գնացել:

—Այն, տիկին, ինչ արած. գործ ունի:

—Ե՞րբ կը վերագառնայ մայրիկդ:

—Ասաց թէ հինգ օրից յետոյ:

—Զէ, իրեի սխալուել ես, հոգիս. միթէ կարելի է այդ քան շուտ վեր կենալ անկողնուց: Անկարելի է:

—Այն, հինգ օրից յետոյ նա կը գայ: Նա ինձ ասաց որ ձեզ այդպէս էլ յայտնեմ: Հինգ օրից աւել նա չի կարող մնալ. մենք հարուստ չենք. պէտք է մայրիկս աշխատի որ կարողա-

նանք ապրել: Խեղճ մայրիկ շատ, շատ ցաւեր կրեց նա այս գիշեր: Հայրիկս վաղ առաւօտ գնաց և իմացաւ որ մայրիկը մի փոքրիկ բոյրիկէ բերել...

Եւ մասուկի դալկացած դէմքի վրայ ուրախութեան նշոյլ ցոլաց: Նրա մեծ մեծ ու խելացի աչքերի մէջ մի ինչ որ մեղմ, խղճահարող վիշտ անցաւ:

Տիկինը զգացուեց. շոյեց նրա մաղերը, փաղաքշական մի քանի խօսքեր ասաց և, հաղիւ զպելով իր արտասունքը, դուրս պլրծաւ «ծիծեռնակի բունից»:

Որբան բախտաւոր է խոկական ծիծեռնակը այդ մարդ ծիծեռնակից...

## ԱՌԵՇԻ ԳԱԻԱՌ

### Ա. Բ Է Շ Ի Գ Ա Ի Ա Ռ

Գանձակի նահանգի Արէշ գաւառը հին «Ազուանից աշխարհի» մի մասն է և ընկած է Քուռ գետի ձախ ափին: Այդ գաւառի դիմաց—գէպի արևմուտք, Քուռ գետի աջ ափին Զիւանշիրի և Գանձակի գաւառներն են: Արէշի գաւառը հիւսիսից սահմանակից է Նուխուայ գաւառին, իսկ արևելքից կպած է Բագուի նահանգի Փեօկչայ գաւառին: Մեծ մասսամբ տափարակ Արէշի գաւառը բոնում է 2,823 քառակուսի վերստ տարածութիւն և ոռոգուում է Քուռ գետի ձախակողմեան մանր ու մեծ օժանդակ—գետակներով (որոշում): Առանց արուեստական ջրանցքների և առուների, առանց ոռոգման այդ տափարակներում անհնարին է երկրագործական կուլտուրը: Տգէտ, իր բախտին թողնուած աղքաքնակութիւնը ներկայ խաւար և ապիկար բեժիմի ժամանակ անգամ, իր սեփական միջոցներով կարողացել է օգտուել փարթամ բնութեան բարիքներից և հողագործութիւնը և այգեստանութիւնը բաւական արդինաւոր վիճակի հասցնել: Աւելի կուլտուրական ե բարեկարգ մի բեժիմ Արէշը կարող էր

գարձնել տասնազատիկ աւելի թուով բնակիչների համար բարոր կեանքի անսպառ մի աղբիւր: Խոկ մեր ըիւրօկրատիան անընդունակ գտնուեց նոյնիսկ պահպանել այն, ինչ ժողովութիւր գարերով ինքն իր չարքաշ աշխատանքով ստեղծել էր: Մեր ըիւրօկրատիան չկարողացաւ կեանքի մէջ իրագործել նոյնիսկ ամենաչնչին մի պահանջ—ապահովել մարդկանց կեանքն ու գոյքը: 1897 թուականի ժողովրդագրութեամբ այդ գաւառում ապրում էին 67,271 հոգի: Դարերի ընթացքում անլուր բանութիւնների պատճառով բնիկները բռնի մանմեղականացել ու թուրքացել են, հին աղուանների հետքն էլ չի մնացել, իսկ հայերից ոչ ձուլուած մնացել են մօտ 14 հազար հոգի: Արէշի թուրքերի տիպը, դիմագիծը համարեա չի զանազանուած հարեան հայերից:

Արէշի գաւառը բաժանուած է երեք ոստիկանական մասների. 1) Եեակիի, 2) Խալդանի և 3) Սալամառերի: Հայերի գիւղերը գտնուում են Խալդանի և Սալամառերի գաւառամասներում: Հայկական գիւղերը Խալդանի գաւառամասում հետեւալներն են. Մազուրդի, Նեմեթապատ, Էրմէնիբաղար, Հաւարիկ, Քեանդակ, Խանաւալա: Սալամառերի գաւառամասում հայքնակ են, Ամիրուան, Բէղլեարքեանդ, Գիրդազուլ, Զիրիկ, Ղայարաշի, 2 Սոգութլու, Չանախի-Բուլաղ, Թոսիկ, Եագուրլի:

Արէշի գաւառում բոլոր գիւղերի թիւն է 129: Գաւառի միջով անցնում է Անդրկովկասեան երկաթուղին: Խաղաղ կուլտուրական կեանքը մեծ ապագայ է խոստանում այդ հարուստ գաւառի բնակիչների համար: Խոկ այժմ այստեղ աւեր ու սպանութիւնների են մատնուած սակաւաթիւ հայ գիւղերի մի մասը:

Նպաստամատոյց յանձնաժողովի կողմից այդ գիւղերը ուղարկած գիւղատնտես եր. Սարգսեանը հետեւալ տեղեկագիրն ներկայացրեց այդ արկածեալների գրութիւնը վերականգնելու մասին:

Արէշի գաւառում նոյեմբերի աղէտների ժամանակ վնասուել են հետեւալ հայ գիւղերը.

Մանմաթաւա (հայերէն Նեմեթապատ), Էրմանիբաղար, Քեանդակ, հաւարիկ, Մազուրդի: Այդ գիւղերից առաջի երկուը գտնուում են Նուխի տանող խճուզուած կողմում, Եվլախ կայարանից առաջինը 12 վերստի, իսկ երկրորդը 14 վերստի վրայ:

Խոկ վերջի 4 գիւղերը գտնուում են խճուզու ձախ կողմում, Քուռ գետի ձախ ափին, իրարից 1<sup>1/2</sup>—2 վերստի վրայ:

Այս հինգ գիւղերն եւ շրջապատուած են չորս կողմից մի

քանի տասնեակ թուրք գիւղերով: Արէշի թուրքերի մհծամասնութիւնը սուննի է, թէև շիաներ էլ կան:

Վնասուած գիւղացցց եկամուտի գլխաւոր աղբիւրները կազմում են, շերամապահութիւն, բրինձի, բամբակի կուլտուրան և այդեգործութիւնը: Ցորեն և գարի ցանում են չնչին քանակութեամբ, այնպէս, որ նոյնիսկ ուտելու համար գիւղացիք ստիպուած են լինում գնել գրսից ցորեն ու գարի: Կորէկ ցանում է միայն երժանիրապար գիւղը:

Սյս 5 գիւղերում էլ զգացում է հողի սակաւութիւն, որը ևս առաւել սուր է Նեմեթաբաղի և էրժանիրապարի համար, այնպէս որ այս գիւղացիք իրանց ցանքսերի կէսից շատը անում են շրջակայ բէկերի (Հաջի բէկի, Սուլթան բէկ Սուլթանովի, Սաշա բէկ Շեկովնիկովի, Խոմայիլ բէկ Սուլթանովի և Փիլփիլի թուրք հասարակութեան) հողերում, տալով հողատէրերին եկամուտի մի յայտնի մասը:

Այսպէս, օրինակ չալթուկը (բրինձը) ցանում են հետեւեալ պայմաններով. սերմը տալիս է հողատէրը, հնձելլ՝ կիսու, իսկ մնացած ըոլոր աշխատանքները՝ հող կապալով վերցնողից, եկամուտը՝ կիսու: Բացի այդ, ամեն մի գլուխ \*) տալիս է հողատէրին 1 ր. 40 կոպ. ջրի փող:

Բամբակը ցանելիս՝ սերմը հողատէրից կիսու: Ցորենը և գարին ամեն ինչ գիւղացուց <sup>1/5-</sup>ականով:

Եթե արաք հաւաքւում է, բէկը կամ ինքն է գալիս կամ մարդ է ուղարկում և ստանում է 5 խուրձից մէկը, ամենախոշորը և ամենալարը: Սյս խուրձերը գիւղացին պարտաւոր է իր սայլերով տանել հողատէրի տունը:

Չնայած այս ծանր պայմաններին, գիւղացիք ստիպուած են օգտուել այդ հողերով, որովհետև առանց դրանց նրանք անկարող են թէ իրանք և թէ իրանց տաւարը կառաւարուել:

Մասնաւրապէս Նեմեթաբաղը և նամանաւանդ էրժանիրապարը ունեն այնքան չնչին վարելու հող, որ առանց այդ հողերին նրանք անկարող են ապրել: Այսպէս օրինակ, առաջի գիւղը ունի 400 դես., իսկ երկրորդը՝ 200 դես. վարելահող: Սրանցից ամեն տարի վարւում է միայն <sub>1/3</sub> մասը: Ուրեմն երկու գիւղի ցանքսերը միասին կազմում են ընդամենը 200 դես.: Այսինքն ամեն մի տան ընկնում է միջին թուով մօտ  $1\frac{1}{2}$  դես.:

Ամենալաւ հողերը գիւղացիք վարւում են բամբակ և չալթուկ, իբրև աւելի եկամուտ տուող կուլտուրաներ, իսկ ամեն-

\*) Գլուխ է հաշւում թէ այս դէպքում թէ այս յօդուածում ամեն տեղ բոլոր տղամարդ աշխատող ձեռքը, սկսած 14—15 տարեկանից: Ապրիլ, 1906.

նավաստ հողերը արդէն ծառայում են ցորենի և գարու համար: Ահա ինչով պէտք է բացատրել այն զարժանալի չնչին բերքը, որը մենք տեսնում ենք այդ գիւղերում. ինքը 1—3, ահա այդ տեղի սովորական ցորենի և գարու բերքերը: Վարելահողերը այս բոլոր հայ գիւղերում ամենայն տարի բաժանւում են վերև յիշած գլուխների վրայ:

Իսկ խաղողի, մշգեղէնի և թթենու այգիները, ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ բաժանման չեն ենթարկելում և կազմում են ամեն մէկի սեփականութիւնը:

Ինչպէս վերև յիշեցինք այս գիւղերի բնակիչների եկամուտի գլխաւոր աղբիւրները կազմում են. բոժոժը, բամբակը, չալթուկը և խաղողը:

Բոժոժից գիւղացիք տարեկան ստանում էին մօտ 70—80 հազար բուբլի, բամբակից մօտ 50—60 հազ. բուբլի և չալթուկից ու խաղողից էլ մօտ 20—30 հազ. բուբլի: Ընդհանուր առմամբ, ուրիշներ, այս գիւղերը մտնում էր մօտ 140—170 հազ. բուբլի վորդ: Այսպէս էր մինչև անցեալ տարի նոյեմբերի վերջերքը: Տեսնենք այժմ ի՞նչ դրութեան մէջ են այս գիւղերը և ի՞նչպէս կարելի է նրանց սոսի կանգնեցնել:

Այսուղ մենք չենք առնում այն հարցի վրայ, թէ արդեօք ցանկալի է այս գիւղերը նորից վերագարձնել իրանց հին տեղը, թէ աւելի լաւ է մի նոր տեղ փոխադրել: Կանգ չենք առնում նրա հատար, որ առաջինը սա ընդհանուր հարցի ընաւորութիւն ունի և շատ լուրջ ու բազմակողմանի ուսումնասիրութիւն կատարելուց և բոլոր հանգամանքներին ծանօթանալուց յետոյ միայն կարելի է գալ այս կամ այն եղբակացութեան: Այսպէս որ մենք մի կողմ թողնելով այս հարցերը կ'անցնենք անմիջապէս գիւղերի այժմուայ նկարագրութեան և նրանց վերականգնեցման համար անհրաժեշտ միջոցների հարցերին:

Գիւղերը այժմ բոլորը աւերուած են: Տները բանդուած ու բոլոր փայտեղէն մասերը յափշտակուած են: Թալանից յետոյ, որպէսողի ծածկեն այդ բանը, թուրքերը հաւաքել են խոտ և եղէգներ և դարսելով տների մէջ կրակ տուել:

Բայց այդ խարեբայութիւնը այնքան ակներև է, որ նոյնիսկ ամենատգէտ մարդն էլ կարող է հասկանալ նրա շինծութիւնը: Այժմ էլ գեռ շատ տներում կարելի է տեսնել դեռ չերուած ու միայն սեացած խոտի և եղեգնիների կոյտեր:

Մնում են միայն սեացած և կիսափլուած չոր պատերը:

Սարսափելի տպաւորութիւր են թողնում այդ ամայացած և աւերակ դարձած, իսկ մի ժամանակ շնչ գիւղերը:

Պաղատու և վառելու ու շինութեան ծառերը՝ բոլորը կոտորած ու տարուած են:

Համեմատաբար ձեռք չի տուած խաղողի և թթենիների այգիները:

Արտերը մասամբ միայն կերցրուած են և մի աննշան մասն էլ, ջրելը ուշացնելու պատճառով, մի քիչ փչացած են:

Ընդհանրապէս ցանքսերը բաւարար են:

Տան կահ կարասիներից և անասուններից գիւղացիք կարողացել են ազատել մի աննշան մասը: Այս ազատածն էլ, գիւղացիք դրսից օգնութիւն չստանալու պատճառով, մասամբ կիսագնով ծախել ու հացի են տուել, կերդանիների մի ուրիշ մասն էլ խոտի պակասութեան պատճառով նոյնպէս փչացել է: Այնպէս որ այժմ մնացել է շատ չնչին բան:

Միայն Մազուրպին ոչինչ չի կարողացել աղատել, որովհետև նա առաջինն է մատնուել յարձակման և թալանի:

### Այսպէս հինգ գիւղերը

Ունեցել են		մեռման
Քոմիշ (բեալ)	1020	240
Կթան տաւար (կով և գոմէշ)	3045	460
Չի	219	9
Այծ	500	50
Չութ	560	20
Կամի	650	0
Կարաս և		
տակառ	4600	0
Սայլեր	505	230

Այս գեռ խոշոր կորուսմն է, չհաշուելով մանր-մունր տընային և գիւղատնտեսական իրեր:

Այս գիւղերի վնասները գիւղացիք իրանք հաշւում են մետ 1½ միլիօն: Գիւղերն ունեցել են հետևեալ կազմը.

Դիւղ. անուն	կամեր. տ.	մատաղ	հոգի	գլուխ
Մահմաթուա *)	64	90	600	180
Կըմանի բաղար **)	34	39	274	53

\*) 210 տուն թուրք սուննի.

\*\*) 14 տուն թուրք շիա և սուննի

Քիւղերը	109	165	1000	300
Հաւարիկ	100	180	1100	300
Մազուրդի	44	53	400	130
	351	527	3374	963

Գիւղերը վերականգնելու համար առնուազն հարկաւոր է նախ և առաջ տալ գիւղացոց սերմացու՝ գարնանացանը անելու համար, գիւղատնտեսական գործիքներ, գոմէշներ և մինչև կալը գույքը գալը՝ ուտելու հաց և յետոյ հնձելու ու կալը թակելու համար գործիքներ, կարասներ և, որ ամենագլխաւորն է, նոր շէնքեր կառուցանելու համար նպաստ հետեւեալ հաշուով:

Մենք հաշիւ անելիս աշքի առաջ ենք ունեցել, որ ամեն մի գլուխը ցանում է  $\frac{1}{2}$  փութից 30 գր. բամբակ, 1—2 փութ շալթուկ, մի խոն (14 գր.) կորէկ:

Ուտելու համար հաց է հարկաւոր, ապրիլի 20-ից մինչև յուլիսի 5-ը, երբ գուրս է գալիս կալը. ուրեմն  $2\frac{1}{2}$  ամսուաց ընթացքում: Մեծ ու փոքր հաշուած հոգու ամիսը առնուազն հարկաւոր է մի փութ ցորեն:

Երկու տանը մի չութ, մի զոյգ գոմէշ, տանը մի բահ, ամեն մի զլիսին մի օրաղ, երկու տանը մի զոյգ կամնը, տանը 3 կարաս 5—10 փութանոր ամեն մէկը:

Բացի այս ամառը մինչև շինութիւնների շինելը հարկաւոր է գիւղացիներին ապրելու համար գոնէ ամեն մի 15—20 հոգու մի վրան:

Այս բոլորի գները վիրցրուած է աելային: Բամբակի սերմի փութը 25 կոպ., չալթուկը 1 ր. 20 կ., կորէկը փութը 40 կոպ., ցորենը 1 ր. 20 կոպ. չութը 4 ր. հատը, բահը մէկը մի բուր., օրաղը 50 կոպ., մի ջուխտ կամնը 7 ր., կարասի մէկը 4 ր., միջակ գոմէշը 50 ր. հատը: Բացի այս Մազուրդի գիւղի բնակիչների համար, որոնք զրկուել են ամեն բանից, հարկաւոր է բացի բոլոր վերև յիշած իրերը նաև տանը գոնէ մի կրվ, կամ կթան գոմէշ, մի 2 վերմակ և գոշակ, մի դազան, երկու տանը մի սայլ:

Եւ վերջապէս շինութիւններ անելու համար առնուազն հարկաւոր է ամեն մի տանը 100 ր.:

Եւ նոյնիսկ այս բոլոր ամենահրաժեշտ և չափազանց չափաւոր պահանջները իրագործելու համար անհրաժեշտ է:

\*) Այստեղ հաշուած չեն 19 տուն աղնուականները մօտ 90 հոգի:

\*\*) 20 տուն թուրք սուննի:

600 փ. բամբակի սերմ	150 լ.
1730 փ. չալթուկի սերմ	2076 լ.
Ուտելու ցորէն 7500 փ.	9000 լ.
Չութ 250 հատ (20 կայ)	1000 լ.
Գոմէշ 300 հատ (280 իրանք ունեն)	15000 լ.
Բահեր 525 հատ	525 լ.
50 չափը	500 լ.
44 փ. կորէկ (էրմանի բաղարի համար)	5 լ. 60 կ.
Մաղուրդեցոց համար 25 սալլ	1000 լ.
	29256 լ. 50 կ.

Այսքանը արհբաժեշտ է հէնց այժմ, մինչև մի 2 շաբաթ  
հասցնել, որ գիւղացիք կարողացան իրանց գարնային ցանք-  
սերը անել:

Իսկ յետոյ հարկաւոր կը լինի նորից առնել հետևեալ  
բաները.

Մօտ 500 օրադ	250 լ.
260 ջ. կամնը	1830 լ.
1600 կարսաս	6400 լ.
Շինութեան համար	52—53 հազ.
Մաղուրդեցոց համար 50 կով	2000 լ.
50 դազան	100 լ.
Ճոթեղէն և բրդեղէն անկողնու համար	200 լ.
Մի 220 բուլուս մանր մունը	
բաներ (ցակատ, կացին և այլն)	220 լ.
	64000 լ.

Ինչպէս ընթերցողը տեսնում է այս թուերը ոչ միայն չեն  
չափազանցրած, այլ նոյնիսկ ըստ կարելոյն կրճատած և ամեն-  
նապակասին է հասցրուած:

Ինքնըստինքեան հասկանալի է որ մասնաւոր բարեգոր-  
ծութեամբ անկարելի է մատակարարել այսպիսի ահազին գու-  
մար, նամանաւանդ, որ աղէտը մի տեղ չէ, այլ այսպիսի բան-  
դուած գիւղեր հաշւում են տասնեակներով։ Հարկաւոր է պե-  
տական նպաստ ամենալայն չափերով և նոլաստաւոր պայման-  
ներով։

## ՄՕՏԻԿ ԱՆՑԵԱԼԻՑ

### I

Դրական փիլիսոփայութեան կամ պողիտիվիզմի հայր Օգիւստ Կոնստ մարդկային մտաւոր զարգացման մէջ տեսնում էր իրար յաջորդող երեք գրութիւններ, աստուածաբանական, բնագանցական և գիտական: Մարդկութիւնը իր մտաւոր զարգացման երեխայական դրութեան մէջ, իր սեփական գործունէութեան նմանութեամբ, անձնաւորացնում էր և շրջապատող բնութեան երևոյթները, աստուածներն և ոգիներն էին բոլոր երևոյթների տնօրինողները: Մտաւոր գրութեան՝ երկրորդ, աւելի զարգացած աստիճանը, բնագանցական, մետաֆիզիկականն է, երբ աստուածաբանական հէքիաթները այլևս չեն գոհացնում մարդկային հարցասիրութիւնը, և աստուածների և ոգիների տեղ բռնում են վերացական նախապատճառներ ու մտացածին սկզբունքները: Դրան յաջորդում է աւելի հասուն, աւելի խոհուն մըտաւոր գրութիւնը, երբ փորձը, ճիշտ ուսումնասիրութիւնը և իրերի բնական ընթացքի և բէալ պայմանների նկատառութիւնը միացած առողջ խելքի հետ՝ ստիպում են երևոյթները քննել օբյեկտիւ, գիտական մտածողութեամբ:

Եթէ մտաւոր զարգացման այդ երեք գրութիւններով չափնչք հայերիս վերաբերմունքը դէպի մեզ շրջապատող երևոյթները՝ մենք պէտք է համոզունք որ մինչև 60. ական թուականները մենք գտնուում էինք աստուածաբանական (թէօլոգիական) շրջանում, իսկ այսուհետեւ սկսուեց բնագանցական (մետաֆիզիկական) շրջանը, որ տեսում է մինչ այսօր, իսկ երրորդ՝ դրական մտածողութեան շրջանը գեռ նորանոր է սկսում մեւ պանում:

Երբ վաթսունական թուականներին սկսեց զարգանալ հայերիս մէջ բնագանցական մտածողութիւնը՝ նրա նախորդ շրջանի քուրմերը ահազին վայնասուն ու թշնամանք բարձրացրին և ամեն կերպ աշխատեցին ուսանակ իրանց դիրքերը նորերի յարձակումների դէմ: Սակայն այսուաժենայնիւ ասպարէզը մնաց նորերին, որոնց մտածողութիւնը աւելի էր համապատասխա-

նում հասարակութան մտքի հասունութեան։ Այդ մետա-  
ֆիզիկները շատ նոր գաղափարներ մտցրին մեր կեանքում, շատ  
փոխ վերցրած վերացական սկզբունքներ քարոզեցին, բնաւնշա-  
նակութիւն չտալով, ինչպէս և յատուկ է այդ տիպի մտածողներն,  
ոչ մեր կեանքի և ոչ մեր իրականութեան ուսումնասիրութեան։  
Այդպիսի ուսումնասիրութիւնը աւելորդ բան էր համարլում։  
Հչ որ պատրաստի մտքեր, սերտած սկզբունքներ կրկնելը ա-  
ւելի հեշտ է, շարլոն ձեռով դործելը ամեն մի տափակութեան  
մատչելի է։ Եւ ահա գալիս են նոր «եւրոպականացած» երիտա-  
սարդներ և իրանց սերտած դասերը ապլոմբով քարոզում։ Նը-  
րանց կրկնում էին տեղական սեմինարիստները, իրանց խղճուկ  
մտաւոր պաշարը բոլորովին բաւական համարելով ամենարարդ  
հասարակական-քաղաքական հարցերը միանգամից լուծելու հա-  
մար։ Կեանքից, ժողովրդից և գիտութիւնից կտրուած այդ գա-  
ղափարախօսները ստեղծեցին մակերեսոյթասէր և մեծամիտ  
գլուխների լեզիօններ։ Հին աստուածարանական տիրացուների  
տիպը գրաւեցին տւելի յաւակնոտ և յանդուզն վերացական տի-  
պի ախրացուներ, որոնք իրանք թերուս լինելով հանդերձ ժո-  
ղովուրովը կրթելու և զաստիարակելու ձեռնարկեցին։ Ա-  
զատամտութիւնը դրանք հոմանիշ համարեցին մտքի ենի-  
չերութեան, քննագաատութիւնը ծամածութեան, առարկու-  
թեան դէմ առարկութիւն անելու մէջ տկարամիտ՝ դրանք  
դիմեցին դիմացիների մտքի խեղաթիւրման, հայնոյանքների,  
անուանարկման։ Եւ սարկամտութիւնից ազատուած այդ վայրե-  
նիները ընկան մի այլ ձեկ սարկամտութեան մէջ, հօտային-ամ-  
բոխային հոսանքներով տարուեցան այդ սնափառները։

Այն սակաւաթիւ անհատները, որոնք դրական մտածո-  
ղութեան ներկայացուցիչներ կարող էին համարուել մեր զրժ-  
քախտ իրականութեան մէջ, անզօր էին կոռուելու այդ հոսանքնե-  
րի դէմ, որովհետև հասարակութեան մէջ չկար նրանց գորա-  
վիկ մի շերտ գիւղացիութիւնը՝ տգէտ, բանուրականութիւնը  
դեռ սաղմային զրութեան մէջ, անկերպարան և անդիտակից,  
բուրժուազիան տգէտ և ամրողջապէս ստոր նիւթական հաշիւ-  
ներին կուլ գնացած, ինտելիգենցիան կարիերիստներից կամ ան-  
տարբեր էգոխատներից կազմուած։

Դրական-հասարակական ըեմի վրայ մնացել էին կիսակիրթ  
սեմինարիստների բազմութիւն և վերացական սկզբունքներով  
տողորուած մի քանի գլուխներ, որոնց մէջ մեր իրական կեանքը  
պատկերանում էր լոկ օտար գիտողների պրիզմայով, ուրիշ եր-  
կրներից փոխ վերցրած շաբլոն հասկացողութիւններով։ Գի-  
տական մտածողութեամբ, անկախորէն, ինքնուրոյնարար ու-

սումնասիրել շրջապատը իր առանձնայատուկ պայմաններով և դրա համեմատ որոշումներ, ծրագրներ, կազմել՝ անընդունակ էր հայ մտաւորականութիւնը կամ աւելի ճիշդը՝ անպատճաստ էր:

Կեանքից կտրուած և վերացական գաղափարներով տարուած այդ մտաւորականութիւնը չէր կարող չազդուել եւբուպական նացիօնալիզմից, որ վաթուունական թուականներին իր արտայտութեան գագաթնակէտին էր հասել: Եւ ահա մեզանում հին սերունդի ազգային-եկեղեցական պահպանողականութեան, զգոյշ հայրենասիրութեան տեղը բռնում է նոր ազգային-ժողովրդական նացիօնալիզմը իր ազատասէր, ագրբեսիւ տակտիկայով: Սկսում է ժողովրդի վերին շերտերումնոր խմբում: Գրականութեան մէջ Գամառ-Քաթիպան և Բաֆֆին այդ նոր ուղղութեան ամենատիպիկ արտայայտիչներն էին:

Բնազանցական-ըոմանտիկ հողի վրայ հիմնուած տղային ձգումները քարոզում էին և մեր գպրոցներում: Այդ քարոզների սերմերը ընկնում էին պարարտ հողի վրայ: Այդպիսով Գամառ-Քաթիպան իր «ազգային-ազատ երգերով», Բաֆֆին իր վէպերով ազգայնական զգացմունքը մեր մէջ հասցըրին ամենածայրայեղ բորբոքման: Բոլորը երգում էին հայրենասէր բանաստեղծի ռազմական երգերը, բոլորը ոգեսրում Բաֆֆիի վէպերի դաւադիր-ապստամբների առասպելական քաջագործութիւններով: Մաքուր, անփորձ և գաղափարական երիտասարդութիւնը բնականաբար ձգտեց կեանքի մէջ իրազործել իրան ովեսրող այդ երազները: Դա մասսայական դոնկիխոտութեան մի շրջան էր, դրուկիխոտութիւնը վերցրած իր իշպէտական ըմբռնողութեամբ: Կատարեալ արհամարհանը դէպի իրական կեանքը և առողջ գատաղութիւնը մի կողմից և խիզախ անձնազոհութիւն միւս կողմից:

Բուլղարիայի ապստամբութիւնը միայն իւղ աւելացրեց բորբոքուած բոցի մէջ և ազգասիրական տենչով ոգեսրուած եւրիտասարդութեան թւում էր թէ բաւական է միայն բուսն ցանկութիւն և անձնազոհութիւն՝ «Հայաստանը ազատելու համար»: Իսկ թէ ի՞նչ է ներկայացնում այդ Հայաստանը, ի՞նչ առանձնայատուկ պայմաներ և հանգամանքներ կան, որոնք հիմնովին կարող են փոխել գործելու նղանակը. դա գարդակ և «սուրբ գործը» ձգձգող մանրամասնութիւն էր համարում. աւելի կարևոր էր համարում որ Պետերբուրգի ուսանողութիւնը ազգային զգացմունքը բորբոքող բրոցիւներ հրատարակի և տարածէ հայ ժողովրդի մէջ, նրան այն մտքով կրթելով թէ պէտք է միայն հետեւ բուլղար ապստամբների օրինակներին որ ամեն բան իրագործուի: Աւելի կարևոր էր համարում որ

Կուկունեանը Պետերբուրգում մի մեծ և փառաւոր դրօշակ կարել տայ պատշաճ խօսքերով ասեղնագործուած, քան գրպանում իր հնալու երկրի մի կառը բարտէզ ունենայ և իր գլխում սակաւիկ վիճակագրութիւն և այլ տեղեկութիւններ: Եւ պէտք էր տեսնել թէ ի՞նչ ոգևորութեամբ էր ընդունում Շիրակի հայ ժողովուրդը կուկունեանին իր խմբով: Պէտք էր տեսնել թէ ի՞նչ սուրբ միամտութեամբ ժողովուրդը՝ այդ մեծ երեխան՝ բերում էր իր ունեցածը, իր զաւակներին՝ «Հայրենիքի ազատութեան» խարոյկի համար: Մի տարերային հոսանք էր ստեղծուել և նրա դէմ արդէն ուշ էր լրջացնող միջոցներ ձեռք աենել: Մինչ այդ երկրում գործող «արմենականներն» ու «հնչակեանները» նոյն գոնկիխոտտական տակտիկայով էին կռւում և մեծ երիխայ՝ հաւատացող ժողովուրդին այնպէս էին հասկացրել որ «փթած, ուժասպառ Թիւրքիայի» դէմ բաւական են մի քանի խիզախ յեղափոխական հայերի ապստամբական փորձեր, որպէսի տապալուի բնութիւնը, միջամտի Եւրոպան և այլն ևայլն: Ինչպէս տեսնում էր այդ յեղափոխականները անկեղծ մոլորուած շարունակում էին կեանքի մէջ այն, ինչ տարիներ շարունակ կատարել էր մեր գրականութիւնը իր բնականցական-երեակայական շրջանում, երրէք գործ չունենալով ճիշտ ուսումնասիրութիւնների, իրական պայմանների ճշշդութեան, գրական մտածողութեան հետ: Դրանք ընաւ նշանակութիւն չէին տալիս նոյն երկրում ապրող ուրիշ ցեղերի ընսելիք դիրքին, առ ոչինչ էին համարում Օսմանեան բանակն էլ, որին հազիւ կարողացաւ յաղթահարել ոռւսաց կէս միլիօն զօրքը, առ ոչինչ էր համարում թուրք ժողովուրդն էլ, բուրդն էլ: Բոլորը, բոլորը ոչինչ մի խումբ իդէալիստ դոնկիխոտների առջի: Զէ որ նպատակը սուրբ էր. միթէ աշխարհում վերջ իւերջոյ բարին չէ յաղթում չարին... Այդպիսի միամիտ հաւատով էր ոգևորուած երիտասարդութիւնը:

Պէտք է նկատել որ այդ գրական աղեցութիւնից մի կողմ կանգնած բուրժուազիան, գիւղացիութիւնը և «օտարացած» ինտելիգենցիան բաւական անտարբեր, նոյնիսկ թերահաւատութեամբ էին վերաբերում այդ շարժում չարին... Այդպիսի Սահօ-Պանսօններ...

Ճիշտ է, ութսունական թուականի վերջերում (1887թ.) Մոսկուայի ուսանողական մի փոքրիկ շրջանում հիմք դրուեց մի նոր հոսանքի, որի նպատակն էր «նախօրօք օրյեկտիւ կերպով ուսումնասիրել Թիւրքաց Հայաստանը իր բոլոր առանձնայատուկ պայմաններով և ապա միայն որոշել գործելու եղանակը». Ճիշտ է, նոյնիսկ փորձեր եղան այդ ուղղութեամբ, և այդ

փոքրիկ շրջանի մի ճիւղը բացուեց նաև Թիֆլիսում 1890 թուականին. սակայն ընդհանուր ազգային ոգևորութեան հոսանքը այնքան բուռն էր ու տարերային, որ այդ փոքրիկ շրջանի մէջ ներս խուժած երիտասարդութեան մի սառւար բազմութիւն թոյլ ընդդիմադրութիւն գտնելով աւերեց այդ ձեռնարկութիւնը իր սազմային գրութեան մէջ և ժամանակի տրամադրութեան համապատասխան կերպարանք տուաւ գործին. ստեղծուեց «Հ. Յ. Դաշնակցութիւնը» իր «կենտրոնով»։ Կարճ ժամանակամիջոցում նրա հսկայական ցանցը ծածկեց հայութեան բոլոր վայրերը։ Նախապատրաստական շրջանը այնքան առաջ էր գնացել, «Երևկրի» մէջ այնքան այդ կազմակերպութիւնը կապեր ունէր որ հնարաւոր եղաւ 1892 թուականի ամառուայ ընթացքում վերջնականապէս ձևակերպել այդ կուսակցութիւնը, որ հանդիսացաւ իրեն արտայայտիչ տիրող ազգային—րումանակի տրամադրութեան։ Յաջորդ տարիները իր ամբողջ տակտիկայով նա կարծես ձբկում էր հերոսական մի շարք ջանքերով կեանքի մէջ իրավործել Փամառ-Քաթիսայի և Ռաֆֆիի երևակայած կոիւր թրբական լուծի գէմ։ Այդ յեղափոխական րոմանակիզմը գուցէ ունեցաւ և իր լաւ կողմերը, որոշ չափով մորալ օգուտներ էլ տուաւ, սակայն յապճեպով սկսուած անհաւասար կուուժ՝ հայ ժողովրդի իրական ոյժը Թիւրքաց Հայաստանում միանգամայն չէզոքացը բռւեց և զէրօի հասցրուեց հայի թուական և տնտեսական գերիշխող վիճակը հէնց այն վիլայէթներում, որոնցից պէտք է կազմուած լինէր «հայկական ինքնավարութիւնը»։

Ֆիասկօն այժմ ակներև է. բննենք պատճառները։

ԱԽԼԱԽ

(Կը շարունակուի)

## ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՍԻԶՄԸ \*)

### I

Մարքսի կեանքը, աղջուտ-քաղաքական, հրապարակախօսական գործունէութիւնը և զրական վաստակները:

Segui il tuo corso e lascia dir le genti!

Հետեիր ճանապարհիոյ, և թող  
մարդիկ խօսեն, ինչ ուզում  
են:

Դանիէլ:

### 10.

Ֆերդինանդ Լասալի գործունէութիւնը:—Մարքսը և Լասալը:—Համեմատական զծեր Մարքսի և Լասալի մասին, իբրև գիտնական դէմքեր:—Նմանութիւններ և տարբերութիւններ:—Նրանց զրական սիմպատիաները:—Մարքսի մատերիալիզմն ու Լասալի իդէալիզմը:

Թէկ Գերմանիայի բանուռուռութիւնն ու դեմոկրատիան իսպառ զրկուեց իր կոմունիստական և յեղափոխական լաւագոյն ոյժերի—Մարքս-էնգելսի—ներկայութիւնից և կենդանի աշակեցութիւնից, այնուամենայնիւ Գերմանիայում անտարբերութեան չմատնուեց կօմունիստական պրոլաբանդն ու շարժումը: Մի վառվոոնն, մինչև ոսկորների ծուծը յեղափոխական երիտասարդ, մի հանճարեղ հոետոր ու ազիտատոր շարունակեց մեծ կօմունիստների գործը: Դա Ֆերդինանդ Լասալն էր՝ արևմտեան և միջին Գերմանիայի բանուռական շարժման այնքան հոչակաւոր պարագլուխը 50-60-ական թուականներին: Լասալի տունը (Դիւսելդորֆում) եղել է մշտական ապաստարանը բոլոր հաւածուողների և քաղաքական յանշաւորների համար: Լասալի նամակները, ուղղած Մարքսին, պարզ

\*) Տես «Մուրճ» № 1, 2 և 3.

ցոյց են տալիս, թէ ինչպիսի անդուլ ջանքերով ու անվճառ յոյսերով է նա մասնակցել բանուորական շարժման ու կօմունիստական պրոպագանդին այն ժամանակ, երբ թևաւորուած թէակցիան անպարտելի արշաւանքներով ճնշում, հալածում ու կործանում էր ամեն բան, ինչ յեղափոխական ու կօմունիստական էր: Հակառակ ոստիկանական հետապնդումներին, կառաջը կենդանի յարաբերութեան մէջ էր Հունոսի բանուորների հետ, կարգում էր նրանց ժողովներում դասախոսութիւններ, օժանդակում նրանց գրամով և այլն:

«Ա՛խ, դուք չեք պանդուխտը»,—գրում էր Լասալը Մարքսին 1857 թ. 26-ին ապրիլի, —«այլ ես: Որովհետև կոռուող հին ընկերուների և համախոհների խումբ էք ներկայացնում գուք ժողովուած միենոյն քաղաքում: Իսկ ես տարիներ շարունակ ապրում եմ՝ բոլորովին միայնակ, առանձնացած հին զինակիր եղբայրներից: Իոկապէս շատ ծանր է այս գրութիւնը: Բացի բանուոր գասակարգից, որ իր սիրտն ու միտքը պահպանել է այնքան առողջ ու թարմ գրութեան մէջ և շարունակ դարգացնում է իրան, մնացած խաւերի՝ այսպէս անուանուած կըթուած մարդկանց մէջ, տիրում է նոյն ատելութիւնը, երկիւղն ու կզզիացման ոգին, ինչպէս առաջ...»: 39)

Այստեղ առանձնապէս ծանրանալ Լասալի գործունէութեան վրայ, չի ներում, իհարկէ, մեր նիւթի ծաւալը: Այնքան, որքան մէնք մարդկամի մասին խօսելու ժամանակ կանգ նախամարքսիստական սօցիալիզմի և Մարքս-Էնդելսի ժամանակակից բանուորական շարժման վրայ, այնքան էլ խօսք կլինի Լասալի սօցիալ-քաղաքական գործնէութեան մասին: Սակայն հէնց այստեղ մէնք կարենոր ենք համարում յիշատակել մի քանի համեմատական գծելի ժամանակակից այն խոշոր գէմքերի—Մարքսի և Լասալի—մասին, որոնց գործնէութեան կօնկրետ արտայատութիւնները (մարքսիստներն ու լասալիանները)՝ միենոյն քաղաքական միջնավայրում, զուգնթացարար յառաջադիմել և գրկախառնուել, ձուլուել են իրար հետ ապագայում:

Աւելի քիչ են այն կէտերն ու գծերը, որոնք բաժանում են այդ մարդկանց միմիանցից, քան այն, որոնք միացնում են նրանց: Էնդհանուր առմամբ, երկուո՞ն էլ արդիւնք են միենոյն կըթական ըլջանի—Հեղեղեան դպրոցի, թէկ, մէկի թէ միւսի վերաբերունքը գէպի գերմանական կլասիք վիլխտոփայու-

38) Fr. Mehring, «Geschichte der deutschen Sozialdemokratie» հատ. II էլ. 239.

թիւնը՝ ընդհանրապէս, և Հեղելեանիզմը՝ մասնաւորապէս, շատ են տարբերում միմիանցից:

Երկուսն էլ յեղափոխական շրջանի յեղափոխական տիպեր են: Մինչդեռ Լասալը մշակելով գիտական մի հսկայական նիւթ և ուսումնասիրելով տիրապետող կարգերի իրաւական հիմքերը, աշխատում էր գտնել ամենաուժեղ միջոցը բիւրգերական հասարակութիւնը յեղափոխելու, Մարքսը, ընդհակառակը, մասնավիտական խորագննին հետազօտութեամբ վերլուծել և լուսաբանել է այն յեղափոխական մղիչ ոյժերի հիմքերը, որոնք յեղաշրջում են բիւրգերական հասարակութիւնը:

Եթէ Մարքսի և Լասալի տարբերութիւնները պատկերացնենք մեզ որոշ առածգականութեամբ ըստ այն տարբերութիւնների, որ ունեն զրականական խոշոր գէմքերը՝ նրանց սիրելի գրողները, պատմական անցիալում, կը գտնենք մօաւառապէս հետեւեալը: Մարքսի սիրած հեղինակները եղել են միշտ՝ Հօմերը, Դանտէն, Շէկոպիրը, Սերվանտէուը և նորերից Բալզակը: Իսկ Լասալինը եղել են՝ Հուտեն, Լիսինզը, Ֆիխտէն և նորերից Պլատենը: Սրանք հիմնապէս տարբեր գրական տիպեր են: Այնտեղ, առաջին շարքում, փայլում են այնպիսի մեծութիւններ, որոնց զրական գործերը վերարտադրում են իրանց մէջ ամբողջ գարեշրջանի պատկերը այն աստիճան օրինելու կերպով, որ առաւել կամ պակաս հաֆերով, նոյն իսկ ամբողջապէս չքանում՝ են սուրբիեկտիւ մնացորդները, որ, աւելի որոշ արտայայտելով՝ ստեղծագործող սուրբիեկտները անյայտանում են մթութեան մէջ՝ իրանց ստեղծագործած բարձր կոթողների յետև: Երկրորդ շարքի մէջ, ընդհակառակը, համդիպում ենք այնպիսի գլուխների, որոնց երկերի մէջ ոչ թէ գտնում ենք մենք իրականութեան օրինելու պատկերը, այլ իրականութեան անդրադառնումը, ձուլուած ու բովուած՝ գրող սուրբիեկտների մտաւոր-հոգեկան խառնարանի, ձուլարանի մէջ:

Թուած երկու կարգի հեղինակները, լինելով Մարքսի և Լասալի այսպէս անուանուած զրականական սիմպատիաները, չեն կարող, ի հարկէ, ծառայել իրեն այնպիսի օրինակներ, որոնք սպառէին բոլոր տարբերութիւնները ճշգրտութեամբ՝ Մարքսի և Լասալի՝ մէջ: Դա համեմատութիւն էր միայն մի որոշ տեսակետից:

Իբրև գիտնական մեծութիւններ՝ բազմակողմանիութեամբ և աշխարհահայեացքով, նրանք գարձեալ տարբեր տիպեր էին:

Մարքսի մտաւոր հօրիզոնը, ընդգրկում էր անհամեմատ մեծ՝ սահման, տիրում շատ աւելի բազմաթիւ մասնածիւղերի, քան Լասալինը: Մինչդեռ Մարքսի, ինչ-

պէս և էնգելնի համար մտաւոր լարուած զբաղմունքները, գիտնական հետազոտութիւնները առաջնակարգ նըշշանակութիւն են ունեցել, կասալի համար, ընդհակառակը, այդ բոլորը համեմատաբար երկրորդական տեղ են զբաւել: Գործնական աշխատանքը, բանուորական շարժումը ամբողջապէս կլանել էին կասալի անհատական ոյժերը: «Որքան սիրով կուզենայի—գրում է կասալլ էնգելսին—գրի չանցնել այն, ինչ որ զիտեմ, եթէ միայն ինձ յաջողուի գրա փոխարէն անեւլու այն, ինչ մենք կարող ենք»:<sup>40)</sup> էնգելսը Մարքսի համար ասում է հետեւալը: «Ո՞րքան ուրախ կը լինէր նա մի նոր գիտով ու բացումով որևէ տեսական գիտութեան մէջ, որի գործնական կիրառումը թերևս նախատեսնել գեռ անկարելի լինէր. սակայն բոլորովին այլ ուրախութիւն էր զգում նա (Մարքսը), եթէ մի նոր գիւտ կամ բացում իսկոյն գործազրուեր ինդուստրիայի (արդիւնագործութեան) մէջ կամ առհասարակ պատմական զարգացման համար»: <sup>41)</sup> Կասալի համար գիտութիւնը արժէք ունէր միայն այնքան, որքան նրան, իբրև մի յեղափոխական միջոցի, կարելի էր կիրառել պատմական զարգացման վրայ:

Սակայն ամենաաչքի զարնող և շօշափելի արտայայտուած տարրերութիւնը՝ Մարքսի և կազմում էր մէկի մատերիալիստական և միասի իդէալիստական աշխարհայեացըը: Կասալը Հեգելի դպրոցում կնքուած իդէալիստ էր և պատկանում էր նոյն իսկ ոչ ձախակողմեան-արժատական թերին, այլ հին աշակողմեան հեգելեանների շարքին: Նա ընդունում էր խորին հաւատով Հեգելի սպեկուլատիւ գաղափարը, իբրև մի առաջ-մղիչ ոյժ համաշխարհային պատմութեան: Սակայն նա չէ մա սնակցել Շարառուսի, Բրունօ-Բառուէրի, Ֆոյերբախի նման՝ կազմալուծող կասալիք փիլիսոփայութեան առթիւ մղուող բանակութին: Եւ այս ասածներից չպէտք է եզրակացնել, անպայման, որ կասալի իդէալիզմը ուղղուած էր Մարքսի մատերիալիզմի դէմ,—որի մասին մենք յետոյ կը խօսենք մանրամասն կերպով: Այս, ինչ կապում, միացնում էր կասալին իդէալիզմի հետ, դա իդէալիզմի մէջ որակուած յեղափոխական ոգին էր. այդ է պատճառը, որ իդէալիստ-յեղափոխական միխտէն, — Քրանսիւական յեղափոխութիւնը այնպիսի վառ կրթուութեամբ ըմբռնող

<sup>40)</sup> Փր. Մերից, „Ասչմա Փերդ Լասալ և Կ. Մարկս և Փ. Էնգելս», ել. 140.

<sup>41)</sup> Fr. Mehring, «Geschichte der deutschen Sozialdemokratie» հատ. II, ել. 245:

փիլիսոփան, —ամենից շատ էր սիրուած Լասալից: Ապա թէ ոչ Լասալը ունէր մի սուր հոտառութիւն կեանքի դրականն ու բէ-ալականը ըմբնելու և զնահատելու:

Լասալի իդէալիզմը տարբերում է Մարքսի պատմական մատերիալիզմից նրանով, որ Լասալը պրօլետարիատի դասակարգային կոռու պայմաններն ու անհրաժեշտութիւնը դիտում ու որոնում էր ոչ թէ տնտեսական յարաբերութիւնների մէջ, այլ նա այդ բոլորը վերածում էր նախ իդէալիստական մոռածողութեան ծեւերի —փիլիսոփայական և իրաւագիտական մտածողութեան: բայց մի մտածողութեան ձև, որ այնքան յատուկ էր բիւրդերական յեղյեղուկ դարեշրջանին: Սակայն, այսպէս թէ այնպէս, բացի Մարքս-էնգելսից չի եղել այդ շրջանում մի այլ խոշոր դէմք, որ այնքան խորապէս ըմբռնէր պրօլետարիատի դասակարգային կոռու համաշխարհային-պլատմական մեծ նշանակութիւնը, որքան Լասալն էր: Եւ այդ տեսակէտից Լասալը մի համոզուած կօմունիստ էր «Կօմունիստական մանիֆեստի» իմաստով: Եթէ, իրաւ, Լասալը իբրև պրօլետարական դասակարգային իդէոլոգ ցածր էր կանգնած իր ժամանակակից բիւրդերական իդէօլոգներից՝ ձախակողմեան-արժատական բանակի մէջ—երիտասարդ հեգելեաններից՝ փիլիսոփայական սահմանում, Բօտրիբուսից՝ տնտեսական և եօնան Եակօբից՝ քաղաքական սահմաններում:

## 11.

Մարքսի առաջին տնտեսագիտական աշխատութիւնը: —Ապրանք և փող: —Ապրանքի գործածութեան և գոխանակութեան արժէքը: —Փողի զանազան փունկցիաները: —Բառիայի պատերազմը 59 թ. և Մարքսի բանակութեալ ֆուգատի հետ:

Մարքսի երկար տարիների գիտնական զրագմունքների արդիւնքը լոյս է տեսնում 1859 թ., կրելով «Zur Kritik der politischen Oekonomie» («Քաղաքատնտեսութեան քննադատութեան մասին») վերնագիրը: Դա Մարքսի առաջին գիտական լուրջ վաստակն էր տնտեսագիտական հետազոտութիւնների սահմանում:

Երկար կանգ առնել ինչպէս այս, այնպէս և Մարքսի գալիք մեծ աշխատութիւնների զանազան մասերի վրայ, չէ ներում, ինարկէ, մեր յօդուածների սերիայի առաջին բաժնի ծաւալը: «Մարքսիզմի» բաժնի մէջ միայն մենք առիթ կ'ունենանք

ընդարձակ և սիստեմատիք խօսելու Մարքսի շօշափած ու լուսաբանած շատ ու շատ ինդիբների և երեսյթների մասին։ Այստեղ միայն ըիչ ծանրանանք ընդհանուր բովանդակութեան վրայ։

«Քաղաքասնտեսութեան քննադատութեան մասին» վերնագրով աշխատութիւնը պիտի առաջին հատորը լինէր նոյն ծրագրով ապագայում գրուելիք մի շարք հատորների։ Եւ այդ նոյն վերնագրի տակ Մարքսը պիտի շօշափէր մի շարք ծանրակշիռ խնդիրներ ու տնտեսական կաթեգորիաներ՝ յատուկ կապիտալիստական արդիւնաբերութեան դարեցրջանին։ — Լապիտալ, կալուածատիրութիւնն, (կամ հողային սեփականութիւն) վարծու աշխատանիք, պետութիւնն, արտաքին առևտուր, համաշխարհային շոկայ (կամ վաճառանոց)։ Իր առաջին հատորի մէջ, Մարքսը խօսում է միայն կապիտալի մասին ընդհանրապէս, ընդարձակ պարզաբանելով միայն ապրանքի և փողի փունկցիաները, պատմութիւնը։ Մնացած մասերը այլևս այլ ծրագրով և այդ վերնագրի տակ չէ հետազոտում Մարքսը, այլ ութ տարի անցած արտադրում է իր մտաւոր հսկայ երկը՝ «Կապիտալը» և այդտեղ ուրիշ սիստեմով ուսումնասիրում տընտեսական կաթեգորիաները։

«Բաղարատնտեսութեան ըննադատութիւնը» էապէս ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ «Կապիտալի» առաջին հատուածը, ուր սակայն, դուրս է ձգուած արժէքի և փողի պատմութիւնը։

Մարքսը տալիս է նախ իր գրքի յառաջաբանում մի փոքրիկ նկարագիր իր կրթական-ուսումնական անցեալից։ Թէև Մարքսի ուսումնասիրութեան մասնաճիւղը եղել է իրաւաբանութիւնը, այսուամենայնիւ գա ստորագաս նշանակութիւն է ունեցել նրա համար, նա նուիրուած է եղել առաւելապէս փիլիսոփայական և պատմական գիտութիւններին։ Տնտեսական հարցերով նա զբաղուել է աւելի ուշ, կեանք մտնելուց՝ իր հրապարակախօսութեան առաջին շրջանում, երբ խմբագրում էր (1842—43) «Rheinische Zeitung»-ը։

Ապա Մարքսը կլասիք ձևերի մէջ մշակած առաջ է բերում յառաջաբանում պատմական մատերիալիզմի վերաբերեալ այն հոչակաւոր գեֆինիսիօնը (սահմանաւորումը), որ մինչեւ օրս էլ համարւում է մատերիալիստական աշխարհահայեցքի էսսենցը, կորիզը։ Դրա և գրա լուսաբանութեան մասին մինքը կը խօսենք յետոյ, իր տեղին։

«Առաջին հայեցքից իսկ ըիլրգերական հաբստութիւնը երևում է որպէս ապրանքների մի անբաւ ու անագին կուտակում, իսկ իւրաքանչիւր ապրանք երևում է որպէս մի էլեմեն-

տար զուացութիւն»— այսպէս է սկսում Մարքսը իր հետազօսութիւնը: Նա ուսումնասիրում է հասարակութեան մի որոշ պատմական ծևլը: Նա չէ պնդում, թէ ինչպէս պէտք է կամ պիտի լինեն ապրանքն ու վտողը լնդհանուր փիլիսոփայական մտքով, այլ թէ ինչպէս են նրանք իրապէս արզի ըիւրգերական հասարակութեան մէջ Մարքսը հիմնական քննութեան է ենթարկում աշխատանքի արժեք կազմող որակը. նա ցոյց է տալիս, թէ ինչ կարգի աշխատանիքն է՝ ինչու եւ ինչպէս ալ-մէք արտադրում: Ապա նա վերլուծում է ապրանքի և փողի փոխադրությարկերութիւնը: Նա մերկացնում է աշխատանքի երկուստեր բնոյթը նորագոյն հասարակութեան մէջ: Իւրաքանչիւր ապրանք ունի երկու կարգի արժեք՝ զործածութեան և փոխանակութեան արժեք: Մի իրի զործածութեան արժեքը արտադրայտում է հէսց իրի զործածութեան կառու սպասման պրոցեսի մէջ: Տարբեր են անպայման ապրանք-իրերի զործածութեան և գանձակն ու չափը: Օրինակ ցորենը, թուղթն ու կտուր իրեր են, որ ունեն տարբեր կարգի ու չափի զործածութիւն: Փոխանակութեան արժեքը աչքի է ընկնում ամենից առաջ իր քանակական յարաբերութեամբ, որի մէջ միմիանց հետ փոխանակում են զործածական արժեքները: «Դործածական արժեքները կազմում են անմիջական կենսական միջոցներ, իսկ այդ կենսական միջոցները իրանց կողմից արգիւնքներ են հասարակական կեանքի, հետևանք մարդկային կեանքի արտադրած ոյժի, ուրիշ խօսքերով գոյ սուարկայացած աշխատանից է»: 42) Մարքսի այս խօսքերից պարզ երևում է, թէ որ աստիճան օրգանական յարաբերութեան մէջ է զնում նաև մարդկային ֆիզիկական-արտադրողական ոյժը և այդ ոյժի արտիւնաբերած շշամիելի արդիւնքները, վերացնելով այն մթաղատ քօղը, որով բիւրգերական գուլպէր-տնտեսագէտները վարագուրում են միմեանցով պայմանաւորուած և իրար հետ սերտ շաղկապուած մեծութիւններն ու դրութիւնները—կենսական արժեքները և մարդկային արտագրագական ոյժը:

Իւրաքանչիւր իր, որպէս ապրանք, կազմում է մի անմիջական միութիւն գործածական և փոխանակութեան արժեքի: Ապրանքների իսկական յարաբերութիւնն ու առընչութիւնն արտայայւում է փոխանակութեան պրօցեսի ըուպէին: Մակայն ապրանքը, որպէս փոխանակութեան արժեք, գառնում է մի չափ, որով չափուած են բոլոր միւս ապրանքների արժեքները: Եւ ընդհակառակը, իւրաքանչիւր ապրանք, որով չափուած են

42) K. Marx, «Zur Kritik der politischen Ökonomie» ել, 3.  
Առլու, 1906.

ուրիշ ապրանքների արժէքները, գառնում է փոխանակութեան արժէքի աղէքուատ գոյութիւնը: Այդպիսով մի ապրանքի մէջ, որպէս այդպիսին, լուծում է իր մէջ պարունակուած հակասութիւնը, և նա ինչպէս առանձին գործածական արժէք, ստանում է միաժամանակ ընդհանուր էքվիվալենտի նշանակութիւն, ուրեմն և ընդհանուր գործածական արժէք: Հենց այդ ապրանքն է, որ կոչում է փող:

Փողը ուրիշ ոչինչ չէ, բայց իթէ մի ապրանք, որի մէջ բիւրեղանում է ապրանքների փոխանակութեան արժէքը:

Փողային բիւրեղը կազմում է փոխանակութեան պրօցեսի մի անհրաժեշտ արդիւնքը: Նա զարգացել է ընազդական եղանակով, կտրելով պատմական երկար ճանապարհ: Որքան յառաջադիմում էր առետուրը, և որքան փոխանակութեան արժէքները ապրանքներ էն գտնում: Որքան, ուրեմն, փոխանակութեան արժէքը ինքնուրոյնանում է, առանց անմիջապէս կապուած լինելու գործածական արժէքի հետ, այնքան էլ նա աւելի էր մզւում դէպի փողի առաջացման պահանջը, փողի կազմաւորումը:

Մարքսը ընդարձակ պատմում է փողի սկզբնական տեսակները, նրա փոփոխուող ձեերը և զանազան ֆունկցիաները, ապա կանգ է առնում ազնիւ մետաղի, մանաւանդ ուկու վրայ, և ցոյց տալիս վերջինիս առանձնայատիկութիւնները, փող լինելու ամենից շատ առաւելութիւնները, ամենից աւելի ֆունկցիաներ ունենալու յարմարութիւնը:

Մարքսը նկարագրում է փողի խաղացած բաղմակողմանի դերը բիւրգերական հասարակութեան մէջ, լոյս սփուելով ամենուրեք այն տեղերը, ուր մութ ու միստիքական էին մինչև այդ ժամանակ բուրժուական մնտեսագէտների համար: Մարքսը թւում ու հիմնաւորում է փողի զանազան ֆունկցիաները, որպէս՝ վճարման միջոց, արժէքի մասշտաբ, շրջանառութեան միջոց, զանիծելու կամ պահպանելու միջոց: Մարքսը ինքն էր, որ առաջին անգամ ցոյց տուաւ փողի հասարակական արժեքը: «Արգի տնտեսագէտները մոռանում են, որ փողը մի սոսկ իր չէ, այլ ներկայացնում է իրանից արգիւսարերութեան մի հասարակական յարաբերութիւն, ուական մի ընական իրի ձեւով, իր որոշ յատկութիւններով»:<sup>43)</sup>

Ինչպէս նկատեցինք սկզբում, Մարքսը իր այդ գրքի մէջ հետազոտութեան օբիեկտ է ընտրում միայն ապրանքը և փողը: Շարունակութիւնը ընդհատուելով ամբողջ տարիներ, նա

<sup>43)</sup> K. Marx, Ibid., ել. 11.

կարողանում է միւս ֆակտորների, մանաւանդ իրա՞ կապիտալի, մասին խօսել միայն իր գլուխ գործոցի մէջ, որի վրայ կանդ կ'առնենք իր տեղին:

1859թ. Կարինետային մասնագէտը կրկին մատնուում է բաղաքականութեան ասպարէզը: Լուփ Բօնապարտը, որ այն քան մեծ ջանքերով հոգում էր բուրժուազիայի դիկտատուրայի մասին, դարձել էր ժամանակակից եւրոպական բուրժուազիայի համար մի կիսաստուած. մասնաւորապէս սիրուած էր նա գերմանական բուրժուազիայից: Սակայն հէնց որ նա իր երերող գահը ամրացնելու համար պաշտպան հանդիսացաւ հտալիային և պատերազմ յայտարարեց Աւստրիայի դէմ, յանկարծ նա հըռչակուեց որպէս պաշտպան ու նախանձախնդիր դեմօկրատական գաղափարների: Խոկ Պրուսական կոռավարութիւնը, որ այն ժամանակ երազում էր Սկզ-Պրուսիա հիմնելու Աւստրիայի հաշուին, աշխատեց շահագործել լիրերալ բուրժուազիայի բարեթեք տրամադրութիւնը և պղանը ջրում ճուկ որսալ: Լօնգունում հիմնուած «Վոլկ» («Ժողովուրդ») անունով մի լրագիր, որին աշխատակցում էին Մարքսը և իր ընկերները, մերկացնում է ամրող գաղտնիքը՝ ֆրանսիական կառավարութեան «ազատագրական» ըայլի միտքն ու նպատակը: Այդ դէպքը առիթ է տալիս կարլ Ֆոզտ անունով մի վարձուած ֆիլիսոփա, հայհոյանքներով լի մի պամֆետ-դրուածք ուղղելու Մարքսի դէմ, որին Մարքսը մի փառաւոր, կլասիք բրօշիւրայով՝ «Herr Vogt» («Պարոն Ֆօզտ») վերնագրով, պատասխանում է, փաստապէս հիմնաւորելով այն բոլորը, ինչ արծարծուել են «Վոլկ» մի մէջ հտալիայի պատերազմի առթիւ: Ինչպէս էնգելսը իր «Po und Rhein» («Պօ և Հռենոս») գրքի մէջ՝ գրուած հտալիայի պատերազմի առթիւ, այնպէս էլ Մարքսը իր աշխատութեան մէջ հերքում է այն թիւր կարծիքը, որ իբր Աւստրիայի տիրապետութիւնը հտալեայում, համապատասխանում է գերմանական շահերին: Մարքսը ցոյց է տալիս, որ հտալիայի, այսպէս առած՝ բօնապարտիստական աղատագրութիւնը ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ մի առիթ, Ֆրանսիան՝ բօնապարտեան ճնշուած լծի տակ պահելու, հտալիայի վրայ ուժեղացնելու իր ազգեցութիւնը, Ֆրանսիայի «քնական սահմաննելը» ձգելու գերմանական հողի վրայ, Աւստրիային դարձնելու Ռուսաստանի ձեռքին մի գործիք և այլն: Այս բոլոր գաղտնի շարժառիթներն էին, որոնց Մարքսը կլասիք վարպետութեամբ մերկացնում է իր գրքի մէջ, հակառակ կաշտուած Կարլ Ֆօզտի բօնտպարտեան փառարանութեան:

Մարքսը, ինչպէս և էնգելսը, հետագօտում էն 1857թ.

վրահասած մեծ առևտրական ճգնաժամի պատճառները և նրան  
առաջացման հետևանքները «New York Tribune» թերթի մէջ:

12.

Բանուորական շաբաթումը արևմտեան Եւրօպայում՝ Գերմանիայում, Անգլիայում և Ֆրանսիայում:—Համաշխարհային ցուցահանդէսը Լօնդոնում:—Անգլիա Ֆրանս, բանուորների միտինզը ինդաստ լեհական ապահովութեան պատճառներն ու առիթները:—Մ.-Մարտինի միտինզը:—«Տրէկունիօնիստները և «Ինսերնացիօնալը»:—«Կոմունիստական Միութիւնն» և «Ինսերնացիօնալի» հիմնադրութեան մօմենտները:—«Ինսառուդուրալ արբանի» առաջնորդող մարդերը:—Հակամարտ տանգենցներ սեփականազուրկ և սեփականատէր դաստիարակերի մէջ:—Տամբ ժամեայ աշխատանքի օրինագիծը և կօօպերատիւ շարժումը:—Պրոլետարիատի ալգային և միջազգային կազմակերպութիւնը:—Բանուորդասակարգի արտաքին քաղաքականութիւնը:

Անցեալ գարու 60-ական թուականների սկզբներին նորից սկսում է եռու բանուորական շաբաթումը արևմտեան Եւրօպայի առաջնակարգ երկրներում: Որքան զարգանում էր կապիտալիստական արդիւնագործութիւնը և տոն տալիս հսկայտկան ձեռնարկութիւններին, որքան խառնում ու լճանում էր զործարանական պրոլետարիատը մայրաքաղաքներում, այնքան էլ ամուր հիմք է տրուում արօլետարիատի կազմակերպչական գործին, այնքան էլ բանուոր դասակարգը կոռուի նպատակայարձարմար միջոցների համար հող է զբաւում իր սոտրի տակ: Եթէ բուրժուական յեղափոխութիւնների շրջանում պրոլետարիատը մի անհիազմներակ ու անծրազիլ զանգուած էր, մուշտ ու անզիտիլից աւրովս, ենթարկուած բուրժուական գեմօկրատիայի յեղափոխական արագագրութիւնն ու ձգտումներին, ապա 60—70-ականն թուականներին նա գրեթէ կապիտալիստական բուլոր երկրներում հետզհետէ կազմակերպում է քաղաքականապէս և իր զասակարգային-կուտակցական ուրոյն գիրքը կը բառում քաղաքական կուտակցութիւնների շարքում: Ամեն մի պետութեան մէջ, ամեն մի ազգային շրջանակում առաջնորդու և պրոլետարական զատ-զատ կազմակերպութիւններ:

Գերմանիայում արդէն Լասալի ու ֆեղ ջանքերով հիմնուել էր «Der Allgemeine Deutsche Arbeiterverein» («Բնութանուուրդի բանուորական Բանուորական կուտակցութիւն») անունով բանուուրական մի ընկերութիւն 1863 թ. մայիսի 23-ին, որ զարձաւ միաժամանակ սաղմային սկզբնաւրութիւնը ներկայ գերմանական սոցիալգենոկրատիայի: Անդինիայում զբեթէ բոլորովին շրացել էր չտրտիստական-բանուորական շաբաթումը՝ ցա-

ժաքային Եւրօպայում յեղափոխութեան ձնշումից յետոյ: Սակայն տասը ժամենան աշխատանքի օրինազիջը («Zehnstundebill»), որ այնքան թանգ գնով յաջողուեց անգլիական բանուորութեան իրականացնել, նոր ողի ու եռանդ ներշնչեց պրօլետարիատի առաջաւոր շարքերի մէջ: Արագ բայլերով յառաջադիմեց նոր վերածնուած տրէլ-ունիկոնիզմը—պրօֆեսիօնալ բանուորական շարժումը Անգլիայում՝ յատկապէս ինդուստրիալ առաջաւոր և առետրական բաղաքներում: 1857 թուականի առետրական նրբիպիսը եկաւ անգլիական բանուորներին մի աճգամ ևս ապացուցանելու, որ նրանք չպէտք է յոյս ու ակնկալութիւն գնեն արգի բուրժուական հասարակութեան վրայ: Մանաւանդ խիստ մեծ զարկ տուաւ Արևետ, Եւրօպայի բանուորական շարժման Ամերիկայի բաղաքացիական խոփւը, որը, ըստ Մարքսի, նոյնքան մեծ խթան ու աղդակ եղաւ եւրոպական պրօլետարիատի համար, որքան Ամերիկայի անկախութեան կոփւը 18-րդ դարում եղաւ իթան ու աղդակ եւրօպական բուրժուազիայի համար: Անգլիական բանուորութեան արիստոկրատական խաւելիրը, որոնք սահմանափակում էին միայն տշխառավարձի բարձրացման և աշխատանքի ժամանակի կրծատման կուռով, սթափուեցին այդ ինքնախարէութիւնից և տեղ դրսւեցին պրօլետարիատի դասակարգային կոռու միջազգային սահմանում:

Համեմատարար սննդատար պրութեան մէջ էր Փրանսիական պրօլետարիատը: Ոչ մի երկրում բանուոր զասակարգը այնքան ենթակայ չէ եղել զանազան աղանդաւորների խաղերին, որքան մրանսիայում, որտեղ պրօլետարիատը խմբուած էր միմիանց հետեւզ և միաժամանակ գոյութիւն ունեցող հակամարտ ազանդաւորների թշնամական բանակներում: Մեծ ուսուալիտաների գպլոցներից յետոյ Փրանսիական բանուորութիւնը երկու գլխաւոր խմբերի էր լաժանուել՝ ըլանըիստներ եւ պլրուզնիստներ, որոնցից առաջինը բարբիկադների կոռու, իսկ երկրորդը մանր-բուրժուական խաղերի մէջ էր որոնում պրօլետարիատի դասակարգային աղատազրութիւնը: Իսկ աւանտիւրիստ Բօնապարտը՝ բուրժուազիայի այդ կիսաստուածը, ողքնում էր ձրի ժողովրդականութիւն վաստակել նաև բանուոր դասակարգի մէջ: Նա հետեւմ էր ճիշտ այն նէնգամիտ քաղաքականութեան, ինչպիսին փորձեց Բիսմարկը գերմանական պրօլետարիատի վերաբերմամբ 70-ական թուականներին՝ իր ընդհանուր, հաւասար, ուղղակի և զաղանի ձայնատութեան բաղաքականութեամբ: Սակայն մենք գիտենք այսօր, թէ ինչ վաստակեց մէկը թէ միւսը իրանց լարած թակարգներից: Բօնապարտը, օրինակ, նպաստեց Փրանսիական բանուորներին

ազատ ընտրելու իրանց պատգամաւորներին և ուղարկելու Լօնդոն 1862 թ. կայանալիք համաշխարհային ցուցահանդէսին:

Ֆրանսիական պրոլետարիատի ամենագիտակից ներկայացուցիչները Լօնդոնում շուտով մտերմացան տեղական բանուորութեան պարագլուիների հետ: Օգոստոսի 5-ին տեղի ունեցաւ յանուն «Ամիջազգային եղբայրութեան» մի հանդէս զուտ բանուորական ներկայացուցիչներից, ուր արծարծում է երկու ազգի բանուորներից մի սերտ, նաևտառում ու տեևական միութիւն հիմնելու միտքը: Յարաբերութիւններն աւելի սերտացան լեհական ապստամբութեան առթիւ 1863 թ.: Արևմտեան Եւրօպայի կուլտուրական ժողովրդների աւանդական սիմպատիաները գէպի լեհ ժողովուրդը ուժեղ արտայայտութիւն ունեցան ամենից առաջ եւրօպական պրօլետարիատի մէջ:

1863 թ. յուլիսի 23-ին կայանում է Լօնդոնում մի մեծ միտինգ անգլիական և ֆրանսիական բանուորների ձեռներէցութեամբ յօգուտ յեղափոխական լեհ ժողովրդի, որ ազատագրական ծանր կռիւ էր մղում ոռուսական բռնակալութեան գէմ: Այդ նոյն միտինգին, մաքերի շփման այդ կենդանի բռապէներին, միտք է յղանում բանուորների մէջ հիմնելու պրօլետարիատի մի միջազգային միութիւն: Ընտրում է մի յանձնաժողով, որը կոչ է ուղղում Ֆրանսիայի բանուորներին միանալու միջազգային հոգի վրայ՝ պաշտպանելու համար շահագործող աշխատանքի շահերը: «Ամեն անդամ—ասում է կոչւ—երը անգլիական բանուորութիւնը կռում է իր օրավարձը բարձրացնելու կամ աշխատանքի ժամերը կրծատելու համար, սպառնում են անգլիական կապիտալիստները աշխատանքի օտար ոյժերի ներմուծումով Ֆրանսիայից, Դերմանիայից, Բելգիայից և ուրիշ երկրներից: Կապիտալիստները օգտուելով միջազգային բանուորների միաբան ու համերաշխ գործակցութեան բացակայութիւնից, կատաղի մրցութեան ասպարէզ են բաց անում նրանց համար»<sup>43)</sup>:

Դրանով հիմք է գրւում Մարքսի յայտնի «Ինտերնացիոնալի»—«The Working Mens International Association» («Միջազգային բանուորական խմբակցութեան»)—սաղմային սկզբնաւորութեան: Անհրաժեշտ է փոքր ինչ երկար ծանրանալ «Ինտերնացիօնալի» վրայ, որովհետև զա Մարքսի սօցիալ-քաղաքական գործունէութեան մի փառահել հատուածն է կառամում:

<sup>43)</sup> Fr. Mehring «Geschichte der deutschen Sozialdemokratie» համ. III, էր. 169.

Ոմանք թիւրիմացօրէն բացատրում են, որ «ինտերնացիոնալի» հիմնագրութեան իսկական պատճառները եղել են լօնգոնի համաշխարհային ցուցահանդէսը և լեհական ապստամբութեան համար կազմուած միտինովը: Դա մի միամիտ կարծիք է, պատմական երկոյթների ծագման աղբիւրները չհասկացուած դատողութիւն է բիւրգերական քննադատուների կողմից:

«Ինտերնացիոնալի», որպէս կազմակերպուած, զիտակից ռ մարտնչող պրոլետարիատի միջազգային համախմբման միուքն ու անհրաժեշտութիւնը յդացել և արտայայտութիւն է ունեցել զեռ 40-ական թուականների վերջերին՝ յանձինս «Կոսովունիստական Միութեան»: 60-ական թուականների «Ինտերնացիոնալը» զկոմունիստական Միութեան» մորի լրացումը, բովանդակութեան ամբողջացումն է, նրա սաստիճանական զարգացման նաստինացած արլիմնիքն է, ուրիշ ոչինչ: Եւ իրքե այդպիսին, «Ինտերնացիոնալը» պիտի առաջ զար իր հերթին պատմական անհրաժեշտութեամբ: Լոնգոնի համաշխարհային ցուցահանդէսն ու լեհական միտինովը եղել են լոկ առիջեներ, երկրորդական նպաստաւոր պարագաներ, «Ինտերնացիոնալը» գլուխ բերելու համար, ուրիշ ոչինչ:

Ցանձնաժողովի արձակած կոչը ոգեստում է Փարիզի բանուուրներին այն աստիճան, որ նրանք շտագով ձեւնարկում են փողի հանգանակութեան և ի պատասխան լոնգոնի բանուուրների գրութեան, ուղարկում են այնտեղ մի առանձին պատգամաւորութիւն: 1864 թ. սեպտեմբերի 28-ին յանձնաժողովը ձեւնարկում է մի մեծ միտինովի Ս.-Մարտինի ժողովարանում, բաղկացած բոլոր առաջնակարդ երկրների բանուուրներից—անզիցիացիներ (50 պատգամաւորներ), զելմանացիներ (10 պատգ.), ֆրանսիացիներ (9 պատգ.), իտալացիներ (6 պատգ.) լեհեր (2 պատգ.). և այլն: Միտինովի նախագահն էր պրոֆեսոր Բեսլին, Լոնգոնի մի յայտնի Փիլանթրոպ, որ իր նամակներով և յօդուածներով, իր վառվուուն ճառերով միշտ պաշտպանել է բանուուրական շահերը և պայքարել մանչեստական բուրժուազիայի դէմ: Միտինովում արտասանած բոլոր ճառերը ունինի միօրինակ ընդհանուր տեսնենցը—որքան կարելի է շուտ և ամուր հիմքերի վրայ կառուցանել մի միջազգային բանուուրական միութիւն՝ հսկելու և պաշտպանելու պրոլետարիատի միջազգային շահերն ու քաղաքականութիւնը: Խոտացած շարքերով, կազմակերպուած ոյժերով եւ զիտակից զէնքերով կոռել միջազգային պատմական մեծ թշնամու դէմ—բուրժուազիայի կապիտալիստական շահագործութեան և բաղաքական տիրապետութեան ու ձնչումների դէմ: Դա ժամանակի հասունացած պահանջ էր,

պէտք է արտայայտուէր վաղ թէ ուշ։ Միտինդը ընտրում է իր միջից մի կօժիտէ, որ մշակէ «Ինտերնացիօնալի» կանոնագրութիւնը և այն յաւերժացնող մի տօնական ձօն—«Inauguraladdress»։ Այդ կօժիտէի մէջ է լինում ի միջի այլոց և Մարքսը։

Պէտք է խոստովանել որ «Ինտերնացիօնալի» հիմնադրութեան գործում մեծ գեր է խսդացի անգլիական բանուորութիւնը. Աչ միայն այն պատճառով, որ հիմնադրութեան և ընդհանուր մարմնի տեղն ու նիստը լինելով Անգլիայում, տեղական բանուորութիւնը անհրաժեշտօրէն մեծ նիրկայացուցչութիւն է ունեցել միտինդում, այլին զլխաւորապէս և հիմնապէս այն պատճառով, որ անգլիական պըոլիտարիատի մեծ մասմբ փորձուած ու հմուտ ներկայացուցիչները—բազմաթիւ գործնական գլուխներ տրէդունի նիստներից—ուժեղ զարկ և տուել «Ինտերնացիօնալին» և նրա զեկավարութիւնը զրեթէ փաստապէս իրանց ձեռքն առել. Տրէգունիօնիստները—ամբողջ Եւրոպյում միակ ուժեղ կազմակերպութիւնը տնտեսական հողի վրայ—կենսապէս շահագրգռուած էին, որ ցամաքային Եւրոպյի բանուորութիւնը ևս կազմակերպուէ և զէմ զնէ / թ հաւաքական ոյժերը կապիտալիստական շահագործութեան, որպէս սպառուղի Անգլիայի պըունակարիատը այնքան չտուժէ կապիտալիստների նիրմուծած բանուորների կտտաղի մրցութեան ազգեցութեան ներքոյ։ Թէ որբան ևս օգնել ու նպաստել տրէգունիօնիստները «Ինտերնացիօնալի» հիմնադրութեան և առաջ իսպացման գործին, զա վկայում է նոյնիսկ ինքը Մարքսը։<sup>(1)</sup>

Դարձեալ կննադրոնական տեղ է զրաւում Մարքսը։ Այն մարդը, որ 40 տկան թուականներին տոն էր տալիս «Կոմունիստական Միութեան» զործնէութեան, որ հաստատել, տեսականապէս հիմնաւորել էր «Միութեան» զոյութիւնը, այժմ նոյն այդ ուժեղ ու անսասան տիպը նմանօրինակ զեր խոզ զում է «Ինտերնացիօնալի» մէջ։ Մարքսն էր, որ մշակեց կանոնագրութիւնը, նա էր, որ զրեց յայտնի «Ինտերկոմիտրալ» բրեսլու (Զօնեալ հասցէն) «Ինտերնացիօնալի» համար։

17 տարի առաջ, երբ Մարքսն ու Էնգելսը հիմք էին դնում «Կոմունիստական Միութեան»՝ մասնիչնեսար ստուերագծած սկզբունքների վրայ, այլ էր ժամանակի պահանջն ու շըր-

<sup>(1)</sup> Տես Մարքսի նամակը ուղղած Քուգելմանին («Neue Zeit» XX տարի, հատ. II, եր. 31): «Ինտերնացիօնալը»—ասում է, Մարքսը—կամ առելի շուտ նրա ընդհանուր կօժիտէն շատ կարհոր մարմնն է, որովհետեւ այդտեղ մասնակցում են անզլ. Մրէղ-ունցիօնիստների պարագլուխները»։

ջապատ յարաբերութիւնները, քան 17 տարի յետոյ, «Ինտեր-նացիօնալի» հիմնագրութեան օրով: Առաջ ընտրեալների մի ըն-կերութիւն էր, իր պրօպագանդիստական զործունէութեամբ, յե-զափոխական ձգուումներով՝ զէպի յեղափոխութիւնն թուացող մօ-տալուտ զալուստը: 17 տարի յետոյ, ընդհակառակը, ժամանա-կի հրամայական կարիքը ստիպում էր կազմակերպել և զի-տակցական հոդի վրայ դնել մասսայական շարժումն Ժամանակակից միջազգային բանուորութիւնն, ընդզծել գասակար-գային կսուի անշեղ ճանապարհներ ու գործնական նպատակ-ներ: Մարքսը կարիք չունէր «Ինտուգուբալ աղբեսի» մէջ պատ-մափիլսոոփայտկան ունիվերսալ դիտողութիւններով խոշոր հեռանկարներ բացանելու, ինչպէս «Կոմ. մանիֆեստի» մէջ էր, այլ նաև բաւականացել է միայն մերկ իրողութիւնները շօշա-փելով և լուսաբանելով մի այնպիսի ժամանակ, երբ հետզին-տէ կապիտալիստական շահուգործութիւնը հասնում էր իր հըն-շիչ ու այլասեռող աստիճանին:

Մարքսի պատմական այդ յայտնի յիշատակագիրը սկսում է իր զիտողութիւնները նրանով, որ բանուոր գասակարգի տառապող կարիքը ոչ թէ նուազել է 1848—64 թ., այլ ընդ-հակառակը անել է, չնայելով արդիւնագործութիւնն և առևտրի անօրինակ բարգաւաճան հէնց այդ շրջանում: Իրեն աչք ծա-կող փաստ նա առաջ է բերում «Էլապոյտ գրքերի» զարհուրելի վիճակագրութիւնը՝ անզինական բանուորների թշուառ կա-ցութիւնն վերաբերեալ և համեմատում ունեսը գասակարգերի անչափ հարստութիւնն և ոյժի աճման հետ, որոնց համար այնքան պերճախօս փաստեր էր բերում ֆինանսական մինիստր Գլազուառնը իր ճառի մէջ՝ արտասանած բիւղջէի առթիւ: Ա-մենից առաջ և ամենից շատ Անդլիայումն է, որ պրոլետարիա-տի ծայրայեղ թշուառութիւնն ու այլասեռումը հասել է հրէ-շային չափերի, որովհետեւ Անդլիան է, ուր կապիտալիստական շահագործութիւնը ամենից արագ այնքան ծաւալուել ու խո-րացել է: Այդ թշուառութիւնն ու այլասեռման տեսդինցը նկա-տելի է միւս երկրներում ևս այնքան, որքան զարգանում, յա-ռաջազիւմում է կապիտալիստական արդիւնաբերութիւնը և գրանից անբաժան երևոյթների շարքը: «Այդ բոլոր երկրնե-րում—ասում է «Ինտերնացիօնալի» «Ինտուգուբալ աղբեսը»— արդիւնագործութիւնն զարգացումն ու ներծուծուող և արտա-հանուող ապրանքների առևտուրի ծաւալումը հասել են ան-սովոր չափերի: Բոլոր տեղերում ոյժն ու հարստութիւնը ի- րանց թափով ու քանակով կենտրոնացել են սեփականատէր զասակարգերի ձեռքը:

«...Ամենուրեք խորասուզւում է աշխատաւոր դասակարգերի խոշոր զանգուածը աւելի ու աւելի խոր թշուասութեան գիրկը, առնուազը այն չափով, որ չափով վերին դասակարգերը բարձրանում էին իրանց սոցիալական գիրք ու աստիճանով։ Բրիտանական թագաւորութեան մայրաքաղաքում սովաման վիճակը դարձել է զրեթէ մի սոցիալական ինստիտուցիա այն ժամանակ, երբ տնտեսական յառաջադիմութիւնը նոր դարպլում է բաց արել պատմական կեանքի մէջ։»<sup>45)</sup>

Ապա «Ինտերնացիօնակիր» յաւերժագիրը պատկերացնում է մօտիկ անցեալի ու ներկայի գրութիւնը։ Նա կրով, զայրոյթով ու դասն շնչառումներով նկարագրում է յիսունական թուականների հակայեղագոխութեան կործանիչ ներգործութիւնն ու այլանդակ նետեամերները աշխատաւոր մասսաների վրայ։ Ցամաքային եւրոպայի պրոլետարիատի անկումը իր ներգործական հետեւանքներն է թողել նաև ջրանցքի միւս ափին գտնուող բանուորների վրայ, գիմագրութեան ու չզիշանելու ոյժ ներշնչելով գործարանական թէ կալուածատիրական լորդերին։ Միայն երկու խոշոր իրողութիւններ է յիշատակում Մարքսը իր «յիշատակագրի» մէջ, որոնք որպէս լուսաւոր գծեր միսիթարական պատկերի դրօշմ են կնքում ամբողջ շրջանի մութ ու սե էջերի վրայ։

Նախ տասը ժամեայ աշխատանքի օրինագիծը (Zehnstundenbetrieb) Անգլիայում, որ իր բարերար հետեւանքներով մի մեծ յաղթութիւն է հոչակում Մարքսը անգլիական բանուորների համար։ Այդ օրինագիծը համարում է նա որպէս «ակզրունքի մի յաղթանակ»։ Աշխատանքի ժամանակի կրճատման համար մղուելիք կուիւը հարկադրում է պետութեան ուղղակի միջամտելու այդ կոունի պրօցեսին, որ կոչուած է բնկանելու տուաջարկ պահանջ կոչուած օրէնքների կոյր կանոնը։ Այդ օրէնքները կազմում են բորժուազիայի բաղարատնեսութիւններին էութիւնը։ Մինչդեռ սոցիալական հոգատարութեամբ կանոնաւորուղ արդիւնաբերութեան օրէնքները կազմում են այն բարձրատնեսութեան էութիւնը, որը պաշտպանում է բանուոր դասակարգի շահները։ «Եւ հէց այդ պատճառով—ասում է Մարքսը իր ագրէսի մէջ—տասը ժամեայ աշխատանքը ոչ միայն մի մեծ գործնական յաջողութիւն է, այլ և նա մի սկզբունքային յաղթանակ է։ առաջին անգամ օրը ցերեկին են-

45) Gustav Laeckh, «Die Internationale», եր, 27.

թարկուեց ու ընկճուեց բուրժուազիայի քաղաքատնտեսութիւնը բանուոր գասակարգի քաղաքատնտեսութիւնից»: 46)

Երկրորդ գեռ աւելի մեծ յաջողութիւնը, որ Մարքսը այնքան ջերմ տողերով զբուատում է, կազմում է աշխատանքի քաղաքատնտեսութեան յաղթանակը կապիտալի քաղաքատնտեսութեան դէմ: Դա կօօպերատիւ ձեռնարկութեան էքսպերիմենտն է, մի սկզբունքի յաղթանակ զուտ գործարանական կեանքում, բանուորների ձեռներէցութեամբ, առանց պետութեան և օրէնտդրական մարմնի միջամտութեան: Այդ սօցիալական էքսպերիմենտների արժէքը կայանում է ըստ Մարքսի հետևալում «Կօօպերատիւ ձեռնարկութիւնները ցոյց են տալիս իրաղէս, որ արդիւնաբերութիւնը կարող է մեծ չափով և արդի գիտութեան առաջարկած միջոցներով տեղի ունենալ, առանց ձեռնարկուների (կապիտալիստների) մի առանձին գուսակարգի ցոյցութեան, որ իր կողմից գործելու տեղ է տալիս բանուորների գասակարգին: Նրանք ցոյց են տալիս, որ աշխատանքի միջոցները արդիւնքներ, պտուղներ տալու համար, կարիք չունեն որպէս տիրապետութեան և շահագործութեան գործիքներ՝ ընդգէմ աշխատաւորների, մենավաճառ լինելու. և որ վարձու աշխատանքը, ստրկական, ինչպէս և նորտական աշխատանքը միայն անցողակի և ստորագաս մի ձեւ՝ է, որը՝ թիրուած դէպի կործանումը, պիտի անդարձ չքանայ զուգորդուած աշխատանքի առաջ, իսկ վերջիսս կը կատարէ իր գժուար խնդիրը կամաւոր ձեռքով, ուրախ սրտով և հեշտ մտքով:» 47)

Այս երկու երեսյթները, ինչպէս ասացինք, Մարքսը կամ «ինտերնացիօնալի» «ինառուգուրտ հսուցէն» գնահատում էր սկզբունքային արժէքի և գործնական տեսակէտից: Սակայն թող ընթերցողը ամենաին սխալ հնականայ այդ բերած ցիտատները և չեղակացնէ գրանից, որ Մարքսը իրը տարուած էր ըէֆօրմիզմով 60-ական թուականներին: Մէկ թէ միւս երեսյթի արժէքը գնահատում էր Մարքսը իբրև լոկ դէմօկրատական բարենորդումների և իբրէրի ընթացքի սօցիալականացման պատմական տենդինցիա: Միջոցներ, որոնք հարթում ու գիւրացնում են պրոլետարիատի դասակարգային կոռուի պատմական ուղին, նպաստում նրա շատափոյթ առաջխաղացման, յաջող ընթացքին: Մարքսը հէնց նսյն հասցէի մէջ աւելացնում է, որ կօօպերատիւ աշխատանքը, լինելով սահմանափակ՝ և

46) Ibid, եր. 27-28.

47) Fr. Mehring, «Geschichte der deutschen Sozialdemokratie» հատ. III, եր. 173.

երբեմնակի փորձեր ստվառաթիւ բանուոլների, չի կարող երբէք մրցել ու յաղթել կապիտալիստական մօնոպօլի գէմ: Կապիտալիստական մինավաճառ շահագործութիւնը կը վերջանայ միայն քաղաքական ոյժի դրաւման, նուաճման միջոցով բանուորների կողմից: Այդ պատճառով է հէնց, որ «Ինտերնացիոնալը» իր ամբողջ գործնութեամբ և ձգաւմներով նուիրած էր բանուոր գասակարգի քաղաքական կազմակերպութեան ու գաստիարակութեան:

«Զօնեալ հասցէն» («Ինտերնացութեալ ազրեսը») շեշտելով քաղաքական ոյժի նուաճման արհագութեառնը, յիշատակում է այն փաստը, որ այժմեանից իսկ պրօլետարական դասակարգերը իրանց սեփական տերիտորիայում բարդարականապէս կազմակերպութիւնը, լընթանում են նոյն զիտակից ուղղութեամբ և դէպի նոյն պարզ ու անշեղ նապատակը: Անդիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում և իտալիայում կազմակերպուած բանուորական կուսակցութիւնները գործում են նոյն ոգով և ձգումներով: «Նրանք պարունակում են իրանց մէջ յաջողութեան մի տարրը—թուերը, թուական մնեցութիւնը. սակայն թուերը միայն այն ժամանակ են ունենում ծանրակշիռ նշանակութիւն, երբ նրանք օդակուած են լինում մի ուրոյն միութեան մէջ և ընթանում են դէպի մի զիտակից նպատակ:» Հէնց ինը «Ինտերնացիոնալը» պէտք է դառնայ այդ շաղկապոյ ամուր օգակող միութիւնը բոլոր դատագատ ազգային կազմակերպութիւնների: Դրանից պարզ երկում է, որ «Ինտերնացիոնալի» հիմնադրութեամբ ոչ միայն չեն վերանում՝ բոլոր բաղաքակիրթ երկրների ազգային բանուորական կազմակերպութիւնները, այլ ընդհակառակը նրանք անբակտերի կապերով զուգորդուած են միջազգային նոյնի վրայ միջազգային կազմակերպութեամբ: Պրելետարիատի ազգային կազմակերպութիւնը լրացնուում, ամբողջացնուում է միջազգային կազմակերպութեամբ:

Այսուհետեւ «Զօնը» կանգ է առնում պրօլետարիատի արտաքին քաղաքականութեան վրայ: Հէնց նոյն ժամանակամիշ ջոցում տեղի ունեցող երկու արլւանհեղ դէպերի նկատմար «Ինտերնացիոնալի» արտայայտած դիրքը պարզ ապացոյց է, թէ ինչպիսի սկզբունքային վերաբերմունք ունի պրօլետարիատի միջազգային կազմակերպութիւնը դէպի արտաքին այս կամ այն քաղաքական խնդիրն ու երևոյթը: Այդ զէպքերն էին Անմերիկայի քաղաքացիական կուեը և լինական ապստամբութիւնը, բանի ճնշումները կովկասում: «Ինտերնացիոնալի» ձօնը կրակոտ բողոքներ է արձակում ֆէօլալ-բուրժուական կա-

ուսվարութիւնների աշդ բանակալական ճնշումների դէմ: «Անդիմագիր ճնշումներն ու յարձակումները այն բարբարոսական ոյժի — ասում է Զօնը—որի դլուխը նստած է Կետերըուրզ, իսկ ձեռքերը գործում են հերոպական բոլոր դիւանազիտական կարինեաներում, պարտաւորեցնում են բանուոր գասակարգերին, ճետամտելու միջազգային պետական արուեստի խոյնըրդողին, հոկելու կառավարութիւնների զիսլումատիական խաղերի վրայ, կարեոր դէսպահում նրանց դիմազրելու, իսկ անհնարին դէսպահում միանալու ճառարակական ցասմանն ու բողոքին և յայտարարելու բարոյականութեան ու իրաւունքի տարբական օրէնքները, որոնք կանոնաւորում են ինչպէս անհատների յարաբերութիւնները, այնպէս էլ կազմում են ազգերի փոխագարձ տորնչութեան ամենաբարձր օրէնքները: Այդ կազմի արտաքին քաղաքականութեան համար մղուալ կոիք կազմում է աշխատաւոր դասակարգերի ազատազրութեան ընդհանուր կոուի մի մասը» 48) (Խօսրգիրը մերն է):

Զօնի վիրոյիշեալ տողերից պարզ երեսում է, որ կազմակերպուած մարտնչող պլուկետարիատը ոչ միայն իր սկզբունքային գիրքն ու վերաբերմունքը պլուտի ունենայ գէպի բուրժուական պետութիւնների արտաքին քաղաքականութեան այս կամ այն երեսյթը, այլ և պիտի անպայման բողոքէ ու կուռէ կառավարութիւնների բոլոր բանակալական ձգուամերի ու ճնշումների գէմ, ուղղուած լինեն դբանք ցեղի, ազգի, կրօնի, սեռի թէ գասակարգի դէմ, այդ միւնոյն է:

Միջազգային բանուորական խմբակցութեան «Զօնեալ Հասցէն» վերջանում է նոյն մարտական կոչով, ինչպէս տարիներ առաջ «Կոմունիստական Մանիֆեստը»—«Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք»:

Բ. Իշխանեան

(Կը չարունակուի)

## ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՆՐԱ ԽՈՒՇՈՒՄԸ ՌՈՒՍԱՍ- ՏԱՆՈՒՄ

IV

Անցեալ համարում մենք ցոյց տուինք թէ որքան  
դանդաղ և անբաւարար են զործում կառավարութեան  
առաջարկած միջոցները այն է՝ Գիւղացիական Հողա-  
յին Բանկը և գաղթականութիւնը, և որ նրանք մենակ  
անկարող են լուծել այն լուրջ ու հասունացած հարցը,  
որը դրուած է այժմ ամբողջ Ռուսաստանի տուած և  
որի անունն է հողային հարց:

Եթէ ամբաւարար են այդ միջոցները գուցէ կարե-  
լի լինի հողային սովը գոհացնել, տալով գիւղացինե-  
րին պետական և թագաւորական տան հողերը:

Տեսնենք:

Իսկապէս պետական և թագաւորական տան հողե-  
րից քանակութիւնը Ռուսաստանում կազմում է մի այն-  
պիսի պատկառելի թիւ, որ ըստ երևոյթին, այդ հողերով  
կարելի կը լինէր, եթէ ոչ բոլորովին զոնէ մասամբ, լու-  
ծել հողային հարցը:

Բայց հարցը նրանում է, որ առաջի տեսակ հողե-  
րից որոնց քանակութիւնը միայն Եւրոպական Ռուսա-  
տանում հանում է 124 միլիոն դես., ահազին մասը,  
այն է 120 միլ. դես., կազմում են անտառներ, որոնք  
գտնուում են այնպիսի նահանգներում, որտեղ կլիմայի  
շնորհիւ անկարելի է որևէ գիւղատնահսական կուտառ-  
քայով զրագուել: Այս հողերը զիսաւորապէս զտնուում  
են Արխանգելսկի, Վոլոգդուկուլի, Վեստկայի և Կոստրոմ-  
այի նահանգներում:

Եթէ գուրս զցենք 6 հիւսիսային նահանգները, որոնց բաժին է ընկնում 167 միլ. դես., կը մնայ միայն 17 միլ. դես. միւս տեղերին, և այս վերջի թուփց էլ 13 միլ. դես. անտառներով է բռնուած։ Ուրեմն մնում է ընդհամենը 4,174,000 դես. հող, որը տէրութեան կողմից բահրայով է տրուած (օքրօպնայ տարբերակ) և որոնց մեծամասնութիւնը իսկապէս գտնուած է գիւղացիների ձեռքում։

Համարեանոյնը պէտք է առել և թագաւորական տան հողերի զերաբերեալ։ Այս վերջի տեսակ հողերի 7,367,000 դեսետինից  $4\frac{1}{2}$  միլ. նոյնպէս գտնուում էն 7 հիւսիսային նահանգներում, գլխաւորապէս Արխանգելսկի, Վոլոգոդսկի և Նովգորոդի։ Մնացած մօտ 3 միլիօնից համարեա մի միլ.՝ Սամարայի, 816,000 Սիմբիրսկի. հինգ նահանգներում 60—137 հազար դես., իսկ մնացած նահանգներում այդ հողերից կան շատ աննշան տարածութիւններ։

Այս հողերի մեծ մասը մշակում են նոյնպէս զիւղացիները։

Սյսպիսով ուրեմն պարզ է որ այս հողերն էլ չեն կարող գոհացնել զիւղացիներին։

Մնում է միակ աղբեւրը, որտեղից կարելի է վերցնել հող զիւղացիներին բաժանելու համար, այն է՝ մասնաւոր մարդկանց հողերը։

Ճիշտ է, բացի այս վերջի հողերին մուսաստանում կան ահաղին քանակութեամբ այսպէս կոչուած «անյարմար» հողեր, որոնք նոյնպէս կարող էին ծառայել այս նպատակին։ Սյսպէս օրինակ, կան միլիօնաւոր գեսեատիններ ճահիճային, աղային հողեր, անապատներ և այլն։

Այդ հողերը մի շարք արմատական բարենորոգումներից յետոյ կարելի է ընակեցնել զիւղացիներով։ Բայց այդ բոլորը ժամանակ և ահաղին դումար է պահանջում։ Մենք չենք կասկածում որ շուտ թէ ուշ մուսաստանը ստիպուած կը լինի անել այդ բարենորոգութիւն-

ները, բայց առ այժմս հողային հարցը բաւարար լուծելու համար մնում է միակ աղքիւրը՝ ժամնատոր տէրեւի հողերը:

Այսպէս, ուրեմն, ինչպէս ուզում էք շուռ ու մուռ եկէք, պէտք է գոք այն եղբակացութեան, որ առանց այդ հողերին անկարելի է զոհացում տալ զիւղացիների սակաւահողութեան:

Բայց այստեղ մեր տռաջ դնում են մի շարք մանր և խոշոր խոչնդուաներ:

Մի կողմից բիւրօկբատեան և հողատէրերն են վայնասուն բարձրացնում թէ այդպիսով ոտնակոխ է անւում մասնաւոր սեփականութեան իրաւունքի որբութիւնք:

Միւս կողմից մասնաւոր հողատիրութեան իդէօլոգները և վարձլան պաշտամնները ամեն ճիզ են թափում ապացուցանելու, որ գիւղացու աննպաստ դրութիւնը առաջ է զալիս ոչ թէ սակաւահողութիւնից, այլ գիւղատնտեսական տեխնիկայի ստոր աստիճանից, որ մտանաւոր սեփականութիւն կազմող մեծ կալուածքները գիւղացիների ձեռքն անցնելը սպառնում է Ռուսաստանին՝ ընդհանութիւն կուլտուրալի մակերեւոցթի անկումով և շնորհիւ գրա՝ գիւղատնտեսութեան տուած եկամուտի պակտունով և այն:

Բայց այս հակաճառութիւններից և ոչ մէկը անկեղծ ու հիմնաւոր չեն:

Եւ իսկապէս, ի՞նչ է նշանակում մասնաւոր սեփականութեան իրաւունքի որբութիւնը: Ո՞րահղից է բզիւում այդ որբութիւնը:

Միթէ կարող է մի իրաւունք սրբութիւն համարուել, երբ նա հիմնուած է ժողովրդի <sup>4/5-</sup>ի շահագործութեան վրայ: Ի՞նչպէս կարող է մի երկրում իրաւունք համարուել այն, ինչ որ հակառակ է ժողովուրդի մեծամասնութեան շահերին:

Եւ միթէ կառավարութիւնը և նոյն խոշոր հողատէրերը, որոնց ձեռքին է դանւում Ռուսաստանի կա-

ուավարութեան գեկը, ամեն քայլակոփում չեն խախտում ոչ միայն մասնաւոր սեփականութեան իրաւունքը, այլ մարդկացին իրաւունքների ամենապլիսաւորը—աղբելու իրաւունքը:

Եւ վերջապէս, կեանքի մէջ բոլոր երկրներում սեփականութեան խախտման շատ օրինակներ կան, երբ այդ պահանջել է ընդհանուրի շահը: Ի՞նչ է երկաթուղիների, հասարակական շինութիւնների, ճանապարհների և այլնի համար մասնաւոր հողերի պարտազիր անջառումը, եթէ ոչ մասնաւոր սեփականութեան իրաւունքի խախտումը:

Ի՞նչ է բանուորների համար աշխատանքի պարտազիր ժամանակ որոշելը, եթէ ոչ նոյն իրաւունքի խախտում:

Մասնաւոր սեփականութեան իրաւունքի բոնարուրում չէ՝ արդեօք ճորտերին ճորտութիւնից աղասելը և նրանց հողաբաժիններ առլը: Նոյն իրաւունքի խախտումը չէր հայոց եկեղեցիների գոյրերը զրաւելը: Այսպիսի օրինականեր կարելի է բերել շատ:

Ոչ, պարսներ, իրաւունքի խախտումը չէ որ ձեզ վախեցնում է. այլ ձեր սեփական կաշտի ինդիրը, ձեր շահերն է որ ձեզ սափառում է այդպիսի վայնասուն բարձրացնել և ծածկել ձեր անձնական շահերը իրաւունքի պաշտպանողների դիմակով:

Եթէ մասնաւոր հողաստէրերի գալուածքների փոքր թէ շատ մասի անջատումը պահանջում էն ընդհանուր ժողովուրդի շահերը և ներկայացնում է պետական անհրաժեշտութիւն (և թէ այդ այսպէս է մենք աշխատել ենք ցոյց տալ յօդուածի առաջի մտաերում): Խօնք չի կարող լինել մասնաւոր սեփականութեան իրաւունքերի խախտման մասին:

Ահա ինչ է տառւմ այդ առիթով մարդու և քաղաքացու իրաւունքների Դեկլարացիան: «Որովհեան սեփականութեան իրաւունքը անխախտելի է և սրբազն, ուստի ոչ ոք չի կարող դրկուել կը սեփականութիւնից ըսցի այն դէպքելից, երբ հասարակական օգտակար Ապրիլ, 1906.

օրինական կերպով հստատիցըրած, ակնյայտ կերպով պահանջումէ այդ, եւ ոչ այլ կերպ, բան նախագէռ արդար վարձատըրովինը վճարելու մայմանով»:

Աակաւահող զիւղացիների համար կալուածատիրական հողերի գնումը (Վակուո) պէտք է համարուի այն բացառութիւններից մէկը, որի մասին յիշուած է Դեկլարացիայմ \*): Հողի սեփականութեան իրաւունքը և, մասնաւորապէս, ըենտա (հասոյթ) տուող գոյքերի, սեփականութեան իրաւունքը, զբական իրաւունքի ինստիտուտն է, որը ժամանակի ընթացքում զարդացել ու փոխուել է և, հետեապէս, այսուհետեւ էլ կարող է զարգանալ և փոխուել:

Ինչ վերաբերում է զիւղատնտեսութեան տեխնիկայի ստոր աստիճանին և նրա նշանակութեան՝ այդ մասին մենք արդէն առիթ ենք ունեցել խօսելու և ապադայում ավելի մանրամասն պէտք է կանգ առնենք այդ հարցի վրայ:

Անցնենք այժմ այն հարցին թէ արդեօք կալուածատիրական հողերը զիւղացիների ձեռքը անցնելը չի վնասի ժողովրդական շահերին և չի ընկնիլ արդեօք զիւղատնտեսական կուլտուրայի ընդհանուր մակերեսոյթը:

Յայտնի է որ միջին թուսատանում կան հողատիրական կալուածքներ, որոնք թէ իրանց կազմով և թէ արդինաբերութիւնով անհամեմատ բարձր են կանգնած զիւղացիական տնտեսութիւններից:

Այդ կալուածքներում են զիւղաւորապէս շինուած զանազան խոշոր զիւղատնտեսական — արդինաբերական ձեռնարկութիւններ ինչպէս են՝ օղու, շաքարի և այլն գործարաններ:

Չե՞ն ոչչանալ արդեօք այդ ձեռնարկութիւնները, ընկնելով կոպիտ և տգէտ զիւղացու ձեռքը:

\* ) Այս հարցով աւելի մանրամասն հետաքրքրուողներին յանձնարարում ենք կարգալ Ա. Կառֆանի «Պոլյրայ զԵզда» № 8-ում տպուած «Право и принудительное отчуждение» վերնագրով յօդուածը:

Զէ որ ընդհանրապէս խոշոր կալուածներում տրնտեսութիւնը գրուած է աւելի լաւ քան գիւղացիների ժօմ:

Առաջինների բերքերը միջին թուով 200:0 աւելի բաճը են քան վերջիններինը: Ահա հարցեր, որոնք այնքան մտատանջութիւն և անհանգստութիւն են պատճառում «ժողովրդի շահերը պաշտպանող» գիտնականներին:

Այս երկու հարցերին էլ պատասխանում է աղքարային հարցում Ռուսաստանում ամենակոմպետենտ մասնագէտ պրոֆ. Ա. Չուպրովը<sup>1)</sup>:

Առաջինը, պէտք է նկատել որ լաւ կալուածների թիւը, որոնք կարող են իբրև օրինակ և ուսումնարան ծառայել, այնքան աննշան է Ռուսաստանում, որ կարելի է այդպիսիները նոյնիսկ մատերով համարել:

Այն ճակնդեղ—շաքարային պլանտացեանները, որոնք բերում են առհասարակ իբրև օրինակ այն բարերար աղգեցութեան, որ ունեն խոշոր կալուածները գիւղացիների բարօրութեան վրայ, կազմում են ընդամենը 550,000 դես., այսինքը ընդամենը մասնաւոր հոգատերութեան կէս առկուաբ:

Այնուհետև յարգելի պրոֆ. բերում է մի շարք թուեր, որոնցով ցոյց է տալիս որ խոշոր կալուածատէրերը իրանց հողերի աւելիքիչ 0/0-ն են վարում քան գիւղացիք, որ սեփական—անհատական հողերի  $1/3$  մասը մշակուում է նոյն «մուժիկի» գործիքներով և եղներով,  $28\%$  զբանուում է գիւղացիների մօտ կապալով և միայն  $39\%$  մըշակուում է հողատէրերի սեփական միջոցներով:

Մի շարք դատողութիւններից և թուերից յետոյ յարգելի գիտնականներ գալիս է այն եղրակացութեան, որ սեփականատիրական հողերը գիւղացիների ձեռքը անցնելով, ոչ միայն չի պակասի երկրի ընդհանուր ե-

1) По поводу аграрного вопроса, о Аграрной реформѣ и ея вѣроятное вліяніе на сельско-хозяйственное производство.

կամուտը, այլ լնդհակառակը զգալի կերպով կ'աւելանայ:

Իսկ ինչ վերաբերում է այն հարցին թէ կարող կը լինեն արգեօք զիւղացիները տանել այնպիսի խոշոր ձեռնարկութիւններ, ինչպէս են ճակնդեղ—շաքարային, օղի քաշելու և այն արդիւնարերութիւնները, այդ հարցին ել կարելի է պատասխանել զրական կերպով:

Ի հարկէ այժմուայ պայմաններում, ոռու զիւղացու այժմուայ կուլտուրական զրութեան մէջ զժուար է ստեղծել այլպիսի համայնական խոշոր ձեռնարկութիւններ: Բայց այդ միայն ժամանակի հարց է:

Արտասահմանի օրինակը, որտեղ հէնց այժմ՝ կան ահապին քանակութեամբ խոշոր ըկէրակցութիւններ (կօսպիրացիաներ), որոնց տարեկան առևտուրը հասնում է միլիոնների, ցոյց է տալիս որ այսուեղ անհնարին բան չկայ:

Նոյնիսկ Ռուսաստանում ել կան խոշոր պահերադունական և իւղ պատրաստելու «արտելներ»:

Այսպիսով, ուրեմն, ջրւում է «ժողովրդի շահեր պաշտպանող» կեղծաւորների այն բոլոր առարկութիւնները, որ նըանք բերում են ցոյց տալու համար մտսնաւոր սեփականութիւն կազմող հողերի անջատման բոլոր վնասակարութիւններ և անկարելիութիւնը:

Այսքանով մենք կը բաւականաք ազրարային հարցը վճռել ցանկացոյների այն աջակողմեան կուսակցութիւնների վիրաբերեալ, որոնց նկատմամբ կարելի է գործադրել այն ասածը թէ այդ մարդիկ ուզում են որ «գայլերն ել կուշտ լինեն, ոչխարներն ել անջնաս»:

Միւս անդամ մենք կանդ կ'առնենք ձախսակողմեան կուսակցութիւնների դէպի հողային հարցը բանած դիլքերի պարզաբնութեան վրայ:

Եղուանու Սարգսեանց

## ՆՈՐ ԱՏԱՅԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Զաւախեցի, Պատկերներ, 1 գրքոյկ. Թիֆլիս, 1905, գ. 60 կ.
- 2) Բժ. Ա. Բուգուղիման, Նուէր հայ վարժապետին, Ս.-Պետ. 1906, գ. 20 կ.
- 3) Դրամնի բառարան (անդլիերէն—հայերէն), պատրաստեց Յովհ. Յակոբեան, Պոստն, 1905.
- 4) Ի. Ա. Երան, Նոր զրաբանի բառարան կամ գրամանիդ ընկերը, անդլիերէնէ հայերէն, ամերիկահայուն համար պատրաստուած:
- 5) Դոկտոր Կ. Յ. Փաշայեան—խան Բնիքարձակ դպրոցական առողջապահութիւն, պատկերազրդ, ուսուցիչների, աշակերտների և ճնողների համար, Աղէքսանդրիա, 1905: (679 էջ). բաժանորդազրութեամբ գինն է 2 բուրլի: Տը-պազրութիւնը վերջացրած է:
- 6) Գառպարեանց, Օժանդակիչ ձեռնարկ Մայրէնի լեզուի հայերէն ուղիղ կարգալ ուսուցանելու, Թիֆլիս, 1906 թ., գ. 7 կոպ.:

## ՁՆԵՐԻ ՏՅԱԺՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՏԵՆԱԿՈՅՑՈՒԹԻՒՆ

Բժ. Ա. Բագրայեան, «Եռուե հայ վարժապետին» Ս.-Պետերբուրգ, 1906,  
գ. 20 կ.

Բժ. Ա. Բուգուղիմանի այդ բրօշիւրն էլ, ինչպէս նրացարդ հրատարակած 35 գրքոյկները, նոյն պակասութիւնն ունի—շատուխօսութիւնը և բուն առարկայից դուրս զանազան շեղումները, իրանց վարդապետական-քարոզչական գեղումներով: Դոկտոր Կ. Փաշայեանի հոյակապ «Շնորհարձակ դպրոցական առողջապահութիւն»-ից յետոյ յամենայն գէպս պ. Բուգուղիմանի այս բրօշիւրը գալիս է աւելի քիչ բան տալու դպրոցական առողջապահութիւնից հայ վարժապետին: Միակ առաւելութիւնը Փաշայեանի գրքից՝ էժանութիւնն է, Փաշայեանի մօտ 700 երես ունեցող գիրքը արժէ 2 բուրլի, իսկ Բուգուղիմանի 95 էջանոց բրօշիւրի գինն է 20 կոպ.: Ով միջոց չունի ձեռք լերիլու Փաշայեանի հրատարակութիւնը՝ օգուտ կը ստանայ և այս աւելի համառօտ գրքոյկից:

ԴԵՌԱՀԱՍՆԵՐՆ ԻՆՉ ԿԱՐԴԱՆ \*

(Յ. Տէր-Միլաքեանի)

222. Ծապոնիս կամ ծազող արեգակի երկիրը Շբայդէրի: Գ. հանրաժամատչելի գրադարան Հ. Առաքելեանցի, Թփլս. 1904, փոքրադիր 116 եր., մի պատկերով, գինը 25 կ.

Մեծ հետաքրքրութեամբ կարդացում է, համարեա բուլոր նիւթերը նորութիւններ են:

223. «Մահմեդ»: Կազմեց Ե. Թ. հրատ. Յովհ. Արամեանցի. Ալքանդրպլ. 1901 թ. միջակ 35 եր. գինը 7 կոպ.

Մահմեդի կեանքը հետաքրքրութեամբ կը կարդացուի մանաւանդ հիմայ, երբ մենք նորից անմիջական ընդհարում ունեցանք մահմեդականների հետ:

224. «Մահմեդը» Վաշինգտոն Իրվինգի: Անգլիերէնից թրգմ. Փ. Վարդանեանց: Թփլս. 1894. միջակ 364 եր. գինը...

Շատ հետաքրքրական ու մանրամասն նկարագրութիւն է Մահմեդի կեանքի ու գործունէութեան:

225. «Միծ տօն» Բ. Պէսկովի: Թրգմ. սուս., հրտ. տիկ. Զարէլ, ՍԲԳ. 1904, փոքրադիր 72 եր. գինը 10 կոպ.

«Մեր էժանագին գրադարանի» №4.

Խոս գիւղացիների կեանքից է: Քաղուորները կալումածատիրոջ ընդդիմանում, գործակուլ են անում, օրավարձերնին աւելացնել են տալիս: Տէրտէրի բանուորն ու բանուորուհին էլ հետեւում են նրանց օրինակին: Բելլիտրիստական տեսակէտով միջակ գրուածք է:

226. Մանկան մօտ և վերջին խօսք Մ. Սիրաօվի №7 «Մեր էժանագին գրադարանի» Պտրգ, 1905. հրատ. տ. Զարէլի. փոքրադիր 108 եր., գինը 6 կոպ.

«Մանկան մօտ» գրուածքը մի բանուորի կեանքից է, որ բարկութեան ժամանակ սպանել էր իր հօրը: Տաժանակիր աշ-

խատանքի վայրում, մի իտալական կղզիի վրայ՝ այս անբաղդ երիտասարդը սիրով կապւում է բանտի վերակացուի փոքրիկ, հիւանդու մանկան հետ, որի մահը տեսնելով այլ ևս ապրիլ չի կարողանում, փախչում է ծովը նետուելու, բայց գիշերը անցնում է: Մրտառուչ է:

«Կերջին խօսքը»: Կլողը զողութիւն է արել իր անբաղդ ընտանիքը առանց հացի չթողնելու համար և 5 տարուայ տաժանակիր աշխատանքների է դատապարտուել: Նա բանտի արհեստանոցի բանուորների շրջանում մեծ հեղինակութիւն է ձեռք բերում: Որովհետեւ Կլողին տանջում էր բաղը (նա իր բաժնից բաւարարութիւն չէր ստանում), բանուորներից մէկը միշտ տալիս էր նրան, իր բաժնի կէսը: Բանտի կառավարիչը, որ նախանձում էր նրան հեղինակութիւնը ունենալուն սկատճառով, զրկում է Կլողին այս բանից և այդ պատահու ներկայութիւնից: Կլողը շատ ընդդիմանում է, խնդրում է կառավարչին վերցնել այս անսիրտ կարգադրութիւնը, ժամանակ է նըշանակում նրան մտածելու, բայց նրա անդրդուելի խստապնդութիւնը տեսնելով, վճռում է սպանել այդ դաժան մարդուն և կատարում է այդ: Վերջը իր վրու էլ է ձեռք վերցնում, չի յանջողւում, մահուան է դատապարտում: Տպաւորիչ է:

227. ՄՇեծ մարդկանց մայրերը Մ. Բլոկի, թրդմ. Յով. Արարաջեանցի, 1896 թ. Ալբաննդրպլ. 197 միջակ եր. գինը 50 կու.

Այս կենսագրութիւնների մեծ մասը գէշ չէ, մնացածը թռուցիկ է:

Այս գիրքը թէն աւելի զարգացած ծնողների համար կարող էր ընթերցանութեան նիւթ լինել, բայց դեռհասներն էլ կարող են շատ խրախուսական օրինակներ առնել:

228. Միսիօնար նայր Դասինան Վայստերի կեանքը. Թֆլս. 1896. 38 միջ. եր. գինը 10 կու.

Շատ հետաքրքրական կենսագրութիւն է մի վերին աստիճանի անձնազո՞ն կրօնաւորի, որ Սանդվիչեան կղզիներում գիտակցարար զո՞ն է գնում տարագիր բորոտներին ծառայելով: Վերջն ինքն էլ վարակւում է այդ սարսափելի ախտից և կաղմալու ծուելով սոսկալի տանջանքներ կրելուց յետոյ մեռնում է:

Շատ խոր տպաւորութիւն է գործում այս անօրինակ անձնազո՞նութիւնը:

229. Մեսրոպ Մաշտոց. Կազմ. Ե. Թ. 1 պատկերով: Հրատ. Յովհ. Արամեանցի: Ալբաննդրպլ. 1901. 32 միջ. եր. գինը 5 կու.

Ամփոփի ու լաւ մշակուած կենսագրութիւն է տառերի գիւ-

տի հետ կապուած, որի մասին տալիս է կարեռագոյն տեղեւ կուժիւնները:

230. Մ'ի բանի օր Արցախում եւ Սիևիքում: (Հայ տուրիստի յիշովութիւններից): Թփլս. 1905. I. Սարզսեանի: 88 միջ. եր., գինը 20 կոտ.

Մեր հայրենիքի փառաւոր անցեալ ունեցող այս վայրերի ու նրանց ժողովրդի նկարազրութիւնը հետաքրքրութեամբ կարգացում է, մանաւանդ այն էջերը որոնց մէջ արծածւու՞ն այն անցեալից սիրելի վերյուններ, նամանաւանդ այս օրերում ուշագրաւ է այս երկերը իր քաջարի գաւակներով:

231. Մտաւոր, Փիզիքական ու բարոյական ինքնակրութիւնն Զօն Ստիւարտ Բլեկփի: Թարգմ. Գր. Շահրուգաղեանցի: Երկր. տպ. Թփլս. 1904. 116 մեծդ. եր. գինը 60 կոտ:

Հանրամատչելի «խորհուրդներ են այն երիտասարդներն», որոնք որ կեանքի ասպարէզը մտնելով՝ ցանկանում են լուրջ կերպով պատրաստուել ուսումնական հասարական գործունէութեան համար,»—ասում է հեղինակը: Մեր գրականութեան մէջ քիչ կան այսպիսի զրբեր:

232. Մլլիլիլլիլլի ընծան Ա. Դոդէի: Թարգմ. Նիկ. Տէր Աւետիքեանի: Շուշի, 1881.

Ձբանսիայի ոգին բարիքներ է խաստանում հորտծնին: Հոգսերից ուժապասուած մայրը այդ առածներից բան չէ հասկանում, իսկ նորածինը հասկանում է:

Թէև ընտիր զրաւածք է, սակայն խորհուրդը պարզ չէ:

233. Յուլայի վերջին զիշերը կ. Հերհարտի: Թարգմ. Խաչ. քհյ. Փահինացի: Թփլս. 1901. 26 միջ. եր. գինը...

Վերին տատիճանի խոր տապաւորութիւն է զործում մատնիչ աշակերտի կեանիրի վերջին ժամերի այս նկարագլութիւնը:

234. Յունատանիի անցեալից պատմական տեսութիւն. Ե. Թոփչեանի: Պորդ. 1898, գինը 18 կոտ.

Ամփոփ ու հետարքբական գրուածք է:

235. Նինիի նամնը: Հեղ. (?) գիտը. Փբամնսերէնից: ոռւս. թարգմ. Յար. Եսայեանի: Թփլս. 1904. 16 փրդ. եր. գինը 3 կոտ.

Խեղճ բանուորի կինը թորախտից բռնուած՝ հիւանդանոցում ոլառկած տառապում է: Բժիշկը խորհուրդ է տալիս նրան հարաւ տանել: Բանուորը դիմում է իր մշտ նախկին տիբունուն, որ մեծ բարեգործութիւններ էր արած եղել: Սա նույս մերժում է հազար ֆրանկ մի այսպիսի բանի տալը, առա

յիշելով որ իր փեսացուն էլ թոքախտից էր գնացել, խղճա-  
հարւում է և օգնում:

Աւելի քարգացածների համար կարելի էր նշանակել:

236. Նոր լոյս: Մանր պատմուածքներ: Գր. քնչ. Պետրո-  
վի: Թարգմ. ոռուս., Հրատ. տիկ. Զարելի: Բրդ. 180 հր.  
Փրբդ. «Մեր էժանապին զրագալրանի» №5, գինը 10 կոպ.

Աւելի քարոզչական տանով գրուած պատմուածքներ են  
ժողովրդի թշուառ կեանքից և ազգու կոչ օգնութեան: Համո-  
զիչ օրինակներ է տալիս փոքր միջոցներով արդիւնք առաջա-  
ցնելու համար:

Տպաւորիչ են:

237. Նոր կալանդ չէր, պատկերազարդ հաւաքածոյ Հ.  
Կարազեա Աքրիանի Միկթ. ուխտէն: Վնտկ. 1891, 23 մեծ.  
եր. գին...

2-8 Երեսներից բաղկացած կենսազրական ուրուագծեր  
են, մարին ու սրտին համարեա թէ ոչինչ չոռուազ: Պատկերնե-  
րը շատ անհաւասար արժէրի են, շատերը անտանելի: Բնտր-  
ուած անձերն էլ շատ անհաւասար արժանաւորութեան տէր են,  
որոնք կարող են զեռահամների մէջ հարցասիրութեան առա-  
ջացնել:

238. Ռուելի նորոգումը. 10.002 գիշերների հեքիախներից  
Ֆէլիքս Դիկմէլի: Թրգմ. օք. Ե. Աղանեանցի: Թֆլո. 1904, 10  
միջ. եր. գինը 5 կոպ.

Սուլթանի միծ պաշտօնեաներից մէկը, որ ոչ խելք ունէր  
և ոչ էլ խիղճ, զիմել էր մի բժիշկի, որ նրա ուղեղը հանել, նո-  
րոգել էր և ութիւ տարի սպասել տիրոջը: Տէրը այդքան ժա-  
մանակ ասանց ուղեղի ծառայելուց յետոյ երբ հրաժարեցնելում  
է, նոր դալիս է իր ուղեղի ետելց, պահանջ զգալով այս ու-  
նենալու: Իր նորոգուած ուղեղին տիրանալով նա տեսնում է,  
որ իր մէջ երկու բան աւելացել են՝ խելք ու խիղճ:

Հետաքրքրութիւն շարժում է:

239. Ռևման սէր Ա. Լէշկէրի: «Մեր էժանապին զրագու-  
րանը» № 6. Թարգմ. ոռուս. Պտրդ. 1905. փոքրդ. 60 հր. գինը  
7 կոպ: Հրատ. տիկ. Զարէլի:

Մի «մուժիկի» կեանքից պարզ պատմուածք է, նա միծ  
նեղութիւններ կրելով ու հալսածանքների ենթարկուելով վեր-  
ջապէս զրագէտ է դասնում և տալած գիւղական ուսուցիչ: Խեղ-  
ճի կրած տառապանքները կարեկցութիւն են առաջացնում  
ժարդում մէջ:

Արժէ կարգալ, խրատական է շատ:

240. Ուսկովկներ Եժ. Տ. սուս. թարգմ. Պտրդ. 1895. 232  
միջ. եր. գինը 35 կոպ.

1593—1606 տևող ազատագրական պատերազմի միջնադարում է նկարագրում: Ուսկովկները (սերբեր) թիւրքական գաղանութեանց դէմ ասպամմելով քանն այնպէս էին տարել, որ Թերմանիան ստիպուեց նոյնպէս պատերազմ հրատարակել և ուսկովկների օգնութեանը կարօտել:

Կարուած հետաքրքրութեամբ կաբացւում է:

241. Ուրբնանեցի մանուկը Ոյդի զրոյցներից: Թ. Հ. Հ. Հ.  
Ը. 1895, գին. 10 կոպ.

Աշխարհանոչակ նկարիչ Ռաֆայէլի մանկական կետնքից է: Եօթ տարեկան Ռ. նկարչական հրագ է գործում լնկերական սիրով ոգեստուելով: Անհաւատալի են թւում նրան վերագրուած սրամիտ խօսքերն ու գործերը—այնքան սքանչելի տպաւորութիւն է գործում այդ ամենը:

242. Պետրոս Շանչիանց Մելք. եղ. Մուրադեանցի: Թ. Փ. 1896. գինը 50 կոպ.

Մեր առաջաւոր գործիչներից մէկի բաւականին հետաքրքրական կենսագրութիւնն է:

243. Պետրոս Դուլինան: Կենսագրական ու քննադատական ուսումնասիրութիւն: Թ. Փ. 1894. գինը 50 կոպ.

Աւելի հասունացածներին վերապահել այս ուշագրութեան արժանի գրուածքը:

244. Պետրոս Արսա կամ լսանձուած քար: \*) Կարմէն Սիլվայի: Թ. Բ. 1888. 16 փքրդ. եր. գինը 5 կոպ.

Գեղանի Պառնա գեղջկուհին սիրում է երիտասարդ Տաննային: Թէս Տ. պատերազմ է գնում, և ակայն նրա նշանածը տիսուր չէ, սիրուր հայրենասիրութեամբ տոգորուած լինելով: Բայց երբ որ երիտասարդը վախչում է պատերազմի գաշտից ու դալիս նշանածի մօտ, սա անարդանքով զժրում է նրա սէրը: Տ. հարկադրուում է վերապահալ պատերազմի դաշտը: Նրա նշանած Պառնան նրան գտնում է ընկածների մէջ քթից ու աչքից զրկուած, փայփայանքով տուն է բեկում նրան և հիմա պսակւում հետը:

Վերին աստիճանի սրտառուչ է:

\*) Մենք ունենք նաև մի այլ թարգմանութիւն՝ Այլուած աղասածը, որ միացած է «Ճիպեան ժայռերը» սիրուն գրուածքի հետ նոյն հեղինակի «Արկու հէքիաթ» անունով զրքում: Թ. Բ. Թ. Հ. Հ. Ը. 1894 գինը 10 կոպ.

245. Ջորջ Ստեփինոսն եւ նրայ կենսագրութիւնը: Աշխատ. Օդէսայի հայ ուսանողութիւն: Թֆլո. 1890. գինը 1 ռ.

Անշուշտ շատ ճետաքրքրական է այս գիրքը, բայց այս հանձարաւոր հնարագէտի մեծ գիւտերն աւելի կ'ապշեցնեն քան թէ կը խրախուսեն գեռահաս ընթերցողին. նրա աքնութիւնները հարեանցի են նկարագրուած:

246. Ռայնա Դէորզենայի ինքնակենսագրութիւնը: Կրճատ. թարգմ. ոռւս: Մոսկվա, 1891.

Մի վարժուհի պատմում է բուլղարների տանջանքի ու արըստամբութիւնն մի միջնադէպ:

Տպաւորութիւնը թոյլ է:

247. Ս. Սահակ Պարթեւ. Արտատպ. «Լուժայից»: Թֆլո. 1902, 42 մեծդ. եր. գինը 25 կոպ.

Մեր պատմաբաններից քաղուած նիւթի կոմպիլեացիա է: Արժէ կարդալ:

248. Սահակ Պարթեւ. Կազմ. Ե. Թ. 1 պատկերով: Հետ. Յվէ. Արամեանցի: Պարգ. 1902. 24 մեծդ. եր. գինը...

Ամփոփ և մշակուած կենսագրութիւն է:

249. Սոլրաստէս: Հեղ (?). թարգմ. Թելլի Ստեփանեանցի: Թ. Հ. Հ. Ը. 1889. 70 միջ. եր. գինը...

Մեծ իմաստասէրի գործնական իմաստութիւնները զբուցատրաբար պարզաբանուած են ժողովրդի համար բաւականին յաջող կերպով:

Բնտիր է:

250. Ստեփաննոս Պալասանեան, Ի. Յարութիւնեանի: Թֆլո. 1895. 33 միջ. եր. գինը 25 կոպ.

Պալասանեանի կեանքի ու դրական ուղղութեան համառուստ, բայց զգացուած նկարագրութիւնն է:

251. Սեւ Հացեր, Հեղ (?). թարգմ. օր. Ն. Աղանեանցի:

Մի մեծատունի կեանքից է, որ բարեգործութիւններ էր անում առ ի ցոյց մարդկան: Մի անդամ Գարրիէլ հրեշտակապետը երեւում է նրան երազի մէջ, բանում է այլ արդարութեան կշիռքը և նրան ցոյց տալիս, թէ ինչպէս պէտք է գործէր, որպէս զի կշեռքի նժամը բարւոյ կողմը թերուէր: Այնուհետեւ միայն այս մեծատունը փոխում է իր կեանքի ընթացքը:

Տպաւորիչ է:

252. Վարդապոյն ամնզ Ժորժ Սահակ: Թարգմ. Ե. Լալահանցի: Թֆլո. 1882. 96 փքրդ. եր.

Հեղինակը փորրիկ աղջկան այլարամնօրէն հասկացնում

է, որ աշխատութիւնը կարող է մարդուս ազատ պահել կեանքի փոթորիկներից:

Թէև գեղեցիկ զրուածք է, գրաւիչ պատկերներ ունի, սակայն այդ փորբիկի հարցասիրութեանն ու երեակայութեանը շատ ոյժ է վերագրուում:

Վերապահել աւելի հասունացած օրիորդներին:

253. Վարժազրութիւն Յարութիւն Ամիրայի Փեղմեան, Ե. Պ.-ի. Թէոդոսիա, 1862.

Այս ականաւոր հայ գործիչի օրինակելի կեանքից բաւականին հետաքրքրական դէպքեր են բիուած:

Արժէ կարդալ:

254. Վերադաձած յանցաւորը Զ. Դիկէնսի: Թալում. Արշակունյացի, Թֆլու, 1896:

Այս թշուառ կեանքի սկիզբը ծանը, իսկ վերջը սարսափելի տպաւորութիւն է գործում:

255. Վէրք Հայաստանի, ողբ հայրենասիրի: Պատմական վէպ Խաչատուք Արտիկանցի: Մոսկուա 1897. այլ զրուածքների համ 537 մեծութ, եր, գինը...

Շատ ընտիր է:

256. Վիլիելմ Տէլլ Վ. Օստրովսկու: Հ-լու տոլ., Սպրդ. 1904, 56 միջ. եր, գինը 10 կ.

Պատմուած է բաւականին լու: Արժէ կարդալ:

257. Վիլիելմ Տէլլ Լամարթինի: Թարգմ. Զ. Աստրելեանցի. №39 Հրատ. «Ադրիւց»—«Ջարագի»: Թֆլու, 1891. 48 միջ. եր, գինը 15 կոպ.

Շվեյցարեայի տղատութեան ապաւորիչ նկարագիրն է: Թէլի նշան առնելու տեսիլը տմրողցովին առնուած է Շիլէրից: Տես, № 171. Շիլէրի վիլհելմ Տէլլը:

258. Վիշապ և այլ զբոյցներ Վ. Փափազեանցի: Թֆլու. 1904. 32 փրբդ. եր, գինը 5 կոպ.

1. «Վիշապը» կլանելով զիւղի կիսուաբեր առուն հետպհետէտէ ցամքեցրեց երկիրը: Միայն մի խնճիթ համարձակութիւն նրա վրայ զնալ, բայց իզուր, որովհետեւ համագիւղացիք ծագրեցին նրան ու սարսափանար հղան: Վերջը մի այլ հոկայի էր վերապահուած հրէշին ընկճելը: 2. «Կորսուած արդարութիւն» զրոյցի մէջ պատմուում է, որ արգարութիւնը երկրից վերացաւ և ոչ ուժով ոչ էլ հարստութեամբ կարողացան մարդիկ ձեռք ձգել այն: Վերջը միայն թափուող արցունքներից բողոք բարձաւ և սա արդարութիւնը վերադարձրեց: 3. «Ըմբոսի մահը» զրոյցի մէջ մի հոր ծառ հետանալով իրան շրջապատող

ճահճային ծառերից՝ ու բոյսերից՝ վճռում է սարը բարձրանալ,  
աղաս ապրել, բայց պատճում է հողմերից ու կարկտից:

Սյա վերջին զրոյցը անդնական բան է և այդ պատճառով  
միւս երկուսի արժեքը չունի:

259. Ռաֆֆի, Նրա կեանքը և զրական գործունէութիւնը:  
(Համառօս հանրաժառշելի տեսութիւն): Յարութ. Եսայ-  
Հանի: Թփլ. 1993. 24 փբրգ. եր. գինը 10 կոպ.

Բաւականին լաւ ժշտկուած, ամփոփ կենսազրութիւն է:  
Արժե կարգալ:

260. Փայտաշչն խրճիթից մինչիւ ավիատակ տունը: Փո-  
խազր. Ն. Աւետիքիանի: Հեղ (?) 1884. 130 մհծդ. եր:

Անգլիական ու Ամերիկական միւս երեկի անձերի պէս  
Զորջ Հարգիլդն էլ տալշեցնում է իր արտաքոյ կարգի ընդու-  
նակութիւններով, տոկունութեամբ ու անձնութեամբ: Շատ  
զարմանալի բան է, որ Հ. իր 11 արքեկան հասակից եղրօր  
հետ վար ու ցանքով են պարապելիս եղել: Հ. աշակելու ժա-  
մանակը արհեստով եր իր ապրուստը հայթայթում:

Բաւականին լաւ փոխադրութիւն է: Տպաւորութիւնը  
գեղեցիկ:

261. Փարոսի վրայ Հ. Անկեիչի, Թարգմ. ուսո. Մոռկ-  
ւա, 1892. 44 միջ. եր. գինը 10 կոպ.

Շատ ազգերի ազատութեան պատերազմներին անձնուի-  
րութեամբ մասնակցած և Ամերիկայում վերաբնակուած ոի ծե-  
րունի լինացու հայրենասիրական զգացմունքների վերստին  
բորբոքման խանդալից նկարագրութիւնն է:

262. Փորրիկ թմրկանարր, զրոյց եզմօգո դէ Ամիչիսի:  
Թարգմ (?) Թփլ. 1899. 14 միջ. եր. գինը 3 կոպ.

Աւարո—իտալական պատերազմից ոի էպէզոդ է: Տաս-  
նուչորս տարեկան փորբիկ թմրկանարը մեծ վտանգի ենթաբ-  
կուելով ու վէրք ստանալով շարունակում է՝ առանց բովէ  
կորցնելու՝ վաղել հայրենի պաշտուած զօրքը վտանգից փրկե-  
լու համար և յաջողութեամբ պսակում է այս փորրիկ հայլե-  
նասէրի մհծագործութիւնը:

Խոր է տպաւորութիւնը:

263. Օրլէանի կոյսը: Բնազրից ամփոփից Ս. Թառայիան  
Թփլ. 1901. 50 փբրգ. եր.

Բնազրից թարգմանուած հատուածներն ու փոխազրուած-  
ները խառն են: Գէշ չէ այս ձեզ: Հետաքրքրութեամբ կը կար-  
գացուի:

## II

Բնապատկան, բնագիտական եւ առողջապահական գրուած-ընկը:

6—8 տարեկանների համար:

264. Ռուբէնի զբաղմունը: Բոստրօմի: Մասն Ա. Թար-դմ. սուս. Պտբ, 1904. 82 փետք. եր. գինը 25 կոպ.

Փոքրիկ պատկերազարդ նկարագրութիւններ են ընտանի ու մասսամբ վայրենի կենդանիների կեանքի ու կաղմուածքների: Սկիզբը հետաքրքրական կը լինի վեց տարեկանների համար, մէջերքից՝ 7—8 տարեկանների համար:

7—10 տարեկանների համար:

265. Ջուր Զ. Գրիգորեանցի: 1893. գինը 35 կոպ.

Տասը տարեկաններից զարգացածները կարող են հետաքր-քրուել ու հասկանալ ջրի կրած ֆիզիքական փոփոխութիւնները և այդ երևոյթներին վերաբերեալ փորձերը:

Արժէ կարդալ:

10—12 տարեկանների համար:

266. Աներենյիթ հողազործ Զ. Դարվինի: Գինը 7 կոպ.

Գրաւիչ եղանակով ցոյց է տրուած անձրենի ճիճուկի մեծ դերը հողի արգաւանդութեան համար:

267. Անօրեւ ու ծիմն Ժիվատովսկու: Թարգմ. Ռ. Մ. Մ. Պտբ. 1896. գինը 10 կոպ.

Հետաքրքրական է, բայց նիւթի մշտկումը անկատար է:

268. Նրկրաշարժ եւ հրարդիսային լիոնիր Լուսկնիչի: Թարգմ. Գիւնազարեանցի: 1897. գինը 15 կոպ.

Ամբողջովին հետաքրքրութեամբ կը կարդացուի:

269. Զարմնաւալի որդ Ս. Կուզնեցովայի: Թարգմ. օր. Ն. Ղուլանեանցի: Թֆլս. 1896. 29 միջ. եր. պատկերազարդ: Գինը 10 կոպ.

Շերամի կազմուածքի, զարգացման ու կեանքի այլ երեւոյթները նկարագրուած են հետաքրքրական ձեռլ:

Արժէ կարդալ:

270. Շնուանի կենդանիներ Ա. Զիլինկարեանցի և Տ. Ռաշմաճեանցի: Ալբանդրալ. 1897. գինը 5 կոպ.

Այս կենդանիների մասին պատմածները ոչ այնքան սկզբան  
քնները, որքան մէջիրին ու վերջերը հետաքրքրական են գառ-  
նում:

271. Թուղթն ու հին զրբեր: Թարգմ. Տ. Կոստանեանցի:  
Հեղ (?) Թֆլս. 1894. 38 փերգ. եր. գինը 5 կոպ.

Իսկապէս թուղթ շինելու մասին միայն 5 եր. է գրուած:  
Մնացած նշանագրերի, պատիրոսի, պերգամենտի մասին է:  
Գէշ չէ:

272. Մագնիս ի. Վօրօնովայի—նուէր մանուկներին:  
Թրգմ. ոռւս. Թֆլս. 1901. 42 մեծդ. եր. գինը 12 կոպ.

Մագնիսի մասին խսկապէս քիչ խօսք կայ: Աւելի պատ-  
մուում է երկու աշակերտների թշնամական յարաբերութեանց  
մասին և ապա բերեկամանալու, երբ մինը գտնում է միւսի կո-  
բած մագնիսը:

Ոչ բէլիարիստական է և ոչ էլ բուճն բնագիտական: Ար-  
ժէք չունի:

273. Մեղուներ Ա. Զիլինկարեանցի և Տ. Թաշմաճեանց-  
ի: Ալբանդրալ. 1898. գինը 10 կոպ.

Սկզբից մինչև վերջը մեծ ուշադրութեամբ կը կար-  
գացուի:

274. Ոզնիներ Կուկլենի—նուէր մանուկներին: Թարգմ.  
ոռւս. Թֆլս. 1901. 24 մեծդ. եր. գինը 8 կոպ.

Ոզնիների կեանքից պատկերազարդ նկարագրութիւն է:  
Պատկերները յաջող են: Գէշ չէ:

275. Տարերը ընկալան զիտութեանց Հեօքուինի: Թար-  
գմ. Ի. Յարութիւնեանցի: Թֆլս. 1894.

Ամենահետաքրքրական երևոյթներն ընտրովի բացա-  
արում է գեղեցիկ գրաւիչ մեթոդով:

276. Տարութիւն և ող Ռուբէն Մելիք-Մուսեանցի:  
Թարգմ. Պարդ. 1895. 40 եր. պատկերազարդ. գինը 12 կոպ.

Հետաքրքրական է, արժէ կարդալ:

277. Դիւղում՝ Երմօլովայի: Թրգմ. ոռւս. Թֆլս 1898. 81  
եր. գինը 20 կոպ. «Նուէր մանուկներին»:

Կենդանիների կեանքից զանազան հատուածներ են ար-  
ժէքաւոր կամ միջակ արժէքի: Պատկերները գէշ չեն:

278. Ջրի կաթիլի սկատմութիւնը Դրուբէի: Հրտա. Մո-  
սկւայի Հ. Ա. Ֆ. Բ. 1881. Երկու այլ գրքոյների հետ 31 եր.

Ջրի կրած փոփոխութեաների նկարագրութիւնն հետա-  
քրքրական է:

## 12—14 տարեկանների նամակ:

279. Արհեգանկի եւ լուսնի խառարաւմը: Վ., Լուսկեիչի, Յպատկելով: Թֆլո, 1892, 32 միջ, եր, գինը 5 կոպ.

Արեգակի և լուսնի խառարաւմն, Երկրի, երկնային մարմինների ծագման մասին համառօտ տեղեկութիւններ են:

Արժէ կարդար:

280. Աստղալից երկնը եւ երկրազոնով Մակ, Զոշկեանի: Թֆլո, 1891, 16 միջ, եր, գինը...

Կարող է հետաքրքրութիւն շարժել:

281. Բնութեան երկու մեծ թագաւորութիւնները Վ., Լուսկեիչի: Փոխդր, Յակոբ քնանայ Ստորկեան: Սպրդ, 1903, 82 միջ, եր, պատկերազարդ, Գինը 30 կոպ.

Կենդանական ու լուսական աշխարհների նշանաւոր ներկայացուցիչների հարևանցի նկարազրութիւն է, մի ընդհանուր պատկեր: Այսպիսի գրուածքները խոր ապաւորութիւն չեն թողնի:

282. Բոյսերի կեանը ըստ Ֆիգէի և Տիմիրեազկի: Սպրդ, 1897, գինը 8 կոպ.

Բոյսերի արմատի, բուսի (ցողունի) և տեղիի բնախօսութիւնն է: Հետաքրքրութիւն կարող է շարժել, բայց դժուար բասերը ընթերցումը գժուածացնում են:

283. Երկրի եւ երկերի մասին Վ., Լուսկեիչի: Ռուս. թրգմ. կ. գ. Թֆլո, 1897: Միջ. 74 եր, պատկերազարդ, գինը 10 կ. Թ. չ. չ թ.

Երկնային զլխաւոր մարմիններին վերաբերեալ ամենակարեւ աեզեկութիւններ են հանրամատչելի եղանակով և պատկերներով բացատրուած:

Բնափիր է:

284. Ելեկտրականութիւն: Կազմեցին Ա., Զիլինկարեան և Տ. Ռաշմանեան: Ալքմարպալ, 1902, 77 միջ, եր, գինը 15 կոպ. «Ժողովրդական զրագարան»:

Բաւականին յաջողուած հանրամատչելի բնագիտութիւն է: Մինչև վերջը համաքրաբութեամբ կը կարդացուի:

285. Ի՞նչ է կայծակը...

32 միջ, եր, պատկերազարդ,

Հանրամատչելի բացատրութիւն է Էլեկտրականութեան: Հետաքրքրութեամբ կը կարդացուի:

287. Ծաղիկ եւ պտուղ Բէրնշտայնի: Թարգմ. Ռ. Մելիք-Աղամհանցի: Սպրդ, 1896, պատկերազարդ, գինը 8 կոպ.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Նպատակը արդարացնում է միջոցները»:

Մի սկզբունք կայ, որ՝ մուտք գործելով հասարակական որևէ կաղդակերպութեան մէջ միշտ միենոյն բացասական հետանքն է առաջացնում, թէկուզ այդ կազմակերպութիւնը իր վերջնական նպատակն իդէալական համարի: Այդ անբարոյականացնող ու ժամնդ սկզբունքն է՝ նպատակն արդարացնում է միջոցները:

Եղուիտները իրանց ինկվիզիցիայով, բռնակալութիւնը իր բանտերով և կախաղաններով, բիւրօկրատիան՝ հասարակական ինքնավար ձգումների ճնշումով, գեմազողիան իր գերիշխանական հակումներով և այլն և այլն՝ այդ բոլորը իրանց չարագործութիւնները փաստարանում են՝ «Նպատակը արդարացնում է միջոցները» սկզբունքով: Եւ նկատէք որ միշտ ել այդպէս ասողների մէջ կան թէ իսկապէս հաւատացողներ, թէ կեղծողներ:

«Նպատակը արդարացնում է միջոցները» սկզբունքը իր լողիկ հետեանքներով այնքան առաձգական է որ չկայ մարդկային չարամիտ հանճարի հնարած միջոց որ չարդարացնուէր այդ սկսբունքով: Հետևանքը այն է լինում որ «իդէալական նպատակը» մնում է դադարի ճնշիւն, իսկ միջոցները դառնում են ամեն տեսակ շահագործութեան, կամայականութիւնների և բռնութիւնների շօշափելի իրողութիւններ, որոնցից տուժում է ամրող հասարակութիւնը, ժողովուրդը: Բնականաբար, սկըսում է տրտունջ, բողոք, սակայն իշխելը և շահագործելը այնքան զրաւիչ է և ձեռնուու այդ կազմակերպութիւնների անդամների համար որ հեշտութեամբ բաժանուել գերիշխող դիրքից նրանք չեն ցանկանում: Եւ ահա «Նպատակը արդարացնում է միջոցները» սկզբունքին հաւատարիմ նրանք լարում են իրանց բոլոր հնարագիտութիւնը՝ մի կողմից խեղդելու բողոքի ձայնը, իսկ միւս կողմից մաքուր և իդէալական ցոյց տալու իրանց: Եւ անբարոյական սկզբունքը զարմանալի կերպով վերջ իվերջոյ դալիս է յանկում գործելու նոյն սիստեմին, նոյն եղանակին. լինի Ապրիլ, 1906.

դա Լոյօլայի, Մալկիավելիի, Ռոբեսպիերի, թէ Պլեվեի գրած վերջնական նպատակը: Ի՞նչ է հզրակացութիւնը. այն որ անքարոյական, անարդար միջոցներով երբէք չի կարելի լաւ նըղատակների համար. իդէալական նպատակները պահանջում են և մաքուր միջոցներ: Երբէք ժամանակաւոր աջողութիւնը անբարոյական միջոցներով չպիտի կուրացնի մարդկանց. դա խաբուսիկ, մսամէջ, ուսցրած աջողութիւն է, որովհետեւ ոչ բնական օրէնքներն ենք կարող կեղծել, ոչ հասարակական գարգացման օրէնքները մեր կարճամիտ խորամակութիւններով և մանհօվրաներով շեղել... Համկացողին այս էլ բաւական է, իսկ համկացողին՝ թէկուզ զուռնա նաղարա...

Մուս բիւրօկրատիան էլ այն տեսակ կազմակերպութիւններից մէկն է, որոնց մասին վերև խօսեցինք. «Նպատակը արդարացնում է միջոցները» սկզբունքն է նրա բուլոր զործողութիւնների հիմքը: Եւ կարծում էք թէ նրանք պակաս սրամիտ էին և ճարպիկ «նպատակները» ամենագեղեցիկ, ամենաիդէալական գոյներով նկարագրելու գործում: Սիալւում էք, լսէք, կարգացէք նրանց իդէօվգներին, վարձկան պաշտպաններին, սինլիքոր խնկարկուններին. ամենա «ժողովրդի բարօրութեան», խաղաղութեան, ապահովութեան և օրէնքի» անունով է կատարւում...

Ցուսիմա—Մուկենից յետոյ փառազուրկ, ներքին յեղափոխութիւնը ճնշելու տմարդի միջոցներից խայտառակուած այդ բիւրօկրատիան մեծ յոյս ունէր թէ տգէտ, իրաւագուրկ ժողովուրդը, մասսան, որի անունից նա միշտ խօսել է, արգարացուցիչ քուէ դուրս կը բերի արուեստական կերպով սարքած ընտրողական սիստեմի միջոցով, և այդպիսով գէթ արտաքուած այդ բիւրօկրատիան կարող կը լինի շարունակել իր հին երգը թէ տգէտ, անպատրաստ ուս մուժիկը պահանջում է նրա հայրական հոգատարութիւնը: Սակայն հասարակական գարգացման լոգիկան քայլայեց այդ կարճամիտ աղուէսների բոլոր ծրագիրները, և հէնց նոյն մուժիկը դուրս եկաւ հրապարակ և ի լուր աշխարհի յայտնից թէնա այլևս չի ուզում բիւրօկրատիայի խնամակալութիւնը: Մուս մուժիկը դարերի ընթացքում այնքան հայրաբար իր վրայ խնամք թափող բիւրօկրատներին թողեց և անցաւ միշտ ըմբոստ, միշտ ընդդիմադիր ազատամիտ ինտելիդենցիայի կողմը. նա ձեռք մեկնեց ձախակողմեաններին: Եւ «ժողովրդի ազատութեան» կուսակցութիւնը այդպիսով կարողացաւ դուրս բերել ուս բիւրօկրատիայի համար հասարակական խղճով կայացած մեղադրական խիստ դատավճիռ:

Մնում էր որ սեացած բիւրօկրատիան հեռանայ ասպա-

քէզից և երկրի դեկը յանձնի ժողովրդի ներկայացուցիչներին գէթ այս երաշխիքներով, որ յայտարարուած էին Հոկտեմբերի 17-ի մանիքեստով։ Սակայն, ինչպէս յօդուածիս սկզբում առացինք, իշխելու ու շահագործելը չափազանց քաղցր է։ բիւրոկրատիան մուածեց նոր մանեօվրի գիմել։ ժողովրդի շահերի իսկական պաշտպաններից իրանց անկախ դարձնելու նպատակով նախ և առաջ տնտեսական անկախ դիրք ստեղծել իրանց կաստայի համար, փող ձեռք բերել, որպէսզի ամեն անգամ ստիպուած չլինեն Պետական Դումայի համաձայնութիւնից կախում ունենալ։ Բայց այդ բիւրոկրատիայի վարկը այնքան ընկած էր որ ոչ որ այլևս փող չէր տալիս. ժողովրդից կեղեքել էին որքան հնարաւոր էր, այլիս նրա վրայ հալ չէր մնացել. պէտք էր դիմել արտասահմանի խոշոր վաշխառուներին կամ բանկիրներին։ Իսկ վաշխառուն յիմար չէ. նա միշտ ըմբռում է պարտք անողի բոլոր թոյլ կողմերը և փող տալիս այնպիսի հաշուով որ կորուստ չունենայ. պարտք ուղղողի վարկը կասկածելի է, ուրեմն գջլիր ահազին տոկոսներ, գիր այնպիսի պայմաններ որ նա անկարող լինի զուրս գալ ճիրաններիցդ... իրանց համար շատ ձեռնուու պայմաններով ֆրանսիական բանկիրները յանձն տուան օգնել ուու բիւրոկրատիայի ներկայացուցիչ ֆինանսների նախակին մինիստր Կոկովցեվին և ապրիլի 1-ին արդէն յայտնի դառաւ որ Ռուսաստանը կնքել է  $2^{1/4}$  միլիարդ ֆրանկի փոխառութիւն, ժողովրդի համար ամենաննպաստ պայմաններով։ Սակայն ինչ փոյթ բիւրոկրատներին. վճարողը իրանք չեն լինելու խոմ, իրանք միայն օգտուողներն են...

Մինանսական կողմից իրան այդ կերպ ապահովելով Պետական Դումայի օպպոզիցիայից, ուու բիւրոկրատիան առանց ուշադրութեան չթողեց և գէսլի իր բասարիկեան տանող այն ճեղքը, որ բացուած էր հոկտեմբերի 17-ի մանիքեստով և ապա կիսատ պուած ծեփուած փետրուարի 20-ի մանիքեստով։ Նա ուզեց Դումայի տուած օրէնսդրական ազատ նախաձեռութիւնը՝ հիմնական «անփոփոխիկի» օրէնքների շարքը անցկացնել այն նոր փոփոխութիւններով, որ արդիւնք էին Վիտուէ-Դուրոնովյի քաղաքագիտական հանձարի։ Մի փորձ որ առանց դատապարտութեան չմնաց «կենտրոնի» օրգան «СЛОВО»-ի կողմից, որի կարծիքով դրանով կառավարութիւնը խախտած կը լինի։ Ներքին տագնապը խաղաղ ճանապարհով լուծելու վերջին յոյար։ «Այն մոմենտից, երբ փետրուարի 20-ի մանիքեստը մըտցնում է հիմնական օրէնքների շարքը, ոչ մի պարլամենտ արդէն չի կարող նրանց գիպչել։ Հիմնական օրէնքները կարող են փոփոխուել միայն սահմանադիր ժողովով, եթո Դումային»

հնարաւորութիւն չի տրւում աշխատանքի դիմելու, մինչև որ սահմանադիր ժողովը չի փոխիլ այն, ինչ որ այսուհետեւ, էլի նոյն՝ բոլորին ատելի կառավարութեան հրամանով, դաւնում է հիմնական օրէնք։ Ուր էք վերջապէս, պարոն վարիչներ մեզ տանում»։

Դրա պատասխանը կը ստանանք երևի մի քանի օրից յեւ առյ երբ կը բացուի Պետական Դուման...

—Երբ մի ամրողջ պետութեան գրութիւնը այդ տագնապահի վիճակի մէջ է՝ դժուար է երկակայել թէ հնարաւոր է նըրա մի չնչին մասի, նրա այս կամ այն բաղկացուցիչ աղդի կեանքում որեւէ հասարակական գործը տեսնել նորմալ զարգացման վիճակում։ Բիւրօկրատիական բեժիմը այնքան այլանդակում է մարդկանց որ ամեն մէկը, երբ հնարաւորութիւն է գտնում իր տեսչը իրագործելու՝ ձգտում է գառնալ իշխող, շահագործող, հարստահարող... Անշուշտ գարձեալ չի մոռացում «ամեն ինչ ժողովրդի համար» բանաձեւը։ Մեր «հայկական կեանքում» էլ կամ բիւրօկրատիաներ, բիւրօկրատներ, սակայն, իհարկէ, աւելի մանր և առանձայտուկ տեսակի...»

Այդ հայկական բիւրօկրատիայի տեսակներից մէկը ամբողջապէս կազմուած է սեազգեստ վեղարաւորներից։ Ինչպէս ամեն մի կավակերպութիւն որ իրան նպատակ է զրել ամեն ինչ շահագործել հէնց այլի կազմակերպութիւնը ուժեղացնելու նպատակով, այնպէս էլ մեր հոգերականութիւնը ձգտել է մեր բուրժուազիայի հարստութիւնն էլ, ժողովրդի հաւատքն էլ դպրոցներն էլ, բոլորը, բոլորը շահագործել կղերի օգտի տեսակէտից։ «Նպատակը արդարացնում է միջոցները»!

Կղերի ահա այդ ոտնաձգութիւնների դէմ քսան տարի մաքառել է փոքրաթիւ ընդդիմագիր կուսակցութիւնը մեզանում, պահանջելով որ կղերը, կաթողիկոսից սկսած մինչև վերջին տիրացուն, լինեն ժողովրդի սպասաւորներ և ոչ տէրեր, հայ եկեղեցին իր դպրոցներով և կալուածներով ծառայեն միայն իր՝ ժողովրդի շահերին։ Սակայն իշխութեան շահագործելու տեսչը թոյլ չէր տալիս որ տիրող օրէնքների վրայ իր գիրքը հիմնած հայ կղերը որևէ զիջում անի. նա հալածում էր, որքան միջոց և հսարաւորութիւն ունէր, իր գիրիշխանութեան դէմ մաքառողներին։ «Նպատակը արդարացնում է միջոցները»!

Այժմ ընդհանուր աղատագրական հոսանքները ստիպում են և մեր կղերին որոշ զիջումներ անել։ Բայց նա դեռ հաճոյանում է փողի և բռնի ոյժի ներկայացուցիչներին մեզանում... «Նպատակը արդարացնում է միջոցները»!

Մեր կղերական բիւրօկրատիան կարծում է թէ կարելի է

Ներկայ յեղափոխութիւնից դուրս պրծնել, անփոփոխ պահպանելով իր «հիմնական օրէնքները». կաթողիկոսի միահեծան կամքը, նշանակովի առաջնորդները և Արակչենի ժամանակներից հիմնուած սինոգը իր արխայիկ կազմով ու ֆունկցիաներով: Եւ մեզանում կարծես հաշտուել են այն մարդի հետ որ համ կարելի է ամենալիմուկրատիական պահանջներ դնել, համ միաժամանակ անփոփոխ թողնել թէօկրատիական բիւրօկրատիայի հիմքերը: Թէ ո՞ր աստիճանի ոգեսորուած են այդ իլլիւզիայով՝ ցոյց է տալիս Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւնների «պայքարը»...: Նա որ գործել է մեր աղդային-հոգեսոր ասպարիզում չի կարող չխմանալ թէ ինչ խախուտ հողի վրայ է վատնում իր ամենամաքուր ջանքերն ու եւանդը մի գործիչ, որ ձբդտում է կառուցանել այնպիսի շէսք, որ կարող են քանդել. մի եպիսկոպոսի քէֆը, կաթողիկոսին գրած մի անանուն նամակ, վեհարանում փափսացողների մի խմբակ...»

Պէտք է «ճշմարտապէս և ոչ կարծեօք» հայ եկեղեցու «հիմնական օրէնքները» գեմոկրատիական գառնան, պէտք է de facto վերջ դնուի կղերի գերիշխանութեան, որպէսզի իսկական գեմոկրատների (գեմագոգների, այդ ձևուտուչէ...) ջանքերը Սիզիփեան աշխատանքի հետեանքներ չունենան: 12 տարի առաջ մենք շեշտել ենք այն, ինչ կրկնում ենք և այժմ. պէտք է ժողովրդի ներկայացուցչութեամբ սահմանափակուի կաթողիկոսի իրաւունքը վարչական գործերում և նա մնայ լոկ իր պատուաւոր ներկայացուցիչ հայ եկեղեցու, կրօնապետ: Թող մեր կղերականները բաւականանան կաթողիկոսի համար այն գերով, որով զո՞ւ են ամենահզօր սահմանադիր ողետութիւնների գլուխները: Ներկայացուցչութիւն: Իսկ մեր աղդային-եկեղեցական գործերի կառավարութիւնը պէտք է կենտրոնացած լինի քառունդամ փորմուլով ընտրուած ժողովրդական ներկայացուցչութեան ձեռքում: Ժամանակ է վերջ դընել վեհարանի և նշանակովի առաջնորդների անկօնարոլ, քմահաճ կամայականութիւններին: Բաւական է եթէ դրանց թողնուին զուրու կրօնական-գաւանաբանական հարցերը, քանի որ հայ ժողովուրդը գեռ «առանց ժամի» չի կարող երեակայիլ իր կեանքը:

Եւ Ռուսաստանում սահմանագրական մի ըեժիմի ներքոյ, երբ գէթ «օտար եկեղեցիները» բաժանուած են պետութիւններից և ծուխից է կախուած գրանց ներքին կարգ ու կանոնը, երբ ազգերի ինքորոշումը իրը սկզբունք է ճանուչում—անիրազրծելի չէ սահմանադրական սկզբունքով վերակազմել «հայոց ժողովրդական եկեղեցին»: Կաթողիկոսի, սինոգի և առաջնորդների բացարձակ կամքի, կղերական-բիւրօկրատիական քմա-

հաճոյքի տեղ պէտք է բռնի սահմանադրական, ընտրովի «Կենտրոնական Խորհրդի» գործունէութիւնը։ Մինչև չվճռուի հիմնական օրէնքների» այդ արժատական փոփոխութիւնը՝ ջուր ծեծել է նշանակում զանազան վերանորոգութիւնների մասին ծրագրներ և ժողովներ գումարելը...

Պատմական-հասարակական զանազան հանգամանքների շնորհիւ մեր եկեղեցու հետ կապուած զանազան հիմնարկութիւնները, որոնք շօշափում են մեր ժողովրդի մտաւոր-բարոյական (դպրոցները), նոյնիսկ տնտեսական (կալուածներ) շահերը՝ պէտք է ապահովուեն կղերի գերիշխանական ձգտութներից, նախ և առաջ կատարեալ իրական դեմոկրատիզացիայի ենթարկելով մեր եկեղեցական-վարչական գործը, սկսած էջմիածնից։ Անա քառանդամ ընտրութեամբ կատարած «ազգային ժողովի» առաջին պարտականութիւնը, փոխէք նախ և առաջ «հիմնական օրէնքը»—վերջ դնելով կղերական արսոլիւտիզմին, ապա մտածէք միւս լեֆորմների մասին...

L. U.

22 Առլր.

## ԱՐՏԱՎԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ֆրանսիական սինդիկատիսների action directe-ը:—Ֆր. բենյոններների պրովոկացիան.—Բազէի պրաֆեսիօնալ կազմ. ներկ. համագումարի որոշումը:—† Պ. Կիւրի:—Անգլիան Եվրոպում.—Հայեր Թիւրքիայում:

**Աշխատաւոր մասսաների տրամադրութիւնը** ամենուրեք բարձարցել է ոռուսական յեղափոխութեան ազգեցութեան տակ: Այդ պայմանում բնական է որ աշխատանքի համաշխարհային տօնի օրին (մայիսի 1-ը ն. տ., ապր. 18 հ. տ.) այս տարի սպասում էին խոշոր յուղութներ: Ամենից շատ երկիրը էին կրում Փրանսիական բանուրականութիւնից, որովհետև կուրքի-էրի կատաստրոֆից յետոյ մի շարք գործադուլներ էին սկսուել

երկրի զանագան ժամերում։ Այդ շարժումներին առանձին նշանակութեան էին տալիս և այն պատճառով որ դեռ երկու տարի առաջ Բուրժում կայացած ֆրանսիական բանուորական սինդիկատների ներկայացուցիչների կոնգրեսում որոշուած էր այս տարուայ մայիսի 1-ից դադարել օրական 8 ժամից աւել բանելուց։ Մինդիկալիստները վճռել են իրանց այդ որոշումը իրագործել «ուղղակի գործողութեամբ» (action directe) և ոչ միայն ոլարլամենտական—օրէնսդրական ճանապարհով։ Հետևաբար սպասում էր այդ օրը ընդհանուր գործադուլի յայտարարում։ Մակայն պէտք է միշտ գործնականը տարրերել տեսականից այսպիսի որոշում կարելի էր իրագործել այն ժամանակ, եթէ ֆրանսիական բանուորութեան գէթ մեծամասնութիւնը կազմակերպուած լինէր և դասակարգային գիտակցութեան մէջ կըրթուած։ Դժբախտաբար այդ ցանկալի վիճակից գեռ հեռու են բանուորները նոյնիսկ քաղաքակիրթ երկրներում (մեր մասին խօսեն անգամ աւելորդ է)։ Այդ պատճառով ընդհանուր գործադուլը գլուխ չեկաւ Ֆրանսիայում։ Միւս կողմից կլեմանսով կառավարութիւնը ամեն կերպ աշխատեց որ զօրքի և պոլիցիայի գերը ըստ կարելոյն լինի չգրգռող։ Այդ խելացի տակտիկայի շնորհիւ համեմատաբար խաղաղ անցան յուղումները, և բանուորերի ալեկոդուած ծովը ինքն իրան կամաց-կամաց հանգստացաւ։ Մի բան որ շատ չէին ցանկալ հանրապետութեան բոլոր թշնամիները, Բանը այն է որ այժմ Ֆրանսիայում տեղի ունի ընդհանուր պարլամենտական ընտրութիւնների պայքար։ Եթէ բանուորական շարժումներին աջողուէր արիւնահեղ ապստամբութեան ընաւորութիւն տալ՝ դրանով պահպանողական տարրերը ահաբեկուած կը լինէին և թերուած բէակցիօն կուսակցութիւնների կողմը։ Փաստեր կան որ կղերականները, նացիօնալիստները և արքայականները դրդել են և օգնել անիշխանականներին՝ մի շարք դինամիտային փորձեր կատարել, յարձակուել զօրքի վրայ, սուր ընդհարումներ առաջացնելունը-պատակով։ սակայն կամանաօն լաւ ըմբռնելով մասենաը չի կորցրել իր սառնարիւնութիւնը և կարողացել է մեծ տակտով դուրս գալ չափազանց գժուար գրութիւնից։ Այդպիսով Աշխատանքի կոնֆեղերացիայի ղեկավարներին չաջողուեց աւտոմատ տակտիկայով մտցնել օրեկան ութ ժամուայ աշխատանքը կեանքի մէջ։ Թէ action directe-ը առհասարակ ո՞ր աստիճան է բաժանուած սահմանադրական երկրների բանուորականութեան կողմից՝ այդ լուսաբանում է այս ապրիլի սկզբին Շվեյցարիայի Բազէլ քաղաքում գումարուած շվեյցարական պրոֆեսիօնալ (արհեստակցական) բանուորական կազմակերպութիւնների ներ-

կայացուցիչների ժողովում լնդունուած հետեւալ բեզոլիւցիան. «Պրոֆեսիօնալ կազմակերպութիւնների համագումարի անդամները համոզուած են որ բանուորական օրուայ կրծատումը հնարաւոր է ոչ յեղափոխական action directe-ով (անմիջական գործողութեամբ), այլ միայն յարատե և նպատակայարմարօքէն կազմակերպուած գործունէութեամբ: Ուստի նրանք խորհուրդ են տալիս բանուորական կազմակերպութիւններին՝ այսուհետեւ էլ պահպանուի իրանց փորձուած տակտիկան, ընդունելով ոք նա հանդիսանում է իրը միակ միթող, որ նախ կը հասցնի օրեւկան 8 ժամուայ աշխատանքին, իսկ յետոյ ժողովրդի խևական ազատութեան: Այժմ իրագործել յեղափոխական action directe-ը նշանակում է՝ լաւ չմտածած, թղթի վրայ դնել այն բոլորը. ինչ ձեռք է բերուած բազմամեայ, դժուարին և տոկուն աշխատանքով: Բանուորական կազմակերպութիւնների կոնգրեսը այդ պատճառով հրաժարում է աւելի մանրամասն զբաղուել action directe-ի հարցով»: (Ցիտադը առաջ է բերուած «Պ. Բ.»-ից):

Ուրամսալ որ պարլամենտական-օրէնսդրական մաքառման հետ զուգընթացաբար անհրաժեշտ են և որոշ գործողութիւնները ցոյցին, գործադուներ և այլն, ի հարկէ չի կարելի. խօսքը միայն այնպիսի action directe-ների մասին է, որոնք զուր արիւննեղութիւնից բացի այլ հետևանքների չեն հասցնիլ:

—Երբ ամենուրեք հասարակական ուշագրութիւնը լարուած է բազաքական շարժումներով, բնականաբար, աննկատելի են անցնում խաղաղ դիտական աշխարհում կատարուող նոյն իսկ խոշոր փոփոխութիւնները: Այդպէս, օրինակ, համարեա աննկատելի անցաւ գիտական այնպիսի խոշոր կորուստ, ինչպիսին քիմիկոս Պիէր Կիւրիի մահն է: Երեք տարի առաջ մեր ընթերցողներին մենք գաղափար էինք տուել ըալիում՝ քիմիական տարրի գիւտի և «անտեսանելի ճառագայթների» մասին \*): Բնութեան մեծ գաղտնիքներից մէկի ըմբռնման նոր ճանապարհի վրայ էր Նորելիան մրցանակի արժանացած այդ գեռերիտուարդ գիտականը (Ճն. 1859 թ.), սակայն մի դժբախտ պատահար (Պարիսի փողոցում սայթաբուիլը և սայլի անիւի տակ ընկնիլը) վերջ գրաւ նրա խիզախ. մտքի որոնումներին: «Բագիումի, անտեսանելի ճառագայթների, անթել հեռազբի գիւտերի» մասին խօսելիս մարդ մի կողմից լքցում է հիացումով մարդկային մաքի կորովի աաջի, իսկ միւս կողմից զարմանում որ իրաւունքի մասին հասարակութեան հասկացողութիւնների մէջ այնքան գանդաղ է կատարուում փոփոխութիւնը: Ե-

\*) 1903 թ. №№ 2 և 8.

գիտական վարաւորների ժամանակներից առնուազը վեց հազար տարի է անցել, սակայն այժմ էլ բռնութիւնը, կոտորածները, պատերազմները սովորական երեսյթներ են մարդկային կեան. բում: Բայց չպէտք է մոռանալ որ արդարութեան և իրաւունքի իդէալական ըմբռնումի մէջ. ևս մի քանի անհատներ նոյնքան առաջ են գնացել, ինչպէս և գիտութեան մէջ. իսկ մասսան թէ մէկ և թէ միւս ասպարէզներում դեռ խաւար է և նախապաշարուած, որպէստեւ ամբողջապէս հացի խնդրի շուրջ են գեռ ևս պտտում նրա մտածմունքներն ու ջանքերը: Այսուամենայնիւ հասարակական-քաղաքական բարեշրջաւմը ժխտել անկարելի է: Վերցրէք, օրինակի համար, հենց Եպիպառուսը, որի մասին խօսել են տալիս այժմ անգլօ-թուրքական լարուած յարաբերութիւնները: Մի կողմ թողնենք պիրամիդներ շինող փարաւոններին էլ, պարսիկ նուաճողներին էլ, յունական գերիշխման ըրջանն էլ, Պտղոմէոսների, հոսմայեցիների, մամելլիւերի և օսմանների տիրապետութեան ժամանակներն էլ, և վերցնենք՝ միշտ սովի, սրածութեան և ժանդախտի մատնուած մարդկային քաղաքակրթութեան այդ որրանը՝ մի զար առաջ, երբ հեռացաւ այնաեղից իր յաղթական լեզիօններով Բոնապարտը:—Բարձր Դուռը վալի նշանակեց Եպիպառուսը մի տգէտ, բայց եւրոպական քաղաքակրթուեան առաւելութիւնները ըմբռնող, քաջև փառասէր թուրք զօրավար՝ Մեհմեդ Ալիին: Այդ ասիական բոնակալլը նորնուածումներով ոչ միայն ընդուրձակեց Եպիպառուս սահմանները, այլև ապստամբուեց փաղիշահի դէմ: Եւ անշուշտ անջատուելով Թիւրքիայից նա կը դառնար անկախ թագաւոր, ևթէ, ինչպէս յաճախ այլ անդամները, այնպէս և այդ գէպօւմ, «հիւանդ մարդուն» չպաշտպանէին մեծ պետութիւները... Մեհմէդ Ալին մնաց ժառանգական փոխարքայ Եպիպառում: Մեհմեդ Ալիի փառասէր ձգտումների հիւանդներից մէկն էլ այն եղաւ որ նիւթականապէս ուժասպառ երկիրը ընկաւ եւրոպական կապիտալիստների ֆինանսական թակարդի մէջ: Անզիական-Փրանսիական «շահները» այնուհետեւ օրէցէր աճեցին «թիւրքական այդ փոխարքայութեան» մէջ, և համապատասխան կերպով օրէց օր նուազեց Բարձր Դուռն իրական իշխանութիւնը «իր պետութեան այդ մասի վրայ»: 1869 թ. Սուէցեան ջրանցքի բացումը աւելի ևս մերձնեցրեց Մեհմեդ-Ալիի ժառանգներին (խեղիթներին) եւրոպայի հետ: Իրաւ է, մահմեդական: Առջեռանուդութիւնը յանձին Արարի փաշայի 1882 թուականին փորձեց թօթափել այդ օտար ազգեցութիւնը, բայց Զոն-Բուլլը արգէն հիմնաւոր միջոցներ էր ձեռք առել՝ Եպիպառուսը իր զազութը զարձնելու համար, ուստինա Արարի փաշային էլ ճնշեց, ինչպէս յետոյ:

նաև զանազան մահղիներին, կամաց-կամաց մտցնելով Եգիպտոսում կարգ-կանոն, որ հնարաւորութիւն էր տալիս բուն ժողովրդին վերջապէս խաղաղ աշխատանքով ապրել. բնականաբար անգլիական ազդեցութեան աճումը ցանկալի էր Եգիպտոսուի ժողովրդի համար: Երբ 1899 թուականին լորդ Կիչիները վերջնականապէս գրաւեց Սուլդանը և նոյն թուին Ֆրանսիան ստիպուած եղաւ թողնել Յաշողան—Նեղոսի ամրող աւազանը: (3 միլ. քառ. կիլոմ. իր 13 միլիոն ազգաբնարնակութեամբ) դառաւ ց ֆաւ անգլիական կալուածք: 1904 թուականի անգլօ-ֆրանսիական զաշնազրով Ֆրանսիան հրաժարուեց իր բոլոր պըրետինազիաներից Եգիպտոսի նկատմամբ: Ասպարէզը մնաց Անգլիային: Վեց հաղար տարիների ընթացքում այնքան փոփոխութիւններ և տառապանքներ կրած երկիրը այսուհետև կարելի է յուսալ որ կը դադարի զանազան բարրարոսութիւնների բեմ լինելուց: Անգլիական տիրապետութիւնը ինարկէ դիւր չի գալ ասիական բռնութիւնները շարունակելու մէջ շահագրգոռուած բէյերին և փաշաներին, ինչպէս և Սուլթանին, որ դեռ շարունակում է իրան օրորել «վասսալ» Եգիպտոսի վեհապետ լինելու երազներով: Սակայն Սինայ թերակղզու սահմանային վէճը ցոյց տուաւ որ Թիւրքիան եղիպտական գործերում մի բոլորովին օտար պետութիւն է, իսկ նրա տէրը Անգլիան է:—Աֆրիկան Ասիայի հետ միացնող Սինայ թերակղզին եռանկիւնածն մտնում է Կարմիր Ծովի մէջ և երկու ծոց կազմում: արևմտեան կամ Սուէցի և արևելեան (Արաբիայի ափերին կպած) կամ Աքաբայի:

Թիւրքիան, իրան համարելով Եգիպտոսի «իսկական տէր», մի քանի տարի առաջ գրաւել էր Սինայի մէջ Աքաբան իր շրջակայքով: Ծագել էր վէճ խեղիվի և սուլթանի կառավարութիւնների մէջ և նշանակուել սահմանագծային յանձնաժողով: Այս տարի հլդիզում, երկի, վճռեցին action directie-ով լուծել հարցը: Թուրք զօրքերը գրաւեցին վիճելի հողերը, նախկին սահմանագծից մի մղոն դէպ արևմտուք անցան և եղիպտական հեռագրասիւները փոխեցին թրբականներով: Ակսուկց բանակոիւ Կայիրօի և Պոլսի մէջ, ապա Կայիրօի փոխարէն ձայն բարձրացրեց Լոնդոնը: Բրիտանական ուլտիմատումը պահանջում է որ Սուլթանը 10 օրուայ ընթացքում հեռացնի իր զօրքերը գրաւած վայրերից: Բրիտանական նաւատորմիզի մի մասը հրաման է ստացել չուել Մալտայից, իսկ Կիպրոսի զօրքերն ուղարկում են վէճի տեղը: Խղդիվի մօտ գտնուող Մեծ Բրիտանիայի դիպլոմատիական ագենտ լորդ Կրոմէրն էլ աւելացնում է անգլիական զօրքերի թիւը Եգիպտոսում...

Անկասկած եթէ Մինայը սուլթանական րեժիմի տակ անցնի։ Թիւրքիայի յետևում գործող գերմանական կապիտալիստները իրանց հզօր պաշտպան Վիլհեմի Հնորհիւ կարող կը լինեն Մեքրա-Դամասկի երկաթուղային գիծը շարունակել մինչև Սուէց և մօտ ապագայում Անգլիայի հետ Եգիպտոսում նոյն խաղը խաղալ, ինչ որ Ֆրանսիայի գլխին կատարուեց Մարոկկօյում։ Հասկանալի է ուրեմն, թէ ինչու այնպիսի ուժգնութեամբ Անգլիան միջոցներէ ձեռք առնում Թիւրքիային այդ ոտնձգութիւններից յետ կանգնեցնելու համար։ Նրա օգուտն, շահն է այդ պահանջում։ Հէ՞ որ մեր կապիտալիստական դարում շահը արդարացնում է միջոցները։

Հ. Ս.

25 Ապր.

Թիւրքիայի «հայկական» վիլայէթներում շարունակում է, եւրոպական դիպլոմատիայի լուռ համաձայնութեամբ, երկիրը հայերից մաքրելու քաղաքականութիւնը։ Ամենաչընչին առիթից դիւային անխղճութեամբ օգտւում է Թիւրք կառավարութիւնը՝ բնաջնջման քաղաքականութիւնը սիստեմատիկաբար առաջ տանելու նպատակով։ Բերենք մի քանի նոր փաստեր։

Զմշկածակէն հասած լուրերուն նայելով, տեղական իշխանութիւնը այս վերջերս շատ խստացուցած է իր բռնութիւնները. Պոլսոյ և Իզմիրի դինամ. գէպքերը այնքան ազդած են թուրքերուն՝ որ պատճառ կը փնտուն միշտ հայ ժողովուրդը ջարգելու և կողոպտելու։ Այն հայերը որ բարդուած տուրքերը վճարելու դրամ չունին, կը զրկուին իրենց պարտէզներէն ու արտերէն։ Կառավարութիւնը աննշան գնով մը կը ծախէ զանոնք ու դրամները կը գանձէ։ Եւ նոր տուրքերը միշտ կաւելանան։ Հայոց տնտեսական տագնապը երթալով կը ծանրանայ։ Մէկ կողմէն արտերը կը իլուին, որով երկրագործութիւնը անկարելի կը դառնայ, միւս կողմէն ալ կարգելուի օտար քաղաքներ ու երկիրներ պանդիստելը, որով Զմշկածաղցին իր ապրուստի զլխաւոր մէկ աղբիւրէն կը զրկուի։ Արդէն տեղին առուտուրը բոլորովին թիւրքերու ձեռքն անցած է («լուսաբ.»)։

— Հոկտեմբեր ամսի 1-ին, շաբաթ օր՝ երբ նոր պիտի բացուէր արշալոյսը՝ յանկարծ Առվառինձ գիւղը (Տարօն) կը պաշարուի սարէն ձորէն և գիւղացւոց եկամուտքը կ'արգելուի։ Պաշարողներն էին նախ բազմաթիւ թուրք գորբեր՝ մէկ վաշտ Մուշէն և

Առաղ ու Ղարց գիւղերու մէջ մնացած զօրքեր. Առաքելոց վաճա-  
րի և Խասգիւղի զօրքեր իրենց սպաներով և Մուշէն հասած  
հազարապետով և ամրող ոստիկանութիւնը իրենց պետերով՝  
տրուած հրամաննին վրայ կը համսխն հոն. պալաքցի, խութեցի,  
դեղձմերցի քիւրդ աշխրէթներ կրօնամոլ հաճի Ֆիրօյի հետ.  
Թէլայ շէյխերը իրենց արբանեակներով, մահպուպանցի քիւրդեր,  
Քրդագոմի քրդեր, Մուշէն զիննեալ թուրքեր, տուաջնորդութեամբ  
Տուրսուն և Արդիֆ անուն թուրքերու և այլն ևայլն: Այս բազ-  
մութիւնը, որ մինչև ժամը երկուրը 3000-ը անցած էր՝ պա-  
տրուակերով թէ ձեր գիւղը Փէդայի կայ, յանկարծ հազարա-  
ւոր հրացաններու պայթիւններով ու գոռում գոչումով զրոն  
կուտամ գիւղին վրայ, կը յարձակուին, ջարդ և հրդեհ վայրկե-  
նապէս կը սկսին, շատ քսամինիլի, շատ անլուր խժդութեամբ  
խուճապը և իրարանցումը սկսած էր գիւղին մէջ, ուր 120 է  
աւելի թշուառ հայ ընտանիքներ արգելափակ մահուան կը  
սպասէին... որոտումները, զինուորներու և թուրք խուժանի  
գոռում գոչումը, ժողովրդի սարսափելի վայնասունը սարերը  
կը թնդացնէին, բայց անոելի կոտորիչներուն երբէք գութ ու  
կոկիծ չէին ազդելու: Գրոհը գիւղը հասնելուն գիւղի չորս կող-  
մէն զօրքերը հրդեհը բռնկեցուցին և հայ արեան ծարաւիները  
ձեռնարկեցին անմեղ ու անտէր հայ ժնղովուրդը ջարդելու,  
որը ողջ ողջ հրդեհներուն կուտային, որը կը յոշուաէին,  
որը փնդականար կը տապալէին անխնայ առանց սեոփ և տա-  
րիքի խարութեան... Զարդը կը տեէ մինչև հետեւալ առաւօտն  
ալ, թէ գիւղի, թէ կալերու և թէ արտերու և մեծազոյն մասը  
տուններուն մէջ:

Ահա այս թշքական բարբարոսութեան հաշուեկշիռը: \*)

Սպանուած են մօտ 95 այր, 22 մանուկ, 13 կին և աղ-  
ջիկ, բռնաբարուած և անխոստովանելի տառապանաց ենթար-  
կուածներու թիւը ճշտել դժուարին է, աւար ու կողոպուտը  
բացարձակ և յայտնի, բռլոր տները, եկեղեցի կողովոտուած են,  
տաւար և ուտեստ թալանուած, տնական կարասի և այլն ջարդ  
ու փշուր եղած, աննկարագրելի խժդութիւններ: Այրած են,  
5—10 խոտի դեղեր, 5 տուն կայքով, 8 մարագներ լի պարէնով  
և կալերու մէջ գանուած արմատիք. մարդու, նիւթական և բա-  
րոյական կորուստ անչափելի է, ինչ որ մնացեր են գիւղում,  
անտէր անտիբական: Արիւնի, վշտի և զարհուրելի տառա-  
պանըների մէջ խելացնոր, ցաւատանջ և ահարեկ կը չարչա-

\*) Զոհերի մասնը ամառն անուանացուկակը բաց ենք թողնում:

բուին, ողջ մնացող տղամարդերից շատեր չեն համարձակիր իւրանց տւեր բոյները գառնալ, վախենալով որ կալանառորուին, կոտորիչներին բնաւ վնաս չի եղել, մէկ երկու հոգի վիրաւորուել են, այն ալ թերեւ իրենց գնդակներէն. անզէն և խեղճ գիւղացիներ ԲՇնչ կրնային ընել Սարսափը կը ծանրանայ, մասնաւոր ջարգեր ալ տեղի կ'ունենան: Քորի մէջ (Սասուն) Ատո անուն հայ մը սպանուեցաւ գարկցի Սէլիմ, Ամօ և Ֆելիթ անուն քիւրգերէն երբ առաջինը ոչխար կ'արածացնէր: Հոկտեմբեր 6-ին ժամը 9-ին գինեալ իսլամներէ սպանուեցան քաղաքին քովիկը գալուորիկցի երկու աղքատ տղաքներ 16—18 տարեկան, դիակներ դեռ գետին կը մնան:

Շարունակելու այլևս ուժ չկայ... «Դրօշակ»

—Թիւրք կառավարութիւնը Զէյթունի 1895-ի պատերազմի տասնամեակը կ'ուզէ տօնել... վրէժմնդրութեամբ: Զէյթունի վրայ չափազանց նեղիչ և անհանգուրծելի հսկողութիւն, բոլոր քաղաքներու մէջ՝ իրր քաղաքական յանցաւորներ՝ երիտասարդներու հաւաքական ձերբակալում, ևն ևն: Ահա փաստեր: Ատանայէն 6 հոգի ձերբակալուելով հոս փիխազրուեցան: Մարաշ բանտարկուած են 25 է աւելի անձինը և մօտերս Զէյթունին Մարտաշ պիտի ըերուէին 25-ի մօտ նոր ձերբակալուածներ: Զէյթունի դրութիւնը շատ տագնապալի է: Բաւական ժամանակ զօրանոցի մէջ դանուող զօրքեր ամբողջ շաբաթներ առանց հանուելու կը պառկէին զիշերները և փոքր առիթ մը կը սպասէին ժողովրդի վրայ յարձակուելու:

Խնչպէս յայտնի է, 1895-ի հաշտութեան պայմաննէրէն մէկն էր, որ թիւրք կառավարութիւնը Զէյթունի մէջ զօրք չը պիտի կրնայ մտցնել՝ առանց գիտութեան եւրոպական պիտութիւններու: Իսկ վերջին ձերբակալութիւններու առթիւ ահազին թուով զինուորներ մոցած են Զէյթուն: Նշանները լաւ չեն: Թիւրք կառավարութիւնը, կ'երևի, յարմար առիթ կ'որունէ իր մշտական ծրագիրը գործադրելու: «Դրօշակ»

—Հալէպից մարտի 5-ից գրում են նոյն թերթին.

Հայերու դէմ ժամանակ է մ' ի վեր սկսած նոր խստութիւններն և ձերբակալումները կը շարունակուին:

Վերջերս Զէյթունէն, Մարաշէն, Ատանայէն և Հաճընէն նոր ձերբակալուածներ ըերին հոս: Առհասարակ աչքի զարնող հայերու վիճակը շատ վատ է, մանաւանդ Զէյթունի հայերունը: Այստեղի զինուորական հրամանատարը վերջերս մեռաւ: Այս ձերբակալութիւններու և ձեռք առնուած խստութիւններու պատճառը ան էր: Նոր հրամանատարը իր պաշտօնի

գլուխն հասնելուն՝ պիտի սկսի տեղւոյն վրայ քննել խնդիրը և քննութեան արդիւնքը պիտի տեղեկագրէ Հալէպ: Գլխաւորաբար Զէյթունի նկատմամբ զործագրուած խստութիւններու հետեանօք տեղւոյն առաջնորդ Խապայեան վարդապետը իր հրաժարական ներկայացուց, որ չընդունուեցաւ: Հայոց շրջանակներու մէջ կը պատմեն, թէ Զէյթունի աւագերէց Տ. Կարապետ քահանան այս գործերու մէջ շատ վատ գեր կը խաղայ:

Հալէպի նոր կուսակալ Նազըմ փաշան (Տիգրանակերտէն հոս փոխազրուած) շատ անգութ և միանգամայն հայու դահիճ մըն է, և նա է որ շրջակայ վայրերու մէջ իր քաղաքական յանցաւոր ձերբակալածները Հալէպ փոխազրել կուտայ, յանցաւորները ինք անձամբ քննելու և դատապարտել տալու:

Մուսաստանէն նոր գաղթած չէրքեղներ՝ թուով տասն հազարէն աւելի, տեղաւորուեցան Կիլիկիոյ որոշ կէտերու վրայ, մասնաւորապէս Զէյթունի շրջականները: Այս անկոչ հիւրերու համար «իանէ» կը հաւաքուի՝ մինչև իսկ բռնութեամբ: Ամեն տեսակ հարկեր նոյնպէս վերջին ծայր խստութեամբ կը ժողովին: Ընդհանրապէս Կիլիկիայի վիճակը շատ անհախանձելի է:

—«Բիթլիսի, նահանգապետ Ֆէրիդ-Ռէյի սպանութեանը լուրը՝ հայ յեղափոխականների ձեռքով՝ ապրիլի 6-ին հասաւ Կ. Պոլիս»:

«Pro Armenie»

—Մի քանի օր առաջ գարձեալ հիմնայատակ քարուքանդ են արուել երկու հայ գիւղեր Մշոյ գաւառում—Խէյպեանը և Խառ գիւղը... Զանբեկաբները բնակիչների մեծ մասին որի են անցկացրել:

Նրանք սպառնում են քաղաքին և դաշտի բոլոր հայ գիւղերին:

Ազգաբնակութիւնը սպառնում է նոր արհաւիրքների և սարսափների...

«Ալիք»

## ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Полярная звезда, № 14: — «Սոցիալ-կոմիտե նպատակները» յօդուածում Տուգան-Ռաբանովսկին ցոյց է տալիս որ սոցիալիստները արդարի իրանց ամբողջ ուշազութիւնը կենտրոնացնում էն անտեսական հարցերի վրայ, սակայն ոչ այն պատճառով որ նրանց անհամար է մարդկային կեանքի վեհ շահերը, այլ հնկոց այդ շահերի տեսակեցից: Սոցիալիստները նախ է առաջ կռւում են աղքատութեան դեմ: իսկ աղքատութիւնը նշանակում է ոչ միայն միտիկական տանձանքներ, այլ հնուեկան սոուցում: Հոգեկան կուլտուրան անհրաժեշտութեն պէտք է յետուի տնտեսականի վրայ: Գիտութիւնը և գեղարուեստը պահանջում են իրանց համար նիւթեական միջոցներ, որ ստեղծում են տնտեսութեամբ: Ուշու պարագ (Խօց), տնտեսական աշխատանքից աղքատութիւն անհրաժեշտ պայման է քաղաքակալթութեան աշողութիւնների համար: Աշխատանքի հասարակական կանացութը պէտք է մի քանի անգամ բարձրացնի աշխատանքի արդիւնաւորութիւնը: Սոցիալիստական հասարակութեան մէջ մարդ շատ քիչ ժամանակ պէտք է կորցնի կռւուի անհրաժեշտութեամբ: Ուշու պարագ (Խօց), տնտեսական համար, մարդու աներկանութեամբ: Հետո աշխատանքից շատ կ'ընդարձակուի և այդ պարագը կը լցոնուի աւելի բարձր տեսակի զործունէութեամբ, քան տնտեսականին:

Նիրկայ հասարակութեան մէջ մի միջնաւոր, պետական գործիչ, զօրագլաւ աւելի յարդ և պատիւ են վայելում քան մէծ մի սաածող կամ գեղարադասուագէտ: Սոցիալիստական հասարակութեան մէջ կը կորչի մարդու կոպիտ, ֆիզիկական իշխանութիւնը մարդու վրայ, ուրեմն կ'անհետանայ և այն հմայքը, որ այժմ կապուած է միլիօնատէրի, պետական անձի և զօրագլաւի իշխանութեան հետ: Ուրիշի վրայ իշխանու տեղ մարդկային ողին ճանաչելու է աւելի վեհ շարժառիթներ՝ մեզ շրջապատող խորհրդաւոր բնութիւնը և գեղեցկութիւնը ըմբռնելու տեսնչը: Սըստածողները և գեղարուեստական-

կը դառնան ապագայ մա, զկութեան ներուներ և առաջնորդներ:

Գիտութիւնը և գեղարուեստը մարդկային ոյոյութեան ամբողջ ընթացում սանոր զասակարգի մի հնչին կոյտի սեփականութիւն էին: Մարդկանց անագրն մեծամասնութիւնը բոլորովին մի հողմէ էր կանոնած հասարակութեան կրթուած մասի մտաւոր և էստէմիլական շահերից: Գեղարուեստական ճաշակի զարգացման հողմից ներկայ մարդը աւելի ստոր է կանգնուած անտիկ և միջնավարան մարդկութիւնից, որովհետեւ կապիտալիզմի սառ ողին արել է ինչ կարողացել է խեղգերու ճամար գեղեցկի հասկացողութիւնը: Առաջ, օրինակի համար, մարդկային բնակարան միջոցներ, շինուում էր բնակութեան համար և ոչ փող աշխատերու նպատակով, ուստի մարդի այդ շինութեան մէջ հնում էին իրանց ողին, իրանց ճաշակը: Կապիտալիզմը պար բոլոր սուանեց: շահը մոռացնել տուեց ճարտարապետական ճաշակը: Ժամանակակից քաղաքու, դիւր այլանդակուում են միակերպ և տափակ կապիտալիստական շարլունով: Այդ տափակ բուրժուական ճաշակի գէմ բործք բարձրացրեց Անգլիայում Բէօւլին, Մոլրիս:

Սոցիալիզմի գէմ միա մեղադրանքը այնէ որ նա իրը թէ ձկառում է ոչնչացնել անհատի ազատութիւնը: Ցայտնի է որ Սպենսերը սոցիալիզմը անուանեց «ազագայ», սորկութիւնը, կրկնելով այն ինչ ասում էին սոցիալիզմի թշնամիները: Սպենսերին և ուրիշներին ապագայի պետութիւնը նկարագրուում է հսկայական բանտի նման մի բան, որի մէջ մարդկի գուցէ և կուշակը կը լինեն, սակայն փոխարէնը զրկուած կը լինեն ամենաւ և ամենաթանկագին բարիքից — ազատութիւնից: Սակայն այդ մշաղրանքն էլ հիմքից զուրկ է: Հասարակած էր աշխատանքի պարտապիր կազմակերպութիւնը որ պահանջում է սոցիալիզմը՝ աւելի նուազ պէտք է ճնշի անհատականութիւնը քան ներկայ երևակայական «անտեսական ապատութիւնը». չէ որ ներկայում էլ տնտեսական աշխատանքը բանուուրների համար ստիպող-

կան բնոյթ ունի. և միթէ զործատէրը պակաս է ճնշուած կապիտալական կազմի երաթէ տնտեսական օրէնքներով. միամութիւն է կարծել թէ կապիտալիստի քէֆից է կախուած ապրանքի գին նշանակելը և առաջնորդապէս գերլ չէ կապիտալիստական տնտեսութիւնը բարդ պայմանների համագումարի ձեռքում, որ մասաւանդ զգալի է զանում արդիւնազործական կրթիվների ժամանակ, երեակայական է մասուր աշխատանքի ազատութիւնը ներկայ կարգերում. Սոցիալիզմի ժամանակ ինարկէ չի լինի միայն ոչինչ չանելու աղատութիւնը, որովհետև ոչինչ չանել նշանակում է հարստահարելուրի աշխատանքը:

Սոցիալիզմը բնաւ նելու միտք չունի հասարակական կազմակերպութեան ենթարկել մարդկային աշխատանքի բոլոր տեսակները: Պէտք է միայն փոխուի տնտեսական աշխատանքի ներկայ կապիտալիստական ձեւը: Այլ ձգութեանի մէջ մարդիկ լինելու են միանգամայն ազատ, այն տարբերութեամբ ներկայի համեմատած որ մարդիկ ճնշուած չեն լինելու տնտեսական հոգուերի զրկանքների շնորհ. սոցիալիզմը նրանց աղատելու է վագուայ հոգսից, ապացայ անապահովութեան մշտական երկիրից, որ այժմ կապարի պէս ճնշում է մարդկութեան վրայ և այնքան կորստարեր ազգայութիւն անում ստեղծագործական աշխատանքի վրայ: Սոցիալիզմը քրաւիչ է զարձնելու և աշխատանքը, կրծառելով նրան և զննելով առողջապահական լաւագոյն պայմաններում:

Սոցիալիզմը ձգում է ըստ կարելոյն շատ տնտեսական հոգսիր անհատ մարդուց փոխարիել ամրութ հասարակութեան վրայ, և հէնց այդ բանի շնորհիւ մարդու անձնաւորութիւնը ազատութեալու է բազմականան զարգացման համար: Փամանակակից սոցիալիզմը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կենսուրաբար, զուարթ և դէսի մարդիկը խոր սիրով և յայսով համակուած հումանիզմը: հէնց զրա մէջ է սոցիալիստական իդէալի անապարմելի ոյժը: Այն բոլորը ինչ որ ճշշմարիտ և արժէքաւոր է լիբերալիզմի մէջ իրացրել է սոցիալիզմը, որ աւելի և աւելի զարում է ոչ միայն հաւատքը պլուտոսարիատի, որ իր վրայ է կըսում մեր մոայի և արիւնոտ ժամանակի բոլոր ժանրութիւնը, այլ և հաւատքը այն բոլորի, որոնց մէջ կենդանի է հաւատը դէպի մարդկու-

թեան լաւագոյն ապագան, երջանկութիւնը, խաղաղութիւնը և սովորութիւնը:

Կեանի, քաղաքական, հասարակական և տնտեսական օրգան:— Շենքով մարքսիստական-լենկեաւականական-ամարիկան օրգան:— Վեհանքը խիստ ծանր գեր ու ճաղուագիւտ պարտականութիւն ունի կատարելու հարկական իրականութեան մէջ հայ բանուոր զասակարգի համար, սուուած է առաջն համարի առաջնորդողում: Ծառ համերկայի նպատակ է դրել իր առջի նոր օրգանը—հայ պրոլետարիատի զասակարգային զիտակցութիւնը զարգացնել, նրա շահերը պաշտպանել: Մայն կայինմենք կը ցանկացանալինք որ «Կեանիքը» հեռու կը աներ այն այսական կարգացած գոգմատիզմը, որով պրակտիկա է մեր սոցիալ-դեմոկրատիայի մի մասը, որ չըմբռնից այն պարզ ճշմարտութիւնը թէ ներկայ յեղափոխութեան նպատակը կատուող էր լինել բուրժուատի մասնակիութեան կատարելու հարգելի յազթանակը: Պոլիտիկօնիստական տեսակէտը չըպէտական է մոռանալ... Պէտք է մի կողմ թողնել ամեն տեսակէտի ազանգաւորութիւնը ազանգաւոր ազանգաւոր ազանգաւոր լինել բուրժուատի համար կամաց անապին կամաց աշխատանքի որի համար ամենից թիւ է պահանջւում իւրին յօդանաներ, վերացական Փորմունիսեր և ներ կուսակցամոլ անհամբերով ոգի դէպի նոյն նպատակին գաղող ուղղութիւնները... Ի սրտէ ցանկանում ենք որ «Կեանիքը» իւկապէս զանայ մեր բանուորութեան խորհրդատու, ղեկավար, կազմակերպիչ, սրբայալատիչ և զաստիարակող օրգան և լինի ինքնուրոյն ու անկախ մեր առանձայտուկ պայմանները ըմբռելու և այդ պայմաններում գործելու համար: Աւելացնենք որ «Կեանիքը» իր տակտիկայով աւելի մօտ է մեծամասնականներին» և ըստում է պղպային ինքնավարը ըստ կղունքի ոոց, գեմ: կուսակցութեան կազմակերպութեան մէջ:

ԵՐԵՒ

17. ԿՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ . . . . .	2
18. ԵԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ ԵՒ ՎՐԻՊԱԿՆԵՐ . . . . .	5
19. ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .	5
20. ՑԱԽԵԼՈՒԱԾ. ՋԷյմս ՄՈՂԻԷլ «ՀԱՅԻ ԲԱՐԱՆ ԱՆԳ- ԼԻԱՅՅՈՒՄ», վեպ ղուրակ. կեանքից, թարգմ. անդ. Մ. Կարապետիան . . . . .	223—238

ԿՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբազրութիւնը յատուկ խնդրում է յօդուածողքերից՝ զբել պարզ, մանաւանդ բռները, լատիկ անսաներն ու օտար բռները, եւ թերի միայն մի եւեսի վրա, առանձնապէս ու ու դարձնել կէտագրութեան, ուղղագրութեան և՛ նոր պարբերութիւնները ուռումիլի լինելու վրայ. Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբազրութեանը նաև բնագիրը:

2. Զընդունուած մեծ յօդուածները պահուում են խմբազրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնուած են: Զեսազիբը յետ ստունալու համար ողէտք է ուղարկել ճանապարհածուախու: Փոքը յօդուածներն ու ստանաւորները չեն փերազարծնուում:

3. Քրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբազրութիւնը: Խմբազրութիւնն առանց պայմանների ուղարկուած ձեռազիբները համարւում են անվճարելի:

4. Խմբազրութիւնն իրան է վերապահուած ուղարկուած յօդուածները կուտիխներու կամ կրծատելու իրաւունքը:

5. «ՄՈՒԹԻ» համարը չսատացուելու զեպքում պէտք է խմբազրութիւննը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քանի յաջորդ համարի լոյս տհանելը:

6. Խմբազրութեանը զանազան հարցումներով զիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկին նամակագրում՝ կամ պոստային բլանկ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ: Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսով առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է այտնել նաև հին հասցէն:

ԱՐԹՈՒՐ Կ ԲԵՓԱՆԱԳԻՎ-ՐԱԽԹԻԿ

1906 R.

# “Uahεχ”

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԱՐԱՐԱԿԱՆ

(Ես ու շրջան Վլ տարի)

<i>տարիելուն</i>	<i>տարիելուն</i>	<i>տարիելուն</i>
<i>առաջակա 10 ր.</i>	<i>առաջակա 12 ր.</i>	<i>(32 դ.)</i>
<i>կէս առաջակա 6 ր.</i>	<i>կէս առաջակա 7 ր.</i>	<i>(18 դ.)</i>
<i>մմանկան</i>	<i>մմանկան</i>	<i>մմանկան 1 ։ 20 կ. (3 դ.)</i>

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-  
մաս (5—5 ր.) երկրորդ վճարը լինում է մայիսի 1-ին-  
ծին. դպրոցներում ուսուցանողների, ուսանողների, գի-  
ղացիների եւ բանուորների համար բաժանորդագինն է  
8 րուբ: 8:

**Արամանսունից՝** Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

**ՕԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** բնողունաւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են.—1 երես բոնոր յայտարարութեան համար 15 ր.,  $1/2$  եր. 8.,  $1/4$  եր.—4 ր., տողասեղ (կարպ).—40 կ.:

## ԿԺԵՐԱԳԻՐ ԼԵՒՈՆ ՍԱՐԴԱՍԵԱՆ